

ԷՄՄԱ ԲԵԳԻՋԱՆՅԱՆ

**ԻՐԱՆԱԿԱՆ  
ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ  
ՀԱՅՈՑ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ**



9(47-925)  
F-41

**ԷՄՄԱ ԲԵԳԻՉԱՆՅԱՆ**

**ԻՐԱՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ**

4429

Խմբագիր՝ Ռուբեն Սաֆրաստյան  
Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ



Երևան 2011

ՀՏԴ 941(479.25)  
ԳՄԴ 63.3(2Հ)  
Բ 412

Բեգիջանյան Էմմա  
Իրանական տեսակետները Հայոց ցեղասպանության  
մասին/Էմմա Բեգիջանյան.- Եր.: Էդիթ Պրինտ, 2011. -  
164 էջ

ՀՏԴ 941(479.25)  
ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 978-9939-52-342-2

© Էմմա Բեգիջանյան, 2011  
© «Էդիթ Պրինտ», 2011



## Օգտակար աշխատանք

Ցեղասպանությունը ծանրագույն հանցագործություն է մարդկության դեմ եւ նրա ամեն մի դրսեւորում դատապարտելի է՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ կրոնի է դավանում հանցագործը: Այս են վկայում մեր հարեւան եւ բարեկամ իրանցի ժողովրդի լավագույն ներկայացուցիչները՝ խստագույնս դատապարտելով օսմանյան Թուրքիայում արդուլիամիդյան եւ երիտթուրքական պարագլուխների նախապատրաստած եւ իրականացրած ցեղասպանությունը հայ ժողովրդի դեմ:

Ցեղասպանության դատապարտումը բարոյական պարտադրանք է: Սակայն, ավա՛ղ, ինչ-ինչ քաղաքական հաշվարկների արդյունքում պետական այրերը ցուցաբերում են դժվար հասկանալի «զգուշավորություն», խուսափում են հստակ ձեւակերպումներից ու գնահատականներից՝ դատապարտելով Հայոց ցեղասպանության հեղինակներին:

Այս տպավորություններն ստացա՝ ծանոթանալով ժամանակակից Իրանի ներքին ու արտաքին քաղաքականության լավագույն գիտակներից Էմմա Բեգիջանյանի սույն աշխատությանը: Այն, անտարակույս, օգտակար կլինի հայ ընթերցողի համար, հնարավորություն տալով նրան ծանոթանալու Հայոց մեծ եղեռնի նկատմամբ Իրանի նման բարդ ու բազմաշերտ երկրի տարբեր մտավորական ու քաղաքական շրջանակների արտահայտած մոտեցումներին:

Ռուբեն Սաֆրասյան  
23.12.2008թ.

Հայոց ցեղասպանության հարցում Իրանն սկզբից եւեթ ըմբռնումով է վերաբերվել իրանահայությանը: Ապրիլի 24-ն իրանահայերի համար եղել է եւ է ոչ աշխատանքային օր, սակայն մինչեւ անցյալ դարի 70-ական թթ. սկիզբը նշվել է գլխավորապես սգո եւ կրոնական արարողություններով: 1975 թ.՝ Մեծ եղեռնի 60-րդ տարելիցի առթիվ, երբ առաջին անգամ փորձ է արվել նշել այդ օրը նաեւ ցույցերով ու երթերով՝ դեպի Թուրքիայի դեսպանատուն, իրավապահ ուժերը ցրել են այն. իշխանություններն ընդհանրապես արգելել են այդ առնչությամբ բողոքի ցույցերը: Ըստ ամենայնի՝ այդ քայլը պետք է մեկնաբանել տվյալ ժամանակահատվածում Իրան-Թուրքիա առնվազն առերեսույթ սերտ, բարեկամական փոխհարաբերություններով. երկուսն էլ նույն ճամբարում էին՝ ՄԵՆՏՕ ռազմաքաղաքական եւ Շրջանային բարեկարգման համագործակցություն (RCD) տնտեսական դաշինքների անդամ: Մինչդեռ Իրանում՝ Իսլամական հեղափոխությունից հետո, իրանահայությունն ապրիլի 24-ն անարգել նշել է նաեւ տարաբնույթ բողոքի ցույցերով, որոնք դարձյալ որոշ չափով պայմանավորված են եղել իրանաթուրքական փոխհարաբերություններով: Գրանք տեղի են ունեցել Եղեռնի զոհերի հիշատակին կառուցված հուշարձանի տարածքում, երբեմն նաեւ Թեհրանում՝ Թուրքիայի դեսպանատան եւ ՄԱԿ-ի գրասենյակի առջեւ: Այսուհանդերձ, 2004 թ. նշյալ դրդապատճառներով ապրիլի 24-ի կապակցությամբ փողոցային երթերը եւ ցույցերը թեեւ չէին արգելվել, բայց այնպիսի պայմաններ էին առաջադրվել, որոնք անհնարին դարձրին դրանց իրականացումը: Ավելին, Ադրբեջանի եւ Թուրքիայի քարոզչության հետեւանքով գրգռված մի խումբ ԻԻ-Հ ադրբեջանցիներ հարձակվել են հայ ցուցարարների վրա՝ փակ տարածքում:

Մույն աշխատությամբ ցանկանում ենք ներկայացնել Հայաստանի հարեւան եւ բարեկամ երկրում՝ Իրանում, Հայոց ցեղասպանության վերաբերյալ առկա պաշտոնական եւ ոչ պաշտոնական տեսակետները, Եղեռնին նվիրված գրքերն ու աշխատությունները եւ այլ առիթներով, նաեւ այդ խնդիրն արժարժած գրավոր աղբյուրները, արձագանքները, իրանցի հայտնի քաղաքական, գրական գործիչների տեսակետները:

Օսմանյան կայսրությունն Արեւմտյան Հայաստանում, ինչպես հայտնի է, հայերի ցեղասպանությունն սկսել է դեռես սուլթան Աբդուլ Համիդ II-ի գահակալության տարիներին: Այդ մասին վկայություններ կան «Վարք սուլթան Աբդուլ Համիդի եւ Օսմանյան կայսրության կացությունը նրա օրոք» (Biography of Sultan Abdul Hamid and the Situation of the Ottoman Empire During His Reign) գրքում: Բնագիրը ֆրանսերեն է, եւ, ինչպես պարզվում է բովանդակությունից, հեղինակը ֆրանսիացի է՝ Աբդուլ Համիդի ժամանակակիցը: «Մենք՝ ֆրանսիացիներս, - գրել է նա, - չպետք է այժմ մտածենք, թե օսմանցիները որքան վատ են վերաբերվել մեզ, ինչպես են գործել մեր դեմ, քանզի Մեդանի եւ Մեցի (Sedan, Metz) դեպքերից հետո, որոնցում Ֆրանսիան պարտություն է կրել, նրանք, թողնելով մեզ, կպել են Վիլիելմ Առաջինի՝ «պոչից»: Սակայն մենք մարդկայնորեն պետք է ի սրտե կարեկցենք Օսմանիային (Օսմանյան պետություն) եւ սիրով ու գորովով վերաբերվենք նրան» (էջ 38): Գրքի՝ մեզ անհայտ հեղինակը այն նվիրել է սուլթան Մուրադ V-ին՝ Աբդուլ Համիդի եղբորը, որն ընդամենը երեք ամիս է իշխել, ապա գահընկեց է արվել՝ հոգեկան հիվանդ լինելու պատճառով: Օսմանյան կայսրության գահակալ է դարձել Աբդուլ Համիդ II-ը: Նա եւս հարկադրաբար է հեռացել գահից՝ 1909թ.:

Գիրքն սկսվում է հետեւյալ տողերով. «Գրվածքս ամենայն հարգանքով նվիրում եմ Նորին կայսերական մեծություն սուլթան Մուրադ խան V-ին, ի հիշատակ...», որպես բարի կամքի դրսեւորում օսմանցիների նկատմամբ...» (էջ 1): Հեղինակը նաեւ համոզմունք է հայտնում, որ եթե Մուրադ V-ըրը մնար գահին, օսմանյան մեծ ազգը չէր կրի այն վնասներն ու հարվածները, որոնք ներկայացվել են գրքում:

Աբդուլ Համիդի արտաքինի, բնավորության ու խառնվածքի մանրակրկիտ նկարագրությունից կարելի է ենթադրել, որ հեղինակը ար-

<sup>1</sup> Պրուսիայի թագավոր եւ Գերմանիայի առաջին կայսրը:

քունիքին մոտ կանգնած մարդ է եղել, շփվել է միապետի հետ:

Գրքի նախաբանում նա նշում է, որ բնութագրել է սուլթանի անկա-  
յուն, հակասական բնավորությունը եւ դրանից քաղաքական երկու կա-  
րետր հետեւություն արել՝ ա) Օսմանյան պետությունը հլու հնազանդ է  
դարձել Գերմանիային, բ) իսլամական ուժն ու կարողությունը տարրա-  
լուծվել են երկրի ներսում եւ մահմեդական այլ երկրներում: Նա ընդգ-  
ծում է նաեւ, որ Արդուլ Համիդի սխալներից ու վրիպումներից շահել են  
երկու երկիր՝ Գերմանիան՝ Եվրոպայում ու Ասիայում, իսկ Անգլիան՝  
Աֆրիկայում ու Արաբիայում:

«Վարք սուլթան Արդուլ Համիդի եւ Օսմանյան կայսրության կա-  
ցությունը նրա օրոք» գիրքը պարսկերեն թարգմանել եւ 1895 թ. Ղա-  
ջարների հարստության միապետ Նասրեդդին շահին է նվիրել իրանցի  
հայտնի թարգմանիչ Մոհամադ Հասան խան Էթեմադ-օլ-Մալթանեն,  
ձեռագիր, որտեղ առկա է նաեւ հիշյալ միապետի մակագրությունը<sup>2</sup>  
(հետագայում այն հանձնվել է նախ՝ պետական, ապա՝ ԻԻՀ ԱԳ նա-  
խարարության փաստաթղթերի արխիվ): 1998 թ. գիրքը մշակել եւ  
խմբագրել է ԱԳ նախարարության Քաղաքական եւ միջազգային հե-  
տազոտությունների գրասենյակի փաստաթղթերի հրատարակման  
վարչության տնօրեն Մոհամադ Հասան Քավուսին՝ նույն գերատես-  
չության փաստաթղթերի մշակումն ու հրատարակումը վերահսկող գե-  
րագույն խորհրդի աջակցությամբ, որի նախագահն էր նախկին ԱԳ  
նախարար Քամալ Խարազին: Վերջինս, առաջաբանում խիստ կարե-  
ւորելով երկրի ղեկավարի դերը նրա ճակատագրում, շեշտել է. «Այլ  
կերպ ասած՝ ուսումնասիրելով այսօրինակ կենսագրությունները, հաս-  
կանալի է դառնում, թե ինչպես մի երկրի, հասարակության ճակատա-  
գիրը տնօրինողների բնավորությունը, խառնվածքը, անհատականու-  
թյունը, նրա ընդունակության եւ ուշիմության չափն ու խելամտությունը  
կարող են որոշիչ դեր ունենալ տվյալ երկրի, ազգի եւ հասարակության  
երջանկության կամ դժբախտության ու մոլորության հարցում»:

Գրքի բավական ընդարձակ ներածություն մեջ,<sup>3</sup> որի հեղինակն է

<sup>2</sup> Հնրագայում այն հանձնվել է նախ՝ պետական, ապա՝ ԻԻՀ ԱԳ նախա-  
րարության փաստաթղթերի արխիվ:

<sup>3</sup> Ծավալը գրքի կեսից ավելի է:

կազմող խմբագիրը, համառոտակի ներկայացվում է Օսմանյան պե-  
տության պատմությունը՝ մինչև Մուստաֆա Աբաթուրքի՝ իշխանու-  
թյան «օլիմպոսին» հայտնվելը, որտեղ փաստերի զգալի խեղաթյուրում-  
ներ կան ի վնաս հայերի:

Քավուսին, անդրադառնալով հանրապետական Թուրքիայի տա-  
րածքին, որն անվանում է Անատոլիա կամ Փոքր Ասիա (ՓԱ), գրում է,  
որ այն պատմական քաղաքակրթությունների բնօրրան է եղել, որ մեր  
թվականությունից երկու հազարամյակ առաջ դրան տիրելու նպատա-  
կով տարածաշրջանի աշխարհակալները մշտապես պատերազմել են:  
Մ.թ.ա. II-րդ հազարամյակի ընթացքում ՓԱ-ի զգալի հատվածը  
հայտնվել է հիթիթ (Hitit) ցեղերի գերիշխանության տակ (այդտեղ իշ-  
խել են մինչև մ. թ. ա. 1180 թ.):

Այնուհետեւ կարդում ենք, որ հիթիթների կայսրության անկումից  
հետո ՓԱ-ն բաժանվել է ասորիների եւ լիդիացիների միջեւ, իսկ մ. թ.  
ա. 7-րդ դարում ՓԱ-ի արեւմտյան հատվածը գրավել են հույները՝ գրե-  
թե հարեւան դառնալով Իրանին: Հույներն այստեղ հիմնադրել են ի-  
րենց գլխավոր քաղաքները, այդ թվում՝ Բյուզանդիոնը (Կոստանդնու-  
պոլիս), որը Բյուզանդիայի մայրաքաղաքն էր: Հռոմեացիները 196 թ.  
գրավել են ՓԱ-ն, որը հետագայում՝ 395-1453 թթ., Բյուզանդական  
կայսրության մաս էր կազմում: Այլ խոսքով՝ իրանցի գիտնականը,  
միանգամայն անտեսելով պատմական Հայաստանի գոյությունն այդ  
տարածքում, որեւէ ակնարկ չի արել այդ մասին, փաստ, որն այլ կերպ,  
չես անվանի, քան պատմական ճշմարտության խեղաթյուրում: Իսկ  
այդօրինակ խեղաթյուրումներն առավել կարեւոր բնույթ են կրում, երբ  
դրանք անում է տվյալ երկրի ԱԳ նախարարությանն առընթեր հիմ-  
նարկությունը, իսկ այդ միտումը պայմանավորված է Թեհրան-Անկա-  
րա փոխառնություններով՝ ի վնաս հայերի: Այդ փաստի խեղաթյուր-  
ման համար մեղքի առյուծի բաժինը մերն է. դրան նպաստել ենք մեր  
անտարբերությամբ, մեր լուռությամբ: Հավելենք, որ այդ տեսակետը  
պահպանվում եւ կրկնվում է ողջ ներածությունում: Օրինակ՝ «... հայե-  
րը, որոնք ապրում էին Օսմանյան պետության հողի վրա...», (էջ 28):

Հեղինակը գրում է նաեւ 6-րդ դարում Միջին Ասիայում թուրքական  
ցեղերի երեւան գալու եւ 14-րդ դարում Օսմանյան կայսրության ձեռա-

վորման մասին, ապա ամփոփ ներկայացնում օսմանյան սուլթաններին ու նրանց գործունեությունը: Խոսելով սուլթան Աբդուլազիզի մասին,<sup>4</sup> նշում է, որ նա գահընկեց է արվել Միդիաթ փաշայի գլխավորած հեղաշրջման հետևանքով: Նրան հաջորդել է սուլթան Մուրադ V-ը: Սակայն, ինչպես նշեցինք, վերջինս նույնպես հեռացվել է իշխանությունից, որից հետո գահը հանձնվել է նրա եղբորը՝ Աբդուլ Համիդ II-ին: Թավուսին հանգամանորեն ներկայացնում է վերջինիս գահակալության տարիներին աշխարհում տեղի ունեցած իրադարձությունները՝ եվրոպական պետությունների միջև առկա տարաձայնությունները, Օսմանյան կայսրության նկատմամբ նրանց որդեգրած քաղաքականությունը, ինչպես նաև Աբդուլ Համիդ II-ի վարած ներքին և արտաքին քաղաքականությունը:

«Աբդուլ Համիդի իշխանության օրոք երկրում տիրող էր դարձել ահ ու սարսափի մթնոլորտը: Միապետն ինքը կյանքի, ունեցվածքի և վիլայեթներում ապստամբությունների վախից երկրի ողջ իշխանությունը կենտրոնացրել էր իր ձեռքում: Երկրի ողջ անցողարձը լիովին վերահսկելու նպատակով ընդլայնել էր լրտեսական համակարգերն ու կոռուպցիան, հաստատել բացարձակ բռնապետություն: Իշխանության նկատմամբ ատելությամբ էր լցվել երկրի բնակչությունը: Օսմանյան պետությունում վերացել էին համընդհանուր վստահությունն ու անվտանգությունը:

Եվրոպական պետությունների՝ Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի միջև տարաձայնությունների և Օսմանյան կայսրության նկատմամբ նրանց որդեգրած քաղաքականության առաջին զոհը հայ ժողովուրդն էր, որը տարիներ ի վեր ձգտում էր սպասում էր անկախության: Սուլթան Աբդուլազիզը 1863 թ. նրանց սահմանափակ ազատություն էր շնորհել: Աբդուլ Համիդը իր գահակալության առաջին տարիներին հայերին նշանակել էր պետական բազմաթիվ բարձր պաշտոնների, այնպես որ, 1890 թ. արդեն հայերը մեծ հեղինակություն և ազդեցություն ունեին Օսմանյան պետությունում,

<sup>4</sup> *Վերջինս Աբդուլ Համիդի հորեղբայրն էր, քրիստոնյա հայաբնակների ապստամբություններին վերջ դնելու նպատակով մշակել և ընդունել է հարկադրված բարեփոխումների ծրագիր:*

մանավանդ, որ Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերն էլ սուլթանին պարտավորեցնում էին բարելավել հայերի վիճակը: Սա այն դեպքում, երբ Ռուսաստանն ու Մեծ Բրիտանիան, առանձնահատուկ վերաբերմունք չունենալով հայերի նկատմամբ, պատրաստ էին համուն սեփական քաղաքական շահերի ընդարձակել իրենց ազդեցության ոլորտները՝ ռոմահարելով նրանց շահերը: Ահա թե ինչու Բեռլինի և Յասիի պայմանագրերից հետո Ռուսաստանը, իր ազդեցությունը Փոքր Ասիայում տարածելու և հայերին ռուսացնելու նպատակով, նրանց վրա խիստ ճնշում էր գործադրում: Սակայն քանի որ հայերի ազգային զգացումները շատ ուժեղ էին, սկսեցին պայքարել նրանց դեմ՝ քարոզչական լուրջ գործունեությամբ և գաղտնի հավաքներով: Ռուսաստանն էլ ավելի ուժեղացրեց հայերի ճնշումը: Մյուս կողմից, քանի որ վերջինս չէր կարող իր նպատակներն իրականացնել հայերին հովանավորելու պատրվակով, ուստի գրգռեց Օսմանյան պետությանը և խրախուսեց նրա հակահայկական գործունեությունը: Օսմանյան կայսրության հայերը, հույս ունենալով, որ Մեծ Բրիտանիան իրենց կհովանավորի, նպատակամղվել էին ազգային շարժում սկսել, ապստամբել ու դիմել ահաբեկչական գործողությունների: Իսկ Օսմանյան պետությունը, որը մինչ այդ լավ էր վերաբերվում հայերին, վերջիններիս բնաջնջման ծրագիր մշակեց՝ վերացնելու համար եվրոպական պետությունների միջամտության պատճառները Օսմանյան կայսրության ներքին գործերին:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ն այդ ծրագրերն իրականացնելու նպատակով օսմանյան բանակում ծառայող քրդերին հանձնարարել էր կեղեքել, տանջել հայերին: Բացի այդ՝ քարոզչական լուրջ աշխատանքով հասարակական կարծիքը նախապատրաստել էր հայերին ոչնչացնելու, բնաջնջելու համար: 1894 թ. հոկտեմբերին արդեն Սասունի, Բիթլիսի և Դիարբեքիի հայերի եղեռնը իրականություն դարձավ: Եվրոպական երկրները բողոքեցին կատարվածի դեմ: Աբդուլ Համիդ II-ը, ջարդերի պատասխանատվությունից խուսափելու նպատակով, համաձայնեց, որ եվրոպական երկրներն ստեղծեն ջարդերն ուսումնասիրող հանձնաժողով: Սակայն քանի որ Ռուսաստանը դեմ էր Անգլիայի միջամտությանը, ուստի, Օսմանյան պետության ցանկությամբ, այդ

բոլորն այնպես էին ներկայացրել, որ իբրև հայերն իրենք են մեղավոր ջարդերի համար: Իսկ Անգլիան, Ռուսաստանի հետ Արեւելյան հարցում նախկին տարածայնությունների բորբոքումից խուսափելու նկատառումով, լռել է ջարդերի մասին: Այլ կերպ ասած՝ Արդուլ Համիդ II-ի օրոք հայոց ջարդերի պատասխանատվությունը, ըստ Քավուսիի, եվրոպական մեծ տերություններինն է, մասնավորապես՝ Ռուսաստանինը» (էջ 28-29):

1895 թ. ջարդերի համար կրկին մեծ մեղք է վերագրվում Ռուսաստանին. «Անգլիայի վարչապետ Գլադստոնի գլխավորած կառավարության նոր ԱԳ նախարար Ռոսբերին (Rosebery), շարունակելով իր նախորդի քաղաքականությունը, ջանքեր էր գործադրում, որպեսզի, Միջերկրականում հավանական բախումների ժամանակ, Ֆրանսիան չեզոք մնա: Բայց եւ այնպես, Անգլիան չէր կարող նաեւ լռել և չբողոքել հայերի նկատմամբ բուրբերի գործադրած ճնշումների դեմ, ուստի՝ Ռոսբերիի առաջարկությամբ որոշել էր ինչ-որ գործողություններ սկսել նեղուցներում՝ ցանկանալով Օսմանյան կառավարությանը հարկադրել պաշտպանելու հայերի իրավունքները: Գերմանիան, որ ռուս-անգլիական պատերազմի սկիզբ էր համարում անգլիական ռազմանավերի մուտքը Սեւ ծով, նախապատրաստվում էր օգուտներ քաղել ստեղծված իրավիճակից: Սակայն Ֆրանսիան դեմ էր զարգացումների այդօրինակ ընթացքին: Դա էր պատճառը, որ եվրոպական տերություններին առաջարկել էր, որ նրանք Արդուլ Համիդից պահանջեն որոշ բարեփոխումներ կատարել՝ հօգուտ հայերի:

1895 թ. մայիսի 16-ին եվրոպական տերությունները համաձայնության եկան այդ հարցի շուրջ, սակայն Արդուլ Համիդ II-ը, որ քաջատեղյակ էր եվրոպացիների միջեւ առկա տարածայնություններին, հսկանակ նրանց առաջարկությունների՝ խրախուսում էր հայերի բնաջնջումը, որի հետեւանքով 1895 թ. հոկտեմբերի 16-ին եւ 18-ին սկսվեցին Կոստանդնուպոլսի, Տրապիզոնի ու Դիարբեքիի ջարդերը եւ շարունակվեցին մինչեւ նոյեմբեր: Ստեղծված իրավիճակում եվրոպական պետությունները, որոնք իրենց երկրների հասարակական կարծիքը գրգռել էին օսմանցիների դեմ, նոյեմբերի 7-ին 18 ռազմանավ էին ուղարկել Սալոնիկի նավահանգիստ, իսկ Ռուսաստանը Սեւաստոպո-

լում սկսել էր զինել իր բանակը: Նախապատրաստվել էին նաեւ Իտալիան ու Ավստրո-Հունգարիան: Այսուհանդերձ, հայերի նկատմամբ Օսմանյան պետության որդեգրած քաղաքականության մեջ որեւէ փոփոխություն տեղի չունեցավ, ջարդերը շարունակվեցին» (էջ 30):

Քավուսին շեշտում է, որ Անգլիան ի վերջո եվրոպական պետություններին առաջարկել է օսմանցիների դեմ գործել համատեղ եւ վերջիններիս հարկադրել, որ հարգեն հայերի իրավունքները: Սակայն Ռուսաստանը դա չէր ողջունում, մյուսներն էլ տարբեր դրդապատճառներով լուրջ չեն վերաբերվել առաջարկին, և այդ ամենի հետևանքով հայոց շահերը դարձան եվրոպացիների տարածայնությունների գոիր:

Հեղինակը շարունակում է. «1896 թ., երբ հայերն զգացին, որ իրենց վիճակն առավել ծանրացել է, «Դրոշակ» անվամբ ապստամբական խմբերն սկսեցին հարձակվել օսմանյան բանակի վրա: Այդ քայլը պատճառ դարձավ, որ հայերի դեմ Արդուլ Համիդ II-ի գործողությունները նոր քափ ստանան: 1896 թ. օգոստոսի վերջին վերսկսվեցին հայերի ջարդերը: Անգլիայի վարչապետ Լորդ Սոլսբերին (Salisbury) օսմանցիներից պահանջեց լուրջ քայլեր կատարել այդ հուզումներին վերջ տալու համար, իսկ Ֆրանսիան՝ միջազգային նավատորմի տեղակայեց Դարդանելի նեղուցում: Ռուսները դեմ էին որեւէ այլ երկրի նեղուցներ ներթափանցելուն եւ հայտարարել էին՝ կգրավեն նեղուցներին հարող տարածքները. Օղեսայում ու Սեաստոպոլում ռազմածովային ուժերը բերվել էին մարտական վիճակի: Ի հետեւանս քաղաքական իրադարձությունների այդօրինակ զարգացումների՝ հայերի շահերն այս անգամ եւս զոհաբերվեցին եվրոպական երկրների միջեւ խաղաղության պահպանմանը: Սակայն Արդուլ Համիդը խոստացավ բարեփոխումների ծրագիրը տարածել նաեւ ՓԱ-ում, հայկական վիլայեթներում» (էջ 31):

Շեշտելով, որ Արդուլ Համիդ II-ի ոչ ճիշտ քաղաքականությունն անկման հասցրեց Օսմանյան կայսրությունը, Քավուսին ներկայացնում է նաեւ երիտթուրքերին, որոնք սուլթանին հնրկադրեցին հեռանալ գահից: Ապա գրում է թուրքերի՝ 1912-13 թթ. Եվրոպայից դուրս շարտվելու մասին: Քավուսին խոսում է նաեւ Առաջին աշխարհամարտի ընթացքում Օսմանյան կայսրությունում Գերմանիայի հզոր ազդե-

ցության եւ 1914 թ. օգոստոսին նրանց միջեւ կնքված գաղտնի պայմանագրի մասին, որով ձեռավորվեց օսմանա-գերմանական ռազմաքաղաքական դաշինքը: Նա շեշտում է, որ, ըստ նշյալ պայմանագրի, օսմանցիներին պետք է վերադարձվեին Կիպրոսը, Եգիպտոսը, Լիբիան, Թունիսը, Ալժիրը եւ հանձնվեին Ռուսաստանի իսլամադավան շրջանները՝ Կովկասն ու Միջին Ասիան:

Ներածության հեղինակն այնուհետեւ ամփոփ ներկայացնում է պատերազմի ընթացքը, դրական երանգով՝ Աթաթուրքի իշխանության գալը եւ Թուրքիայի Հանրապետության հիմնադրումը: Մական 1915 թ. Հայոց եղեռնի մասին Քավուսին բացարձակապես լուծում է եւ ընդամենը մեկ նախադասությամբ նշում, որ կայսրության հայերն ու քրդերն ապստամբել էին: Մա եւս չի խոսում հայերի օգտին, քանզի հակառակ դեպքում կհարվածեր թուրք-իրանական փոխհարաբերություններին: Այլ կերպ ասած՝ բոլորը մշտապես իրավացիորեն գրում եւ քաղաքականություն են վարում հօգուտ սեփական շահերի, ասել է թե՛ հայերը սեփական ուժից գատ եւ ոչ մեկի վրա չպետք է հույս դնեն:

\* \* \*

Այժմ՝ համառոտակի նաեւ գրքի բովանդակության մասին, որտեղ, խստագույնս քննադատելով Աբդուլ Համիդին, հեղինակը որեւէ ակնարկ չի անում հայերի դեմ նրա կատարած եղեռնագործությունների վերաբերյալ, իսկ եթե հայերի մասին խոսում է, ապա բնավ էլ ոչ դրական իմաստով: Գիրքը կատարվում է նաև այն առումով, թե ինչպե՞ս կարելի է հանուն սեփական շահերի լիովին անտեսել մի ազգի նկատմամբ կատարված բռնություններն ու ցեղասպանությունը, ընդ որում՝ գիրքը գրվել է թերեւս հենց ջարդերի ժամանակ: Իսկ հեղինակը սուլթան Աբդուլ Համիդին մեղադրում է Սասունի ու Մուշի հնարավոր կորստի համար, նույնիսկ չակնարկելով, որ նրանց բնակիչները հայեր են (էջ 63):

Հեղինակը, ընդգծված կարեկցանքով, խղճահարությամբ խոսելով Մուրադ 5-րդի մասին, չի զլանում նրա հասցեին գովեստի խոսքեր շռայել՝ նրան բնութագրելով իբրեւ օսմանյան ցեղի ազնիվ ներկայացուցիչ: Այն դեպքում, երբ նկարագրելով Աբդուլ Համիդի արտաքինը,

նրան ներկայացնում է ամենաբացասական երանգներով՝ «հասակը կաճահասակից ավելի ցածր, կուզիկ, մաշկի գույնը մուգ է՝ թուխ, մկանուտ, ինչի պատճառով նիհար է երեւում, ընդհանուր առմամբ, հայ եւ արաբ ցեղերի խառնուրդից ստացված լավագույն նմուշ է» (էջ 1): Նա ընդգծում է, որ չէր ժառանգել հոր՝ սուլթան Աբդուլմաջիդի մեղմ ու բարի բնավորությունը, քանզի նրա երակներում վերջինիս ազնիվ, անարատ արյունը չի հոսում: Խիստ բացասաբար է նկարագրում նաեւ նրա հայ մորը՝ վտիտ, տխուր, ուժասպառ, նրա ներաշխարհն ավերված է, տառապում է նյարդային հիվանդություններով, դեմքը կնճռոտ է, յուրաքանչյուր կնճիռ վկայում է նրա արտաքին տրտմության, հոգնածության, հոգեկան խանգարման ու խռովքի մասին, որոնք նա ժառանգել է նախնիներից, փոխանցել որդուն:

Ինչ վերաբերում է Աբդուլ Համիդին, ապա հեղինակը մանրակրկիտ նկարագրել է նրա դեմքը, գլուխը՝ սկսած ճակատից մինչեւ ծնոտն ու մորուքը՝ վառաբարագույն բառերով, յուրաքանչյուր անդամի նկարագրությունն ավարտելով, եզրահանգումներ է արել՝ անընդունակ է, մելանխոլիկ, ինչք՝ խելագարության, գազանության նշան է, շատակեր եւ բկլիկ է, վավաշոտ է եւ այլն: Նա նույնիսկ սուլթանի ականջի գույնն է նրա վատառողջության դրսեւորում համարում (էջ 5,6): Միաժամանակ նրան վախկոտ, փառասեր, ժլատ, իշխանատենչ եւ նման այլ հատկանիշներ է վերագրել (էջ 7): Հատկանիշներ, որոնք տարբեր առիթներով բազմիցս կրկնվում են գրքում:

Մեզ անհայտ ֆրանսիացին գրել է նաեւ, որ Աբդուլ Համիդը նյարդային շատ վատ հիվանդությամբ է տառապել, որը ժառանգել է նախնիներից (էջ 16), այսինքն հայ նախնիներից, քանզի թուրքական ցեղը նա ազնվական եւ առողջ է համարում, ինչպիսին Մուրադ 5-րդն է: Ըստ նրա՝ վերջինս օժտված էր բարոյական ու ֆիզիկական լավագույն հատկանիշներով:

Գրքում շեշտվում է նաեւ, որ Համիդն ատում էր եվրոպացիներին, թեւ օսմանյան բանակում, ԱԳ նախարարությունում եւ կառավարական այլ օղակներում «փաշա» եւ «բեկ» տիտղոսներով բազմաթիվ եվրոպացիներ են աշխատել, որը հեղինակը հետեւյալ կերպ է պատճառաբանում. «Քանի որ օսմանցիները գիտակցել էին, որ իրենք ի վիճա-



կի չեն ժամանակակից այդ աշխատանքները կատարելու, ուստի խիստ կարիք ունենի եվրոպացիների, որպեսզի ընդօրինակեն զարգացած, քաղաքակիրթ պետություններին» (էջ 12):

Այս ճշմարտությունը, անշուշտ, հակասում է օսմանյան տոհմի նրա գովերգությանը, ինչը, ըստ երեսույթին, նրա ոչ անկեղծ լինելու մասին է վկայում: Հեղինակը նաև շեշտում է, որ քաղաքակիրթ քրիստոնյաների նկատմամբ միապետի թշնամանքն ու ատելությունը հնարավոր չէր թաքցնել կամ անտեսել: Սակայն բացառություն էին այն լրագրողները, որոնք կաշառք էին ստանում պետությունից:

Հեղինակը ընդգծում է նաև, որ գազանաբարո միապետի ապաշնորհ կառավարման եւ ապիկարության պատճառով, ոչ միայն քրիստոնյա հպատակները,<sup>5</sup> որոնց նկատմամբ թշնամանք է տաժում, այլև մահմեդական որոշ հպատակներ, օրինակ՝ արաբները, որոնք նախկինում հնազանդ էին, կայսրությունից անջատվելու ցանկություն են դրսևորում (էջ 26): Նա էլ ավելի պարսավելի է համարում «Գերմանիային ենթարկվելը», որն արագացրել է Օսմանյան կայսրության փլուզումը, քանզի Աբդուլ Համիդը համոզված էր, որ Եվրոպայում կայսրության փրկությունը Գերմանիային կցվելն է: Այնուհետև կարդում ենք, որ այդօրինակ քաղաքականությունը Գերմանիայի կանցլեր Օտտո Բիսմարկին հնարավորություն է ընձեռել չեղյալ հայտարարել Սան Ստեֆանոյի պայմանագիրը եւ գումարել Բեռլինի կոնգրեսը, որի որոշումներն օսմանցիների համար առավել վնասակար էին՝ Սան Ստեֆանոյի համեմատությամբ (էջ 28):

Հեղինակը խստագույնս քննադատում է նաև օսմանյան մամուլը, որը գովերգում էր Բիսմարկին եւ հակաֆրանսիական մտքեր արտահայտում: Ֆրանսիացի հեղինակը միաժամանակ գրում է՝ կասկածից վեր է, որ օսմանցիները հակված չեն դեպի Գերմանիան, ինչպես իրենց իշխանություններն են կապվել այդ երկրի հետ: Հավելում է, որ Գերմանիան այն աստիճանի է ներթափանցել Օսմանյան պետություն, որ վերջինիս անվտանգությունն ու խաղաղությունը սպառնալիքի տակ են հայտնվել, վերածվել են քրոնիկական հիվանդության: Հանգամանք, ո-

<sup>5</sup> Նա նկատի ունի կայսրության արևելյան եվրոպական ազգերին ու երկրներին:

ըր մտահոգել է բանիմաց մարդկանց (էջ 29): Ապա կարդում ենք, որ գերմանացիները վերահսկում են մաքսային ծառայությունը, կապը, բանակն ու ռազմական նախարարությունը եւ այլ կարևոր գերատեսչություններ, դրանցից Գերմանիայի կանցլերը բազմաթիվ գեկուցագրեր է ստանում այդ երկրում տիրող իրավիճակի վերաբերյալ: Ուստի՝ Բեռլինը ցանկության դեպքում երկրի արևելյան տարածքներում առանց դժվարության կարող է վնասարարությամբ (դիվերսիա) զբաղվել (տես՝ նույն տեղը): Նա, խիստ քննադատելով Աբդուլ Համիդի գերմանական կողմնորոշումը, նշում է, որ վերջինս, տուրք տալով սեփական հիմարությանը, գոռոզությանը, տգիտությանն ու չկամությանը, հանուն իր շահերի կեղծավոր եւ գոռոզ Գերմանիային գերադասել է Ֆրանսիայից, որն օսմանյան սուլթաններին անշահախնդիր ծառայելու նպատակով ջանք ու եռանդ չի խնայել, եւ որ Ֆրանսիայի միակ նպատակը քրիստոնյաների բարօրությունը եւ Միջերկրականի ազատությունն է եղել:

Հեղինակն ափսոսանք է հայտնում, որ ֆրանսիացիները, տեսնելով Գերմանիայի խորամանկությունները և խարդախությունները, հակազդեցություն չեն դրսևորում: Նա անարգանքի սյունին է գամում ֆրանսիացի այն լրագրողներին, որոնք համարձակվում են գովաբանել, փառաբանել Աբդուլ Համիդին, շեշտում է, որ երբ փարիզյան թերթերում նման բաներ է կարդում, ամաշում է հեղինակների փոխարեն եւ համոզվում, որ իր ստոր, ազահ համաքաղաքացիները կաշառք են վերցրել՝ գրելու համար այդ անհեթեթությունները, քանզի նրանք գիտեն, որ սուլթանն ատում է ֆրանսիացիներին: Նա շեշտում է, որ երբ «Փարիզի սոված մուրացկանները՝ ստախոս, դատարկախոս, դավաճան լրագրողները, գովաբանում են դավաճան սուլթանին», անհրաժեշտ է, որ անշահախնդիր մի հեղինակ<sup>6</sup> ներկայացնի խաբված դավաճանին, որը «կոչվում է սուլթան, իսկ իրականում գերմանացիների ծառան է» (էջ 39): Ավելին, բացարձակապես սեւ գույներով նկարագրելով Աբդուլ Համիդին և նրա գործունեությունը, նշել է, որ գրառվածը լոկ այն պատճառներն են, որոնք կործանել են Օսմանյան պետությունը, սակայն իրականում յուրաքանչյուր նախադասություն կարելի է ըն-

<sup>6</sup> Նկատի ունի ինքն իրեն:

դարձակել, դարձնել մեկ գիրք, կազմել բազմահատոր աշխատություն՝ «Թե ինչպե՞ս կարելի է կործանել մի երկրի» վերնագրով (էջ 26):

Հեղինակը շեշտում է նաև, որ այդ խարդախ սրիկան իրեն գովերգելու համար առատաձեռն վճարում է: Այդօրինակ մտքերի առատությունն ընթերցողին մտածելու տեղիք է տալիս, թե այդ «ազնիվ» ֆրանսիացին Մուրադ 5-րդի կողմնակիցներից արդյո՞ք կաշառք չի ստացել նրան փառաբանելու, իսկ հակառակորդներին՝ Աբդուլ Համիդին ու նրա հայ նախնիներին, պախարակելու համար, սակայն լռել է հայերի դեմ իրականացրած նրա եղեռնագործության մասին, որի համար Աբդուլ Համիդն արժանի էր ոչ թե՛ խստագույն կշտամբանքների, այլ՝ պատժի:


Ճշմարտության դեմ մեղանչած շլինելու համար հավելենք, որ նա եւս մեկ անգամ շոշափել է Հայաստանի անունը՝ գրելով, որ եթե այն պետությունները, որոնք այժմ զբաղված են Հայաստանի բարեփոխումներով, հաջողություն չարձանագրեն եւ չարագործ, հավատուրաց, խաբեբա, ստոր սուլթանին իշխանությունից չհեռացնեն, ապա դա կանեն մահմեդականները (էջ 62):

Ֆրանսիացի հեղինակը, անիծելով սուլթանին, շեշտում է, որ նա պետք է պատասխանատվության ենթարկվի Բուլղարիայի անջատման, Երեւանի ու Էջմիածնի, Կիպրոսի, Բոսնիայի ու Հերցեգովինայի կորստյան եւ Մուշ, Սասուն շրջանների համար, որոնք շուտով կարող է կորցնել (էջ 63): Ինչպես տեսնում ենք, քրիստոնյա ֆրանսիացին ողբում է Օսմանյան կայսրության կորուստների համար, անգամ չակնարկելով, որ Մուշն ու Սասունը, Երեւանն ու Էջմիածինը հայկական հողեր ու քաղաքներ են:

## Ի՞նչ է գրել Հայոց եղեռնի մասին իրանական մամուլը 1904-1922թթ.

Օսմանյան կայսրության իրագործած՝ հայերի բնաջնջման գործողությունների թեմային անդրադարձել են նաև 1904-1922թթ. Իրանում լույս տեսնող գրեթե բոլոր խոշոր օրաթերթերը եւ այլ պարբերականներ: Հրապարակված տեղեկություններն ուշագրավ են՝ թերեւս որոշ վերապահումներով՝ իրենց անկողմնակալության տեսանկյունից, քանզի հաճախ հաշվի են առնվել Օսմանյան կայսրության՝ մահմեդական երկիր լինելու հանգամանքը, որի պատճառով որոշ պարբերականներում ոչ միայն փաստերի մեղմացման միտում է նկատվում, այլև երբեմն ակնհայտորեն պաշտպանում են օսմանցիներին: Այսպես, օրինակ, «Ռադ» (Ամպրոպ) օրաթերթը 1915թ. հոկտեմբերի 17-ին «Հայերի ցեղասպանությունը» թղթակցությունում գրել է, որ «Ռոյթեր» գործակալության հեռագրած նյութերից ապշեցուցիչը եւ ուշագրավն Օսմանյան պետությունում Միացյալ Նահանգների դեսպանի զեկույցն է իր պետությանը, որը վերաբերում է հայերի բնաջնջմանն ու թափառական դարձած հայ ընտանիքների գերժանր վիճակին: Այնուհետև, ի պաշտպանություն դավանակիցների, հավելում՝ տեղյակ ենք նաև մահմեդականների նկատմամբ Վանում, Երեւանում եւ Կարսում քրիստոնյաների կատարած զարշելի արարքների մասին: Նույն օրաթերթը 1920թ. հունվարի 28-ին կրկին բացահայտ պաշտպանում է օսմանցիներին ու նրանց տեսակետները: «Պատմական տեսակետներ եւ դրանց կապը ներկա իրավիճակի հետ» հոդվածի «Սակայն հայերը» ենթավերնագրով հատվածում գրել է.

«Օսմանցիները նրանց (հայերին) իրենց կողմը գրավելու նպատակով ջանք չեն խնայել, տարբեր՝ բազմաթիվ եւ բազմաբնույթ խոստումներ են տվել, անգամ բանակցել նրանց կարեւորագույն կուսակցության՝ Դաշնակցության հետ: Նշյալ կուսակցությունը հայտարարել է, թե միակ բանը, որ կարող է անել, այն է, որ բոլոր հայերին, որտեղ էլ որ ապրում են, հաճնարարել՝ հավատարիմ մնալ տվյալ պետությանը եւ կատարել իրենց պարտականությունները բանակում: Թուրքերը, համարելով, որ դա իրականում մերժում է, կրկին ու կրկին ջանք ու եռանդ



գործադրելով՝ ձգտել են հայերին իրենց կողմը գրավել: Մինչդեռ նրանք (հայերը), Կովկասում ստեղծելով կամավորների զինված ջոկատներ, ակնհայտորեն օսմանցիներին հասկացնում էին, թե կովկասյան եւ օսմանյան հայերը հակված չեն Օսմանյան պետության վարած քաղաքականությունն ընդունել: Ավելին, հայերի առաջնորդները բազմիցս բացահայտորեն հայտարարում էին, որ «եթե օսմանցիները պատերազմի մեջ մտնեն դաշակիցների դեմ, ապա լիովին կոչնչանան»: Սա, անշուշտ, նշանակում է, որ այդօրինակ դիրքորոշմամբ մամուլում ցեղասպանության վերաբերյալ տեղ գտած տվյալները ոչ միայն չափազանցված չեն կարող լինել, այլև մեղմացվել են՝ հօգուտ օսմանցիների:

Նշենք նաեւ, որ իրանական մամուլում երբեմն տեղ են գտել, մեղմ ասած, իրականությանը չհամապատասխանող փաստեր: «Իրան» օրաթերթը 1920 թ. հունվարի 2-ին, «Թալեաթ փաշայի եւ Ջամալ փաշայի թռիչքը» թղթակցության մեջ գրել է, թե «Թալան» օրաթերթի հատուկ թղթակիցը Լոնդոնից հեռագրել է, որ, Ստամբուլից օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ երկու թուրք ուղեւոր ձեռքակալվել են երեք գերմանացիների ուղեկցությամբ՝ Կոբանոյի ավերում: Ենթադրվում է, որ թուրքերը Ջամալ եւ Թալեաթ փաշաներն են: Նշվում է, որ վերջիններս մտավախություն են ունեցել, թե Գերմանիան դաշակիցների պահանջով կարող է ձեռքակալել իրենց, ուստի ձգտել են Թուրքեստանում կամ Անդրկովկասում միանալ Էնվեր փաշային, սակայն նրանց ինքնաթիռը վայր է ընկել Կոբանոյի նավահանգստում: Այլ կերպ ասած՝ ինքնաթիռը պետք է բոլշեւիկյան Ռուսաստանի օդային տարածքով թռչեր եւ նրանց հասցներ Էնվերին՝ Թուրքեստանում կամ Անդրկովկասում, բայց Կոբանոյում ձեռքակալվել են:

Ի դեպ, նշենք, որ իրանական մամուլն ակնհայտորեն ներկայացրել է Գերմանիայի մեղսակցությունը Հայոց ցեղասպանությանը: Հատկանշական է նաեւ այն, որ խնդրո առարկա ժամանակահատվածում իրանական մամուլի հրապարակումները շեշտում են, որ թուրք ազգայնականների, երիտթուրքերի եւ քեմալականների միջեւ սերտ կապեր են եղել: Ավելին, վերջիններս շարունակել են «Միություն եւ առաջադիմություն» (Իթթիհատ վա թարաքքի) կուսակցության քաղաքականութ-

յունը հայերի նկատմամբ:

Նշվածի վառ ապացույցը կարող են լինել «Իրան» օրաթերթի 1920թ. մարտի 8-ի եւ նույն թվականի մարտի 20-ի թղթակցությունները:

Ստորև ժամանակագրական կարգով բարգմանաբար ներկայացնենք նշյալ ժամանակահատվածում իրանական մամուլում Հայոց ցեղասպանության մասին տպագրված նյութերից:

«Թարքիաթ»<sup>7</sup> («Ղաստիարակություն») օրաթերթը (1904թ., հունիսի 26, թիվ 317) նշել է՝ այդ օրերին եվրոպական մամուլում գրում են, թե Հայաստանում վերսկսվել են արյունահեղությունները, խռովությունը եւ սադրանքները: Այդ առնչությամբ Ֆրանսիան, Անգլիան եւ Ռուսաստանը, իրավիճակն ուսումնասիրելու եւ արյունահեղությունը կասեցնելու նպատակով, ներկայացուցիչներ են ուղարկել Էրզրում:

«Թարքիաթ»-ը նույն թվականի հուլիսի 26-ին (թիվ 325) գրել է. «Ասում են, թե նորին մեծություն օսմանյան սուլթանը մի քանի մարդկանց, ովքեր հայերի եղեռնի իրականացման հրահրիչներն են եղել, արստրել է եւ հայ ազգի անդորրն ապահովելու համար որոշակի հրամաններ արձակել, որոնք կարող են վերջ դնել խռովությանը: Եվ քանի որ մենք համակրում ենք իսլամական թագավորություններին եւ մադթում հզորություն, ուստի չենք ցանկանում, որ նրանց հպատակներից

<sup>7</sup> Սկզբնական շրջանում լույս է տեսել շաբաթական երկու, ապա՝ երեք անգամ, իսկ ավելի ուշ դարձել է օրաթերթ: Հիմնադիրները շեշտել են, որ այն լուսավորչական նպատակներ հետապնդող գրական, գիտական, հասարակական եւ քաղաքական պարբերական է: Իրանի մամուլի պատմության մեջ համախի իշխարակվում է որպես առաջին ոչ պետական, անկախ պարբերական ([www.encyclopaediaislamica.com](http://www.encyclopaediaislamica.com)): Մակայն այն պահից, երբ «Թարքիաթն» սկսել է ֆինանսավորել Չեյնոլարեդին, Թադիովը որդեգրել է ավելի ընդգծված համախալամիստական եւ թուրքամետ կողմնորոշում: Թադիովը 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի Բաքվի նավթարդյունաբերության ոլորտի միլիոնատերերից էր եւ առավելապես հայրնի էր իբրեւ ադրբեջանցի քաղաքական եւ հասարակական գործիչ: Այսօր ադրբեջանցիները նրան համարում են ոչ միայն Ադրբեջանի, այլև մահմեդական աշխարհի կարևոր դեմքերից, ովանք էլ նրան անվանում են «մահմեդական ազգերի հայր»:

որել մեկն ատելությամբ լցված լինի պետության նկատմամբ: Հետեւաբար՝ այդ ավետիսը մեզ ուրախացրել է:

«Նդայ-ե վաթան»<sup>8</sup> («Հայրենիքի կանչ») օրաթերթը 1908թ. հունվարի 15-ին (թիվ 155) քաղաքական սյունակում «Արդյոք Օսմանյան պետությանը ձեռնոտո՞ւ է Իրանի դեմ կռիվը» վերտառությամբ հրապարակման մեջ գրել է, որ հայերն օսմանյան իշխանության հպատակներից են, որոնց դեմ այդ պետության գործած բռնությունը մեկընդմիջտ գրանցվելու է պատմության մեջ: Այդ ազգը միշտ էլ դեմ է եղել օսմանցիներին, բազմաթիվ հայեր երկրից փախել և ապաստանել են Իրանում, որտեղ կառավարության հովանու ներքո հանգիստ ապրում են: Ուստի, եթե Օսմանյան պետությունը երբեւէ պատերազմ սկսի Իրանի դեմ, ապա օսմանահպատակ բոլոր հայերը կաջակցեն Իրանին: Նման պատերազմում օսմանցիները խայտառակությունից զատ այլ բան չեն շահի:

«Շամս» («Արեգակ») շաբաթաթերթը 1909թ. հուլիսի 1-ին տեղեկացրել է, որ Եդիշե Դուրյան Էֆենդին նշանակվել է հայերի նոր հոգեւոր առաջնորդ: Նա Բարձր դռանը դիմում է հղել, որ նախօրոք հաստատվել է Հայոց ազգային խորհրդում: Այդ դիմումով մասնավորապես պահանջվում է՝ ա) Անատոլիայում հայերի կյանքի, ունեցվածքի եւ տարածքների ապահովություն, բ) իսլամ ընդունած հայ կանանց եւ աղջիկների վերադարձը դեպի հայ եկեղեցի, գ) Աղանայի կոտորածների վնասի հատուցում, դ) օսմանյան գրագրություններից հանել «տարածվող պալար» (Արդուլ Համիդը հայերին Օսմանյան կայսրության մարմնի վրա տարածվող, խորացող պալար էր անվանում) արտահայտությունը եւ, ինչպես նախկինում, հայերին անվանել հայ եւ այլն:

Նույն պարբերականի հիշյալ համարի մեկ այլ թղթակցության մեջ կարդում ենք, որ Աղանայի ջարդերի հարցն ուսումնասիրելու նպատակով հայոց առաջնորդարանը եւ իշխանությունները ստեղծել են համատեղ հանձնաժողով եւ ուղարկել Աղանա:

<sup>8</sup> Առաջին համարը լույս է տեսել 1906թ. դեկտեմբերի 27-ին՝ Իրանում Սահմանադրական առաջին հեղափոխությունից մի քանի ամիս անց, ունեցել է իշխանամետ կողմնորոշում: Պարբերականի առաջին էջում մշտապես տպագրվել են պալարականների և արքայական ընդհանրի լուսանկարները:

«Շամս»<sup>9</sup> շաբաթաթերթը 1909թ. հունիսի 8-ին գրել է. «Ինչպես մեր թերթը տեղեկացրել է, Բարձր դռանը հայտնի է դարձել, որ Մալաթիայի եւ Այնթապի հայերի զգալի հատվածն արտագաղթել է, եւ եթե արտագաղթը նույն տեմպերով շարունակվի, ապա այնտեղ շուտով ոչ մի հայ չի մնա: Արտագաղթը կանխելու նպատակով պետությունը որոշել է թույլ չտալ նրանց երկրից դուրս գնալ»:

«Ասր-ե ջաղիդ»<sup>10</sup> («Նոր դար») օրաթերթը 1915 թ. սեպտեմբերի 18-ին գրել է, որ Օսմանյան պետության հոգեւոր առաջնորդը (շեյխուլիսլամը) խիստ դեմ է արտահայտվել Աղանայի հայերի ոչնչացմանը եւ, ի նշան բողոքի, հրաժարական է տվել: Հրաժարականի լուրը հաստատվել է:

«Ռ-ադ»<sup>11</sup> («Ամպրոպ») օրաթերթը 1915 թ. սեպտեմբերի 31-ի լուրերում, «Բաքվում խուլերա չկա» վերնագրի ներքո տեղեկացնում է, որ համաձայն Բաքվում Իրանի հյուպատոսի՝ Թեհրան հղած հեռագրի, Անդրկովկասում խուլերայի համաճարակ չկա, քանի որ Թիֆլիզում ու Երեւանում ընդհանուր առմամբ օրական 5-6 մարդ է հիվանդանում: Պատկերն այլ է Գյումրիում եւ Ուչքելիսայում, որտեղ Օսմանյան պե-

<sup>9</sup> «Շամս» պարսկալեզու շաբաթաթերթը հրատարակել են Իրանի Սահմանադրական հեղափոխության ակտիվիստները, որոնք արտագաղթել էին օսմանյան Թուրքիա: Այն տպագրվել է Սրամբուլում, սակայն տարածվել է Իրանի Սահմանադրական հեղափոխության ակտիվիստների շրջանակներում ողջ Իրանում, մասնավորապես՝ Թավրիզում: Հեղափոխողներից ոմանք կարևորում են «Շամսի» դերը հեղափոխության հաջողության հարցում: Շաբաթաթերթն ընդամենը շուրջ 3 տարվա կյանք է ունեցել: «Շամսն» համարվել է պարսկական, քաղաքական, տնտեսական և գրական պարբերական ([www.ical.ir](http://www.ical.ir)):

<sup>10</sup> Հեյրասահմանադրական հեղափոխության իշխանամետ պարբերական:

<sup>11</sup> 1910թ. հիմնադրել է 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի հայրնի քաղաքական գործիչ (կարճ ժամանակ եղել է վարչապետ, նաև Իրանի խորհրդարանի անդամ), լրագրող Մեյնեջ Չիարդդին Թարաթարային, որը Սահմանադրական հեղափոխության ջարդարվածներից էր, հայրնի էր նաև իր քսգահայի անգլիամետությանը: Ֆինանսավորել է Թեհրանում Մեծ Բրիտանիայի դեսպանությունը, հայրնի էր որպես անգլիամետ պարբերական: Հրատարակվել է մինչև 1920թ.: Ռեզա շահի (այն ժամանակ՝ Ռեզա խանի) զինվորական հեղաշրջումից հետո փակվել է ի թիվս այլ պարբերականների:

տությունից փախած ավելի քան 200 հազար մարդ է կոտակվել, եւ օրական շուրջ 200-ը մեռնում է, սակայն նրանց մահվան պատճառը, ոչ թե խոլերան է, այլ սովը, դժբախտությունն ու կյանքի անտանելի պայմանները:

«Ասր-ե ջադիդ» օրաթերթը 1915թ. հոկտեմբերի 12-ին «Հայերի կոտորածները» վերտառությամբ հոդվածում գրել է, որ հայերի նկատմամբ թուրքերի վերաբերմունքին բուլոն են տեղյակ. թուրք ղեկավարների նպատակը հայերի բնաջնջումն է, 800 հազարից մինչեւ մեկ միլիոն մարդ կոտորել են: Այն հայերը, որոնք իսլամ են ընդունում, փրկվում են մահից, սակայն բռնագրավվում է ողջ ունեցվածքը: Բացի այդ՝ նրանց կանանց, քույրերին ու աղջիկներին ամուսնացնում են թուրքերի հետ, որպեսզի վերջիններս չփորձեն հեռանալ իսլամից: Հայտնում են, որ Միացյալ Նահանգների դեսպանը խիստ բողոք է ներկայացրել հայերի ցեղասպանության առնչությամբ, շեշտել, որ դա վտանգել է ամերիկացի քահանաների անվտանգությունը: Ի պատասխան այդ բողոքի՝ հաջորդ օրը 20 հայեր Ստամբուլի փողոցներում կախաղան են բարձրացվել:

«Ռ-ադ» օրաթերթը 1915թ. հոկտեմբերի 15-ին, «Միացյալ Նահանգների միջնորդությունը հանուն հայերի» վերնագրով տեղեկատվության մեջ ասում է, որ Միացյալ Նահանգների ԱԳ նախարարությունը կոմս Բերնսդորֆից խնդրել է, օգտագործելով իր ազդեցությունը, խրախուսել Գերմանիային՝ միջնորդելու հօգուտ հայերի:

«Ասր-ե ջադիդ»-ը նույն թվականի հոկտեմբերի 28-ի համարում «Հայերի բնաջնջումը» հրապարակման մեջ, հիմք ընդունելով լոնդոնյան «Թայմս» օրաթերթի սեպտեմբերյան համարներից մեկի առաջնորդող հոդվածը, գրել է, որ Փոքր Ասիայում հայերի ցեղասպանության ծավալները հասել են սարսափելի չափերի: Հայերի նկատմամբ սարսափազդու ծավալներով իրականացված բռնությունը, դաժանությունն ու անխղճությունը Մերձավոր Արեւելքի արյունալի պատմության մեջ եզակի են: Այդօրինակ բնաջնջման դեպքի կարելի է հսկողիպել միայն բուլղարների պատմության մեջ: Երբ հաղթանակած օսմանյան բանակը ոտք դրեց Բալկանյան թերակղզի, համառորեն ձգտում էր իսպառ բնաջնջել բուլղար ցեղը, որպեսզի «բուլղար» բառը վերանար

եվրոպացիների հիշողությունից: Թուրքերն այսօր ձգտում են հայերին արժանացնել հենց այդ դաժան ճակատագրին: Թվում է, թե երիտթուրքերը նպատակաճանաչում են հիմնովին վերացնելու հայ ազգը եւ այդպիսով այդ հարցից լիովին ձեռքբազատվելու: Օսմանյան պետության կազմակերպած 1894, 1896 եւ 1909 թվականների՝ հայերի կոտորածները, համեմատած այն ամենի հետ, որ այսօր է տեղի ունենում, անէական, աննշան են, գրում է թերթը: 1909 թ. «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեի ղեկավարներն արեւմտյան երկրների մոտ ձեռագնում էին, թե պատակ չեն ունեցել Ադանայում եւ այլ քաղաքներում կոտորել հայերին եւ պատասխանատվություն չեն կրում այդ անպատկառության համար, սակայն այժմ պարզվում է, որ հայերն էին իրավացի: Իրականում «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեն թեւ հավակնում էր բարեփոխումների ու առաջադիմության, սակայն 1909թ. հայերի ջարդերի կազմակերպիչն է եղել:

Այդ չարագործությունների հարցում սփոփիչ գոնե մեկ բան կա՝ դրանց անմիջական պատասխանատուներից երկուսը՝ Էնվեր փաշան եւ Թալեաթ բեյը, թուրքական ցեղին չեն պատկանում. նրանք հաշվենկատորեն են մահմեդականություն ընդունել: Էնվերը կիսով չափ լեհ է, իսկ Թալեաթը զնչու է, որոնք ո՛չ հայերնիք, ո՛չ երկիր ունեն: Հայերի նկատմամբ Էնվերի թշնամանքը բացատրվում է այն բանով, որ կովկասյան մարտերի ժամանակ հայերն օգնել են ռուսներին:

Այդուհանդերձ, կասկածից վեր է, որ այս բոլոր հանցագործությունների բուն պատճառը եւ մեկուկես միլիոն հայերի բնաջնջման պատասխանատուն Գերմանիան է: Զանգի ո՛չ Թալեաթը եւ ո՛չ էլ Էնվերը պաշտոնական Կ. Պոլիսի իրական ղեկավարները չէին, այլ լոկ Գերմանիայի կամակատարները: Բեռլինի արքունիքի միայն մեկ խոսքը կարող էր վերջ դնել այդ սպանողին, ավերին ու կողոպուտին, որի հետեւանքով Փոքր Ասիայի զգալի հատվածն ավերվել, վերածվել է խոպանի: Կայսրն ի գորտու էր մեկ ակնարկով հայերի սպանողը կանխել, գոնե հիմա կմիջամտի՞. ոչ, դա անհավանական է: «Մեր թղթակիցը Գերմանիայի մի քանի հյուպատոսների անուններ է նշել, որոնք թուրքերի հետ լիովին համագործակցում են հայերի ոչնչացման համար: Մեզ թվում էր, թե Գերմանիայի կայսրը եւ գերմանացիները չեն գերազանցի Բեյ-

գիայում կատարած իրենց չարագործությունները, սակայն սխալվել ենք: Եթե գերմանացիները չաջակցեին «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեին, ապա, հավանաբար, նրանք կհոգնեին իրենց սեւ գործից, բայց քանի որ մշտապես գերմանացիների հետ են, հայերի համար այլևս որեւէ հույս չի մնում: Իսկ դաշնակիցները կարող են միայն ոճրագործ Թալեաթին ու նրա զինակիցներին պատժել, քանզի պատերազմում լուրջ փոփոխությունները նկատելի են, ուստի՝ նրանք դաշնակիցների ձեռքը կընկնեն, իսկ վերջիններս նրանց հետ կվարվեն, ինչպես վարվում են մարդասպանների հետ»:

«**Ռ-ադը**» օրաթերթը 1915թ. նոյեմբերի 22-ի համարում գրել է, որ Անգլիայի ԱԳ փոխնախարարը, ի պատասխան նշյալ նախարարությանն ուղղված՝ հայերի եղեռնի վերաբերյալ խորհրդարանի հարցապնդման, նշել է, որ չեզոք երկրների գործունեության մասին իրազեկված չէ: Սակայն Վատիկանը բանակցություններ է վարում Օսմանյան պետության հետ: Բացի այդ, Գերմանիային եւ Ավստրիային հարկադրել է հայերի ջարդերն ու կողոպուտը կասեցնելու նպատակով բանակցել օսմանցիների հետ:

«**Ռ-ադը**» 1915թ. նոյեմբերի 23-ի համարում, անդրադառնալով գերմանական մամուլին, «Կոմս Ռոնթլոն եւ հայկական հարցը» վերնագրի ներքո գրել է, որ կոմս Ռոնթլոն «Դոյչե ցայթունգ» պարբերականում նշել է, թե Օսմանյան պետությանն արդեն հաջողվել է կասեցնել այն երկրների միջամտություններն իր երկրի ներքին գործերին, որոնց նպատակն Օսմանյան կայսրությունը կողոպտելն է. «Այսուհետև որեւէ երկիր չի միջամտելու Օսմանիայի ներքին գործերին: Քանզի օսմանցիներն իրենք ավելի լավ գիտեն, թե ինչպես վարվել այդ անհնազանդ հայերի հետ, անհրաժեշտ չէ, որ այդ հարցով մենք միջամտենք»: Իսկ «Ֆրանկֆուրտեր ցայթունգ» պարբերականում կոմս Ռոնթլոն շեշտել է. «Մեզ՝ գերմանացիներին եւ գերմանական կայսրության համար որեւէ նշանակություն չունի այն, որ Անգլիայի Լորդերի պալատում մի լորդ հայտարարում է, թե 800 հազար հայեր ենթարկվել են հարձակման կամ մի ուրիշ լորդ կասի, թե այդ թիվը չափազանցված է: Մեզ համար միևնույնն է, թե ամերիկացիները, անգլիացիներն ու ֆրանսիացիները մե՞զ կմեղադրեն այդ ոճրագործությունների համար, թե՞ կասեն, որ

մենք դրանց չենք մասնակցել»:

«**Ռ-ադը**» օրաթերթը 1916թ. փետրվարի 24-ին «Միացյալ Նահանգների բողոքը» վերտառությամբ տեղեկատվության մեջ նշել է, որ Միացյալ Նահանգները բողոքի հեռագիր է հղել Օսմանյան պետությանը՝ հայոց ջարդերի կապակցությամբ՝ հույս հայտնելով, թե մեղավորները կպատժվեն: Հեռագրում միաժամանակ շեշտվել է՝ այլապես Միացյալ Նահանգները կդիմի ավելի լուրջ միջոցների:

«**Ռ-ադը**» նույն քվականի մարտի 3-ին, «Մուշ քաղաքը» բղթակցության մեջ նշում է, որ այն միջնադարում օսմանյան Հայաստանի կարևոր քաղաքներից էր: Անգլիական մի հյուպատոսի վկայությամբ՝ 1838թ. Մուշում բնակվել են 500 հայ եւ 700 մահմեդական ընտանիքներ: Բայց կասկածից վեր է, որ նշյալ քվականից ի վեր մահմեդականների քանակը կտրուկ աճել է: Մուշի բնակչությունն այժմ 40-45 հազար է, որի 67 տոկոսը մահմեդականներ են, ընդ որում, հիմնականում՝ քրդեր, իսկ հայերը բնակչության միայն 28 տոկոսն են կազմում: Մուշի ղեկավարությունը թուրք է, իսկ առեստրով ու արհեստներով զբաղվում են հայերը:

«**Ռ-ադը**» 1916թ. մարտի 5-ին, կրկին անդրադառնալով հայոց զանգվածային ջարդերին, գրել է, որ 800 հազար հայերի ոչնչացման գործում գլխավոր դերակատարը գերմանացիներն են:

**Նույն օրաթերթը** 1916թ. ապրիլի 18-ին «Հայերի եւ Հայաստանի ճակատագիրը» հոդվածում նշել է. «Այնուհետև Մելիքովը (մեզ անհայտ անձնավորություն- Է. Բ.) զարմանալի եւ սրտամորմոք պատմություններ էր պատմում Հայաստանում թուրքերի ձեռքով կատարված արյունալի ողբերգությունների, հայերին պատճառած սրտակեղեք աղետների ու դժբախտությունների մասին: Հավելելով, որ ռուսական պետությունը պետք է այն բոլոր հայերին, ովքեր իրենց կյանքը, ունեցվածքը, հայրենիքը զոհաբերեցին ռուսներին աջակցելու համար, վերադարձնի հայրենիք եւ ապահովի ներքին հարցերում անսասան անկախությունը՝ ի հատուցում նրանց անգնահատելի ծառայությունների: Սակայն, ցավոք, մեզ անհայտ պատճառներով, վկա ենք հայերի նկատմամբ ռուսների վերաբերմունքի փոփոխության, վերջիններս հայերի դեմ գործադրում են անասելի բռնություններ: Օրինակ՝ առժամա-

նակ բռնագրավել եւ պետական պահեստներում պահեստավորել են նրանց ունեցվածքը, բացի այդ՝ հպատակ այլ ազգերին գերադասում են հայերից, հովանավորում են քրդերին»:

«**Ռ-ադ**» օրաթերթի 1916թ. մայիսի 4-ի համարում տեղ գտած «Հայերի սպանություններն Օսմանիայում» վերնագրով նյութը, վկայակոչելով նույն թվականի ապրիլի 21-ի՝ ռումինական «Աբուք» օրաթերթը, գրել է, որ, հավաստի աղբյուրների վկայությամբ, պատերազմի սկզբից առ այսօր թուրքերը մեկ միլիոն հայերի եղեռնի են ենթարկել, այդ թվում՝ 100 հազար հայ կաթոլիկների: Միացյալ Նահանգների ջանքերը՝ թուրքերի նողկալի արարքները կասեցնելու ուղղությամբ, առայժմ ապարդյուն են:

«**Ռ-ադի**» նույն թվականի մայիսի 22-ի համարում «Օսմանիան եւ հայերը» հրապարակման մեջ կարդում ենք, որ «Ռ-ուսլիավիդո Մուսկեյը» գրում է, որ Օսմանիայի ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը գերմանական թերթերից մեկի թղթակցին հայտնել է, թե հայերը ջանքեր են գործադրում Օսմանյան կայսրության փլուզման ուղղությամբ՝ հավելելով, որ պատերազմի սկզբին կայսրության եւ Ռուսաստանի հայերը ձեռավորել են խորհուրդ, որտեղ որոշել են, որ Կովկասի հայերը պայքար սկսեն օսմանցիների դեմ, իսկ օսմանյան հայերն սպասեն մինչեւ ռուսների գործը մտնի Փոքր Ասիա: Ռուստի՝ սկսվել է հայերի խուզարկությունը, հայտնաբերվել է զգալի չափով զենք, ինչի հետեւանքով անհրաժեշտ է դարձել հայերին հեռացնել սահմանային գծից: Հայերի բնաջնջման համար Օսմանյան պետությունը պատասխանատվություն չի կրում, ավելին, հայերի առաջին կոտորածների ժամանակ թուրք հեծելազորի որոշ խմբեր հայերին պաշտպանել են քրդերի հարձակումներից: Համենայնդեպս, Թալեաթ բեյը այդ ցավալի դեպքերի առնչությամբ վշտացած է:

«**Թարրիզ**»<sup>12</sup> օրաթերթը 1919թ. մայիսի 21-ին, « Սով Ռուսաստանի

<sup>12</sup> Տեղական օրաթերթ էր, որը, որոշ ընդհարումներով, փրկագրվել է Թավրիզում 1910-61թթ.: Օրաթերթի կարգախոսն ի սկզբանե եղել է «ազգային ազատություններ, հասարակական, քաղաքական, տնտեսական խնդիրների արձարծուն»: «Թարրիզը» փակվել է Խորհրդային Միության և

հարավում եւ Հայաստանում» վերնագրով տեղեկության մեջ գրել է, որ օսմանյան գործերի՝ նշյալ տարածքներում սննդամթերքի ոչնչացման եւ հավիչտակության պատճառով ժողովուրդը սովի է մատնվել, այն աստիճանի, որ մարդիկ խոտերով ու յոնջայով են սնվում:

Նույն պարբերականը 1919թ. հունիսի 21-ին, «Օսմանցի բանտարկյալները» վերնագրով հաղորդագրության մեջ նշել է, որ Լոնդոն է բերվել հայերի բնաջնջման մեղադրանքով ձերբակալված 66 օսմանցի:

«**Իրան**»<sup>13</sup> օրաթերթը 1919թ. հուլիսի 9-ին նշել է, որ, ըստ հայկական լրատվական կենտրոնի, Օսմանյան պետության գերագույն դատարանն էնվեր փաշային, Թալեաթին, Ջեմալին եւ դոկտոր Նազըմին 10 օր ժամանակ էր տվել, որպեսզի կարողանան հասնել Ստամբուլ եւ ներկայանալ դատարան, սակայն, քանի որ նրանք հրաժարվում են իրենց մեղավոր ճանաչելուց, չեն ներկայացել դատավարության: Դատարանը որոշում է կայացրել նրանց զրկել աշխատավարձից, բռնագրավել ունեցվածքն ու կալվածքները: Հայ եւ հույն աքսորյալներին օգնելու նպատակով ձեռավորվել է հանձնաժողով, որի պատվավոր նախագահը Ամերիկայի հյուպատոս միստր Ռուանդեղն է:

Նույն թվականի հուլիսի 18-ին «Իրան» օրաթերթը «Օսմանիայի անցյալն ու ապագան» թղթակցության մեջ գրել է, որ պատերազմի ընթացքում «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեի ղեկավարների գործադրած բռնություններն ու ճնշումները հայերի ու արաբների դեմ սաստկացել են... Պատերազմի կեսերին Հայաստանից ու Միջինասիայից հազարավոր ընտանիքներ քվեցին դեպի Արաբստանի անապատներ՝ զրկվելով սննդամթերքից... Զրդերն էլ, որ հայերի հետ վաղեմի թշնամանք ունեին, առիթն օգտագործեցին: Ռուսահայաստանում հայերը մահմեդականներին ցիրուցան են արել, իսկ Օսմանիայում հազար-հազարավոր հայեր ամենավայրենի մեթոդներով ոչնչացվել են, որի հետեւանքով Օսմանյան պետության հանդեպ Եվրոպայում եւ Ամերիկայում

Խորհրդային Ադրբեջանի անմիջական աջակցությամբ՝ Իրանի Ադրբեջանում հռչակված ինքնավարության ընթացքում: Այն պարսկալիզոն էր և հազվադեպ թուրքերենի ադրբեջանական տարբերակով նյութեր էին փրկագրվում՝ անեկոլորներ ու հաներուկներ: Սահմանադրական հեղափոխության հանդեպ «Թարրիզի» դիրքորոշումը եղել է չափավոր ([www.encyclopaediaislamica.com](http://www.encyclopaediaislamica.com)):  
<sup>13</sup> Եղել է պաշտոնաթերթ:

ձեռավորվել է հասարակական շատ բացասական կարծիք:

Նույն օրաթերթը 1919թ. հուլիսի 20-ին գրել է, որ անգլիական կարգապահ ուժերը Հալեպում կախաղան են բարձրացրել հայերի վերջին զանգվածային ջարդերի պարագլուխներից 6-ին: Անգլիացիներն այնտեղ էին հրավիրվել, որպեսզի որոշեն կողոպուտների չափը:

«Ռ-ադ» օրաթերթը 1919թ. օգոստոսի 27-ին «Օսմանյան Հայաստանի իրավիճակի եւ հայերի վերաբերյալ» հրապարակման մեջ գրել է, որ Նախիջեւանում ու Շարուրում օսմանցի պաշտոնատարներն են գլխավորում մահմեդական ուժերին եւ աներկյուղ դեկավարում են ռազմական գործերը: Նրանք բնավ էլ չեն փորձում թաքցնել իրենց ազգությունը կամ օսմանական համազգեստը փոխել այլ համազգեստով:

«Իրան» օրաթերթը 1919թ. օգոստոսի 28-ին նշել է, որ Ռուսահայաստանի հարավային հատվածում հայերի եւ քրդերի ու թաթարների միջեւ բախումներ են սկսվել: Վերջին շրջանում մի կողմից՝ Կարսի եւ Սարիղամիշի միջակայքի քրդերն են հարձակվել հայերի վրա, մյուս կողմից՝ թաթարները, որոնք գրավել են Երեւանից 50 մղոն հեռավորության վրա գտնվող Բաշ Թուրշը: Հայերը երկու կողմից հարձակման ենթարկվելով, նահանջել են դեպի Քումուրլի: Այս բախումները տեղի են ունեցել օսմանցի սադրիչների եւ հրահրողների ջանքերով: Թաթարների ուժերի հրամանատարը գնդապետ Խալիլ բեյն է, որին աջակցում են օսմանյան բանակի շուրջ 30 նախկին սպաներ:

«Ռ-ադ» օրաթերթը 1919թ. օգոստոսի 30-ին «Հայերի ջարդերը» վերնագրով հաղորդագրության մեջ գրել է, որ ԱՄՆ նախագահ Վիլսոնը սաստիկ ազդվել է հայերի բնաջնջումից եւ Օսմանիայի վարչապետից խիստ բացատրություն պահանջել: Ըստ Փարիզում լույս տեսնող «Էքլեր» օրաթերթի՝ Փոքր Ասիայում տեղակայված ֆրանսիական զորքերի մի մասը տեղափոխվել է Հայաստան, որպեսզի աջակցի անգլիական ուժերին՝ այստեղ կարգուկանոն պահպանելու համար:

«Թաթրիզ» օրաթերթը 1919թ. հոկտեմբերի 1-ի համարում տպագրել է «Ռոյթեր» գործակալության հաղորդագրությունը, որտեղ նշված է, որ Հայաստանի նախագահը Փարիզում Գերագույն խորհրդից օգնություն է հայցել՝ ընդգծելով «Միություն եւ առաջադիմություն» (Իթքիհադ վե Թարաքքի») կուսակցության դեկավարությամբ, քրդերի եւ

թաթարների մասնակցությամբ հայերի դեմ սկսված հսկայական շարժումը: Վերջիններիս ուժերն էնվեր փաշայի հրամանատարությամբ եւ այլ օսմանցիների մասնակցությամբ, զինադադարի պայմաններում, գործողություններ են ծավալում բոլոր տեղերում, նպատակ ունենալով կապ հաստատել ռուս բոլշեիկների հետ: Մի քանի տեղամասերում հայերի եւ օսմանցիների բախումները շարունակվում են: Ուստի, Հայաստանը դաշնակիցներից խնդրում է, որ միասնաբար կամ առանձին-առանձին զորք ուղարկեն, այլապես իրավիճակն օրհասական է:

«Իրան» օրաթերթը, 1919թ. հոկտեմբերի 7-ին «Իրավիճակի լարվածությունը եւ սուլթանի հնարավոր գահընկեցությունը» վերնագրով քրթակցության մեջ գրել է, որ նոր ձեռավորված կառավարությունը «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության բացարձակ վերահսկողության տակ է: Թվում է, թե նրանք մտադրված են առավելագույնս դիմադրել Խաղաղության համաժողովի որոշումներին եւ շարունակել քրիստոնյաների ոչնչացումը:

«Ռ-ադ» օրաթերթը, 1920թ. փետրվարի 25-ին, «Օսմանյան հարցը եւ հայերի նոր բնաջնջումը» վերնագրով հրապարակման մեջ գրել է, որ, ըստ լոնդոնյան «Թայմս» պարբերականի, օսմանյան եւ քրթական ուժերը Կիլիկիայում 70 հազար հայ են կոտորել: Մարաշի շրջակայքում բախումները դեռ շարունակվում են: Հայերը ողջ ուժերով դիմադրում են, սակայն հսկայական վնասներ եւ կորուստներ են կրել: Օսմանցիները ամենուր ահ ու սարսափ են տարածել:

«Իրան» օրաթերթը, 1920թ. հունվարի 2-ի համարում «Հայերի մտավախությունը» վերնագրով հոդվածում գրել է. «Օսմանցիների ազգայնական շարժումն անչափ մտահոգել է հայերին: Հայերի երկյուղը առավել սաստկացնում է այն, որ դաշնակիցների զորքերը, գտնվելով հարակից տարածքներում, բնավ չեն միջամտում, ավելին, երբ ազգայնականների քայլերը սպառնալից են դառնում, զինվորներն այդտեղից տեղափոխվում են: Հայերին հուսահատեցրել են նաեւ առանձին մարդասպանների գործողությունները: Բացի այդ՝ հայերը ծանր վիճակում են հայտնվել գյուղերից ու ավաններից հեռանալու միջոցների բացակայության եւ ազգայնականների համարձակ գործողությունների պատճառով, որոնք ընդհուպ բռնագրավում են ամերիկյան բարեգոր-



ծական հանձնաժողովի մեքենաները ունեցվածքը եւ սննդամթերքը: Մինչդեռ հայերը կարծում էին, թե դաշնակիցների հաղթանակից հետո այլեւս որեւէ մեկն իրենց չի հալածի, եւ ամենայն շտապողականությամբ փորձում էին վերադառնալ իրենց հայրենիքը: Իսկ այժմ հենց նույն գաղթական հայերը ջանքեր են գործադրում փախչել այդտեղից, գնալ դեպի Մամսուն եւ Սիրիա՝ Շամ: Նրանց դժբախտությունն ու թշվառությունը չափ ու սահման չունեն, իսկ երբ վրա հասնի ձմեռը, սովն ու աղետն անխուսափելի են դառնալու:

Այդ շրջաններում ձեւավորվել է հասարակական կարծիք, համաձայն որի՝ «Միություն եւ առաջադիմություն» կուսակցությանն աջակցում ու խրախուսում են հայտնի և անհայտ արտաքին ուժեր: Բացի այդ, ըստ որոշ ասեկոսեների, ազգայնական ուժերն ու կազմակերպությունները զենք ու զինամթերք են ստանում նաեւ արտերկրից: Մակայն թվում է, թե դաշնակիցները տեղյակ չեն շարժման առաջնորդների եւ հրահրողների տրամադրություններին, չեն հասկանում, որ ամուր կապեր կան այս շարժման եւ «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության ու դրանց կազմակերպությունների միջեւ: Ազգայնականների շարժումը ուղղակիորեն հետեւում է «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության տեսակետներին, մենք դրա համար անհերքելի փաստեր ու փաստարկներ ունենք»:

«Իրան» օրաթերթը, 1920թ. մարտի 8-ին, «Լոնդոն-27» վերնագրով թղթակցության մեջ գրել է, որ Ստամբուլի հայերի հոգեւոր առաջնորդը հեռագրով հայտնել է, որ ֆրանսիական զորքերը փետրվարի 9-ին Մարաշից (Կիլիկիա) հեռացել են, իսկ հաջորդ օրն այդտեղ օսմանցի ազգայնականները 3 հազար հայերի եղեռնի են ենթարկել: 1500-ը փախուստի են դիմել, սակայն նրանց զգալի մասն էլ ցրտի զոհ է դարձել: Մարաշում 20 հազար հայերից 16 հազարը բնաջնջվել են: Թերթը գրել է, որ «Թայմս» օրաթերթի Ստամբուլի թղթակիցն ավելացրել է նաեւ, թե թուրք ազգայնականները կրկին կյանքի են կոչել հայերի արքայման, ոչնչացման ծրագրերը, արքայալների բազմաթիվ խմբեր սահմուկեցուցիչ ձեռով սպանվել են:

«Իրան» օրաթերթը, 1920թ. մարտի 20-ին, մեկ այլ թղթակցության մեջ գրել է. «...իրագեկ աղբյուրները նշում են, որ Ստամբուլում այլեւս

անկանխատեսելի դեպքեր արձանագրելու մտավախություն չկա, սակայն Փոքր Ասիայի այն հատվածներում, որոնք դաշնակիցների վերահսկողությունից դուրս են, իրավիճակը խիստ ծանր է: Ըստ ստացված տեղեկությունների՝ Բուրսայի վիլայեթում ազգայնականներն ավերել ու ոչնչացրել են հայկական գյուղերը: Թուրք ազգայնականների վերահսկողության բոլոր տարածքներում հայոց եղեռնը շարունակվում է»:

«Ռ-ար» օրաթերթը, 1920թ. մարտի 22-ի, «Հայոց ջարդերի հարցի շուրջ» վերտառությամբ հրապարակման մեջ գրել է, որ «Փալմալ գազեթ» պարբերականը տեղեկացնում է, որ Օսմանյան պետությունը չի ընդունում Հայոց մեծ եղեռնի փաստը, սակայն, եթե դաշնակիցների ուսումնասիրությունների արդյունքում կազմված զեկուցագիրն ընդունվի, ապա լուրջ միջոցառումներ կձեռնարկվեն հնարավոր դեպքերից խուսափելու նպատակով, անհրաժեշտ կլինի, որ դաշնակիցների, մասնավորապես ֆրանսիական եւ անգլիական ուժերը Կիլիկիա ուղարկվեն:

«Թաքրիզ» օրաթերթը, 1920թ. սեպտեմբերի 21-ին, «Հայերի խնդրանքն առ 20-ը սեպտեմբերի» վերնագրով հրապարակման մեջ տպագրել է Լոնդոնից ստացված հաղորդագրություն, որտեղ նշվել է, թե Հայաստանի խորհրդարանը, հեռագիր հղելով դաշնակից երկրների խորհրդարաններին, օգնություն է հայցել՝ պահանջելով, որ նրանք թույլ չտան հայոց ազգի ոչնչացումը: Հաշվի առնելով դաշնակից պետությունների անհոգությունը, քուրդ եւ թուրք խմբերը, օսմանցի սպանների հրամանատարությամբ ներթափանցելով երկիր, կոտորում են հայերին: Թեեւ բոլոր հայ տղամարդիկ զինվել են, սակայն այստեղ զենքի եւ սննդամթերքի խիստ պակասություն է զգացվում: Հայերն ի վիճակի չեն դիմադրելու, նրանք վերջիններիս ոչնչացնելու են:

«Իրան» օրաթերթը նույնպես, 1920թ. մարտի 22-ին, «Փալմալ գազեթը» ասում է՝ վերնագրով տեղեկատվության մեջ գրել է, թե. «Օսմանյան պետությունը չի ընդունում Հայոց մեծ եղեռնի փաստը, սակայն, եթե դաշնակիցների ուսումնասիրությունների արդյունքում կազմված զեկուցագիրն ընդունվի, ապա լուրջ միջոցառումներ կձեռնարկվեն, ուստի՝ հնարավոր դեպքերից խուսափելու նպատակով, անհրաժեշտ կլինի Կիլիկիա ուղարկել դաշնակիցների, մասնավորապես՝ ֆրանսիական եւ անգլիական ուժեր:

Նշվածից գատ՝ «Իրան» օրաթերթը նույն օրը, եղեռնի վերաբերյալ մեկ այլ անդրադարձում նշել է, որ Անգլիայի խորհրդարանի ներկայացուցիչների պալատի անդամ Լլոյդ Ջորջը, ի պատասխան Միմորեթիի, հայտարարել է, թե, ցավոք, վերջերս ձեռք բերված փաստերն ու փաստարկներն ապացուցում են, որ հայերի ցեղասպանության վերաբերյալ զեկուցագրերը լիովին համապատասխանում են ճշմարտությանը:

«Իրան» օրաթերթը, 1920թ. մարտի 27-ին, «Լոնդոն» խորագրով տեղեկատվության մեջ գրել է, որ անցյալ օրը Գերագույն խորհուրդը հրապարակել է պաշտոնական մի հաղորդագրություն, որտեղ նշվում է, որ Գերագույն խորհուրդը խորապես զննել է ուսումնասիրել է Օսմանյան պետության հայ եւ այլ ազգերի հպատակների կյանքն ու կայքը պաշտպանելու միջոցառումների հարցը: Հատկանշական է, որ պաշտոնական նշյալ հաղորդագրությունը մշակելու ժամանակ Գերագույն խորհրդի նիստում ներկա են եղել նաեւ՝ Չերչիլը, Լանթը, Նիթին, գեներալ Թուիրսը եւ Նեվիլսը... Միաժամանակ, Ամերիկայի կառավարությունից պահանջվել է, որ մասնակցի հայերին պաշտպանելու միջոցառումներին:

«Իրան» օրաթերթը, 1920թ. մարտի 27-ին, «Պատգամավորների պալատում հայերի դեմ հարձակումները կանխարգելելու հարցն է» քրթակցության մեջ գրել է. «Լլոյդ Ջորջը, ի պատասխան Կիլիկիայում հայերին պաշտպանելու հարցի վերաբերյալ զեկուցագրի, շեշտել է, որ Ֆրանսիայի կառավարությունը Քուրանդի հրամանատարությամբ շտապ միջոցներ է ձեռնարկել ուժերի քանակն զգալիորեն մեծացնելու ուղղությամբ, որպեսզի իրավիճակը կանոնավորվի, եւ Կիլիկիայի հայերի դեմ հարձակումները չկրկնվեն»:

«Ռ-ադ» օրաթերթը, 1920թ. ապրիլի 11-ին, «Հայաբնակ գյուղերի շրջափակումը» վերնագրով հաղորդագրության մեջ գրել է, որ, ըստ «Ռոյթեր» գործակալության, 10 օր է՝ օսմանյան ուժերը շրջափակել են Ջեյթունը եւ մի քանի զինված հայաբնակ այլ գյուղեր, սակայն հայերն առայժմ դիմադրում են:

«Ռ-ադ» օրաթերթը, 1920թ. ապրիլի 28-ին «Հայերի մասին» վերնագրով տեղեկատվության մեջ նշել է, որ «Դեյլի Նյուսի» խորհրդարանական քրթակիցը հայտնել է, թե պատգամավորների պալատում

իշխանամետ եւ ընդդիմադիր կուսակցությունները հույս են հայտնել, որ այսօր եւեթ կառավարությունը կտեղեկացնի, թե Կիլիկիայի հայերի կյանքն ու գույքը պաշտպանելու նպատակով ինչ միջոցառումներ է ձեռք առնելու<sup>14</sup>:

«Ռ-ադ» օրաթերթը 1920թ. մայիսի 10-ին արտատպել է լոնդոնյան «Թայմս» օրաթերթի՝ մարտի 20-ին տպագրված «Հայերի բնաջնջումը» վերնագրով նյութը, որտեղ կարդում ենք. «Օրաթերթի հարգարժան պարոն խմբագիր, ըստ այն նամակի, որ այսօր լույս է տեսել Չեր թերթում, միստր Ամիր Ալին բողոքել է, թե ես նախորդ շաբաթ հայտնել էի, որ Հնդկաստանի մահմեդականները չեն դատապարտել Կիլիկիայում հայերի բնաջնջումը: Սակայն պետք է նշեմ, որ ես հայերի եղեռն ասելով նկատի եմ ունեցել 1915թ. զարհուրելի ոչնչացումը, որի ընթացքում զոհվել են գրեթե մեկ միլիոն կին, տղամարդ, մանուկ ու ծեր, եւ ոչ թե վերջին եղեռնը, որի մասին մանրամասն տեղեկություններ Հնդկաստանում դեռեւս չկան: Իսկ 1915թ. եղեռնի մասին լաված տեղեկությունները 3 տարի առաջ զետեղվել են Կապույտ գրքում եւ հրապարակվել, որից հետո հավաստի աղբյուրներից ստացված տվյալները հաստատել են Կապույտ գրքի նյութերը: Ամիր Ալին ընթերցե՞լ է, արդյոք, Կապույտ գիրքը: Ես հավատացած եմ, որ հազար-հազարավոր մահմեդականներ խստիվ դատապարտում են Հայոց ցեղասպանությունը, բայց եղե՞լ է արդյոք որեւէ հրապարակային դատապարտում՝ մենք այդօրինակ որեւէ ելույթից տեղյակ չենք»:

Ինչպես գրել է «Ռադը», Ամիր Ալին շեշտում է, որ անհրաժեշտ է այդ հարցն անկողմնակալորեն ուսումնասիրել: Թեեւ օսմանցիներին չի հաջողվել հերքել ողջ Մերձավոր Արեւելքում տարածված ճշմարտությունը, սակայն նրանք նշում են, որ այդ քայլին իրենց դրդել են հենց իրենք՝ քրիստոնյաները: Հիշյալ գրքի մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո պարոն Ամիր Ալին կհասկանա, որ նման անհիմն խոսքերը փաստերի խեղաթյուրում են եւ ոչ ավելին: Եթե Ամիր Ալին ընթերցի օսմանյան արքունիքում Միացյալ Նահանգների դեսպանի գրառումները, կտեղեկանա, թե նա ինչ ջանքեր է գործադրել՝ այդ անասելի քայլից օսմանյան կառավարությանը հետ պահելու համար:

<sup>14</sup> «Դեյլի Նյուս», 4-ը մարտի, 1920թ.:

Բայց Էնվերն ու Թալեաթը հայտնել են, թե թուրքերը հավատացած են, որ պետք է հայերին արժատախիլ անել: Այդ տեսակետը պաշտպանել է նաև Գերմանիայի դեսպանը: Եթե մենք Օսմանյան պետության ներկա վարքագիծն ու քաղաքականությունն ուսումնասիրենք, հստակորեն կհասկանանք, որ այն, սկսած 1822 թվականից, երբ հրամայվել է բնաջնջել թանրերին, մինչև բուլղարների 1876թ. և հայերի 1894-96թթ. ու հատկապես 1915թ. սարսափելի ոճիրները, բնավ փոփոխություն չի կրել:

Նույն օրաթերքը, 1920թ. հուլիսի 14-ին, «Հայերի եղեռնի հաստատումը» վերնագրով տեղեկատվության մեջ գրել է, որ Լլոյդ Ջորջն, ի պատասխան սըր Թիսի, հայտարարել է, որ առկա ապացույցներն ու փաստերը վկայում են, թե հայերի ջարդերը Փոքր Ասիայում համապատասխանում են իրականությանը:

«Շաֆադե սորխ»<sup>15</sup> («Կարմիր վերջալույս») օրաթերքը, 1922թ. հոկտեմբերի 19-ին, «Օսմանիա» վերնագրով տեղեկատվության մեջ գրել է. «Ֆարիդ բեկը «Թայմս» օրաթերքի թղթակցին հայտնել է, որ օտարերկրյա քաղաքական գործիչները նշում են, թե թուրքերը 1,5 միլիոն հայ են կոտորել: Դա ինչպե՞ս էր հնարավոր, երբ հայերի թիվն Օսմանյան կայսրությունում 1,5 միլիոնի չէր հասնում»: Անշուշտ, ժամանակի ընթացքում թուրքերը կհերքեն անգամ 500 հազարին եղեռնի ենթարկելը:

«Շաֆադե սորխ» օրաթերքը, ըստ երեսույթին, շատ լավ է ճանաչել թուրքերին, որի ենթադրությունը միանգամայն համընկնում է ճշմարտությանը:

### Հայոց մեծ եղեռնը՝ իրանցի ականատեսների հուշերում

«Օսմանյան պետության իրավիճակը եւ Կոստանդնուպոլսի դրության նկարագրումը»

<sup>15</sup> Հիմնադրել է հասարակական, քաղաքական գործիչ, հայրենի արշակազիր Ալի Դաշբին՝ 1921թ. փետրվարին: Նա օրաթերքի նպատակը համարել է՝ Իրանի հասարակության հեղափոխական ոգին արթուն պահելը: Ընդգծված համակրանք է ունեցել Արաթուրքի ու Թուրքիայի Հանրապետության հանդեպ:

Հայոց մեծ եղեռնի ականատեսներից է եղել նաև Իրանի հռչակավոր գրողներից Մոհամմադ Ալի Ջամալզադեն, այդ մասին նա գրել է իր հուշերում: Սակայն որպեսզի ճիշտ գնահատվեն նրա գրառումները, անհրաժեշտ է ծանոթանալ գրողի կենսագրությանը, որը հակիճ ներկայացնում ենք ստորև:

Մոհամմադ Ալի Ջամալզադեն Իրանի ժամանակակից գրականության ականավոր դեմքերից է: Նա ոչ միայն նովելի ու պատմվածքի ժանրի հիմնադիրն է, այլև, հրաժարվելով անցյալի ճոռոմ, վերամբարձ, խրթին գրելաճից, առաջիններից էր, որ ստեղծագործել է ժողովրդին հասկանալի, պարզ լեզվով: Ասել է թե՛ նա նաև արձակի լեզուն պարզեցնելու համար լուրջ լուծա է ներդրել: Ջամալզադեն ծնվել է 1892թ., Սպահանում: Նրա հայրն Իրանի Սահմանադրական հեղափոխության հայտնի գործիչ Մեյեդ Ջամալըին Վաեզն է, ով Գաջարների հարստության հայտնի բռնապետ Ալիշահի<sup>16</sup> հրամանով ձերբակալվել է եւ սպանվել բանտում: Սակայն մինչ այդ՝ 1905թ. նա որդուն ուղարկել էր Բեյրութ՝ ֆրանսիական քոլեջում ուսումնառության:

Ջամալզադեն, ավարտելով քոլեջը, 1910թ. մեկնել է Ֆրանսիա, ապա Շվեյցարիայի Լո ան քաղաքը, որտեղ համալսարանում սովորել է մինչև 1912թ.: Այնուհետև վերադարձել է Ֆրանսիա, ուսումը շարունակել Գիժոնի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: 1914թ. ավարտելով ուսումը, հրավիրվել է Բեռլին՝ Իրանցի ազգայնականների կոմիտեի հետ համագործակցելու: Նշենք, որ Գերմանիայում իրանցի մի խումբ հայտնի, հիմնականում՝ երիտասարդ մտավորականներ, որոնք հրավիրվել էին Եվրոպայի տարբեր քաղաքներից, ինչպես նաև զգալի թվով՝ Ստամբուլից, հիմնադրել էին Իրանցի ազգայնականների կոմիտեն, որի նպատակն Իրանում Անգլիայի եւ Ռուսաստանի ազդեցության դեմ պայքարն էր: 1915թ. սկզբից Ջամալզադեն համագործակցել է կոմիտեի հետ, որը, ըստ երեսույթին, ձգտում էր նմանվել երիտթուրքերի կոմիտեին: Նշենք, որ անգլո-ռուսական 1907թ., այնուհետև 1915թ. պայմանագրերի համաձայն՝ Իրանը բաժանվել էր նշյալ տերությունների ազդեցության գոտիների: Իսկ կոմի-

<sup>16</sup> Նա ռուսների աջակցությամբ հրեղակոծել է խորհրդարանը եւ հաշվեհարդար արեսել հեղափոխության կողմնակիցների հեղ:

տեն նպատակամղված էր Իրանում Գերմանիայի ազդեցությունն ուժեղացնելուն՝ դրական գնահատելով Օսմանյան պետության մերձեցումը Գերմանիայի հետ, որովհետև բարեկամական կապեր ուներ երիտթուրքերի հետ:

Ջամալզադեն, բնականաբար, առավել բացասաբար էր տրամադրված Իրանում Ղաջարների հարստության հանդեպ, ինչի մասին նա գրել է: Գրողի այդօրինակ տրամադրվածությունն արտացոլվել է նաև նրա հոդվածներում ու ստեղծագործություններում:

1915թ. մարտին նշյալ կոմիտեն նրան գործուղել է Բաղդադ, որտեղ, ըստ նախատեսվածի, Իրանից ժամանած համախոհների գործակցությամբ պարսկերենով լույս է ընծայել «Ռաստախիգ» («Վերածնունդ») հասարակական-քաղաքական պարբերականը: Այնուհետև<sup>16</sup> ամիս Իրանում, հիմնականում՝ Քերմանշահի եւ Լոռստանի նահանգներում, գաղափարակիցների հետ քուրդ եւ լոռ ցեղերի շրջանում քարոզչություն է ծավալել կենտրոնական իշխանության, Անգլիայի եւ Ռուսաստանի դեմ: Բացի այդ՝ ստեղծել է «Նադիր շահի բանակ» անվամբ զինված ջոկատներ, ապա, դեպքերի բերումով, հարկադրված վերադարձել է Բեռլին, որտեղ ապրել է մինչև 1931թ.: Այնուհետև տեղափոխվել է Շվեյցարիա՝ Ժնև, որտեղ ապրել է ստեղծագործել է մինչև կյանքի վերջը: Մահացել է 1997թ.՝ 105 տարեկանում:

Ջամալզադեն, որ նաև խոշոր երգիծաբան է, բեղուն գրիչ ունի, հեղինակել է մեկ տասնյակ գիտական աշխատություններ, պատմվածքների ժողովածուներ, վեպերի ու վիպակների 15 գիրք և հասարակական-քաղաքական բնույթի 5 աշխատություններ, գրքեր, եվրոպացի հեղինակներից պարսկերեն է թարգմանել ավելի քան 12 գործ եւ այլն:

Ջամալզադեի հուշերը հրատարակել են երկու տարբեր հեղինակներ: Առաջինը քառահատոր գիրք է, որը լույս է ընծայել Յահյա Դովլաթաբադին, Ջամալզադեի կենդանության օրոք եւ բազմիցս վերահրատարակվել է, ընդ որում, 6-րդ հրատարակությունը՝ 1992թ.: Երկրորդի համահեղինակները գրողի գրական ժառանգության հոգաբարձուների խորհրդի անդամներ Իրազ Աֆշարը եւ Ալի Դեհբաշին են: Այն լույս է տեսել 1999թ., Թեհրանում, որտեղ հիմնականում գետեղված են նրա հեղինակած եւ տարբեր պարբերականներում լույս ընծայած նյու-

թերը՝ բացառությամբ Հայոց ցեղասպանության վերաբերյալ հոդվածի, որի մասին հղում է արվել այն պարբերականին, որտեղ տպագրվել է: Դրանցում ընդգրկված են նաև Ջամալզադեի հուշերն Առաջին աշխարհամարտից: Նա Բեռլին-Մտամբուլ-Բաղդադ երթուղով Իրան կատարած այցի եւ նույն ճանապարհով վերադարձի ընթացքում ակննատես է եղել հայերի ցեղասպանությանը և գրել է իր հուշերում: Նշենք, որ գրողը բավական ջերմ հարաբերություններ է ունեցել երիտթուրքերի առաջնորդների հետ, որոնց մասին համակրանքով է խոսում՝ իբրև առաջադիմական շարժման ղեկավարների:

Դովլաթաբադիի գրքի 4-րդ հատորի 4-րդ «Օսմանյան պետության իրավիճակը եւ կացությունը Կոստանդնուպոլսում» գլխում Ջամալզադեն, անդրադառնալով իր եւ օսմանցիների հարաբերություններին, գրել է. «Ինչ վերաբերում է իմ եւ օսմանցիների փոխհարաբերություններին, ապա իմ՝ Կոստանդնուպոլիս ժամանելուց երկու օր անց, Թալեաթ փաշան, որ այժմ ներքին գործերի նախարար է, տեղեկացել էր գալստյանս մասին եւ անմիջապես հրավիրել Բարձր դուռ: Նա հարց ու փորձ արեց իմ եւ ուղեկիցներիս մասին, հարցերին տվեցի սպառիչ պատասխաններ: Ապա շարունակեցի. «Բաղդադից ճանապարհվելիս մտադրվել էի Չեզ հետ խոսել երկու հարցի շուրջ, սակայն ճանապարհի ընթացքում հավելվեց 3-րդ հարցը: Ես ցանկանում եմ խոսացություն սկսել հենց 3-րդից»:

Օսմանյան պետության ՆԳ նախարարն ըստ երեւոյթին սպասում էր այդ հարցին: Ես շեշտեցի. «Հայերի նկատմամբ այդպես մի վարվեք, քանզի այդօրինակ վերաբերմունքն անգամ եթե վնասակար չլինի ձեր իսլամականության ու օսմանականության համար, ապա դա Ձեր մարդկային նկարագրին լուրջ հարված է»: Նա խիստ զայրացավ եւ ասաց. «Դուք չգիտեք, թե նրանք Վանում ինչպես են վարվել մահմեդականների հետ, ինչպիսի անգթությամբ եւ անողոր են վերաբերվել մահմեդական կանանց ու երեխաներին»: Ասացի, որ տղամարդիկ են այդպես վարվել, մինչդեռ նրանց կանայք ու երեխաները մեր փոքրիկների նման անմեղ են: Թալեաթը զարմացած հարցրեց՝ ի՞նչ ես տեսել, որ այդպես վրդովվել եմ: Ես տեսածներիցս որոշ հատվածներ պատմեցի: Նա եւս ախրեց եւ ասաց. «Պետք է խոստովանեմ, որ մեր զինվորա-

կանները հայերի նկատմամբ ավելի վատ են վարվել, քան հրամայվել է»: Նրան ասացի, որ առանձնասենյակում տեղի ունեցած խոսակցությունն ինձ համար որեւէ նշանակություն չունի, ապա պնդեցի. «Ձեր տեսակետը պետք է լսի ողջ ժողովուրդը: Մարդիկ պետք է իմանան՝ կառավարությունը չէր ցանկանա, որ բռնագաղթող հայերի նկատմամբ այդ աստիճան դաժանություն դրսևտրվեր: Հրամայեք, որ մեղմացվի հայերի նկատմամբ վերաբերմունքը»: Ջամալզադեն Թալեաթի հետ հայերի հարցի շուրջ քննարկումն ավարտում է հետևյալ նախադասությամբ. «Ըստ երեույթիմ, Թալեաթը, հաշվի առնելով իմ խորհուրդները, իրագործել է ինձ տված խոստումը»: Այդ հանդիպումը տեղի է ունեցել 1916թ. ամռանը:

Երկրորդ հարցը, որ Ջամալզադեն քննարկել է Թալեաթի հետ, դեպի Իրանի մայրաքաղաք օսմանյան գորքերի առաջխաղացումն էր, որին միաժամանակ դեմ էին կենտրոնական իշխանության եւ ընդդիմության՝ հակառուսական, հակաանգլիական<sup>17</sup> ուժերը: Ջամալզադեն պնդել է, որ ինքը նույնպես դեմ է այդ առաջխաղացմանը, իսկ Թալեաթը նշել է, թե այդ քայլն օգտակար է. թող Թեհրանը մաքրեն: Ջամալզադեն ի պատասխան շեշտել է, որ նախ՝ մինչ այդ ռուսները եւ անգլիացիները կհասցեն, շահին տեղափոխելով, փոխել մայրաքաղաքը, մյուս կողմից՝ եթե հակառակորդը հարձակվի Բաղդադի վրա, Թեհրան հասած ուժերին հետ կանչելը շատ ավելի դժվար կլինի: Թալեաթը հայտնում է, թե ինքը ռազմական հարցերին քաջատեղյակ չէ, եւ այդ հարցը պետք է քննարկվի ռազմական նախարար Էնվեր փաշայի հետ: Երկու օր անց Ջամալզադեն հանդիպում է վերջինիս եւ, ինչպես նշվում է, նրան հաջողվում է համոզել, որ Թեհրանի ուղղությամբ գորաշարժն անիմաստ է: Իրականում, շատ չանցած, անգլիացիները գրավում են Բաղդադը, իսկ օսմանյան գորքերը Համադանից վերադառնում, հեռանում են Իրանից:

Երրորդ հարցը, որի շուրջ բանակցել է Ջամալզադեն Թալեաթի հետ, իսլամական միասնության խնդիրն էր<sup>18</sup>: Ջամալզադեն Թալեա-

<sup>17</sup> Ձեռավորվել էին Իրանի ազգայնականների կոմիտեի ջանքերով, որի համար Ջամալզադեն ժամանել էր Իրան:

<sup>18</sup> Հայրնի է, որ երկրորդները պակությունքիսրական գաղափարները չգպրում էին իրականացնել իսլամական միասնության դրոշի ներքո:

թին խորհուրդ է տվել իրանցիների հետ չխոսել իսլամական միասնության մասին, սակայն նա զայրացած հարցրել է՝ ինչո՞ւ, նրանք մահմեդական չե՞ն: Հաստատելով, որ մահմեդական են, Ջամալզադեն հավելել է, թե նրանք նախ՝ իրանցի են, ապա՝ շիա եւ հետո միայն՝ մահմեդական: Ուստի, իրանցիներին իսլամի դրոշի ներքո միասնության հրավերը կհանգեցնի ներկրոնական նոր տարածայնությունների, որը դարեր շարունակ թուլացրել էր երկու ազգերին: Հետեւաբար ինչ միասնության մասին ուզում եք, կարող եք խոսել իրանցիների հետ, բայց ո՛չ կրոնական: Թողեք այդ սաղրիչ հարցը քնած մնա:

Ջամալզադեն հաջողվում է համոզել Թալեաթին, որ հարցը ներկայացնի նաեւ «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության դեկավարներին: Վերջում նրանք որոշում են հաճախակի հանդիպել:

\* \* \*

Դովաթաբադի կազմած գրքի երկրորդ՝ «Հալեպի ճանապարհը, հայերի պատմությունն ու իրավիճակը Կոստանդնուպոլսում» գլխում Ջամալզադեն նշում է, որ այդ ճանապարհով 5-րդ անգամ էր գնում Կոստանդնուպոլիս<sup>19</sup> եւ որեւէ ուշագրավ նորություն չի նկատել՝ չհաշված ճանապարհաշինական աշխատանքները: Հետո ավելացնում է, որ այդ ճանապարհին ականատես է եղել փախստական հայերի՝ Օսմանյան պետության պատճառած դժբախտություններին: Այդօրինակ քաղաքականությունը բացատրում է կարճ նախաբանում. «Հայերը, ասել է թե՛ Դաշնակցություն կուսակցությունը, տարիներ շարունակ գործում են ընդդեմ Օսմանյան պետության: Վերջինս մշտապես ջանքեր է գործադրել նրանց սաղրանքները կանխարգելելու ուղղությամբ: Մուլթան Արդուլ Համիդ 2-րդը հայերի նկատմամբ խիստ քաղաքականություն է իրականացրել: «Միություն եւ առաջադիմություն» երկրում սահմանադրական վարչակարգի հաստատումից հետո, երբ անցավ իշխանության գլուխ, իր քաղաքական կարեւոր նպատակներից էր համարում հայերի ոտնձգությունների արգելակումը: Այսուհանդերձ, երկրորդները հաշվի էին առնում նաեւ համաշխարհային կարծիքն ու ժամանակաշրջանը: Պատերազմի սկզբին հայերի թիվը Օսմանյան

<sup>19</sup> 1916թ. ամռանը նա Բաղդադից վերադառնում էր Բեռլին:

պետությունում շատ մեծ էր, իսկ նրանք հարուստ և համարձակ էին, զենք ունեին, ուստի, հաշվի առնելով թուրքերի թշնամանքն իրենց նկատմամբ, հնարավոր էր, որ գործիք դառնային թշնամիների ձեռքին: Մանավանդ որ, հայերի առաջնորդների և ռուսների ու անգլիացիների միջև ստորագրվել էր մի համաձայնագիր, որով հայերին խոստանում էին իրականացնել նրանց վաղեմի երազանքը՝ անկախություն պարզել: Այս մասին հայ առաջնորդները գովազդում, գրում էին նաև հայկական մամուլում»:

Չամալզադեն այնուհետև գրել է, որ մի քանի տարի առաջ՝ Վանի պատերազմի ժամանակ, երբ ռուսները հայերի աջակցությամբ պարտության մատնեցին թուրքերին, նրանք թուրք բնակչության դեմ դաժանություններ գործեցին՝ կողոպտեցին նրանց, սպանեցին: Ուստի, այսօր թուրքերը վրեժխնդիր են լինում հայերի այդ արարքների համար, որոնք նաև լրտեսներ էին՝ հօգուտ Օսմանյան պետության թշնամիների: Հայերը, որ մեծ թիվ էին կազմում Անատոլիայում, տեղահանվեցին այդտեղից և թվեցին դեպի Տիգրիսի մերձակա ոչ բնակելի անապատները: Չավթից նրանց ունեցվածքը, շատերը զոհվեցին: Կենդանի մնացածները, Հալեպից մինչև Անաթա ձգվող անապատում, բաց երկնքի տակ սովի էին մատնվել: Ինքն անձամբ սահմուկեցուցիչ տեսարանների վկա է դարձել: Օրինակ, սովից հյուծված երեխաները ձգտում էին մոտենալ ուղեւորներին՝ օգնություն հայցելու, սակայն նրանցից ոմանք ուժասպառ տապալվում էին գետնին, կնքում իրենց մահկանացուն և այլն: Նա շեշտում է, որ ճանապարհին իրենց հետ ճանապարհորդող ուղեւորներից ոմանք փորձում էին բարություն, օգնություն ցուցաբերել աննկարագրելի դաժանության ենթարկված հայ ազգի թշվառ զավակներին:

Հավելելով, որ ճանապարհին ուղեւորների այդօրինակ վերաբերմունքն աստիճանաբար զայրացրել էր օսմանցի պաշտոնյաներին, որոնք դժգոհելով՝ սպառնացել են. «Եթե դուք շարունակեք ձեր բարեգործությունն այդ մարդկանց նկատմամբ, ապա զեկուցելու ենք կառավարությանը՝ բողոքելով ձեզանից»: Մակայն տողերիս հեղինակը, ի պատասխան, հաշվի առնելով օսմանցի նախարարներից ոմանց հետ բերկամական կապերը, նշել է. «Մինչ դուք մեր բարեգործությունների մասին

դեկավարությանը բողոք գրեք, մենք այս ազգի նկատմամբ ձեր անգութ, անողորմ վերաբերմունքի համար կբողոքենք իշխանություններին»:

### «Չամալզադեի հուշերը»

Ինչպես արդեն նշվել է՝ Չամալզադեի երկրորդ գիրքը կազմված է տարբեր պարբերականներում լույս տեսած նրա հուշերից: «Բաղդադ-Հալեպ ճանապարհի շարաքաստիկ դեպքը» վերնագրով հատվածում Չամալզադեն ներկայացնում է 1915թ. մարտին Օսմանյան պետության տարածքով<sup>20</sup> Իրան կատարած ուղեւորությունը և նույն երթուղով 1916թ. ամռանը Գերմանիա վերադարձին տեսածը (էջ 144-159): Նա գրել է, որ Բաղդադից ճանապարհվել են այդտեղի Գերմանիայի հյուպատոսի օգնությամբ, քանի որ իրավիճակը շատ բարդ էր, և ամեն վայրկյան հնարավոր էր, որ քաղաքն անգլիացիները կգրավեն: Չամալզադեն գրում է, որ ինքն ու իր ուղեկիցներն իրենց հետ վերցրել էին սննդամթերք և մեծ տիկով ջուր, ինչը խիստ անհրաժեշտ էր: Հալեպի ճանապարհն անցնում էր Եփրատի արեւմտյան ափերով: Քանի որ այդ ժամանակահատվածում օսմանցիները լուտորում էին հայերին, զոհվածների դիակները նետվում էին Եփրատի ջրերը, ինքն անձամբ բազմաթիվ դիակներ է տեսել Եփրատում: Այնուհետև հղում է կատարվել «Հուր» (պարսկալեզու) հայկական հանդեսին, որի առաջին տարվա 2-րդ՝ 1972թ. օգոստոսի համարում տպագրվել են նրա հուշերը՝ «Իմ տեսածներն Առաջին աշխարհամարտում» վերնագրով (էջ 18-25):<sup>21</sup> Նրա՝ եղեռնի ակամատեսի հուշագրությունը ներկայացնում ենք ամփոփ:

Չամալզադեն նախ անդրադառնում է դեպի Իրան կատարած ճանապարհորդության նպատակներին և կրկին Գերմանիա վերադառնալու դրդապատճառներին: Նա նշում է, որ Մտամբուլ-Հալեպ (1915թ. ապրիլին) ճանապարհի մեկ հատվածը հարկադրաբար գնում էին սայլով և գիշերում գյուղերում: Առաջին օրը որոշել էին գիշերն անցկացնել մի խղճուկ սրճարան-իջեւանատանը: Նա թուրքերեն չգիտեր և սկսել է

<sup>20</sup> Բեռլին-Ստամբուլ-Բաղդադ-Քիրմանշահ:

<sup>21</sup> Չամալզադեն գրել է 1972թ. հունիսի 15-ին, ժննդում:

ընթերցել իր մոտ եղած ֆրանսերեն գրքերից, ինչը գրավել է տեղի հեռագրատան աշխատողի ուշադրությունը: Ծանոթացել են: Ջամալգադենն նշում է՝ մոտ 25 տարեկան հայ երիտասարդ էր և Ջամալգադենին հրավիրել է գիշերել իր մոտ:

Ջրույցի ընթացքում պարզվել է, որ նա եւս սովորել է Լիբանանի ֆրանսիական մույն քոլեջում, որտեղ սովորել է հեղինակը: Վերջինս իր ֆրանսերեն գրքերը նվիրում է հայ երիտասարդին, սակայն նրան այդպես էլ չի հաջողվում ընթերցել դրանք, քանի որ, լուսաբացին, երբ փողոցից աղմուկ-աղաղակ է լսվել, եղելությունը պարզելու մտադրությամբ երիտասարդը գիշերային զգեստով դուրս է վազել եւ վերադարձել աննկարագրելի ահ ու սարսափով, եւ միայն կարողացել է ասել, որ ժանդարմները մի խումբ հայերի են բերել եւ եթե իմանան՝ ինքն էլ հայ է, իրեն էլ կգերեվարեն: Ասել է եւ, ողջ ունեցվածքը թողնելով, անհետացել:

Ջամալգադեն գրում է. «Ես այդ պահին առաջին անգամ ականատես եղա Առաջին համաշխարհային պատերազմի առաջին տարիներին օսմանցիների՝ հայերի դեմ կազմակերպած ոճրագործությանը»: Նա հավելում է, որ, ըստ երեսույթին, ընթերցողը գիտի, որ այդ ջարդերը միլիոնավոր մարդկանց կյանք են խլել:

Ջամալգադեն հակիրճ ներկայացնում է նաեւ Բաղդադում եւ Իրանում իր գործունեությունը, ապա նկարագրում Բաղդադից Արաքստանով ու Հալեպով Ստամբուլ վերադարձի ճանապարհին տեսածները. «Հենց ճանապարհի սկզբին ականատես եղանք անհավատալի, աննկարագրելի զարմանալի եւ արտասովոր տեսարանների. տեսանք բազմաթիվ հայերի խմբեր, որոնց զինված, հեծյալ թուրք ժանդարմները հետիոտն քշում էին դեպի մահ, դեպի ոչնչացում»: Ապա շարունակում է. «Սկզբից դա մեզ անհուն զարմանք էր պատճառում: Սակայն հետագայում այն աստիճան սովորական դարձան, որ այլեւս չէինք էլ նայում նրանց, անշուշտ, նայելու բան չկար: Հարյուրավոր հայ կանայք եւ տղամարդիկ իրենց երեխաներով, ողբալի վիճակում, մտրակի եւ գեների հարվածների տակ հետիոտն առաջ էին քշվում: Նրանց շարքերում երիտասարդ տղամարդիկ չկային, քանի որ բոլոր երիտասարդները կա՛մ ռազմաճակատ էին ուղարկվել, կա՛մ պարզապես սպանվել

էին՝ ապահովության նկատառումով, որպեսզի չմիանային ռուսական բանակին»:

«Հայ աղջիկները գլուխները սափրել էին, ձգտել իրենց տգեղացնել, որպեսզի նրանց վրա չհարձակվեն թուրք եւ արաբ տղամարդիկ,- գրում է հուշագիրը:- Բոլորն իրենց բոկոտն ոտքերը ծածկում էին կտորով, քղթով, հնարավոր ամեն ինչով: 2-3 հեծյալ ժանդարմներ այդ խմբերին ոչխարի հոտի նման՝ մտրակի հարվածով առաջ էին քշում: Իսկ եթե գերիներից որեւէ մեկն ինչ-որ պատճառով ետ էր մնում, ապա ետ էր մնում ընդմիջտ, հարազատների լացուկոծը, ողբը որեւէ նշանակություն չունեին: Ահա թե ինչու, ճամփեգրերին հաճախակի տեսնում էինք հայ կանանց, երեխաների ու տղամարդկանց դիակներ կամ հոգեվարքի մեջ ընկածների: Ավելի ուշ տեղեկացանք, որ այդ տարածքներում ապրող երիտասարդներն իրենց անասնական բնագղները բավարարելու համար չեն խնայել անգամ մահացած կամ հոգեվարք ապրող հայ աղջիկներին»:

Ջամալգադեն պատմում է ճանապարհի դեպքերի մասին, որոնք տեղի են ունեցել այն շներում, որտեղ գիշերներն օթեւանել են ոչ միայն իրենք, այլեւ ժանդարմներն ու գերիները: Նա գրում է, որ մի անգամ իրենք որոշել են գառ գնել եւ խորովել, քանի որ երկար ժամանակ միս չէին կերել, եւ երբ գառան փորոտիքը թափել են, սովահար գերիները հարձակվել ու կերել են դրանից հոսող կանաչավուն հեղուկը: Մեկ այլ դեպքում ֆրանսերենով նրան է դիմել մեռելային տեսքով մի հայ կին՝ առաջարկելով երկու խոշոր աղամանդի դիմաց մի կտոր հաց տալ, որպեսզի սովից չմեռնեն իր երեխաները: Ջամալգադենն նշում է, որ թեւ իրենց պաշարը եւս սուղ էր, բայց նա, աղամանդները չվերցնելով, հնարավորության սահմանում ուտելիք է տրամադրել այդ կնոջը: Մեկ այլ շենում իր հետ ճամփորդող երկու շվեդ ժանդարմներին է մոտեցել տարեց մի մարդ եւ հաց խնդրել: Նա Ստամբուլի բուհերում մաթեմատիկայի դասախոս է եղել եւ պատմել է, որ երկու տղաներին տարել են, որ նրանք, ամենայն հավանականությամբ, արդեն մահացած են, իսկ ինքն ու երկու աղջիկները բռնագաղթում են, սակայն նրանք եւս մահամերձ են:

Իրանցի հոշակավոր արձակագիրը գրում է, որ Հալեպում իջեւանել

են «Պրինց հոթել» մեծ հյուրանոցում, որի տերը հայ էր: Նա սարսափահար մոտեցել է Ջամալզադեին ու նրա ուղեկիցներին՝ աղաչել, պահատել է, որ բարեխոսեն իր համար Ջամալ փաշային, որը նոր էր ժամանել Հալեպ եւ օթեւանել այդ հյուրանոցում: Հյուրանոցի տերն ասել է, որ Ջամալն իրեն նույնպես կսպանի եւ կբռնագրավի հյուրանոցն ու իր ունեցվածքը: Ջամալզադեն գլուխ է, որ բարեխոսել են, բայց ապարդյուն: Ջամալ փաշան հայտնի էր իր դաժանությամբ ու անխղճությամբ: Այդ հայը եւս գերեվարվել եւ ուղարկվել էր Բեյրութի մոտակայքում ստեղծված սպանդանոց:

Ջամալզադեն ընդգծում է, որ ճանապարհորդության ընթացքում զարհուրելի օրեր են անցկացրել, որոնք նրա համար վերածվել են չափազանց սարսափազրու մղձավանջի, որ այդքան տարիներ անց երբեմն համակում են նրա ողջ էությունը, ցավ ու վիշտ պատճառում:

Վերջում գոհունակություն է հայտնում Թուրքիայի Հանրապետության ստեղծման առնչությամբ, որը, ըստ նրա, հրաժարվել է անհիմաստ «պանթուրքիզմ» կոչվող երեսկայական գաղափարից. վերջինիս աշխարհակալ ձգտումները, որոնք դժվարություններ էին հարուցում բնակչությանը, ավելին, մի ողջ փոքրամասնության բնաջնջման պատճառ դարձան: Նա շեշտում է, որ այսօր Թուրքիան որդեգրել է ազատության, զարգացման եւ բարիդրացիական հարաբերությունների ուղի: Հույս է հայտնում, որ Թուրքիայի որդեգրած այդօրինակ ընդունելի քաղաքականության շնորհիվ օր-օրի էլ ավելի կջերմանա եւ կսերտանա թուրք եւ իրանցի մահմեդական եղբայրների բարեկամությունը: Հողվածի ավարտին Ջամալզադեն գրում է. «Հետագայում, երբ հաստատվեցի Ժնևում, տեղեկացա, որ այն ժամանակ, երբ Թուրքիայում սայրսափելի, աղետալի վիճակում էին հայտնվել միլիոնավոր հայեր, որոնք գնդակահարվում էին կամ չոր ու ցամաք անապատներում բնաջնջման ճանապարհին էին (գոհվածների թիվը 2-3 միլիոն է նշվում), շվեյցարացի բազմաթիվ ընտանիքներ Կարմիր խաչի օգնությամբ փրկել են որք մնացած մեծ թվով հայ երեխաների: Այսօր նրանցից շատերը հենց ժնևում հայտնի բժիշկներ, ինժեներներ եւ ճարտարապետներ են. սա է մարդասիրականը, ինչին պետք է հետևեն բոլորը»:

## Եղեռնի մասին իրանցի մեկ այլ ակնառեսի հուշերը

«Օսմանյան զորքերն Անդրկովկասում ստեղծեցին

Ադրբեջան պետություն»

Նախքան Էսմայիլ Ռայինի «Հայերի ցեղասպանությունը» աշխատությանն անդրադառնալը ցանկանում ենք առանձին ներկայացնել, նույն գրքում գետնադրված «Եւս մեկ հուշ» վերնագրով՝ ցեղասպանության մասին իրանցի հայտնի դիվանագետ Ալի Ռեզա Դիվանբեգիի հուշերը (էջ 117-121): Հեղինակը դրանք ընդգրկել է «Ծառայության սկիզբը» եւ «Կյանքի սկիզբը» երկհատորյակում, մինչեւ Ռայինի գրքի հրատարակումը (1972թ.), ինչպես նշում է նա, բնագիրը ձեռագիր էր: Հուշագիրը շեշտում է, որ Անդրկովկասում Ադրբեջանի Հանրապետությունը ձեւավորվել է օսմանյան զորքերի ջանքերով: Ռայինը Դիվանբեգիին ներկայացնում է իբրեւ ազնիվ, հայրենասեր դիվանագետի, ով իրանցի մի խումբ ազատասեր մտավորականների հետ արտագաղթել է Բաղդադ՝ Օսմանյան կայսրություն եւ խորապես ուսումնասիրել պանթուրքիզմն ու նրա արմատները, քաջատեղյակ է եղել նաեւ այդ երկրի իրական կացությանը:

Առաջին հատորում, որ նվիրված է հեղինակի քաղաքական գործունեությանը, երիտթուրքերի մասին գրել է. «Այդ ժամանակ Թուրքիայի իշխանությունը կենտրոնացած էր ծայրահեղական երիտթուրքերի կուսակցության ձեռքում՝ Թալեաթ եւ Էնվեր փաշաների ղեկավարությամբ: Թալեաթը՝ գլխավոր նախարարը, այլ կերպ՝ վարչապետն էր, իսկ Էնվերը՝ ռազմական նախարարը: Պատերազմից 6 տարի առաջ, Ջեմալ փաշայի համագործակցությամբ, նրանք հեղափոխություն արեցին՝ բռնապետ Աբդուլ Համիդին հարկադրելով ստորագրել երկրում սահմանադրական միապետության վարչակարգ հաստատելու հրամանագիր, ապա գահընկեց արեցին նրան եւ գահ բարձրացրին ու խալիֆ նշանակեցին մեռակյաց, դերվիշաբարո, թույլ սուլթան Մոհամեդին՝ իրենց ձեռքում կենտրոնացնելով երկրի ողջ իշխանությունը: Երկրում բարեփոխումներ կատարելու նպատակով Գերմանիայի կայսրությունից շարունակաբար ֆինանսական եւ տեխնիկական աջակցություն էին ստանում, ի հետևանս որի՝ գերմանացի խորհրդականների ազդեցությունը խիստ մեծացավ: Օսմանյան կայսրությունը հար-



կադրված եղավ պատերազմի մեջ ներքաշվել՝ հօգուտ Գերմանիայի, ընդդեմ Անգլիայի ու Ռուսաստանի»:

Դիվանբեգին շեշտում է, որ երիտթուրքերի ծրագրերի գլխավոր դրույթներն էին. ա) Օսմանյան լայնածավալ կայսրությունը պաշտպանել եվրոպական գաղութարար պետությունների սադրանքներից, բ) կյանքի կոչել պանթուրքիստական գաղափարը, այն է՝ թուրքական մշակույթը տարածել թրքալեզու երկրներում եւ ի վերջո դրանք կցել Օսմանյան կայսրությանը, գ) օսմանյան խալիֆի ազդեցության տարածումն իսլամական երկրներում՝ «իսլամական միասնություն» անվան ներքո, ինչի շնորհիվ Օսմանյան կայսրության հզորությունը կհասներ իր բարձրակետին:

Նա նշում է նաեւ, որ «Թալեաթն ու Էնվերը եւ նրանց կողմնակիցները կարծում էին, թե Գերմանիայի աջակցությամբ կարող են երկրի ներսում բարեփոխումներ կատարել եւ իրականացնել հիշյալ ծրագիրը: Մանավանդ որ, Գերմանիայի փառամուլ Վիլհելմ 2-րդ կայսրն իրեն հռչակել էր աշխարհի մահմեդականների հովանավոր»:

Դիվանբեգին այնուհետեւ անդրադառնում է Բաբու կատարած իր ճանփորդությանը եւ տեղի օսմանցի պաշտոնյաների հետ հանդիպմանը: Նա նկարագրում է հայերի անողոք, վայրենաբարո ջարդերը, օսմանցիների դաժանությունների արդարացման համար ներկայացված պատրվակները:

Նա գրել է. «...Հայերի անողորմ ու անողոք ոչնչացումը քաղաքի տարբեր մասերում դեռեւս շարունակվում էր: Նավթագործ բանվորների (որոնց «դուրշիչի» էին անվանում) քաղամասում՝ «Չունի գորողում», հայ անմեղ երեխաներին, ձեռքերը հետեւներից կապած, կողք-կողքի շարում էին, այնուհետեւ հազար մանաթի վրա գրազ գալիս, թե ով կարող է դաշույնի մեկ հարվածով մեկի գլուխը թոցնել»:

Երկհատորյա հուշագրության հեղինակը նշել է. «Բաբու ժամանելու առաջին օրերին Նուրի փաշան ակնհայտորեն խուսափում էր մեզ հետ հանդիպելուց, ուստի, մի քանի օր անց հանդիպեցի Բաբվի զինվորական հրամանատար Միրալա Նազեմբեյին: Նրան ճանաչում էի դեռեւս Գանձակից. թուրքական զորքերի շտաբի պետն էր՝ ժանտաբնույթ, զայրացկոտ մի սպա: Նրա հետ Իրան մուտք գործելու հնարավորություն ունենալու եւ ճանապարհորդելու հարցերի շուրջ

քանակցությունների ընթացքում ակնարկեցի նաեւ հայերի անմարդկային, գազանաբարո ջարդերի մասին: Ի պատասխան Նազեմբեյը հայտնեց, թե դա իրենց գործողությունների հետ կապ չունի, պարզապես Բաբվի մոլեռանդ հավատացյալները վրեժխնդիր են լինում մի քանի ամիս առաջ հայերի ձեռքով սպանված իրենց հարազատների համար: Մա այն դեպքում, երբ Բաբվի շիաները «դուրշիչի» մարդասպանների այդօրինակ արարքների նկատմամբ նողկանք եւ ատելություն էին տածում: Մինչդեռ «Մուսավաթ» կուսակցության առաջնորդները, որոնք օսմանյան զորքերի աջակցությամբ Անդրկովկասում Ադրբեջան պետությունն էին ստեղծել եւ դեկավարում էին այն, հենց նույն պատրվակով վարձու մարդասպանների միջոցով վերացնում էին նաեւ իրենց հակառակորդներին»: Դիվանբեգին, խոսելով նշյալ պատրվակի մասին, գրել է, որ խոսքը Բաբվում՝ Շահումյանի գլխավորությամբ տեղի ունեցած դեպքերի մասին է:

Անտիպ հուշերի հեղինակն այնուհետեւ գրում է. «Թուրքական զորքերին հաջողվել է ամռան վերջին գրավել Բաբուն: Իսկ մեկ օր անց զինվորներ տեղափոխող զնացքով ուղեւորվեցի Բաբու, կայսրանից երկու թուրք պարետների ուղեկցությամբ սայլով գնացի Իրանի հյուսպատոսարան: Քաղաքը դատարկ էր թվում: Փողոցներում ընկած հայերի անթաղ դիակները նեխել եւ օդը թունավորել էին: Մայրապանն ասում էր, թե օսմանցիները, գալով այստեղ սրանց (հայերին) սպանել են՝ ի պատասխան Շահումյանի իշխանության ժամանակ մահմեդականների սպանությունների»:

Դիվանբեգին «Ճառայությանս սկիզբը» հատորում, Օսմանյան կայսրություն կատարած իր ուղեւորություններից մեկի մասին խոսելիս շեշտել է. «Այդ ճանապարհորդության ժամանակ երկու դեպք ինձ ապշեցրեց եւ խորին վիշտ պատճառեց: Դրանցից մեկը վերաբերում է հարյուր հազարավոր դժբախտ հայ ընտանիքների կողոպուտին ու ջարդերին, որոնք տեղի էին ունեցել Վանի վիլայեթում: Երկրորդն էլ ավելի սարսափելի ու ցնցող էր. կենդանի մնացածներին, հիմնականում՝ գրեթե մերկ կանանց, երեխաների ու տկար ծերունիների, թուրք զինվորները կիզիչ արեւի տակ հետիոտն քաղաքից քաղաք էին քշում...»:

## «Հայոց ցեղասպանությունը»

Իրանցի հայտնի պատմաբան, գրող, հրատարակիչ Էսմայիլ Ռայինը ուշագրավ ուսումնասիրություններ է կատարել իրանահայության պատմության եւ մշակույթի ասպարեզում, հեղինակել է այդ ոլորտների վերաբերյալ մի շարք աշխատություններ եւ մենագրություններ: «Իրանի հայերը» բավական ծավալուն գիրքը նվիրված է իրանահայերի պատմությանը, նրանց ավանդույթներին ու սովորույթներին: «Եփրեմ խան» մենագրության մեջ նա ներկայացնում է Իրանի Սահմանադրական հեղափոխության հերոսներից մեկի՝ հայազգի Եփրեմ խանի, կյանքն ու գործունեությունը: «Միրզա Մելքոմ խան» մենագրությունը նվիրված է 19-րդ դարի Իրանի քաղաքական, զինվորական եւ մշակութային հանրաճանաչ գործիչ Միրզա Մելքոմ խան Նազեմդոլեին, ով գեներալի կոչում է ունեցել, եղել է Իրանի արտակարգ եւ լիազոր դեսպանը Լոնդոնում, Իրանի ներկայացուցիչը՝ Բեռլինի կոնգրեսում:

Նա հեղինակել է նաեւ «Հայոց ցեղասպանությունը» աշխատությունը, որն Իրանում իր տեսակի մեջ թերեւս եզակի է: Նշյալ մենագրությունը լույս է տեսել Թեհրանում, 1972թ., 1000 օրինակ տպաքանակով:

Գրքի նախաբանում Ռայինն ընդգծված համակրանքով ու հիացմունքով է խոսում նոր Թուրքիայի եւ Աբաթուրքի մասին՝ իբրեւ Իրանի բարեկամ երկրի՝ դատապարտելով Օսմանյան կայսրության ղեկավարներին: Ի դեպ, ժամանակին, երբեմն նաեւ այսօր, իրանական մամուլը գրում է, որ Աբաթուրքի վարչակարգը շարունակել է երիտթուրքերի քաղաքականությունը:

Ռայինը շեշտում է, որ Օսմանյան կայսրությունում 1876-ից ի վեր արձանագրվել է ցեղասպանության 24 դեպք, որոնց ընթացքում զոհվել են ավելի քան 2 միլիոն 377 հազար հայեր, բուլղարներ, հույներ եւ օսմանյան բանակում ծառայող օտարերկրյա զինվորներ: Նա նշում է, որ այդ ցեղասպանությունները հարուցել են թուրք ազգի ատելությունն ու գայությունը: Ռայինն ընդգծում է, որ «այդ թեւս վայրագ ջարդերը տեղի են ունեցել մեր դաշնակից, բարեկամ հարեւան երկրի տարածքում, սակայն որեւէ կերպ չեն առնչվում թուրք ազգի եւ Նոր Թուրքիայի

հետ»: Այնուհետեւ հավելում է, որ այդ վայրագ նախճիրների, ամուլի ոճրագործությունների հեղինակները լույս իշխող շրջանակների դահիճներն ու ցեղասպանություններ իրականացնող գործակալներն են եւ ոչ թե թուրք ազգը, ինչպես որ Երկրորդ աշխարհամարտի արյունալի եւ ցնցող դեպքերի համար պատասխանատու են Հիտլերն ու նրան շրջապատողները՝ նացիստները, Գեստապոն, եւ ոչ թե աշխատասեր, ազնիվ գերմանացիները:

Թվում է, թե Ռայինը մենագրության նախաբանում ներողություն է հայցում «նոր թուրքերից»՝ գրքի շարադրման համար, որտեղ, նրա փաստերի հիման վրա ներկայացված են դառը ճշմարտությունները: Նա նշում է. «Թեւեւ բոլոր մտավորական եւ բարի մարդիկ հստակորեն առանձնացնում են ռասիստական, Օսմանյան կայսրության կարճամիտ ղեկավարությանն այսօրվա «նորագույն» Թուրքիայից, ինչպես Արուֆ Հիտլերին են տարբերում Վիլի Բրանդտից, այսուհանդերձ, կարծում ենք, թե այս համառոտ ակնարկն անիրաժեշտ էր, որպեսզի որեւէ բյուրիմացության առիթ չստեղծվի: Չոսյած այսօր ազնիվ, աշխատասեր թուրք ժողովուրդն ատելությամբ է լցված օսմանյան պետության ճրիակեր ու դատարկապորտ ղեկավարության նկատմամբ, որը հայերի ունեցվածքին տիրելու նպատակով մի ողջ ազգ բնաջնջեց, եւ ինչ-որ տեղ ամաշում է նրանց համար»:

«Հայոց ցեղասպանություն» գրքի առաջին գլուխը նվիրված է Օսմանյան կայսրության պատմությանը, որտեղ այն ներկայացվում է ամենաբացասական եւ սեւ գույներով, ինչին, անշուշտ, դեմ է Անկարան, որը ՄԱԿ-ից պահանջում էր միջազգային մակարդակով նշել Օսմանյան կայսրության հիմնադրման 500-ամյակը: Հեղինակն առավել հանգամանորեն է անդրադարձել Արդուլ Համիդի եւ երիտթուրքերի պատմությանը: Նա նշում է, որ Արդուլ Համիդն իր ծավալապաշտական նկրտումները կյանքի կոչելու նկատառումով օրակարգային դարձրեց պանիսլամիզմի գաղափարախոսությունը՝ նպատակ ունենալով դառնալ ողջ իսլամական աշխարհի խալիֆը՝ հոգեւոր եւ քաղաքական առաջնորդը, գաղափար, որը մեծ թվով կողմնակիցներ ունեցավ կայսրությունում: Ռայինը շեշտում է, որ Արդուլ Համիդն ու նրան շրջապատող քաղաքական գործիչները «Օսմանյան կայսրության» եւ «թուրքե-

րի» ամենաոխերին թշնամին համարում էին կայսրության հայերին: Իսկ այդօրինակ թշնամանքի պատճառը հայերի նկատմամբ քինախնդրությունն ու նախանձն էին, հայերի շատ ակտիվ, աշխատասեր, հետևաբար՝ հարուստ եւ բարեկեցիկ լինելը (էջ 33): Նա հավելում է, որ «թեւ մինչ այդ հայերն արդեն երկու անգամ՝ 1860 եւ 1876թ. ցեղասպանության էին ենթարկվել, սակայն նրանք դեռեւս հարուստ ու բարեկեցիկ էին եւ ձգտում էին Աբդուլ Համիդի համար նոր ջարդերի տեղիք չտալ: Բայցեւայնպէս, երբ հայերի՝ նախապատրաստվող նոր ջարդերի մասին ասեկոսեցներ էին տարածվում, Դաշնակցություն եւ Հնչակյան կուսակցությունների կոմիտեները խիստ գաղտնի պատրաստվում էին ընդդիմանալու: Այդ ժամանակահատվածում երիտօրրքերը նույնպէս պատրաստվում էին պայքարել սուլթան Աբդուլ Համիդի դեմ, արդեն ծրագրել էին ազգային փոքրամասնությունների ոչնչացումը, մինչդեռ հայկական հիշյալ կոմիտեները համագործակցում էին ազգայնամոլ երտիօրրքերի՝ արտերկրի ներկայացուցիչների հետ» (նույն տեղում): Ռայինը նշում է, որ երիտօրրքերի «Միություն եւ առաջադիմություն» (Իթթիհատ վե թերաքքի) կուսակցությունը, որի գաղափարախոսությունը պանթուրքիզմի եւ պանիսլամիզմի համադրումն էր, 1909թ. ապրիլի 28-ին Աբդուլ Համիդին գահընկեց անելուց եւ երկրի իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելուց ի վեր, որդեգրելով խիստ ազգայնամոլական քաղաքականություն, ձեռնամուխ եղավ կայսրության՝ ազգությամբ ոչ թուրք բնակիչների ոչնչացմանը, երկրի թուրքացմանը (էջ 36-37):

Հեղինակը, մեջբերելով մի հատված Աբաս Շահանդեի «Մեր հարեւան Թուրքիան» գրքից,<sup>22</sup> նշել է, որ կառավարման ձիրք չունեցող և անգրագետ երիտօրրքերը ոչ միայն չկարողացան երկրի իրավիճակը բարելավել, այլեւ իրենց ազգայնամոլությամբ սահմանադրական հեղափոխության մեջ կարեւոր դեր ունեցող ոչ մահմեդականներին հեռացրեցին իրենցից (էջ 41):

Ռայինը գրում է, որ պանթուրքական նկրտումներն ու ծայրահեղ ազգայնամոլությունը շատ խոր արմատներ էին ձգել երիտօրրքերի գործելակերպում, գաղափարախոսության եւ հավատամքի մեջ, ի հե-

<sup>22</sup> *Տպագրվել է Թեհրանում, 1955թ.:*

տեւանս որի նրանք ամենազարհուրելի եւ մեծ ցեղասպանությունն իրագործեցին՝ ամենասարսափելի ձեւերով ոչնչացնելով 1,5 միլիոն հայ՝ կին, երեխա, ծեր ու երիտասարդ: Այնուհետեւ նա շարունակում է, «թեւ, ինչպէս նշեցինք, այդ ցեղասպանության գլխավոր պատասխանատուն երիտօրրքերն են, բայց գերմանացիներն ուղղակի մասնակցություն եւ ազդեցություն ունեին: Մակայն չի կարել անտեսել նաեւ Օսմանյան կայսրության հրեաների ակտիվ դերը»: Ռայինը գրում է, որ «Le de Rnier ba dugroan soir» գրքի հեղինակը<sup>23</sup> բազմաթիվ փաստերով ու վկայություններով ապացուցում<sup>24</sup> է, որ կայսրության հրեաներն ու համաշխարհային սիոնիզմն այդ վայրագ արարքներում համագործակցել են երիտօրրքերի ու գերմանացիների հետ, եւ որ ցեղասպանության իրագործման ղեկավարներից շատերը հրեա են եղել:

Այնուհետեւ Ռայինը շեշտում է, որ ի ապացույց ֆրանսիացի հեղինակի ներկայացրած խնդրին՝ ներկայացնում է ցարական Ռուսաստանի լրտեսական եւ հակալրտեսական կազմակերպության՝ «Օխրանայի» գաղտնի զեկուցագրերից: Նա նշում է, որ ցարական Ռուսաստանի դեսպանը Ֆրանսիայում, կայսրության փլուզումից հետո, դեսպանատան կարեւոր փաստաթղթերը տեղափոխել է Կալիֆորնիայի Ստանֆորդ համալսարանի Հուվըր կենտրոն: Այդ փաստաթղթերը բացահայտում են 1885-1917թթ. Ռուսաստանի գործունեությունը: Հրեաների մասնակցության վերաբերյալ «Օխրանայի» զեկուցագրերից մեկում (№ 166609) նշվում է, որ 1914թ. հունվարի 23-ին «Նուրի Օսման» ակումբում «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության, պանիսլամիստների եւ հրեաների մասնակցությամբ գումարվել է համաժողով: Մասնակցել են Թալեաթ բեյը, Բադրի բեյը, Մալիդ բեյը, Ֆիքրի բեյը եւ այլք, բացի այդ, նիստին ներկա են եղել նաեւ հրեա ղեկավարներ, այդ թվում՝ Մամուլ էֆենդին՝ անվտանգության վարչությունից, Ավրաամ բեյը՝ ներքին գործերի նախարարությունից: Փաստաթղթում նշվում է, որ համաժողովում Թալեաթը կրքոտ ճառեր է արտասանել հայերի եւ հույների ուղեւորությունների, Ռուսաստանի ու քրիստոնյաների դեմ:

<sup>23</sup> *Գրքի հեղինակի անունը Ռայինը չի նշում:*

<sup>24</sup> *Ռայինը հղում է անում իր գրքի առաջին եւ երկրորդ գլուխներում բերված փաստերին:*

Թալեսքը նշել է, որ Օսմանյան պետությունը խիստ դեմ է Անատոլիայում եվրոպական պետությունների որեւէ վերահսկողության՝ հավելելով, որ այժմ կառավարությունը բանակը նախապատրաստում է Կովկասում ռազմական գործողություններ սկսելու նպատակով (էջ 43):

Ռայինը նշում է, որ Էնվեր փաշան ու «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության մյուս ղեկավարները նպատակամղված էին պանթուրանականների աջակցությամբ վերացնել հայերին, քանզի Հայաստանը պանթուրական քարտեզի կենտրոնում է: Մինչդեռ իրենք ձգտում էին, սերտ կապեր հաստատելով քաղաքական, տնտեսական, ռազմական եւ հասարակական ոլորտներում, պանթուրանական կայսրություն ստեղծել քուրքական ծագումով բնակչություն ունեցող ողջ տարածքներում: Մակայն ռազմական գործողություններում կրած պարտությունների եւ Էնվերի սպանության պատճառով այդ ծրագիրը կյանքի չկոչվեց: Գրքի առաջին գլուխն ավարտվում է Աթաթուրքի ապստամբությանը եւ Թուրքիայի Հանրապետությանը նվիրված հատվածով, որտեղ Ռայինը չի զլացել նրանց հասցեին գովեստի խոսքեր շռայլել (էջ 46-53):

\* \* \*

Էսմայիլ Ռայինի «Հայոց ցեղասպանություն» գրքի երկրորդ մասը վերնագրվել է «2377072 հայերի ջարդերը», որն սկսվում է հետեւյալ տողերով. «Սպանություն եւ ոճրագործություն բառերն ինքնըստինքյան սարսափելի եւ նողկալի են, «ջարդերն» ու «խմբակային ոճրագործությունները»՝ առավել զարհուրելի... Իսկ «մի ողջ ազգի ոչնչացումը» լիովին այլ բան է: Մա մի իրողություն է, և մարդու հորինած բառերից որեւէ մեկն ի գորու չէ բնութագրելու այդ արարքի նողկալիությունն ու սարսափելիությունը: Թերեւս դա է պատճառը, որ Հիտլերը եւ նրա մարդասպանության մեքենան մի ողջ ազգի ոչնչացումն անվանել են «հրեական հարցի վերջնական լուծում», իսկ Թալեսքը՝ միլիոնավոր մարդկանց բնաջնջումը՝ «ոմանց հեռացնել»:

Հեղինակը շարունակում է. «Այս դեպքում խոսքը գիտակցաբար, դիտավորյալ եւ անխղճորեն անմեղ կաթնակեր երեխաների, անպաշտպան ծեր կանանց ու տղամարդկանց ջարդերի մասին է... Խոս-

քը «խղճի» մահվան մասին է, եւ մարդու էության չճանաչված ամենանողկալի, զագրելի չափանիշների... մարդկային այն բնագոյների մասին է, որի համար մարդու ճակատից ամոքի քրտինք է ծորում, երբ մարդը, իր «մարդ» լինելուց անաչում է, քանզի արտաբնապես նման է այդօրինակ դահիճներին»: Հանձնատելով Հայոց ցեղասպանությունը եւ հրեաների հոլոքոստը՝ շատ ընդհանրություններ է տեսնում:

«Հայոց ցեղասպանության մասին, քեւ որոշ հրապարակումներ եղել էին, սակայն, եթե մի խումբ մարդկանց ու կազմակերպությունների գործադրած ջանքերը չլինեին, այդ թվում՝ «Ամերիկյան կոնտեռի զեկուցումները», հետետղական ուսումնասիրությունները, Առնոլդ Թոյնբեի (Arnold Toynbee) նման աշխատասեր պատմաբանն իրեն չնվիրեր այդ կարետր գործին, եւ, ի վերջո, եթե ամերիկացի գիտնական, գրող Արամ Անտոնյանին չհաջողվեր հայթայթել Նախմ բեյի փաստագրական հուշերը, նրա թողած փաստաթղթերը, ապա հնարավոր է, որ այս պատմությունը եւս թաղվեր մոռացության մոխիրների տակ, ինչպես շատ դեպքեր, որոնց մենք առայսօր անտեղյակ ենք»:

«Օսմանցիները եւս, ինչպես հետո ֆաշիստները, ջանք չէին խնայում, կատարած ոճրագործությունը գաղտնի պահելու համար: Ուստի, բոլոր հրամաններն ու կարգադրությունները կատարվում էին ծածկագրերով: Իսկ ոճրագործության ավարտից հետո էլ եռանդուն կերպով ձգտում էին վերացնել բոլոր հետքերը: Դա կատարվում էր ճիշտ այնպես, ինչպես հետագայում պետք է անեին հիտլերականները՝ մահվան ճամբարների ու գազախցիկների հետքերը վերացնելու համար»: Ռայինը շեշտում է, որ ֆաշիստներն իրենց ոճրագործությունները միջազգային հանրությունից թաքցնելու հարցում, անշուշտ, ոգեշնչվել էին օսմանցիների գործելակերպից, պարզապես ֆաշիստների մարդասպանության մեքենան ավելի արդիական էր, իսկ գաղտնապահությունը՝ ավելի ճշգրիտ: Նա գրում է, որ օսմանցիները լուրջ ջանքեր են գործադրել կատարված ոճիրը թաքցնելու համար, այդ իսկ պատճառով նա իր գրքի առանձնահատկություններից է համարում այն, որ ոճրագործության վերաբերյալ մեծ թվով հավաստի փաստեր, ապացույցներ եւ փաստաթղթեր է ներկայացրել:

Ռայինը հավելում է, որ քեւ շատերն օսմանցիների ձեռքով կա-

տարված հայերի ցեղասպանության մասին լսած կլինեն, որոնց մասին տեղեկությունները հանրագիտարանային սահմաններից չեն անցնում, սակայն այն մարդկանց թիվը, ովքեր ճշգրիտ տեղեկություններ ունեն ոճրագործության ծավալների, վիճակագրական տվյալների վերաբերյալ եւ այն մասին, թե ինչպես են վարվել զոհերի հետ, չի անցնում մեկ ձեռքի մատների թվից:

«Հայոց ցեղասպանությունը» գրքի հեղինակը, անդրադառնալով ցեղասպանության պատճառներին եւ վիճակագրական տվյալներին, գրում է, որ հայոց ազգայնականության վերելքը խիստ զայրացրել էր Արդուլ Համիդ Բ-ին (1876- 1909թթ.): Ուստի, նրա հրամանով 1876-77թթ. քանակի ու ուստիականության ուժերը Կոստանդնուպոլսի հայաբնակ թաղամասերը կողոպտեցին ու հրկիզեցին: Դրան հաջորդեցին երկու տարի տետողությամբ, 1894թ. սկսված, մի շարք ջարդեր, որոնց ընթացքում զոհվեց շուրջ 200 հազար հայ: Այդ անարգելք ու անխոչընդոտ սպանողները պատճառ դարձան, որ հայերը պետական պաշտոնյաների դեմ ահաբեկչական գործողությունների դիմեն, որոնք ղեկավարում էին հայ երիտասարդ մտավորականները: Վերջիններս նպատակամղված էին այդպիսով Արդուլ Համիդին ստիպել՝ վերջ դնելու ջարդերին: Բացի այդ, հույս ունեին, որ նման քայլերով կարող են իրենց վրա սեւեռել եվրոպական պետությունների ուշադրությունը եւ նրանց աջակցությամբ իրականացնել իրենց անկախանալու երազանքը:

1908թ. երիտթուրքերի հեղափոխությունը թուրքերի եւ հայերի միջեւ տարածայնությունների վերացման, խաբուսիկ հուսադրումների պատճառ դարձավ, նշում է Ռայինը եւ շարունակում, որ մինչդեռ երկու ազգերի հետաքրքրությունների ու շահերի միջև եղած հակասությունները նրանց հաշտության համար տեղ չէին թողնում: 1909թ. հայերի ցեղասպանության նոր, ավելի կատաղի ալիք բարձրացավ՝ այս անգամ արդեն Կիլիկիայում եւ կասեցվեց միայն գերտերությունների, այդ թվում՝ Միացյալ Նահանգների միջամտությամբ:

Ռայինը նշում է. «Առաջին աշխարհամարտի սկիզբը ճակատագրական էր Օսմանյան կայսրության հայերի համար, որոնք անթաքույց դաշնակիցների հաղթանակն էին ցանկանում, կարեկցանքով եւ համակրանքով էին վերաբերվում նրանց: Երիտթուրքերը որոշեցին ի-

րենց խանգարող հայերի հարցը մեկընդմիջտ լուծել եւ «իրենց» երկրի տարածքը լիովին մաքրել հայերից» (էջ 61):

«Այսպիսով՝ օսմանցիները ձեռնամուխ եղան հայերի բնաջնջմանը. մեկ միլիոն մարդ զոհվեց Սիրիայի անապատներ արտաքսվելով, հազարավոր հայեր իսլամ ընդունեցին, իսկ մեկ միլիոնն էլ դեպի Կովկաս նահանջող ռուսների ձեռքով տեղահան եղավ կամ էլ բռնագաղթի ընթացքում մազապուրծ փրկվեց:

Դաշնակիցները երբեք հավատարիմ չմնացին հայկական վիլայեթներում անկախ Հայաստան ստեղծելու վերաբերյալ իրենց խոստումներին: Չնայած ԱՄՆ նախագահ Վիլսոնը 1920թ. նոյեմբերին անկախ Հայաստանի տարածքի հիմնական սահմանները նշել էր, որով Հայաստանը Տրապիզոնով միանում էր Սեւ ծովին, սակայն հոկտեմբերին արդեն թուրքերը կրկին գրավել էին այդ տարածքը: Բացի այդ՝ Ռուսահայաստանից գրավել էին նաեւ Կարսն ու Արդահանը» (էջ 62):

Ռայինը շեշտում է, որ համառոտակի ներկայացվածը բնավ չի կարող հայոց ցեղասպանության սարսափելի իրականության բնաթագրումը լինել: Քանզի 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի տասնամյակներին հայերի կրած ողբերգություններն ու տառապանքները որեւէ գրիչ ի գորու չէ նկարագրել: Ռայինը, տվյալներ ներկայացնելով զոհերի քանակի վերաբերյալ, գրում է, որ ստորեւ բերված վիճակագրական տվյալները, որոնք քաղվել են պաշտոնական աղբյուրներից, թեւս ամբողջական չեն կարող լինել, սակայն որոշ չափով լուսաբանում են ողբերգության ծավալները:

1860թ. զոհված հայերի եւ այլ քրիստոնյաների թիվը Լիբանանում՝ 12,000,

1876թ. Բուլղարիայում զոհված հայերի եւ բուլղարների թիվը՝ 14,000,

1877թ. Բայազետում զոհված հայերի թիվը՝ 1400,

1879թ. Ալաշկերտում ոչնչացված հայերի թիվը՝ 1250,

1881թ. Ալեքսանդրիայում կոտորված հայերի եւ այլ քրիստոնյաների թիվը՝ 2000,

1892թ. զոհված հայերի եւ օտարերկրյա զինվորների (որոնք ընդունել էին Օսմանիայի հպատակությունը) թիվը՝ 3500,

- 1894թ. Սասունում զոհված հայերի թիվը՝ 12,000,  
 1895թ. Արեւմտյան Հայաստանի վիլայեթներում զոհված հայերի թիվը՝ 300,000,  
 1896թ. Ստամբուլում սպանված հայերի թիվը՝ 9570,  
 1896թ. Վանում զոհված հայերի թիվը՝ 8000,  
 1903թ. Մակեդոնիայում զոհված հայերի, հույների եւ բուլղարների թիվը՝ 14,667,  
 1904թ. Սասունում ոչնչացված հայերի թիվը՝ 5640,  
 1909թ. Կիլիկիայում (Ադանա) զոհված հայերի թիվը՝ 30,000,  
 1915թ. Արեւմտյան Հայաստանում եւ օսմանական Թուրքիայում բնաջնջված հայերի թիվը՝ 1,500,000,  
 1918-20թթ. Կարսում եւ Արդահանում զոհված հայերի թիվը՝ 50,000,  
 1918թ. Բարվում եւ արվարձաններում զոհված հայերի թիվը՝ 30,000,  
 1919թ. Քոնիի շրջանում զոհված հայերի թիվը՝ 10,000,  
 1919թ. Կիլիկիայում (Ադանա) զոհված հայերի թիվը՝ 50,000,  
 1921թ. Հաճընում զոհված հայերի թիվը՝ 20,000,  
 1922թ. Իզմիրում ոչնչացվել են 10 հազար հայ եւ 200 հազար այլ քրիստոնյաներ, ընդհանուր թիվը՝ 210,000:

Ռայինը նշում է, որ հիշյալ տվյալները վերցրել է «Աշխարհում տեղի ունեցած ցեղասպանություններն ու ահաբեկումները» գրքի 396-397 էջերից: Գրքի հեղինակները 1969թ. լույս տեսած «Նյու Յորք Թայմս» պարբերականի աշխատակիցներն են:

Նա հավելում է, որ ընդհանուր հաշվով 1860-1922թթ. զոհվել է 2,284,027 մարդ: Սակայն, եթե դրան ավելացնենք նաեւ ավելի վաղ զոհված 93 հազար ոչ թուրքերի, այդ թվում՝ ասորիներին եւ հույներին՝

- 1822թ. Զյուսում զոհված հույների թիվը՝ 50,000,  
 1823թ. Միսուլիսկում զոհված հույների թիվը՝ 8000,  
 1826թ. Ստամբուլում զոհված օսմանյան պետության հպատակությունն ընդունած օտարերկրյա զինվորների թիվը՝ 25,000,  
 1850թ. Մուսելում զոհված ասորիների թիվը՝ 10,000,  
 պարզ կդառնա, որ Օսմանյան պետությունում սարսափազդու եղեռնի զոհ է դարձել 2,377,027 մարդ:

«Հայոց ցեղասպանությունը» մեծագրության 3-րդ՝ առավել ծավալուն մասը, որ վերնագրվել է «Մեկ ազգի բնաջնջումը», ընդգրկում է մի շարք ենթավերնագրեր, որոնց թվում՝ «Յեղասպանության նախագիծը», «Մահվան ճանապարհ», «Ճանապարհորդության ավարտը», «Անընդունելի պատճառաբանություն», «Բացահայտ սպանություն», «Ավելի ցավալի ավարտ, քան սկիզբը», «Տուրք մահվան» եւ «Գերմանիայի գործելակերպը»:

Ռայինը նշյալ խոսույն խորագրերի ներքո ներկայացրել է Հայոց ցեղասպանության ողջ ընթացքը: Նա գլխավորապես զլուխ առ զլուխ վերլուծել է Առնոլդ Թուինբրի «Ոճրագործություն ընդդեմ հայերի, ազգի սպանություն»<sup>25</sup> մեծագրությունը եւ Կալիֆորնիայի Ստանֆորդ համալսարանի «Հուվեր» հետազոտությունների կենտրոնի արխիվներում պահպանվող՝ Միացյալ Նահանգների խնդիրն ուսումնասիրող կոմիտեի զեկուցագրերը, եզրակացություններ է արել: Ստորև ներկայացնում ենք այդ վավերագրերը:

«Յեղասպանության նախագիծը» ենթավերնագրի ներքո Ռայինը նշում է. «Թեեւ չի կարելի լիովին հաստատել այն կարծիքը, թե ողջ հայ ազգը սկզբունքորեն ակտիվ, հաջողակ եւ բարեկեցիկ կյանքով ապրող ազգ է, միաժամանակ՝ մլիրված խաղաղության գործին, սակայն կարելի է նշել, որ այդ հատկանիշներով հատկապես օժտված է ազգի մտավորականության մեծամասնությունը: Հայ մտավորականները կանայք եւ տղամարդիկ, գլխավորապես կրթվել էին եվրոպական եւ ամերիկյան միսիոներական համալսարաններում: Նրանք ներկայացնում էին Օսմանյան կայսրության մտավորականության այն խավը, որը բազմաթիվ, այդ թվում՝ կառավարման, դասախոսական, ուսուցչական, առևտրի, արդյունաբերության բնագավառներում համարվում էին երկրի ուղեղը»:

Հենվելով անժխտելի փաստերի վրա՝ Ռայինը հավելում է, որ օսմանցիները, ներքաշվելով պատերազմի մեջ, ի սկզբանե նպատակ ունեին ոչնչացնել հայերին: Դեռ 1915թ. ձմռանից նրանք նախապատրաստվում էին ապրիլին հայ քրիստոնյաների բնաջնջման ծրագրի ի-

<sup>25</sup> *Armenian Atrocities the Murder of a Nation.*

րականացմանը: Քանզի եվրոպական երկրները, թեև թույլ, այնուամենայնիվ վերահսկում էին Կ. Պոլսի քաղաքականությանը՝ հայաբնակ շրջաններում, ի շահ հայերի. որն այժմ իսպառ վերացել էր: Շեշտելով, որ ոճրագործությունը կատարվել է հստակ ծրագրով, նա գրում է, թե բազմաթիվ փաստեր եւ վկայություններ կան առ այն, որ ցեղասպանության գործողությունները հարյուրավոր քաղաքներում ու գյուղերում կատարվել են տառաջիորեն նույն սխեմայով (էջ 67-68): Ռայինը շեշտում է նաեւ, որ ցեղասպանությունը պետք է իրագործվեր ամենայն ճշգրտությամբ եւ կատարելապես անթերի մեքենայի միջոցով, այլապես օսմանյան լայնարձակ տարածքի մի հատվածում հայ տղամարդկանց եւ երիտասարդների ձերբակալումները կարող էին արժանանալ կայսրության մեկ այլ հատվածի երիտասարդության եւ տղամարդկանց խիստ հակազդեցությանը, ուստի երիտթուրքերը ծրագիր իրականացրին միաժամանակ եւ ողջ երկրի մակարդակով (էջ 70):

Ռայինը գրում է. «Այսօրվա սերունդը հրեաների նկատմամբ ֆաշիստական Գերմանիայի դաժանությունների եւ մահվան ճամբարների մասին շատ է լսել եւ կարդացել: Մակայն այն, ինչ հայերի հանդեպ կատարվել է Օսմանյան կայսրությունում, այս սերունդը թերեւս երբեք էլ չի տեղեկանա, չի գիտակցի, որ օսմանցիների կատարածը բազմիցս ավելի ցավալի եւ սարսափազդու է եղել ֆաշիստների գործողությունների համեմատությամբ» (էջ 76-77): Խնդրո առարկա ենթավերնագրի ներքո նյութն ավարտվում է հետեւյալ խոսքերով. «Օսմանյան կառավարության բուն նպատակը հայկական ցեղի «կատարյալ ոչնչացումն էր»: Իսկ այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր ոչնչացնել կին, տղամարդ, ծեր, երիտասարդ ու մանուկ. բոլորին, բոլորին պետք էր վերացնել: Հետեաբար՝ լավ կլիներ, որ դրա իրագործողները եւս օգուտներ քաղեին եւ հաճույք ստանային իրենց գործից, որպեսզի օրեցօր ավելի լավ կատարեին կառավարության նախճիրի ծրագիրը: Ուստի, ծրագրի հեղինակներն այն իրականացնողներին լիակատար ազատություն էին տվել՝ հայ կանանց պատվազրկելու, բռնաբարելու, օսմանցի տղամարդիկ հարեմում կարող էին ունենալ նաեւ հայ կին » (էջ 78):

«Մահվան ճանապարհ» ենթավերնագրի տակ Ռայինը նկարագրում է դեպի անապատները քշվող, տեղահան արված հայերի տառա-

պանքները՝ վկայակոչելով ականատեսների վկայությունները, Թուրքիայի գրքում տեղ գտած փաստերը, սահմուկեցուցիչ տեսարանների նկարագրությունները: Նա նշում է. քվում էր, թե կանանց՝ իրենց կյանքը փրկելու հնարավորությունն ավելի մեծ էր, քանզի նրանք իսլամ ընդունելով, նամուսի վրա աչք փակելով, պատվազրկության գնով կարող էին որեւէ օսմանցու հարեմի անդամ դառնալ: Բայց հայ կանայք հրաժարվում էին այդ հնարավորությունից: Մակայն եթե գիտենային, թե ինչ ճակատագիր էր սպասվում իրենց, թերեւս կվերանայեին որոշումները եւ կընդունեին այդ ստորացումը (նույն տեղում): Այնուհետեւ շարադրվում են արյունալի նախճիրի ընթացքում տեղի ունեցած աներեւակայելի զազանաբարո դեպքերի ու իրադարձությունների մանրամասնությունները:

«Ճանապարհորդության ավարտը» վերտառությամբ ենթաբաժնում հեղինակը բռնագաղթի ճանապարհի դաժանություններից փրկվածների վերջին հանգրվանի մասին է խոսում՝ հայերի համար այն անվանելով մահաբեր: Նա նշում է, որ երիտթուրքերի այդ քայլը եւս աննախադեպ չէր. նրանք դա արդեն կատարել էին փոքր ծավալներով՝ Կոստանդնուպոլսի թափառական շներից ազատվելու օրինակով: Ռայինը շեշտում է, որ շներից քաղաքը մաքրելու նպատակով երիտթուրքերը, դրանց հավաքել եւ տեղափոխել են Մարմարա ծովում գտնվող լքված կղզիներից մեկը, որպեսզի սովից ոչնչանան: Հայերի խնդիրը լուծելու մասին խորհելիս Էնվերն ու նրա զինակիցները նկատի են ունեցել նաեւ այդ փորձը (էջ 93):

Ռային նշում է, որ Անատոլիայի եւ Արաբստանի, այն է՝ Օսմանյան կայսրության հյուսիսային եւ հարավարեւելյան հատվածների կլիման խիստ տարբեր է: Անատոլիայի բարձունքները, որտեղ հայերն են ապրել, ֆիզիոլոգիական տեսանկյունից հար եւ նման են Եվրոպային, այլ կերպ՝ հայերը ոչ միայն քաղաքակրթությամբ են եվրոպացի, այլեւ սովոր էին Բալկաններում, Հունգարիայում եւ Ավստրիայում առկա կլիմայական պայմաններին: Ապա հավելում է, որ եթե հայկական լեռնաշխարհից, որտեղից սկիզբ է առում Եփրատը, գետի հոսանքով շարժվենք դեպի Միջագետքի տափաստանները, կհեռանանք Եվրոպայի բարեխառն կլիմայից եւ կհայտնվենք կիսահասարակածային,

շոգ եւ խոնավությամբ հագեցված բնակլիմայական պայմաններով մի տարածքում: Հետեւաբար՝ բարեխառն բնակլիմայական պայմաններում ապրած հայերի համար այդտեղ աքսորվելը հավասարազոր էր մահվան դատապարտվելու, ինչն էլ իրականացվում էր (էջ 94-95):

«Անընդունելի պատճառաբանություն» ենթավերնագրի ներքո, ինչպես եւ ենթադրվում է, հեղինակը լուրջ փաստերով մերժում է օսմանցիների բացատրությունները: Նա գրում է, որ սարսափելի ոճրագործությունները, անկախ այն բանից՝ ծրագրված էր վերելից, թե կատարվում էր տեղական դահիճների նախաձեռնությամբ, աղետ էր հայերի գլխին: Ռայինը շեշտում է, որ օսմանյան կեղեքիչ, բռնակալ կառավարությունը արդարանալու համար ասում էր. «Մենք պատերազմի մեջ էինք հանուն մեր գոյատեւման: Մինչդեռ հայերն ուրախանում էին թշնամու հաջողություններով եւ, մեր դեմ դավեր նյութելով, ձգտում աջակցել թշնամուն: Հայերը ռազմադաշտում դավաճանում էին մեզ, ուստի մենք պարտավոր էինք նրանց հետ վարվել զինվորական կարգապահության շրջանակներում»:

Սակայն այդօրինակ պատճառաբանությունները միանգամայն հակասում են ճշմարտությանը, քանզի հայկական այն բոլոր քաղաքներն ու բնակավայրերը, որոնց բնակիչներն արտաքսվեցին մահվան ճամբարներ, հավասարապես հեռու էին թե՛ Գարդանելի նեղուցից եւ թե՛ կովկասյան ռազմական գործողությունների քատերաբեմից, ուստի՝ դաշնակիցների հետ հայերի համագործակցությունը բացառվում էր, շեշտում է Ռայինը: Վերջինս հավելում է, որ բացառվում էր նաեւ հայերի ապստամբությունն Օսմանյան պետության դեմ, նախ այն պատճառով, որ նրանք ապրում էին կայսրության լայնածավալ տարածքի տարբեր հատվածներում: Բացի այդ՝ բացակայում էր նաեւ հայերի՝ բռնարարքների դիմելու հավանականությունը, քանի որ Կոստանդնուպոլսի ձեռքում էր կենտրոնացված ռազմական ու քաղաքական ողջ ներուժը:

Եվ, ի վերջո, ինչպես նշվել է, քաղաքաբնակ, խաղաղասեր, ակտիվ արհեստավոր մարդիկ են, որոնք զենքի հետ գործ չունեին, ինչպես Արեւմտյան Եվրոպայի բնակչությանը՝ օտար էին բռնություններ եւ ուժ գործադրելը: Հետեւաբար, օսմանցիները չէին կարող իրենց ոճրագոր-

ծությունների էությունը նենգափոխել՝ դրանք ներկայացնելով իբրեւ «կանխարգելիչ գործողություններ»: Հայերը ոճրագործության այդ ծրագրից անտեղյակ էին, եւ հենց դրանով էլ պատճառաբանվում է նրանց՝ որեւէ դիմադրություն ցույց չտալու փաստը:

«Հայոց ցեղասպանություն» գրքի հեղինակն այնուհետեւ անդրադառնում է նաեւ Շապին-Գարահիսարի, Չեյթունի, Մասունի, Մուսալեռան դիմադրություններին (էջ՝ 102-114): Հավելենք նաեւ, որ, այսուհանդերձ, Ռայինը համառորեն ձգտում է անտեսել, որ Անկարան եւս նույն պատճառաբանություններով է արդարանում եւ հրաժարվում Հայոց ցեղասպանության ճանաչումից: Նա ջանք չի խնայում հստակ տարանջատելու օսմանյան թուրքերին այսօրվա Թուրքիայի թուրքերից, ինչը, ըստ ամենայնի, պետք է բացատրել ոչ միայն հեղինակի համակրանքով Թուրքիայի Հանրապետության ու Աթաթուրքի նկատմամբ, այլեւ տվյալ ժամանակահատվածում թուրք-իրանական հարաբերություններով:

«Բացահայտ սպանություն», «Առավել ցավալի ավարտ, քան սկիզբը», «Տուրք մահվան» ենթավերնագրերի ներքո հեղինակն ապացուցում է, որ օսմանցիների նպատակը մի ողջ ազգի ոչնչացումն էր, նշելով, որ թուրքերը, ներթափանցելով Իրանի տարածք, ոչնչացնում էին նաեւ Իրանի Ադրբեյջան նահանգում ապաստանած եւ այստեղ դարերով ապրող հայերին: Միաժամանակ նա շեշտում է, որ Թալեաք բեյը եւ երիտթուրքերը չեն խնայել անգամ օսմանյան խորհրդարանի հայ անդամներին՝ Չոհրապին ու Վարդգեսին, որի համար քարոզչական լուրջ գործունեություն էին ծավալում: Նա նաեւ ներկայացնում է վիճակագրական տվյալներ՝ ցեղասպանության ենթարկված հայերի վերաբերյալ՝ դրանց հավաստիությունն ապացուցելու նպատակով համեմատելով տարբեր աղբյուրներից քաղած տվյալները:

\* \* \*

Էսմայիլ Ռայինի «Հայոց ցեղասպանություն» մեմագրության 3-րդ մասը՝ «Մի ազգի բնաջնջումը», եզրափակվում է «Գերմանիայի գործելակերպը» վերնագրված հատվածով: Հեղինակը, հենվելով Թուինբրի<sup>26</sup>

<sup>26</sup> Arnold J. Toynbee



տեսակետներին, շեշտում է, որ Գերմանիան ի գորու էր լոկ ակնարկով Օսմանյան կայսրությունում հայերին փրկել ցեղասպանությունից, կասեցնել արյունահեղությունը: Մակայն, ցավոք, գերմանացիները ոչ միայն որեւէ քայլ չեն կատարել ծրագրված ցեղասպանությունը կանխելու ուղղությամբ, այլև հաճախ խրախուսել են ամենեւին էլ ոգետրման կարիք չունեցող օսմանցիներին: Ավելին, թվում է, թե հրեաների հանդեպ կիրառված այն ցեղասպանությունները, որոնք հետագայում տեղի ունեցան ֆաշիստական Գերմանիայի ձեռքով, վերջինիս զավթած տարածքներում, փորձարկվել են Օսմանյան կայսրությունում՝ հայերի նկատմամբ: Ռայխը, մատնանշելով որոշ աղբյուրներ, որոնք պնդում են, թե գերմանացիները համագործակցել, անգամ մասնակցել են ցեղասպանության ծրագրմանը, ընդգծում է, որ ամենեւին չի կիսում այդ տեսակետները: Միաժամանակ նշում է, որ, չնայած օսմանցիներն իրենց նպատակներն իրականացնելու համար ո՛չ գրգռողի եւ ոչ էլ խրախուսողի կարիք ունեին, այնուամենայնիվ, անժխտելի ճշմարտություն է նաեւ այն, որ օսմանյան Թուրքիան, պատերազմի մեջ մտնելով, լիովին ենթարկվել էր Գերմանիային, քանզի վերջինիցս կախման մեջ էր ռազմադաշտում զինամթերքի կարիքներն ապահովելու, պատերազմը վարելու հրամանատարական կազմի, սեփական գոյությունը պաշտպանելու համար: Հետեւաբար, եթե Գերմանիան «վետտ» դներ օսմանցիների գործողությունների վրա, ապա վերջիններս, անկասկած, կենթարկվեին դրան: Բեռլինն իր նման որոշումը կարող էր փոխանցել նաեւ տեղական իշխանություններին, քանզի այդ ժամանակ Գերմանիայի հյուպատոսական ցանցը Օսմանյան կայսրությունում խիստ ընդլայնված էր (էջ 135):

Այնուհետեւ բազմաթիվ փաստեր են ներկայացվում առ այն, որ Գերմանիան գիտակցաբար լռել է, որը երբեմն պատճառաբանել է դաշնակցի ներքին գործերին չմիջամտելու պատրվակով: Ավելին, Գերմանիայի կանցլերը 1915թ. օգոստոսին՝ հայերի եղեռնի 4-րդ ամսում, Ռայխստագում իր ելույթում, որը նվիրված էր միջազգային իրադրությանը, առիթից օգտվելով, շնորհավորել է այն հայրենակիցներին, որոնք աջակցել են «օսմանցիների զարմանալի վերածնունդը» (էջ 137):

Գերմանացիները Հայոց ցեղասպանությունը երբեմն բացատրել

են նաեւ հայերի նկատմամբ թուրք բնակչության թշնամանքով: Այս առնչությամբ գերմանական «Ֆրանկֆուրթեր Ցայթունգ» օրաթերթից մեջբերում էր բազմաթիվ հատվածներ, այդ թվում՝ նշյալ օրաթերթի 1915թ. հոկտեմբերի 9-ի թղթակցությունը, որտեղ նշվում է, որ «հայերն իրենց խելացիության, առետրի բնագավառում հմտության շնորհիվ, մշտապես զբաղվելով առետրով, բանկային գործունեությամբ ու արտադրությամբ հարստանում են, իսկ դանդաղկոտ օսմանցիներն ավելի են աղքատանում. ահա թե ինչու հայերն Արեւելքում համարվում են ամենանողկալի մարդիկ: Ուստի՝ ինքնին հասկանալի է, թե ինչու Անատոլիայի անգրագետ զանգվածները նախանձից ու քինախնդրությունից, կիսագրագետ կառավարիչների, մոլեռանդ կրոնապետների ու ազգայնամուլների ազդեցության ներքո նպատակամղվեցին անմեղ մարդկանց ոչնչացմանը» (էջ 137):

Ռայխը գրում է, «չէ որ հայերը «իրենց խելացիությամբ ու առետրի ոլորտում հմտությամբ» կարող էին Օսմանյան կայսրության զարգացմանը նպաստել, այն դարձնել քաղաքակիրթ, արդիական եւ կազմակերպված երկիր, մինչդեռ նրանց չգոյությամբ այն հայտնվել է գործնականում թշվառ իրավիճակում: Նա, միտքը շարունակելով, նշում է. «Ո՞վ է օգտվել ստեղծված իրավիճակից: Բնականաբար, ո՛չ հայերը, ո՛չ էլ օսմանցիները: Հետեւաբար, կարելի է ենթադրել՝ գերմանացիները, որոնք չէին ցանկանա, որ օսմանյան Թուրքիան զարգացած երկիր դառնար: Նրանք մտածո՞ւմ էին, արդյոք, որ իրենք են դառնալու օսմանցիների ժառանգորդը»: Ապա Ռայխը հարց է տալիս. «Մի՞թե սա հենց «օսմանցիների վերածնունդն» է, ինչի մասին երկիմաստ արտահայտվել էր Գերմանիայի կանցլերը» (էջ 140):

Հեղինակը, ապացույցներ ու փաստեր ներկայացնելով, ձգտել է հաստատել, որ հայերի ցեղասպանության հարցում գերմանացիները որոշիչ դեր են ունեցել: Միաժամանակ շեշտում է, որ, այսուհանդերձ, Գերմանիան երբեք արդարանալու քայլ չի կատարել, չի փորձել հակազդեցություն դրսևտրել իրեն ուղղված մեղադրանքների ու բողոքների հանդեպ՝ ո՛չ այն ժամանակ, երբ արյունահեղությունն իր ամասելի չափերին էր հասել, ո՛չ էլ դրանից հետո, երբ օսմանցիների կատարած ոճրագործությունների գաղտնիքը բացահայտվեց, եւ Գերմանիան

պաշտոնապես մեղադրվեց լռելու եւ դահիճների հետ համագործակցելու համար (էջ 141):

Ռայինը գրում է, որ այսօր, երբ շուրջ մեկ դար է անցել Հայոց եղեռնից, լիովին հասկանալի է նաեւ գերմանացիների լռության պատճառը: Ըստ երեւույթին, այնժամ, երբ հայ կանայք ու երեխաները թուրք դահիճների ճիրաններում իրենց տանջալից մահկանացուն էին կնքում, գերմանացի ծայրահեղ ցեղապաշտներն իրենց ուղեղներում ծրագրում էին մեկ այլ ազգի ոչնչացման ծրագիրը: Նրանք «հրեական հարցի վերջնական լուծումն» էին նախապատրաստում, որը պետք է իրականացվեր ավստրիացի եֆրեյտոր, «20-րդ դարի հանճար» (Մեծ Բրիտանիայի վարչապետ Ուինսթոն Չերչիլն իր «Համաշխարհային պատերազմի հուշեր» գրքում Հիտլերին հանճար է անվանել) Ադոլֆ Հիտլերի ձեռքով:

«Գերմանիան, բնականաբար, չէր կարող արդարանալու քայլ կատարել, երբ նպատակամղված էր Օսմանյան կայսրությունում հայերի գլխին եկածն իրագործել ողջ Գերմանիայում եւ գրավյալ տարածքներում՝ տարբեր ազգերի ոչնչացման նպատակով:

Հայոց ցեղասպանությունը, որի ամենաարյունալի եւ աղետալի դեպքերի ակնատեսներն էին գերմանացի հյուպատոսները, կատարվածը ճշգրտությամբ զեկուցում էին կենտրոնին, որտեղ նրանք իրականում փորձ էին ձեռք բերում: Հետագայում նրանք նույնը պետք է կրկնեին Գերմանիայում՝ առավել ծավալուն մասշտաբներով, արդիական մեքենայով եւ մեծ արագությամբ: Այլ կերպ ասած՝ Օսմանյան կայսրության հայերը վերածվել էին «լաբորատորիայի ճագարների»՝ Գերմանիայի ապագա ծրագրերի համար» (էջ 142):

Ռայինը պնդում է, որ այդ տեսակետի ճշմարտացիությունն ավելի է հիմնավորվում, երբ պարզվում է, որ Հիտլերի իշխանության օրոք էլ հրեաները՝ Գերմանիայում, ինչպես Էնվերի ժամանակ հայերը քաղաքներում, գյուղերում, ավաններում ամենահարուստ, բարեկեցիկ կյանքով ապրող մարդիկ էին: Աղքատ գերմանացիները օսմանցիների մահն հարց էին տալիս՝ ինչո՞ւ իրենց նախնիների հայրենիքում առկա բարիքներն ու հարստությունը պետք է վայելեն հրեաները, իսկ իրենք ապրեն աղքատության մեջ: Եվ ինչպես օսմանցիները ռազմաճակա-

տում իրենց պարտությունների համար պատրվակ փնտրելով և հայերին մեղավոր համարելով՝ նրանց ցեղասպանության ենթարկեցին, ֆաշիստական Գերմանիան էլ նույն պատրվակով, իբրև թե «Առաջին աշխարհամարտում հրեաները քիկունքից դաշունահարել են Գերմանիային», հրեաներին ցեղասպանության է ենթարկել: «Հենց այն հրեաներին, ովքեր, ինչպես եւ գերմանացիները, օսմանցիների հետ համագործակցել են Հայոց ցեղասպանության հարցում: Երկու դեպքում էլ լոկ դրդապատճառ էր հարկավոր, որպեսզի հասարակության ներքին խավերին հրահրեն հայերի կամ հրեաների դեմ, թշնամանք սերմանեն ցեղասպանության մեքենաները գործի դնելու համար, որը եւ իրականացրին Էնվերն ու Հիտլերը» (էջ 143):

Ռայինը շեշտում է, որ Հայոց ցեղասպանությունն իրականացնողների անպատիժ մնալը նույնպես փորձ էր, ինչն այնուհետև հաշվի առան գերմանացիները: Եթե Էնվեր փաշան ու նրա զինակիցները Նյուրնբերգյան դատավարության օրինակով (որի առջեւ կանգնեցին նացիստները) դատապարտվեին, ապա Հիտլերի շագանակագույն եւ սեւ վերանաշապիկավոր կողմնակիցները թերեւս այդօրինակ համարձակությամբ ձեռնամուխ չլինեին հրեաների ոչնչացմանը (էջ 143):

Ապա, վկայակոչելով «Նյուրնբերգյան դատավարության փաստաթղթերը» գրքի պարսկերեն թարգմանության 88-89 էջերը, հեղինակը նշել է, որ 1939թ. օգոստոսի 23-ին, Լեհաստանի վրա հարձակվելուց երկու օր առաջ, Հիտլերն իր նստավայր է հրավիրել Գերմանիայի բանակի 15-20 զենեռալների, որտեղ արտասանել է իր պատմական ճառերից մեկը: Ֆյուրերը պահանջել է, որ նրանք թույլություն չցուցաբերեն եւ ամենայն խստությամբ ու անողորմությամբ Լեհաստանը մաքրեն լեհերից, Գերմանիայի ռազմադյունաբերությունն ապահովեն անհրաժեշտ հանքերով, բանակին ապահովեն անհրաժեշտ հանքերով ու նյութական այլ աղբյուրներով: Այդ ճառում Հիտլերը հստակորեն անդրադարձել է Հայոց ցեղասպանությանը: Նա նշել է. «... Ի վերջո ես իմ հրամանատարության տակ գտնվող ուժերին, զինվորներին հրամայել եմ, որ պատերազմի դաշտ, դեպի մահ գնալով, վերացնեն բոլոր լեհերին՝ կին, տղամարդ, ծեր ու մանուկ: Քանզի այդ ապականված ցեղի ոչնչացմամբ է, որ մենք կարող են մեր երեխաների ապագան ապահո-

վել, գերմանական ցեղի համար բարգավաճելու հող ստեղծել»: Նա իր ճառում ընդգծել է. «Այսօր աշխարհում ո՞վ է հիշում հայերի ցեղասպանության մասին...»<sup>27</sup> (էջ՝ 144):

Ռայխը շարունակում է՝ հայերի ու հրեաների ցեղասպանության միջև կապի առկայությունն ապացուցելու համար արդյո՞ք նշվածից ավելի հստակ, խոսուն փաստ է անհրաժեշտ: Հնարավո՞ր է հայերի ցեղասպանության վերաբերյալ Գերմանիայի լուրջությունը որպես համաձայնության նշան մեկնաբանել՝ այդ ոճրագործությունից փորձ կուտակելու նպատակ:

«Թեև պատմական այդ երկու ցավալի դեպքերը նյութական հիմքեր, արմատներ ունեն այն առումով, որ թե՛ օսմանցիները եւ թե՛ գերմանացիները, հայերին ու հրեաներին մահվան երախը քշելով, ցանկանում էին տիրել նրանց հարստությանը, ունեցվածքին, սակայն, ինչպես պատմաբաններն ու հետազոտողներն են վկայում, այդ ցեղասպանությունների գլխավոր դրդապատճառները կրոնական ու ռասայական մոլեռանդությունն ու ատելությունն են եղել» (էջ 144):

Հեղինակը մենագրության այս հատվածն ավարտում է իր եզրակացություններով. «Պատմության ընթացքում այդօրինակ տարաձայնություններ, արյունալի, ցավալի դեպքեր շատ են արձանագրվել»: Այնպիսի դեպքեր, որ այսօր էլ ընթերցելիս մարդու մարմնով սարսուռ է անցնում եւ ակամա անիծում ես մարդ արարածի այդ աստիճան անողորությունը, անխղճությունն ու բռնությունը: Սակայն այս ամենի մեջ կա զարմանալի, ուսանելի մի բան, այն է՝ պատմության ընթացքում դահիճները դարեր կամ տարիներ անց վերածվել են գոհերի եւ՝ ընդհակառակը (էջ 144):

«Կար ժամանակ, երբ հրեաները Հիսուսի առաջին հետնորդներին խաչում էին, նետում առյուծների եւ այլ գիշատիչ գազանների առաջ

<sup>27</sup> *Լեհաստան ներխուժելու նախօրեին՝ 1939թ. օգոստոսի 29-ին, Օբերգալ-գրեդում արյուսասուսած նստում, գերագույն հրամայագմին համոզելու համար, որ աշխարհն անմիջապես կնոռանա լեհ ժողովրդի հանդեպ չեռնարկվելիք անողոր միջոցները, Հիլդերը վկայակոչել է 1915թ. հայերի եղեռնը. «Ի վերջո, ո՞վ է հիմա հիշում հայերի քնաջնջումը Թուրքիայում»: Դպրոցական մեծ հանրագիրարան, գիրք II, հատ.2, Երևան, 2010թ., էջ 91:*

ու, դիտելով նրանց հոշոտվելը, հաճույք էին ստանում, բավարարում իրենց մեջ կուտակված քեճն ու ատելությունը:

Դարեր անց՝ Խաչակրաց արշավանքների ժամանակ, քրիստոնյաները նույն դաժանությամբ էին վերաբերվում մահմեդականներին: Նրանք ողջ քաղաքակիրթ աշխարհն արյամբ հեղելով, տակնուվրա արեցին:

Եվս մի քանի դար՝ եւ այս անգամ օսմանցիները հայ-քրիստոնյաներին ցեղասպանության ենթարկեցին, սակայն իրենք ավելի լավ ճակատագիր չունեցան: Քանզի Օսմանյան հսկայածավալ, հզոր կայսրությունից այսօր հետք անգամ չի մնացել (այժմյան ազատ, անկախ Թուրքիայի Հանրապետությունը որևէ առնչություն չունի երեկվա Օսմանյան կայսրության հետ - Ի.Ռ.): Նացիստ, քրիստոնյա գերմանացիները հրեաներին ենթարկեցին սարսափելի անողոր ցեղասպանության, տուժած, անօգնական եւ ճնշված հրեաներն արժանացան աշխարհի ողջ մարդկության, այդ թվում՝ մահմեդականների հովանավորությանն ու կարեկցանքին: Սակայն այսօր հրեա ազգը, փոխելով իր դերը, վերածվել է ծավալապաշտ, ազրեսոր, բռնություն գործադրող մի պետության, որը, Միջին Արևելքի արաբական երկրների վրա հարձակվելով, ոտնձգություններ է անում: Այլ կերպ ասած՝ արաբների նկատմամբ վարվում է այնպես, ինչպես հիտլերականներն են վարվել իրենց հետ:

Հենց այս ուսանելի հարցն է կարելով գրքի տվյալ հատվածում: Ինչպես նախորդ էջերում տեսանք, հրեաներն Օսմանյան կայսրությունում հովանավորում էին հայերի ցեղասպանությունը: Եթե անգամ իրենք չէին իրականացնողը, ապա, հանդես գալով օսմանյան կառավարության քաղաքականությունը խրախուսողի, գայթակողի դերում, առաջնորդում եւ հովանավորում էին ջարդերի շարունակությունը: Հավանաբար, Առաջին աշխարհամարտի ընթացքում հրեաների՝ հայերի ցեղասպանության քաջալերումը, քրիստոնյաների դեմ հազարամյակներ արմատացած նրանց ատելությունից ու քինախնդրությունից էր բխում: Սակայն նրանք անհաղորդ էին այն իրականությանը, որ շատ ավելի վաղ, քան կարելի էր ենթադրել, այդ ոճրագործությունների վրեժը նրանցից լուծելու են Գեստապոն ու Էսեսականները՝ Երկրորդ համաշխարհային ընթացքում:

Իրոք, գարմանալի է, որ Գերմանիան եւ հրեաները Առաջին աշխարհամարտի ընթացքում հայերի ցեղասպանության նկատմամբ նույն քաղաքականությունն են կիրառել, եթե անգամ անտեսելու լինենք այն փաստը, որ նրանք խրախուսում էին ցեղասպանությունը, գրգռում Օսմանյան պետությանը, ապա, առնվազն, իրենց լուծարման, բողոքի ձայնը չբարձրացնելով՝ նպաստել են արյունահեղությունների շարունակմանը: Իսկ Երկրորդ աշխարհամարտի ժամանակ նրանք՝ նացիստների ու հրեաների տեսքով, դեմ առ դեմ դուրս եկան, եւ տեղի ունեցավ այն, որը մարդկությունը երբեք չի մոռանա:

\* \* \*

«Հայոց ցեղասպանությունը» գրքի 4-րդ՝ «Ոճրագործության իրագործողը» մասում հեղինակը շեշտում է, որ յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ տեղեկությունները, բացառված չէ, որ ընթերցողին որոշ կասկածների տեղիք տան: Հնարավոր է, որ փաստեր ներկայացնողները՝ դեպքից տուժածների հետ որեւէ ձեռով ընդհանուր շահ ունեն, կրոնակից կամ ցեղակից են և այլն: Հետեւաբար, հնարավոր է, որ ումանը Առնոլդ Թուինբրի կամ Ամերիկյան կոմիտեի հետազոտությունները հարցականի տակ դնեն՝ մտածելով, որ դեպքերը ներկայացրել են չափազանցված, գուտ այն պատճառով, որ նրանք եւ հայերը կրոնակից են (էջ 157):

Ռայինի կարծիքով՝ փաստերի հեղինակների պատասխանը շատ հստակ է. նախ ցանկացած ագրեսիայի վերաբերյալ իրականությունը պետք է լսել զոհի բերանից, քանզի ագրեսորը, գիտակցելով իր արարքի այլանդակությունը, ձգտում է քաբցնել այն, ինչպես ֆաշիստներն ու օսմանցիներն էին ձգտում «հրեական հարցի վերջնական լուծումը» եւ «հայկական հարցի վերջնական լուծումը» քաբցնել աշխարհից: Բացի այդ՝ Թուինբրի նման անաչառությամբ հայտնի աշխարհահռչակ պատմաբանը երբեք իր անունը չէր արատավորի հայ փոքրամասնությանը պաշտպանելու համար, ուստի նա առաջնորդվել է ականատեսների վկայություններով ու ամենահավաստի փաստերով: Այդուհանդերձ, որպեսզի ընթերցողի մեջ որեւէ կասկած չհարուցվի, թե օսմանցիները ծրագրել եւ իրականացրել են հայերի բնաջնջումը, Ռայինը նախ

ամբողջությամբ զետեղել է ջարդերի մասնակից «Նախն բեյի հուշերը», որին ծանոթ ենք, ապա նաեւ իրանցի ակնառեսների՝ օսմանցիների կրոնակիցների վկայությունները, որոնց արդեն անդրադարձել ենք:

\* \* \*

Ռայինի «Հայոց ցեղասպանությունը» մեմագրության վերջին՝ 5-րդ «Հայերի հակազդեցությունը. Դաշնակցություն կուսակցության կոմիտեն, առանձին անհատների ահաբեկումը» մասն սկսվում է հետեւյալ խոսքերով. «Հայոց ցեղասպանությունը բազմաթիվ կողմերով նման է ֆաշիստական Գերմանիայի իրականացրած՝ հրեաների բնաջնջմանը: Այդ ոճրագործություններն սկսվել եւ իրենց ավարտին են հասցվել ռասիստական, ազգայնամոլական դրոպապատճառներով, նույն դաժանությամբ, անխղճությամբ, բռնությամբ: Դրանք կատարվել են էլեկտրոնային մեքենայի արագությամբ, ճշգրտությամբ ու կատարյալ կարգուկանոնով» (էջ 225):

Ռայինը նշում է, որ 60-ականների վերջին ֆրանսիացի մի գրող Հրեաների հուլբոսքի վերաբերյալ նոր տեսություն է առաջ քաշել. «Նրանք ձեզ սպանում էին, բայց դուք ինչո՞ւ էիք ամենայն հանգստությամբ ենթարկվում մահին... նրանք սպանդանոց էին կառուցել, իսկ դուք ինչո՞ւ էիք ոչխարի հոտի նման շարժվում դեպի այդ սպանդանոցները... ինչո՞ւ 6 միլիոն մարդ պետք է այդ աստիճան անճարակություն ու անտարբերություն դրսեւորի, որ փոքրաթիվ մարդիկ նրանց քշեն գազախցիկներ եւ ողջակիզման վառարաններ»: Նա շեշտում է՝ այս տեսության կողմնակիցները հարց են տալիս՝ արդյոք, կյանքի նկատմամբ սե՞րն էր պատճառը, որն այլ ազգերի համեմատությամբ՝ հրեաների մեջ ավելի վառ է ընդգծված. ամեն անգամ, կենդանի մնալու աննշան հույսով, մահվան ճամբարների անտանելի պայմաններում դահիճներին չի դիմադրել կամ չի դիմել ինքնասպանության» (էջ 225):

Ռայինը գրում է, որ գիրքն ընթերցողների մեջ եւս կարող են այդօրինակ հարցեր ծագել. ինչո՞ւ հայերը չեն դիմադրել: Իսկ եթե դիմադրել են, ինչպիսի՞ն է եղել այդ դիմադրությունը: Ապա հեղինակը, ինքն էլ պատասխանելով իր առաջ քաշած հարցերին, նշում է, որ օսմանցիներն ամենայն ճշգրտությամբ էին ծրագրել ցեղասպանությունը:

Նրանք նախ հայ տղամարդկանց եւ երիտասարդներին բանակ զորակոչեցին, որպէսզի կանխարգելեն բոլոր հակազդեցությունները: Բացի այդ՝ ցեղասպանությունն իրականացվում էր հստակ կազմված ծրագրով, որպէսզի հայերը չհասկանան, թե վերջն ինչ է լինելու, այլապէս կղիմադրեին: Նա հավելում է, որ, այդուհանդերձ, Հայոց ցեղասպանության դեպքում հակազդեցություններ եղել են, այդ թվում՝ անհատների ահաբեկման եւ կազմակերպված դիմադրությունների տեսքով, որոնք ապացուցում են, որ հայերն, այնուամենայնիվ, իրենց բողոքի ձայնը տարբեր միջոցներով լսելի դարձրին (էջ 226-27): Նա նաեւ համեմատում է հայերի ու լեռների դիմադրությունը՝ բնաջնջման դեմ: Անդրադառնում է նաեւ ցեղասպանության համար վրեժխնդրության կազմակերպիչների, այդ թվում՝ Էնվեր փաշայի, Ջամալ փաշայի, Թալեաթի, Խան Խոնեսկու, Աբաս Բեգովի ահաբեկումներին (էջ 231-39):

### **«Օսմանցիները հայերի բնաջնջմամբ ձգտել են անվտանգության գոտի ստեղծել»**

Ինչպէս նշել ենք, Իրանի վերաբերմունքը Հայոց ցեղասպանության հանդէպ ակնհայտորեն կրել է կրում է Թեհրան-Անկարա փոխհարաբերությունների կնիքը: 1997-ից ի վեր թուրք-իրանական փոխառնչություններում ավելի հաճախակի դարձան լուրջ ճգնաժամերը, որտեղ նշանակալի դեր է ունեցել իսլամական գործոնը: Հանգամանք, որն առավելապէս պետք է պատճառաբանել Թուրքիայում իսլամ-արմատականության ակտիվացմամբ:

Իրանի Իսլամական հեղափոխության առաջնորդ Էմամ Խոմէյնի մահնեղականների ծոմի՝ ռամադան ամսվա վերջին ուրբաթ օրը հայտարարել է Երուսաղեմի փրկության օր: Մահնեղական շատ երկրներում, մասնավորապէս, իսլամական շրջանակների ջանքերով, Երուսաղեմի փրկության օրը նշվում է տարբեր միջոցառումներով ու արարողություններով: 1997թ. փետրվարի 3-ը համընկել էր նշյալ օրվան, որի առթիվ Թուրքիայում կազմակերպված մի հավաքում, իշխանությունների ներկայացուցչի հրավերով ներկա էր եղել նաեւ Անկարայում Իրանի դեսպան Մոհամեդ Ռեզա Բաղերին: Վերջինս իր ելույթում, իշխող իսլամական «Բարօրություն» կուսակցության քաղաքականութ-

յանը համահունչ, սակայն իր դիվանագիտական գործունեությանն անհարիր՝ Թուրքիայում շարիաթի օրենքները կիրառելու կոչ էր արել: Անգգույշ քայլ, որն այդ երկրի ներքաղաքական շիկացած մթնոլորտում, երբ երկիրը կրկին ռազմական հեղաշրջման սպառնալիքի տակ էր հայտնվել, ռումբի պայթյունի ազդեցություն ունեցավ Էրբաքանի քաղաքական հակառակորդների շրջանում, մասնավորապէս՝ բանակում: Էրբաքանը կառավարությունից պահանջեց անհապաղ երկրից հեռացնել իրանցի դիվանագետին:

Դրա հետեւանքով, շուրջ մեկ շաբաթ անց, Թուրքիայից վտարվեցին Իրանի դեսպանը եւ Ստամբուլում Իրանի հյուպատոսը: Այդպիսով, Թուրքիայի ներքաղաքական ճգնաժամն ընդգրկեց նաեւ Թեհրան-Անկարա փոխհարաբերությունների ոլորտը: Իրանը դարձավ Թուրքիայի քաղաքական ուժերի եւ բանակի մեղադրանքների ու սուր քննադատությունների թիրախ: Նախկին վարչապետ Մասուդ Յըմազը հայտնեց, որ Բաղերին ոչ թե դիվանագետ, այլ ահաբեկիչ է: Բանակի գլխավոր շտաբի պետ Չեխր Բիրն Իրանին բնորոշեց իբրեւ ահաբեկչությունը հովանավորող պետություն: Թեհրանը, թեւ հաշվի առնելով Թուրքիայի բանակի եւ քաղաքական ընդդիմության ուժերի կողմից Էրբաքանի վրա գործադրվող զգալի ճնշումները, աշխատում էր հնարավորության սահմաններում զսպվածություն դրսևորելով՝ նպաստել վերջինիս ներքին ճգնաժամը հաղթահարելուն, այսուհանդերձ, դիվանագիտության ոլորտում ընդունված ավանդույթի համաձայն, դիմելով պատասխան քայլի, 1997թ. մարտի 1-ին Թեհրանում եւ Ուրմիայում համապատասխանաբար այդ երկրից հեռացրեց Թուրքիայի դեսպանին եւ գլխավոր հյուպատոսին: Այլ կերպ ասած՝ երկու երկրների փոխհարաբերություններում ստեղծված ճգնաժամը հանգեց Թեհրան-Անկարա դիվանագիտական կապերի՝ հավատարմատարի մակարդակի իջեցման: Պաշտոնական Թեհրանի զուսպ կեցվածքը, բնականաբար, որեւէ դեր չունեցավ Էրբաքանին Թուրքիայի բանակի հրամկազմի թավշյա հեղաշրջմամբ ասպարեզից հեռացնելու եւ նրա գլխավորած «Բարօրություն» կուսակցության լուծարման համար:

Երկու երկրների՝ նման լարված փոխհարաբերությունների պայ-

մաններում Իրանում հրատարակվող «Իրան» օրաթերթը<sup>28</sup> 1998թ. հունիսի 9-ի համարում տպագրել է «Հայերի ջարդերը» հոդվածը՝ նվիրված Հայոց ցեղասպանությանը: Այնտեղ վկայակոչվել են գերմանացի ականատեսի եւ Եվրոպայի այլ երկրների, ամերիկացի դիվանագետների տեսակետները: Հոդվածը բաղկացած է «Անվտանգության գոտի», «Ցեղասպանությունից հետո», «Թուրանական կայսրություն» եւ այլ ենթավերնագրերից: Ըստ ամենայնի՝ հոդվածը պարսկալեզու ամենաօբյեկտիվ գնահատական պարունակող տպագիր նյութերից է: Հոդվածում նշվում է, որ Եղեռնը հստակորեն պանթուրքական նպատակներ էր հետապնդում:

«Իրան»-ի հոդվածն այսպես է սկսվում. «Ոճրագործությունն սկսվեց այն պահից, երբ 1914թ. դեկտեմբերին (պատերազմի սկսվելուց 5 ամիս անց) Էնվեր փաշան, Անդրկովկասում հարձակվելով ռուսական զորքերի վրա, պարտություն կրեց: Էնվերն սկզբում հաղթել էր, սակայն ռուսների հակահարձակման ժամանակ լիովին ջախջախվել: Նա համոզված էր, որ պարտության պատճառը հայ զինվորներն են, որոնք չեն կռվել ինչպես հարկն է:

Էնվեր եւ Թալեաթ փաշաները, նախքան իրենց ծրագրի իրականացումը, օսմանյան բանակում բոլոր հայերին զինաթափել են, որպեսզի նրանք չկարողանան դիմել ինքնապաշտպանության: 1915թ. ապրիլ-մայիսին, երբ հարյուր հազարավոր հայեր զինաթափվել էին, սկսվեց անողորմ ոճրագործությունը:

Սկզբում Ջեթունում, Ալեքսանդրիայում եւ Վանա լճի ավազանում հազար հազարավոր մարդիկ ձերբակալվեցին: Իսկ մինչ այդ՝ 650 ճանաչված հայեր, քաղաքական եւ մշակութային գործիչներ ձերբակալվել էին, որպեսզի դիմադրության օջախներ չստեղծվեն: Այնուհետեւ Արեւելյան Թուրքիայի հայերին գնացքով, հետիոտն, բեռնատար մեքենաներով եւ այլ փոխադրամիջոցներով քշեցին դեպի Սիրիայի եւ Իրաքի անապատներ, որոնք օսմանյան Թուրքիայի գաղութներն էին, իսկ

<sup>28</sup> Հայրնի է իբրև Իրանի ԱԳ նախարարության տեսակետներն արտահայտող մամուլի օրգան:

հազարավոր թուրք եւ քուրդ զինյալները, սպանելու առաջադրանքով, ուղեկցում էին նրանց:

1915թ. հունիսի 17-ին Օսմանյան պետությունում Գերմանիայի դեսպան Վազենհայնը Գերմանիայի ԱԳ նախարարությանը հեռագրել է, որ օսմանյան կառավարությունը հայտնում է, թե հայերին այլ վայր է տեղափոխում, սակայն իրական նպատակը նրանց ոչնչացնելն է: Սակայն Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանն իր հեռագրի պատասխանն այդպես էլ չստացավ: Բացի այդ՝ եվրոպական այլ երկրների դեսպանները, որոնք դեպքերի մասին տեղյակ էին, բողոքեցին Օսմանյան կառավարությանը, բայց ոճրագործությունը կանխելու ուղղությամբ որեւէ լուրջ քայլ չկատարվեց:

### Անվտանգության գոտի

Օսմանյան պետությունը հավատացած էր, որ Հայաստանը վերացնելով, Բոսֆորի նեղուցից մինչեւ Մամարդանդ, որը ռուսները գրավել էին 1896թ., կստեղծվի անվտանգության գոտի:

Երբ Սիրիայի եւ Իրաքի անապատներում սպանված հայերի մասին լուրը հասավ կենդանի մնացած հայերին, նրանք Արամ Մանուկյանի առաջնորդությամբ սկսեցին պաշտպանվել: Շուրջ 300 հազար հայեր իրենց ողջ ունեցվածքը թողնելով, լեռներով, Արարատի հովիտներով մեծ դժվարությամբ, դատարկածեռն հասան Ռուսաստան: Կոստանդնուպոլսի հայերի մի մասը շտապեց փախչել Եվրոպա: Տասնյակ հազարավոր հայեր ապաստան գտան Իրանում: Սակայն օսմանյան զորքերը ներթափանցեցին Իրան եւ նրանցից շատերին, ինչպես նաեւ ստորիններին, Ադրբեջան նահանգում ոչնչացրեցին:

1915թ. հունիսի սկզբներին Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի հյուպատոսը հեռագրել է իր երկրի ԱԳ նախարարությանը. «Եթե խոսքը վերաբերեր հայերին մի վայրից մեկ այլ վայր տեղափոխելուն, դա տանելի կլիներ, սակայն յուրաքանչյուր ոք տեղյակ է, որ նրանք քշվում են դեպի սպանդանոց. ոչ թե հազար, կամ տասնյակ հազարներ, այլ 100 հազարավոր հայեր են դատապարտված մահվան»: Օսմանյան պետությունն ուշադրության չարժանացրեց նաեւ Միացյալ Նահանգների բողոքը, քանզի նպատակը հայերի բնաջնջումն էր:

## Այրող անապատներում

Հարյուրավոր պատմաբաններ եւ քաղաքական գործիչներ գրել են Հայոց ցեղասպանության մասին, այդ թվում՝ նաեւ ֆրանսիացի հայտնի գիտնական Միշել Էրբենը: Նա գրել է. «Ավելի քան մեկ միլիոն հայեր Միրիայի եւ Իրաքի անապատների այրող արեւի տակ ոչխարների հոտի ու կովերի նախրի պես քշվում էին առաջ: Թուրք եւ քուրդ զինված տղամարդիկ նրանց 100-200-անոց խմբերի էին բաժանում եւ քշում անապատի խորքերը: Հազարավոր դիակներ կային ճամփեզրերին, կրծքի երեխաները ճիչ ու վայնասուն էին բարձրացրել, հիվանդները կիզիչ արեւի տակ մահանում էին, ողջ անապատը բնդում էր սոված ու ծարավ մարդկանց ճիչերից: Բայց, ավաղ, այդ քարսիրտ մարդասպանները, դահիճները չէին խղճում անմեղ մարդկանց, գոնե երեխաներին: Անապատում երբեմն ջրափոսեր էին հայտնվում, որոնցում անձրեւաջրի հետքեր էին մնացել: Թուրքերն ու քրդերը հայերին քշում էին այդ փոսերից ջուր խմելու, իսկ իրենք խորհրդակցում էին փամփուշտների խնայողության հարցի շուրջ, որպեսզի յուրաքանչյուրի համար մեկից ավելի փամփուշտ չվատնեն: Երբ մեծ ու փոքր խմում էին այդ աղտոտված ջուրը, նրանք հետեւից, գլուխները թիրախ դարձնելով, բոլորին անխտիր սպանում էին:

Հայերից շատերի գլուխները կտրում էին մանգաղով ու դաշույնով: Տասնյակ հազարավորներ ոչխարի հոտի նման դեպի սպանդանոց էին քշվում: Բոցե անապատներում խիստ հազվադեպ էր պատահում, որ մի քանի հոգու հաջողվեր փախուստի դիմել եւ տեսածները պատմել»:

## Ցեղասպանությունից հետո

1915թ. օգոստոսի 31-ին, Հայոց ցեղասպանությունից հետո, Թալեաթ փաշան հեռագրով դաշնակից Գերմանիային հայտնել է. «Հայկական կոչվող հարցն այլեւս գոյություն չունի»: Օսմանյան պետությունում Գերմանիայի դեսպանը գրել է. «Թալեաթին, որ փայտի նման ուղիղ դիմացս կանգնել էր, ասացի՝ ենթադրենք, թե մի քանի հայեր ձեզ դավաճանել են, դա պատճառ չէ, որ անմեղ երեխաներին ոչնչացնեք, մի ողջ ազգ, ողջ սերունդ լիովին բնաջնջել եք: Ի պատասխան՝ Թալեաթը շեշտել է, որ այդ քայլն անխուսափելի էր, քանզի այսօրվա անմեղ երեխաները վաղը դառնալու էին մեղավորներ:

Իրականում Օսմանյան կայսրության նպատակը Բոսֆորից մինչեւ Մամարդանդ ընկած տարածքների գրավումն էր, որպեսզի շրջափակեր հյուսիսային, հյուսիս-արեւմտյան եւ արեւմտյան սահմանները: Այս առնչությամբ չպետք է մոռանանք Օսմանյան կայսրության երկարատեւ պատերազմները սեֆեւիների թագավորների դեմ, մասնավորապես Շահ Էսմաիլ օրոք: Ավելին, Իրանում Մահմանադրական հեղափոխության ժամանակ օսմանցիները մեր երկրի տարածքի որոշ հատվածներ ասպատակեցին: Իսկ Առաջին աշխարհամարտի ընթացքում գրավել էին մեր երկրի արեւմտյան հատվածի զգալի մասը»:

## Թուրանական կայսրություն

1972թ. բրիտանացի մի գրող-պատմաբան «Լոռիյան մատնված ոճրագործությունը» վերնագրով հրապարակման մեջ նշել է. «Այսօր Թալեաթի դիակը Ստամբուլում շքեղ դամբարանում է՝ Լրադիի բլուրի վրա, իսկ Անկարայի մեծ փողոցներից մեկը նրա անունով է կոչվում, սա խայտառակություն է մարդկային հասարակության համար»:

Նույն թվականին հայերի դեմ գործած ոճրագործության հարցը ներառվել է նաեւ ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի՝ հասարակական-տնտեսական ենթահանձնաժողովի նիստի օրակարգում, որտեղ Թուրքիայի ներկայացուցիչ Վալաբայը նշել է, թե հայերի գոհվելու պատճառը պատերազմն էր. նրանք ապատամբել էին կայսրության դեմ, այդ պատճառով տեղափոխել են կայսրության մեկ այլ հատված: Նա այս նախադասությունն արտասանելուց հետո անմիջապես հեռացել է նիստից: Բրիտանացի պատմաբանը գրել է, որ իրականում Օսմանյան կայսրությունը մշտապես ջանքեր է գործադրել Միջին Ասիայի թուրքական ցեղերից թուրանական կայսրություն ստեղծելու ուղղությամբ:

Մեկ այլ պատմաբան գրել է. «Եթե Ազգերի լիգան 1920թ. դատապարտեր թուրք առաջնորդների անմարդկային արարքները, ապա Քեմալ փաշայի գլխավորած քեմալական իշխանությունը (1925-1940թթ.) Թուրքիայի քրդերի 1/3-ին չէր ոչնչացնի»: Նա հավելում է, որ, այնուամենայնիվ, Միացյալ Նահանգներն ու Գերմանիան միշտ էլ հովանավորում են Թուրքիային:

## Հայոց եղեռնի հարցը թուրք-իրանական փոխհարաբերությունների համատեքստում

Թուրք-իրանական փոխհարաբերություններում 1997թ. սկսված լարվածությունը զգալի էլիեջներով, մերթ ընդ մերթ ճգնաժամի վերածվելով, շարունակվել է մինչև 2002թ. նոյեմբերը, երբ Թուրքիայում տեղի ունեցած ընտրություններում հաղթել է իսլամական կողմնորոշմամբ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը: Դրանից հետո Թեհրան-Անկարա փոխհարաբերություններն ակնհայտորեն բարելավվել են: 2001թ. Հայոց ցեղասպանության տարելիցն իրանահայերը նշել են առավել լայնածավալ եւ լուրջ միջոցառումներով, արժարժվել է նաեւ Իրանի խորհրդարանում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, ինչն իր վրա է սեւեռել նաեւ միջազգային ՉԼՄ-ների ուշադրությունը:

Այդ արձագանքներին եւ հարցի քննարկմանը տողերիս հեղինակը ժամանակին 3 հոդվածով անդրադարձել է «Ազգ» օրաթերթում: Ստորեւ հաջորդաբար ներկայացնում ենք նաեւ այդ անդրադարձները:

«2001թ. փետրվարի 12-ին Թեհրան է ժամանելու Թուրքիայի ԱԳ նախարար Իսմայիլ Չեմը, որտեղ հանդիպելու է պաշտոնակից Քյամալ Խարազիի, խորհրդարանի նախագահ Մեհդի Քյառուբիի, ինչպես նաեւ նախագահ Մուհամեդ Խաթամիի հետ: Ըստ պաշտոնական Անկարայի հաղորդագրությունների՝ հիշյալ հանդիպումներում քննարկելու են մի շարք առանցքային հարցեր՝ սահմանների անվտանգության, Թուրքիայի քրդերի Իրանի հնարավոր հովանավորման, ինչպես նաեւ իսլամ-արմատականության, մասնավորապես՝ Թուրքիայի «Հեգբոլահի» հարցը: Սակայն հայկական ՉԼՄ-ները («Հայլուր», 9 փետրվարի, 2001թ.) հակված են այցը կարելու Իրանի խորհրդարանում Հայոց ցեղասպանության հնարավոր քննարկման տեսանկյունից: Հարց, որը շրջանառության մեջ է դրվել 2000թ. նոյեմբերից, եւ որին մերթ ընդ մերթ անդրադառնում են միջազգային ՉԼՄ-ները: Այսպես, օրինակ, BBC ռադիոկայանը փետրվարի 3-ին հայտարարել է, թե Իրանի խորհրդարանն ուսումնասիրում է երկու հայ պատգամավորների ներկայացրած նախագիծը, որով պահաջվում է 1915թ. հայերի ջարդե-

րը ճանաչել իբրեւ ցեղասպանություն: Իսկ փետրվարի 9-ին «Իսրայելի ձայն» ռադիոկայանը հայտնել է, թե Չեմի թեհրանյան բանակցություններում խնդրո առարկա հարցը կարելու տեղ է զբաղեցնելու: Եթե դա այդպես է, ապա նշանակում է, որ իրականացել են Թեհրանի նպատակները հարցի արժարժման առնչությամբ: Քանզի Անկարան, անկասկած, գիտակցում է, որ մնան օրինագիծը այսօր Իրանի խորհրդարանը հազիվ թե քննարկման առարկա դարձնի, սակայն ըստ երեւույթին Թուրքիային նյարդայնացնում է անգամ այն, որ հարցը քննարկվում է միջազգային ՉԼՄ-ներում:

Նշենք, որ թեւ պաշտոնական Թեհրանը միշտ էլ ըմբռնումով է վերաբերվել այդ հարցին, իրանահայերի համար ապրիլի 24-ը ոչ աշխատանքային օր է, այդ օրը նրանք նշել եւ նշում են ցույցերով, երբեմն՝ նաեւ Թեհրանում Թուրքիայի դեսպանատան առջեւ, կրոնական արարողություններով, Եղեռնի զոհերի հիշատակին կառուցվել է հուշարձան եւ այլն, սակայն Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման հարցը չի շոշափվել: Իրանի խորհրդարանում հայերը միշտ էլ ներկայացուցիչ ունեցել են, սակայն, ըստ երեւույթին հարցի արժարժման հնարավորությունն այսօր է ստեղծվել, երբ Թեհրան-Անկարա փոխառնչություններում խնդիրներն ավելացել են: Ուստի կարելի է ենթադրել, որ, թեւ ուշացումով, բայցեւայնպես, Թեհրանը եւս փորձում է Անկարայի հետ փոխհարաբերություններում խաղարկել Հայոց ցեղասպանության հաղթաբարոը, ինչպես առայսօր Արեւմուտքը մեծ հաջողությամբ խաղարկել եւ խաղարկում է հօգուտ սեփական շահերի: Այս տեսանկյունից, թերեւս, բացառություն չէ նաեւ Հայոց ցեղասպանության՝ Ֆրանսիայի պաշտոնական ճանաչումը, որը համընկել է հայոց շահերին:

Այսօր բնակչության աճի բարձր տոկոսով, ավելի քան 60 միլիոնանոց Թուրքիան Եվրամիության (ԵՄ) անդամության թեկնածու է, որտեղ բնակչության աճը միջին հաշվով հազիվ 0,5 տոկոս է: Իսկ ԵՄ ղեկավարման կառույցներում անդամ-երկրներին հատկացվող տեղն ու դերը հաճախ պայմանավորված է դրանց բնակչության թվաքանակով: Բացի այդ՝ Թուրքիան, ամենայն հավանականությամբ, կձգտի դառնալ Շենգենի պայմանագրի անդամ, ասել է թե՛ ոչ միայն ԵՄ անդամ-



երկրների դռները կբացվեն Թուրքիայի քաղաքացիների առջև, այլև անհամեմատ դյուրին կդառնա ասիացիների, իսլամական երկրների քաղաքացիների մուտքը Եվրոպա: Հարց, որն այսօր խիստ մտահոգել է ԵՄ-ի առանցքային անդամներին՝ Մեծ Բրիտանիային, Ֆրանսիային եւ Գերմանիային: Եվ, ի վերջո, շուրջ 100 միլիարդ դոլար արտաքին պարտքով, տնտեսապես սնանկացման եզրին հայտնված Թուրքիայի շուտափույթ անդամակցությունը Եվրամիությանը հազիվ թե ցանկալի լիներ վերջինիս անդամ-երկրներին, իսկ Հայոց ցեղասպանության ճանաչումն առնվազն կհետաձգի այդ գործընթացը, եթե լիովին չարգելակի:

Ինչ վերաբերում է Իրանի խորհրդարանում Հայոց ցեղասպանության հարցի՝ քննարկման առարկա դառնալուն, եթե չասենք բացառվում է, ապա հավանականությունն աննշան է: Այլ կերպ ասած՝ Բաքվում Իրանի դեսպանի հայտարարությունը՝ «Իրանի խորհրդարանը երբեք չի քննարկի այսպես կոչված Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը»<sup>29</sup> լիովին համապատասխանում է ճշմարտությանը: Իրանի խորհրդարանում որևէ հարց քննարկման առարկա դարձնելու համար անհրաժեշտ է առնվազն 15 պատգամավորի ստորագրություն, որից հետո միայն դրվում է օրակարգ մտցնել-չմտցնելու հարցը: Մինչ օրս խորհրդարանի շուրջ 280 անդամներից եւ ոչ մեկը (անգամ հրեա, զրադաշտական եւ ասորի վոքրամասնությունների մեկական ներկայացուցիչները) չի միացել հայ պատգամավորներին եւ, ըստ ամենայնի, չեն էլ միանալու՝ հաշվի առնելով ներքաղաքական մի շարք հանգամանքներ: Այդուհանդերձ, բացառված չէր, որ վերջիններիս միանային նաև բարենորոգիչների խմբակցության 3-4 անդամները, սակայն այդ դեպքում, ամենայն հավանականությամբ, նրանք կենթարկվեին պահպանողականների եւ այդօրինակ քայլի դեմ բավական հզոր ուժերի սուր քննադատություններին՝ հարվածի տակ դնելով ողջ բարենորոգչական հոսանքը: Ուստի, առաջիկա նախագահական ընտրությունների պատճառով ստեղծված ներքաղաքական լարված մթնոլորտի պայմաններում ոչ մեկը նման ռիսկի չի դիմելու: Բացի այդ, այսօր եթե իսլամական աշխարհի որոշ երկրներ Թեհրանին մեղադրում են «քրիստոնյա Հայաստանի հետ սերտ կապեր» հաստատելու համար, պա-

<sup>29</sup> «Ազգ», 2 փետրվարի, 2001թ.:

հանջելով աջակցել Ադրբեջանին, ապա, բնականաբար, Հայոց ցեղասպանության հարցի լուրջ արձարծումը կարող էր Իրանին գլխացավանք պատճառել նաև արտաքին քաղաքականության ոլորտում: Մինչդեռ հարցի բարձրացումը լոկ հայ պատգամավորների կողմից՝ Թեհրանին ապահովագրում է հնարավոր տհաճություններից: Միաժամանակ վերջինիս հնարավորություն է ընձեռում այդ հարցը կիրառել իբրև լծակ Անկարայի դեմ՝ ստիպելով նրան զիջումների գնալ կամ հարկադրել հավատարիմ մնալ իր պայմանագրային պարտավորություններին՝ 2001թ. հունիսին շահագործման հանձնել Իրան-Թուրքիա գազատարի թուրքական հատվածը, որը, ըստ 1996թ. Իրան-Թուրքիա 20 միլիարդ դոլար արժողությամբ պայմանագրի, պետք է շահագործման հանձնվեր դեռևս 1999թ. դեկտեմբերին, սակայն թուրքական հատվածը չկառուցվեց Վաշինգտոնի ճնշմամբ:

Ստեղծված իրավիճակում, թերևս, տրամաբանական է իրանահայության շրջանակներում տարածված այն տեսակետը, որի համաձայն՝ այսօր Իրանը հայաթափելու նպատակով Թուրքիան լուրջ ջանքեր է գործադրում՝ կիրառելով բոլոր լծակները. վերջիններիս Արեւմուտք, մասնավորապես ԱՄՆ է տեղափոխում»:

### **Ասորիները դեմ են Իրանի խորհրդարանում Հայոց ցեղասպանության հարցի քննարկմանը**

Ապրիլի 18-ին, Թեհրանում իրանահայերի ջանքերով Հայոց ցեղասպանության 86-րդ տարելիցի առիթով «1915թ. ապրիլ, հայացք դրսից» թեմայով սեմինար էր կազմակերպվել, իսկ ապրիլի 20-ին նույն թեմայով՝ «կլոր սեղան»: Իրանահայերը տասնամյակներ շարունակ ապրիլի 24-ը նշում են՝ կազմակերպելով երթեր, սզո եւ կրոնական արարողություններ, սակայն գիտաժողով, թերևս, առաջին անգամ է կազմակերպվում: Ընթացիկ տարվա սկզբներին էլ առաջին անգամ հայերի 2 ներկայացուցիչներն Իրանի խորհրդարանում հայտարարեցին, որ ապրիլին Հայոց ցեղասպանությունը դատապարտող նախա-

գիծ են ներկայացնելու, որը «Ազգ» օրաթերթը<sup>30</sup> անհավանական համարելով՝ նշեց, թե նման նախագիծը չի արժանանա խորհրդարանի ազգային մյուս փոքրամասնությունների ներկայացուցիչների (1 հրեա, 1 ասորի եւ 1 զրադաշտական) հավանությանը: Ապրիլի 18-ին ասորի պատգամավոր Յունաթան Բիրդըրյան «Ազատություն» ռադիոկայանի թղթակցի այն հարցին, թե կո՞ղմ է, արդյոք, հայ գործընկերների հիշյալ հարցի վերաբերյալ օրինագծին, պատասխանել է, որ այլ բան է, երբ ցեղասպանության թեմայով սեմինար եւ տարբեր միջոցառումներ են կազմակերպվում, սակայն խորհրդարանում այդ հարցի արծարծումը վաղաժամ է:

Բիրդըրյան հիշյալ հարցազրույցում նշել է, որ մշտապես խոսվում է Հայոց ցեղասպանության մասին, մինչդեռ 1915-18թթ. բնաջնջվել են նաեւ շուրջ 750 հազար ասորիներ: Նշենք, որ վերջիններիս ջարդերի մասին եւս բազմաթիվ վկայություններ կան պատմագրության մեջ, օրինակ, Առաջին աշխարհամարտի ընթացքում Թավրիզում Գերմանիայի զլխավոր հյուպատոս Վիլհելմ Լիթթենի հուշերում, իրանցի հայտնի պատմաբան Ահմեդ Քյասրավիի «Աղբրեջանի 18-ամյա պատմություն» աշխատության մեջ, որտեղ հեղինակը, վկայակոչելով եվրոպական աղբյուրները, նշում է, որ ասորիների թիվը օսմանյան Թուրքիայում շուրջ 150 հազար էր, որոնք բնակվում էին Վանա լճի հարավային շրջաններում: Քյասրավին նշում է, որ ջարդերից փրկված, ցնցոտիներով եւ քաղցած 25 հազար ասորիներ ապաստանեցին Իրանի Աղբրեջան նահանգում: Ի դեպ, ըստ պատմական որոշ աղբյուրների, 1950թ. Օսմանյան կայսրությունը կոտորել է 10 հազար ասորի (Էսմայիլ Ռային, «Հայոց ցեղասպանությունը», 1972թ., Թեհրան, էջ 63):

Իրանի խորհրդարանում ասորիների ներկայացուցիչն ընդգծել է, որ եթե հայերը տարբեր երկրներում լուրջ գործունեություն են ծավալել եւ ծավալում են Հայոց ցեղասպանության ճանաչման համար, ապա ասորիները մինչեւ 3-4 տարի առաջ որեւէ քայլ այս ուղղությամբ չեն կատարել: Սակայն վերջին տարիներին, մասնավորապես եվրոպական երկրներում, որտեղ զգալի թիվ են կազմում Թուրքիայից գաղթած-

<sup>30</sup> Տես՝ «Հայոց եղեռնի հարցը թուրք-իրանական փոխհարաբերությունների համալուծման հոդվածում»:

ները, նրանք նույնպես լուրջ աշխատանքներ են կատարում. լույս են տեսել գրքեր, նկարահանվել են փաստավավերագրական ֆիլմեր: Ասորիներն ակնհայտ ակտիվություն են դրսևորում ԱՄՆ-ում եւ Ավստրալիայում: Բիրդըրյան, խոսելով օսմանյան Թուրքիայի մասին, շեշտել է, որ եղեռնագործությունն այդ պետությանը բնորոշ հատկանիշներից է եղել: Վկայակոչելով պատմությունը՝ ավելացրել է. «Մալիմ փաշան, երբ պատրաստվում էր հարձակվել Իրանի վրա, հայտարարում էր, որ նախ՝ պետք է սպանենք 2 միլիոն շիա, ապա՝ իրականացնենք հարձակումը»: Բիրդըրյան ի պատասխան թղթակցի հարցին, թե այժմ, երբ Թեհրան-Անկարա փոխհարաբերությունները զգալիորեն սառել են, արդյոք նման հարցադրումները չեն խորացնի այդ լարվածությունը, նշել է. «Մենք իրանցիներ ենք եւ երբեք ի վնաս մեր երկրի ու թուրք-իրանական կապերի քայլ չենք կատարի, սակայն ցեղասպանությունն աշխարհի մակարդակով պետք է դատապարտվի եւ այդ ուղղությամբ կատարվող գործողություններն Իրանով չեն սահմանափակվում»: Նա շեշտել է, որ այսօրվա Թուրքիան տարբերվում է օսմանյան Թուրքիայից, ուստի, եթե վերջինս, հետեւելով Գերմանիայի օրինակին, ճանաչի օսմանյան Թուրքիայի կատարած ցեղասպանությունները, շատ ցավեր կսփոփվեն:

### Եվս մեկ իրանցու տեսակետ Հայոց ցեղասպանության մասին

2001թ. ապրիլի 26-ին «Ազատություն» ռադիոկայանը (պարսկերեն ծառայություն) բավական ծավալուն հաղորդում էր նվիրել Հայոց ցեղասպանությանը, որին մասնակցում էր 4 մասնագետ՝ երկու պարսկահայ, Ստամբուլի համալսարանի մեկ դասախոս եւ իրանցի՝ Միջին Ասիայի ու Թուրքիայի հարցերի փորձագետ, Ստոկհոլմի համալսարանի պրոֆեսոր Թուրաջ Աբաբաբին: Ստորեւ ներկայացնում ենք վերջինիս տեսակետները, քանզի հայերի ու թուրքերի կարծիքները, աննշան բացառություններով, բոլորիս հայտնի են:

19-րդ դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրության քրիստոնյա ազգերի շրջանում աստիճանաբար ուժեղանում էին անկախության ձգտումները, ազատագրական շարժումները, որոնք ղեկավարում էին

մտավորականները: Արեւելյան Անատոլիայում հայերը ոչ մահմեդական խոշորագույն ազգերից էին: 19-րդ դարի երկրորդ կեսին վերջիններիս անջատողական շարժումներն սպառնալիք էին Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության համար: 1915թ. սկզբին Սարիղամիշում Ռուսաստանից կրած խայտառակ պարտության պատճառով Օսմանյան պետությունը հայտնվեց քաղաքական եւ ռազմական գերժանր վիճակում: Մյուս կողմից՝ Ռուսաստանը հսկայական քարոզական գործունեություն սկսեց Արեւելյան Անատոլիայում եւ Փոքր Ասիայում՝ հայկական անկախ պետություն ստեղծելու ուղղությամբ: Հայ գիւնդները հեռանալով օսմանյան բանակից՝ համալրում էին ռուսական զորքերը:

Բարձր դուռը ողջ ջանքերը կենտրոնացրեց այդ վիճակից ամենաարագ կերպով դուրս գալու համար: Եվ, ահա, ՆԳ նախարար Թալեաթ փաշան առաջ քաշեց հայերի տեղահանման ծրագիրը, որի համաձայն՝ հայերը բռնագաղթելու էին Սիրիայի Դեր Զորի անապատ: 1915-16թթ. բռնի տեղահանման ընթացքում զոհվեցին հարյուր հազարավոր հայեր: Աթաբաքին, պատասխանելով Շեքունի գոհերի քանակի վերաբերյալ հարցին, նշել է, որ հայերը գոհերի թիվը հայտարարում են 1,2-1,5 միլիոն, սակայն այդ հարցին ավելի հավաստի, ստույգ պատասխանելու նպատակով անհրաժեշտ է նախ անդրադառնալ հայերի՝ նախապատերազմյան շրջանի թվին, որը, ըստ վիճակագրական տվյալների, Արեւելյան Անատոլիայում կազմել է 1,5 միլիոն, հետեւաբար՝ 600-700 հազար թիվն առավել մոտ է իրականությանը:

Թուրաջ Աթաբաքին, ի պատասխան Թուրքիայի պաշտոնական այն տեսակետին, թե ջարդերը նախապես պետականորեն ծրագրված չէին, ընդգծել է, որ Բահադդին Շաքիրի գլխավորած կայսրության զաղտնի ծառայությունների կազմակերպության գործունեության վերաբերյալ առկա փաստաթղթերն ու փաստաթղթերն ապացուցում են, որ հայերի ցեղասպանությունն ու բռնի տեղահանումը ծրագրվել են Ստամբուլում: Եվ եթե անգամ կառավարությունն իրագեղ չի եղել այդ ծրագրի մասին, ապա, անկասկած, նրա երիտթուրք անդամները քաջատեղյակ են եղել:

Ստոկհոլմի համալսարանի պրոֆեսորը, խոսելով վերջին տարիներին

րին արեւմտյան երկրների՝ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում ակնհայտ դրսեւորած ակտիվություն մասին, նշել է, որ հետաառը պատերազմյան շրջանում մեծ տերությունները, մասնավորապես եվրոպական երկրները, խիստ կարեւորում են մարդու իրավունքները, իսկ դա նշանակում է, որ միջազգային հարցերն արծարծվում են նոր հարթության վրա: Մյուս կողմից, այսօր պետությունների գերակշիռ մեծամասնությունը, որպես ազգային համերաշխության գրավական, շեշտը դնում է մշակութային ժառանգության, հավատքի եւ ընդհանուր պատմության վրա, սակայն հայերի համար ազգային ողբերգությունը վերածվել է համերաշխության ու միասնության կարեւոր գործոնի: Այսինքն՝ ազգի ընդհանուր պատմությունն ու պատմական հիշողությունը հայերի համար, որ դեպի Արեւմուտք, մասնավորապես՝ ԱՄՆ արտագաղթելու հետեւանքով, նրանց թիվը մայր հայրենիքում օր օրի փոքրանում է, վերածվել է ազգի համախմբման եւ ներդաշնակության լուրջ խթանի: Ուստի՝ Հայոց ցեղասպանության հարցի արծարծումը վերջիններիս ազգային ինքնագիտակցության խնդիր է:

### **«Շատ չի մնացել մինչեւ Թուրքիայի կողմից եղեռնի պաշտոնական ճանաչումը»**

Թեհրանում գործող «Հուր» հետազոտական եւ քարգմանչական կենտրոնի պարսկալեզու «Փեյման» («Պայման») եռամսյա պարբերականի 2004թ. գարնան համարում (No. 27) հարցազրույց է տպագրվել իրանցի հայտնի պատմաբան, քաղաքագետ Քավե Բայաթի հետ՝ նվիրված Հայոց ցեղասպանությանը (էջ 74-78): Նշյալ հարցազրույցում նա իր տեսակետներն է արտահայտել ցեղասպանության վերաբերյալ, ՄԱԿ-ի համաձայնագրի, Թուրքիայում հայկական հուշարձանների ոչնչացման եւ հայ-թուրքական փոխհարաբերությունների մասին: Նրա կարծիքով, ԽՍՀՄ-ի եւ Արեւելյան ճամբարի փլուզումից ի վեր ցեղասպանությունները վերածվել են սովորական երեւոյթի: Հարցազրույցից ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում մեր թեմային առնչվող երկու հարցերի պատասխանները:

**Հարց 1.** 20-րդ դարի սկզբին Թուրքիան հայերի դեմ գործել է ամենագաղափարների և ցավալի ոճրագործություններից մեկը՝ 1,5 միլիոն հայերի ցեղասպանության զոհ են դարձել: Հայերի դեմ Թուրքիայի կատարած հանցագործությունը վերջին 3 տասնամյակների ընթացքում ինչ-որ ձևով ճանաչվել է բազմաթիվ երկրներում՝ կառավարությունների և խորհրդարանների մակարդակով, միջազգային ատյաններում, սակայն որոշ խոշոր տերությունները, այդ թվում՝ Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը, խնդրի վերաբերյալ երկակի քաղաքականություն են վարում: Ի՞նչն է պատճառը:

**Բայաթ**- Պատճառն այդ երկրների՝ Թուրքիայի հետ փոխհարաբերությունների չափազանց կարևորությունն է: Ցեղասպանության պաշտոնական ճանաչման հարցն այդ հարաբերությունների ստվերում է: Նրանք խուսափում են այդ քայլից: Այն, որ Հայոց ցեղասպանությունը չճանաչելու դրդապատճառները քաղաքական են, կասկածից վեր է. ակնհայտ է Թուրքիայի խիստ հակազդեցությունն այդօրինակ բանաձեռների ու որոշումների նկատմամբ: Օրինակ, վերջերս, երբ Շվեյցարիան ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, Բեռլին այդ քայլն արժանացավ Թուրքիայի խիստ բացասական վերաբերմունքին: Հետևաբար՝ միջազգային փոխհարաբերություններում նման հաշվարկները թեև հասկանալի են, բայց ո՛չ երբեք՝ արդարացված: Բացի այդ, կարծում եմ, որ այդօրինակ ոճրագործությունների և դեպքերի հաճախակի կրկնությունները մեր օրերում կանխարգելում են Հայոց ցեղասպանությունը ճանաչելը: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո մարդկությունը բազմաթիվ ցեղասպանությունների և բռնությունների ականատեսն է դարձել, ուստի, կարծում եմ, որ հայոց բացառիկ, հազվադեպ ցեղասպանությունը հայտնվել է միջազգային հանրության խղճի և հավաքական հիշողության մեջ՝ մերօրյա ցեղասպանությունների ազդեցությամբ: Համենայնդեպս, տարիներ շարունակ օրակարգում Հայոց ցեղասպանության հարցն էր, այնուհետև հրեաների ցեղասպանությունն ու էլի մի քանի դեպքեր, որոնք որակվել են որպես ցեղասպանություն: Մինչդեռ Խորհրդային Միության և Արևելյան ճամբարի փլուզումից հետո ցեղասպանության հարցեր են ծագել թե՛ Աֆրիկայում և թե՛ Բալկաններում, հետևաբար, ըստ իս, միջազգային հանրությունը Հայոց ցե-

ղասպանության նկատմամբ այլևս նախկինի պես խիստ դյուրագոցություն չի դրսևորում, քանզի ցեղասպանությունը վերածվել է սովորական երեւոյթի:

**Հարց 2.** Հայոց ցեղասպանության վերաբերյալ Թուրքիայի որդեգրած մերժողական, ժխտողական քաղաքականությունը ռազմավարական, թե՞ գաղափարախոսական նպատակներ է հետապնդում:

**Բայաթ** - Թուրքիան երբեք չի ընդունել հայերի ցեղասպանության պատասխանատվությունը: Բայց և այնպես, Օսմանյան կայսրության փլուզման սկզբում և Առաջին աշխարհամարտի ավարտին որոշ ջանքեր գործադրվեցին այդ հարցի քննարկման շուրջ, որոնք կարող էին Օսմանյան պետության դատարաններում Եղեռնի հանցագործների դատավարություններ սկսելու սկիզբ դառնալ: Սակայն Մուստաֆա Բեմալի գլխավորած դիմադրության շարժումը օսմանյան իշխանության վերակառուցման և այն Թուրքիայի Հանրապետություն դարձնելու նպատակով լիովին օգտագործել է բոլոր այն ուժերն ու գործոնները, որոնք առնչվում էին հայերի բնաջնջմանը: Դրա հետևանքով տեղի ունեցավ ինչ-որ չգրված համաձայնություն: Բեմալի կառավարությունը Հայոց ցեղասպանությունը վերածեց գլխավոր տաբուների, և երկար ժամանակ ընդհանրապես հերքվում էր ջարդերի որեւէ դեպք: Ավելին, անգամ ժխտվում էին նման գործողությունները, էլ ուր մնաց, թե դրանք ընդունվեին իբրև ցեղասպանություն:

Այսուհանդերձ, հաշվի առնելով հայերի պատմական լայնածավալ ուսումնասիրությունները, դրան զուգահեռ՝ տարբեր ժամանակահատվածներում քաղաքական ասպարեզում տեղի ունեցած հակազդեցությունները խնդրո առարկայի առնչությամբ, սսենք, որ դրանք նախ՝ պատճառ դարձան, որ հարցը մոռացության չմատնվի, ապա, որոշ ժամանակ անց, Թուրքիան, առնվազն, խոստովանել է, որ ջարդեր տեղի են ունեցել: Թեև Անկարան դեռևս չի ընդունում, որ պետությունը պատասխանատու է այդ դեպքերի համար, հրաժարվում է իրավաբանական տեսանկյունից դրանց ցեղասպանություն ձեռակերպումը տալուց, համենայնդեպս, այսօր թուրքերն ընդունում են, որ 1915թ. մեծ թվով հայեր բռնագաղթել են, շատերը զոհվել, կորցրել են իրենց կյանքը, կայքն ու ունեցվածքը, սակայն դա վերագրում են այն բանին, թե պա-

տերազմի ընթացքում բոլոր կողմերն էլ վնասներ են կրում, ջարդեր են տեղի ունենում: Այլ կերպ ասած՝ ձգտում են ինչ-որ ձեռով պղծել, խեղաթյուրել հարցը:

Բայց Հայոց ցեղասպանությունը նաև այլ կողմ ունի: Պատերազմի ընթացքում եղել են տարաբնույթ կոտորածներ, օրինակ, Առաջին աշխարհամարտի ժամանակ մեծ թվով իրանցիներ, երկրի հյուսիս-արևմտյան շրջաններում գոհվել են սովից, մասամբ էլ տարբեր բախումների ընթացքում: Սակայն պատերազմի ընթացքում գոհվելը, ոչնչանալն այլ բան են եւ էապես տարբերվում են ծրագրված ու նախապատրաստված ջարդերից, որոնք իրականացվում են հրամանով, ինչպես տեղի ունեցավ 1915թ.՝ հայերի նկատմամբ: Բայց եւ այնպես, հաշվի առնելով այդ հարցում հայերի հետետղականությունը եւ Թուրքիայի համալսարանական, գիտական շրջանակներում կատարվող փոփոխությունները, կարելի է ասել, որ, հավանաբար, շատ չի մնացել մինչեւ Թուրքիայի կողմից Եղեռնի պաշտոնական ճանաչումը:

### «Իրանի տնտեսությունը» ամսագիրը Հայոց ցեղասպանության մասին

Իրանում տպագրվող տնտեսագիտական եւ միջազգային ֆինանսների «Իրանի տնտեսություն»<sup>31</sup> ամսագիրն իր 2004թ. հունիսի համարում «Հայերը՝ արհեստավարժ եւ սահմանափակված» վերնագրով ծավալուն թղթակցությունը (էջ 65-72) նվիրել է իրանահայության պատմությանը, կյանքին եւ տնտեսական գործունեությանը: Այնտեղ նշվում է, որ հայերն առաջին անգամ Իրան են եկել Աքեմենյան թագավորների, այդ թվում՝ Դարեհի ժամանակ. հայ ճարտարապետներին ու քարտաշներին Իրան էին բերել Պերսեպոլիսը կառուցելու նպատակով եւ բնակեցրել Շիրազ քաղաքում: Թղթակցության մեջ «Մեւ էջ» է ենթավերնագրվել Հայոց ցեղասպանությանը նվիրված նյութը, որտեղ հարցը ներկայացված է զգալիորեն օբյեկտիվ: Նախքան բուն նյութին անցնելն ընդգծվել է. «1915թ. ապրիլին կատարված Հայոց ցեղասպա-

<sup>31</sup> *Iran Economics.*

նությունը հստակորեն չդատապարտելը պատճառ է դարձել, որ առայսօր աշխարհում շարունակվեն տարբեր ազգերի դեմ իրականացվող ցեղասպանությունները»:

Այնուհետեւ կարդում ենք. «Հայոց ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում իր աննախադեպ չափերին հասավ կայսրության անկման ժամանակաշրջանում՝ 1915թ. ապրիլի 24-ին: Օսմանցիների՝ քաղաքական եւ ռազմական ոլորտներում մեկը մյուսի հետեւից կրած շարունակվող պարտությունները հանգեցին Եվրոպայում եւ Ասիայում տարածքային հսկայական կորուստների: Հանգամանք, որը լուրջ ազդեց նաև կայսրության ներքին քաղաքականության, մասնավորապես, նրանց պատմական գլխացավանքների՝ փոքրամասնությունների հետ հարաբերությունների հարցի վրա, առավելապես՝ հայերի:

Օսմանյան պետության չարական վերաբերմունքը կայսրության տարածքում բնակվող ազգերի հանդեպ խոր արմատներ ունի. սկսվում է նրանց նվաճողական հարձակումներին և նոր տարածքներ գրավելուն զուգահեռ: Թուրքերի քանակը հսկայածավալ կայսրության բնակչության 20 տոկոսից էլ պակաս էր: Ուստի իրենց իշխանությունը պարտադրելու, զավթիչի, եկվորի՝ իրենց բերած մթնոլորտը չեզոքացնելու նպատակով թուրքերին այլ ելք չէր մնում, քան մի կողմից՝ ցեղապաշտական քաղաքականություն իրականացնել եւ մման զգացմունքներ ներարկել բոլոր թուրքերի մեջ, մյուս կողմից՝ դաժան հաշվեհարդարներով պայքարել հպատակ ազգերի ազատագրական հակումների ու ցանկությունների դեմ:

Այսպիսով, Օսմանյան կայսրությունը մի քանի դարի պատմության ընթացքում ոչ միայն չկարողացավ որեւէ իրատեսական քաղաքականություն մշակել ազգային փոքրամասնությունների հարցը լուծելու համար, այլեւ փոքրամասնությունների հետ հակասությունների ու բախումների հարցի լուծումը տեսնում էր ծագումով ոչ թուրք ազգերն ու ազգությունները ֆիզիկապես վերացնելու մեջ: Ահա թե ինչու օսմանյան Թուրքիայում ապրող հայերի բնաջնջման ծրագիրն այդ երկրի իշխանությունների համար դարձավ օրակարգային, իսկ Առաջին աշխարհամարտի սկսվելն ու Օսմանյան պետության՝ դրա մեջ ներքաշվելը նախադրյալներ ստեղծեցին այդ ծրագրի իրականացման համար:

1915թ. ցեղասպանությունը հայերի՝ մինչ այդ կատարված ջարդերից առանձնանում է նախապես ծրագրված լինելով և ահռելի մեծ չափերով: Օսմանցիները, օգտվելով պատերազմի հետեւանքով ստեղծված խառն իրավիճակից, վճռականորեն որոշել էին հայերի հարցին ընդմիջտ վերջ դնել: Թուրքերն ունայն և անհիմն պատրվակով, այն է՝ հանուն հայերի անվտանգության և կյանքի պահովության, հրամայեցին ռազմաճակատից հարյուրավոր կիլոմետր հեռավորությամբ, տարբեր վայրերում կուտակել հայերին: Այնուհետև մեծ արագությամբ և անխղճորեն անօթեւան այդ խմբերին սկսեցին քշել դեպի անապատները՝ ոչնչացնելով նրանց, քայլ, որի բուն նպատակը հայերի խապառ վերացումն էր:

Թեև հայերի ջարդերի ծրագիրը, որի ընթացքում գոհվեց 1,5 միլիոն մարդ և մեծ թվով հայեր էլ թափառական դարձան, ծառայեց իր նպատակին, սակայն թուրքերի մեկ այլ նպատակը, այն է՝ թաքցնել այդ հրեշավոր հանցագործությունը, չիրականացավ: Այդ դեպքերից շատ չանցած՝ սկսեցին հրապարակվել օտարերկրյա դիտորդների, այդ թվում՝ չեզոք երկրների ներաչացուցիչների ու հպատակների զեկուցագրերը, ինչի հետեւանքով հաստատվեցին, ապացուցվեցին ջարդերի վերաբերյալ տարածված լուրերն ու ասեկոսեները: Բացի այդ՝ սկսեցին հրապարակվել նաև Եղեռնից մազապուրծ փրկվածների վկայությունները, որոնք լույս սփռեցին եղեռնագործության անհայտ ու մութ ծալքերի վրա:

Հայերի ցեղասպանությունն իր տեսակով աշխարհի արդի պատմության մեջ աննախադեպ էր և առաջինը: Եվ եթե այդ անմարդկային ահավոր նախճիրն ու ողբերգությունը ժամանակին և հստակորեն դատապարտվեին, եթե այն պատմության մեջ արձանագրվեր իր ողջ ծավալով ու սարսափազդու մանրամասներով, դրա իրագործողներն ու մասնակիցները դատարանի առջև կանգնեին, ապա շատ հնարավոր է, որ Աֆրիկայում, Բալկաններում, Կովկասում, Աֆղանստանում և Իրաքում վերջին տասնամյակների ընթացքում ցեղասպանությունները չկրկնվեին»:

## Պարսկալեզու ՉԼՄ-ների արձագանքները Եղեռնի 90-րդ տարելիցին

Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի առնչությամբ այդ հարցն աննախադեպ լայն արձագանք է ունեցել նաև պարսկալեզու ՉԼՄ-ներում՝ միջազգային մակարդակով, որոնց դիրքորոշումը խնդրո առարկայի նկատմամբ գրեթե միշտ համապատասխանում է տվյալ երկրի քաղաքականությանը: Ստորև կներկայացնենք դրանցից առավել կարեւորները, որոնք Հայոց ցեղասպանության մասին սկսել էին խոսել դեռևս ապրիլի 23-ից: Նշենք, որ այդ հաղորդումները զետեղված են նաև ռադիոկայանների կայքերում:

Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին լայնորեն արձագանքել են իրանական մամուլում, Իրանի և արտերկրյա ընդդիմադիր ուժերի ինտերնետային կայքերում և ՉԼՄ-ներում, հրապարակվել են իրանցի պատմաբանների, քաղաքագետների գրչին պատկանող բազմաթիվ լուրջ և ծանրակշիռ հոդվածներ, որոնցից մի քանիսին կանդիդատուրա ստորև:

Ապրիլի 23-ից ամերիկյան «Ֆարդա» շուրջօրյա պարսկալեզու ռադիոկայանը, «ցեղասպանությունը» փոխարինելով «հայոց ջարդերն Առաջին աշխարհամարտի ընթացքում» ձեռակերպումով, բազմիցս անդրադարձել է այդ խնդրին: Ավելի քան 100 հազար պարսկալեզու հավանական ռադիոսկնդիրներին ուղղված տեղեկություններ են հաղորդել 90-րդ տարելիցի կապակցությամբ տեղի ունեցող միջոցառումների մասին: Ապրիլի 25-ին «Ֆարդան» շեշտել է, որ Երեսնամյա պարսիկի 24-ին շուրջ մեկ միլիոն մարդ է այցելել Ծիծեռնակաբերդի հուշահամալիր: Միաժամանակ բավական ծավալուն ռեպորտաժ է ներկայացրել նույն օրը Փարսիզի «Մարդու իրավունքների» անվան հրապարակում տեղի ունեցած միջոցառումից՝ նվիրված Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին Մահվան ճամբարներից հրեաների փրկության 60-ամյակին, որին մասնակցել են Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը, կառավարության բազմաթիվ անդամներ ու օրենսդիրներ: Նախագահ Շիրակն իր ելույթում մեկ անգամ էս ներողություն է հայցել այն բանի համար, որ այդ ճամբարներ են ուղարկվել

նան ֆրանսիացի հրեաներ:

Ֆրանսիական RFI ռադիոկայանի պարսկերեն ծառայությունը, իրերն իրենց անունով կոչելով, ապրիլի 23-ին անդրադարձել է նախ՝ ՀՀ նախագահ Ռոբերտ Զոչարյանի եւ Ժակ Շիրակի՝ այդ օրը Փարիզում՝ Հայոց ցեղասպանությունը խորհրդանշող Կոմիտասի արձանին ծաղկեպսակ դնելուն՝ խիստ կարեւորելով այն: Ապա ներկայացրել է հարցազրույց Իրանի խորհրդարանի նախկին պատգամավոր Լեոն Դավթյանի հետ, ով տեղեկություններ է հաղորդել իրանահայության կազմակերպած միջոցառումների մասին՝ միաժամանակ շեշտելով, որ Իրանում Իսլամական հեղափոխությունից ի վեր հայերն իրավունք են ստացել ավելի լայնածավալ միջոցառումներ կազմակերպել Յեղասպանության տարելիցների առիթով: Նա նշել է նաեւ, որ, այդուհանդերձ, քաղաքական դրդապատճառներով, Թեհրանը հստակ դիրքորոշում չի ներկայացնում հարցի առնչությամբ: Ի պատասխան երիտթուրքերի իրականացրած ցեղասպանության դրդապատճառների վերաբերյալ հարցին՝ Դավթյանն ընդգծել է, որ հայերը խոչընդոտում էին պանթուրքական ծրագրերի կյանքի կոչմանը: Այնուհետեւ RFI-ին ներկայացրել է ֆրանսիական մամուլի արձագանքները Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի վերաբերյալ, այդ թվում՝ «Ֆիգարո» օրաթերթի ընդարձակ հոդվածը, որտեղ հեղինակը նշել է, թե Միացյալ Նահանգներից հետո ֆրանսահայ համայնքն ամենամեծն է, որը լիովին ներդաշնակվել է ֆրանսիական հասարակության հետ: «Ֆիգարոն» ողջունել է Փարիզի քաղաքանությունը Հայոց ցեղասպանության առնչությամբ՝ նշելով, որ նախկինում Ֆրանսիան բավական կրավորական էր այդ հարցում, սակայն այժմ արդեն ճիշտ ուղու վրա է: Միաժամանակ նախագուշացնում է, որ այդ հարցը չպետք է շահարկել Եվրամիության Սահմանադրության հանրաքվեի շուրջ քարոզություններում: Իսկ «Լը Մոնդոն» այդ օրը 5 հոդված էր թղթակցություն է հրապարակել խնդրո առարկայի մասին, որոնցից մեկում ֆրանսահայերը գոհունակություն են հայտնում Շիրակին՝ Եղեռնի հուշարձանին ծաղիկ դնելու համար, մյուս կողմից՝ քննադատում են նրան՝ Թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցելուն կողմնակից լինելու պատճառով:

Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին առավել մեծ տեղ էր

հատկացրել BBC ռադիոկայանի պարսկերեն ծառայությունը: Օրական ավելի քան 8-ժամյա հաղորդումներում, շուրջ կես ժամ հատկացնելով նշված հարցին, շեշտում էր այն հանգամանքը, որ դեռեւս լուրջ տարածայնություններ կան հայերի կոտորածները ցեղասպանություն բնորոշելու հարցում: Ի դեպ, հաղորդումը կրկնվել է:

BBC-ն տեղեկություններ է հաղորդել Երեւանում տեղի ունեցած միջոցառումների վերաբերյալ՝ մշտապես ընդգծելով՝ այն, ինչ հայերն անվանում են ցեղասպանություն, իսկ թուրքերը ժխտում են, նշելով, որ թվերը խիստ չափազանցված են: Բացի այդ, եթեր է տրվել քեիրանցի մի լրագրողի պատրաստած ռեպորտաժը՝ Թեհրանում իրանահայերի բողոքի երթերից: Նա նշել է, որ կարգապահ ուժերն արգելեցին ցուցարարների երթը դեպի թուրքական դեսպանատուն, հավելելով, որ ցուցարարների անվտանգությունն ապահովելու նպատակով լուրջ միջոցներ էին ձեռնարկել անվտանգության ու իրավապահ ուժերը:

Խոսելով հայ ցուցարարների կարգախոսների մասին՝ նա նշել է, որ նրանց գլխավոր կարգախոսները գոհունակություն էին արտահայտում Իրանի իշխանությունների հասցեին, որոնք թույլ էին տվել ցույցեր կազմակերպել: Ներկայացրել է դրանցից մի քանիսը. «Իսլամական Հանրապետությունը՝ հայերի հովանավոր», «Թուրքիան ոճիր է գործում, Ամերիկան հովանավորում է» եւ «Արեւմտյան Հայաստանը պետք է ազատագրվի»: Վերջինիս անդրադառնալով՝ լրագրողն ընդգծել է, որ սա այն դեպքում, երբ պաշտոնական Երեւանը բազմիցս շեշտել է, թե տարածքային հավակնություններ չունի Թուրքիայից: Նա շարունակել է, որ շատ փոքր թվով աղյուսակներ փորձել են հայերին հակադրվող պատասխաններով պատասխանել նրանց, սակայն իրավապահ ուժերն աղյուսակներին թույլ չեն տվել: Ինչ վերաբերում է ցուցարարների անվտանգության ապահովման միջոցառումներին, ապա դա կատարվել էր, որպեսզի չկրկնվեր նախորդ տարվա միջադեպը, երբ մի խումբ աղյուսակներ հարձակվել էին ցուցարարների վրա: Յույցերին քեիրանցիների վերաբերմունքի մասին խոսելիս նա նշել է, որ շատերը լուռ դիտողի դերում էին, իսկ ոմանք էլ ասում էին, թե 100 տարվա վաղեմություն ունեցող հարցի առնչությամբ ինչո՞ւ են ամեն տարի հավաքվում, ճանապարհները փակում, թող մոռանան, նե-

րեն միմյանց: Այստեղ տեղին է հնչում ժողովրդական «Վերքը տիրոջն է ցավ պատճառում» ասացվածքը:

Նշենք, որ վաղեմության հարցը շոշափելու երանգ էր նկատվում նաև ազգությամբ իրանցի, BBC-ի թղթակից Փեդրամ Ֆարգադի ներկայացրած վերլուծականում, որը նվիրված էր հայերի ջարդերին, այդօրինակ դեպքերի պատմական արմատներին ու հիմքերին, 20-րդ դարի քաղաքական զարգացումներին, այդ թվում՝ ծայրահեղ ազգայնամոլությանը և դրանց միջև կապին: Վերլուծականում հեղինակը վկայակոչում է իրանցի գիտնականներին, ովքեր հայերի դեմ կատարվածը բնորոշում են ցեղասպանություն՝ դրա արմատները տեսնելով պանթուրքիզմի մեջ:

Նախքան Ֆարգադի վերլուծությունը ներկայացնելը, ցանկանում ենք դեպքի վաղեմության առնչությամբ նշել, որ 1995թ. նոյեմբերին Մեծ Բրիտանիայի թագուհին, Նոր Զելանդիայի մուրի ցեղից պաշտոնապես ներողություն է հայցել և 120 միլիոն դոլար փոխհատուցում տրամադրել: 1863-64թթ. պատերազմների ընթացքում Բրիտանական կայսրությունը, նշյալ ցեղին մեղադրելով ապստամբության համար, ջարդեր է կազմակերպել կայսրության ուժերի ու տեղական զինյալների աջակցությամբ, գրավել նրանց տարածքները: Ի դեպ, այսօր էլ Նոր Զելանդիան Լոնդոնի խնամակալության տակ է:

Ֆարգադը շեշտում է, որ, պատմաբանների կարծիքով, 1915թ. հայերի ցեղասպանությունը միակը չէ, սակայն այն թերևս դասվում է լուրջան մատնված դեպքերի շարքին, մարդկության հավաքական խիզճը դեռևս չի մաքրել իր հաշիվները դրա և դրա հետեւանքների հետ: Նրա կարծիքով՝ նման վերաբերմունքի արմատները պետք է փնտրել դրա իրականացման ձեւի, նպաստող գործոնների և վերջիններիս նկատմամբ մերօրյա աշխարհի վերաբերմունքում: Տվյալ ժամանակահատվածում աշխարհն ու տարածաշրջանը մխրճված էին պատերազմի մեջ, բռնկվել էր Առաջին աշխարհամարտը, տարածաշրջանում երկու կայսրությունները՝ Ռուսաստանն ու օսմանյան Թուրքիան, ուժերն էին չափում:

Ֆարգադը այս առնչությամբ վկայակոչում է Թեհրանի համալսարանի արդի պատմության առարկայի դասախոս Համիդ Ահմադիին,

որի կարծիքով՝ «ցեղասպանությունների արմատները ծայրահեղ ազգայնամոլության մեջ են, որը լայնորեն տարածվել էր 19-րդ դարի վերջին մինչև 20-րդ դարի կեսերը: Բացի այդ, նման դեպքեր տեղի են ունեցել միջազգային բախումների և պատերազմների ընթացքում: Հայերի ջարդերը տեղի են ունեցել 1915թ., երբ Առաջին համաշխարհային պատերազմն իր գագաթնակետին էր հասել, երբ օսմանցիներն զգացին, որ ռուսները հովանավորում են հայերին: Իսկ հրեաների ջարդերը՝ Երկրորդ աշխարհամարտի ընթացքում»:

Ֆարգադն այնուհետև շեշտում է, որ Երկրորդ աշխարհամարտում հրեաների կոտորածը, չինացիների ու կորեացիների դեմ ճապոնիայի գործողությունները որակվում են որպես ցեղասպանություն, սակայն հայերի դեպքում այդպես բնութագրելու համար նաև այլ տարրեր են անհրաժեշտ: Ի պատասխան՝ Ամստերդամի համալսարանի դասախոս, ազգությամբ իրանցի Թուրաջ Աթաբաքին շեշտում է, որ հայերի ջարդերը ցեղասպանություն էին, և այլ կարծիք լինել չի կարող: Սակայն կողմերն այն յուրովի են ներկայացնում. «Թուրքերն իրենց օսմանցիների ժառանգորդներն են համարում և ձգտում են պահպանել իրենց նախկին ազգային ինքնագիտակցությունը: Իսկ հայերը, չափազանցնելով կատարվածի ծավալները, ցանկանում են ընդգծել իրենց պատմական ճնշվածությունը, ինչը տարածաշրջանում հայերի նման փոքր ազգերի գոյատևումը և ոչնչացումը կանխարգելելու առումով անհրաժեշտ է»:

Ֆարգադը շարունակում է. «Այսօր միջազգային հանրությունը 5-10 դար վաղեմություն ունեցող ցավալի դեպքերի հանդեպ զգոնություն չի դրսևորում, մինչդեռ 20-րդ դարում տեղի ունեցած ամոթալի դեպքերը դեռևս ծանրացած են մարդկության հավաքական խղճի վրա»: Նա, հենվելով սոցիոլոգների կարծիքին, նշել է նաև, որ 20-րդ դարում ունանտիկ ազգայնամոլությունը վերելք էր ապրում, այլ կերպ՝ ազգայնականություն ցանկացած գնով և բոլոր հնարավոր ձևերով, որն էլ կրոնի ու տնտեսական գործոնների ուղեկցությամբ վերածվում էր քաղաքական պատմության մեջ լուրջ դերակատարի:

Ազգայնականներն իրենց նպատակին հասնելու ճանապարհին վերացնում էին արգելակող ամեն ինչ: Այս առնչությամբ նա մեջբերում



է Ահմադիի հետեւյալ միտքը. «Ծայրահեղական գաղափարները, հանդիպելով հակազդեցությունների, ձգտում են հակադրվող տարրերին վերացնել, ինչպես դա եղավ հայերի պարագայում: 1913-20թթ. Օսմանյան կայսրության պաշտոնական գաղափարախոսությունը պանթուրքիզմն էր, որի նկրտումների իրականացման ճանապարհին օսմանցիները հայերին իբրև արգելք դիտելով, որոշեցին վերացնել նրանց»: Ֆարգադն այս համատեքստում կարեւորում է նաեւ պատմության վերաշարադրումը, յուրովի այն փոփոխելը՝ հօգուտ սեփական ինքնագիտակցության ամրապնդման, ի հաշիվ օտարների պատմության խեղաթյուրման, ինչը հանգում է ճգնաժամերի, անարդարությունների ու ջարդերի: Տեսակետ, որը լիովին համընկնում է Հայաստանի երկու թշնամիների՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի գործելակերպին: Թուրաջ Աբաբեքին նշում է. «Այսօր էլ պատմություն ստեղծելը, այն խեղաթյուրելը որոշակի դեր ունեն ազգային պետություն ստեղծելու, քաղաքական ուժ գործադրելու հարցում: Պատմություն ստեղծելն ու շարադրելն անհրաժեշտ են ուժի գործադրումն օրինականացնելու առումով»:

Նշյալ գիտնականների կարծիքով՝ ժողովրդավարությունը կնպաստի այդօրինակ ողբերգությունների կրճատմանը: Ֆարգադը հաղորդումն ավարտում է հետեւյալ խոսքերով. «Անկախ հայկական ջարդերի գոհերի թվից, դրա իրականացման ձեւից՝ այն առ այսօր ըստ էության չի գնահատվել, թերեւս հենց դրանով էլ պետք է պատճառաբանել այդօրինակ դեպքերի թվի չկրճատվելը»:

Բացի այդ՝ ապրիլի 24-ին նույն թեմայով բավական ծավալուն հաղորդում էր պատրաստել նաև BBC-ի մեկ այլ թղթակից՝ Թոմ Ութոլը, ով երկմտել է իրերն իրենց անունով կոչել ([www.BBCPersian.com](http://www.BBCPersian.com), 24 ապրիլի, 2005թ.): Հաղորդմանը նա հրավիրել է թուրքական կողմից մեկ դասախոսի, եւ հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի թուրք անդամի ու նախկին մի դիվանագետի, ովքեր ժխտում էին ցեղասպանությունը՝ պաշտոնական տեսակետի համաձայն, միաժամանակ մտահոգություն հայտնում հնարավոր փոխհատուցում պահանջելու առնչությամբ: Ավելին, թուրք մտավորականը շեշտում էր, որ ջարդերը ցեղասպանություն բնորոշվելու դեպքում բացառված չէ, որ հայերն առաջ քաշեն Սեւրի դաշնագիրը, որով ստեղծվում էր անկախ մեծ Հա-

յաստան եւ մեծ Քրդստան: Հայկական կողմից մասնակցում էին Միշիգանի համալսարանի դասախոս, ծագումով հայ Ռիչարդ Մունին եւ Հայ դատի գրասենյակի ներկայացուցիչը, որոնք ցեղասպանությունն ապացուցող փաստեր են ներկայացրել: Վերջինս շեշտել է նաեւ, որ հայերը կորցրել են իրենց հայրենիքը, կրել միլիարդավոր դոլարի նյութական վնաս, որոնք պետք է փոխհատուցվեն:

### «Նրանք, ովքեր մոռանում են պատմությունը, դատապարտված են կրկնելու այն»<sup>32</sup>

Իրանի սոցիալիստների կազմակերպության Գանիայի մասնաճյուղի ղեկավար Ռեզա Ռահիմփուրը 2005թ. մայիսի 15-ին Մեծ եղեռնի 90-րդ տարելիցին նվիրված հոդված է ներկայացրել («achbare-rooz» iranian political bulletin») «[www.iran-chabar.de](http://www.iran-chabar.de)» կայքում: Հոդվածը քննադատում է պաշտոնական Անկարայի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում, ինչպես նաեւ միջազգային հանրությանը՝ դրա նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունք ցուցաբերելու համար: Նա ակնկալում է այնպիսի վերաբերմունք, որին արժանացել է հրեաների «Հոլոքոստը»՝ հրեական հզոր լոբբիստական շրջանակների գործունեության շնորհիվ, ինչը չես ասի հայերի պարագայում: Նշյալ քաղաքական կազմակերպությունը, խիստ դատապարտելով Թուրքիայի որդեգրած քաղաքականությունը, միաժամանակ պաշտոնապես ճանաչում է Հայոց ցեղասպանությունը: Հոդվածը, որն սկսվում է «2005թ. մայիսի 8-ը հիտլերյան ֆաշիզմի լիակատար պարտության, հակաֆաշիստական դիմադրության հաղթանակի, ֆաշիստական Գերմանիայի կապիտուլյացիայի, Երկրորդ աշխարհամարտի ավարտի 60-ամյակն էր, իսկ նույն թվականի ապրիլի 24-ը երիտթուրքերի կատարած Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցը, որ տեղի է ունեցել Առաջին աշխարհամարտի ընթացքում՝ Օսմանյան կայսրության փլուզումից առաջ» ենթացվերնագրով, ներկայացվում է որոշ կրճատումներով:

Հեղինակը նախ խիստ կարեւորում, բարձր է գնահատում ֆաշիս-

<sup>32</sup> Gorge Santayana

տական Գերմանիայի նկատմամբ դաշնակիցների տարած հաղթանակի 60-ամյակը ողջ Եվրոպայում բարձր մակարդակով նշելու հանգամանքը: Անդրադառնալով Մոսկվայի տոնակատարություններին՝ նա շեշտում է, որ այնտեղ նախկին բռնամիները կողք կողքի էին դիտում այդ առիթով կազմակերպված միջոցառումները: Ռահիմփուրն առավելապես արժեւորում է այն, որ Գերմանիան բազմիցս խոստովանել է Ֆաշիստական Գերմանիայի կատարած հանցագործություններն ընդդեմ Եվրոպայի եւ Աֆրիկայի բնակչության՝ իր վրա վերցնելով դրանց պատասխանատվությունը: Նա նշանավորում է նաեւ, պատերազմի ավարտի 60-ամյակի առնչությամբ, միլիոնավոր զոհված հրեաների կենդանի մնացած հարազատներին սփոփելու նպատակով Գերմանիայի կատարած քայլերը, այդ թվում՝ Բեռլինի կենտրոնում, խորհրդարանի՝ Ռայխսթագի, շենքի մոտ կառուցված հուշարձանը եւ դրա նկուղում բացված՝ Հոլոքոստին նվիրված հսկայական քանդարանը:

Ռահիմփուրն այնուհետեւ շարունակում է. «Մակայն, ցավոք, լուրջ ուշադրության չեն արժանացել Թուրքիայի տարածքում 90 տարի առաջ կատարված ոճրագործությունները՝ մեր հայրենիքի (Իրանի) հարեւանությամբ: Այսօր էլ, երբ Թուրքիայի իշխանությունները հավակնում են, որ մարդու իրավունքների պաշտպանությունն իրենց համար խիստ առաջնային է. թերեւս, սա ինչ-որ չափով մոտ է ճշմարտությանը. այդ երկրում նշյալ ոլորտում որոշ առաջխաղացում նկատվում է նախորդ իշխանությունների համեմատությամբ: Սակայն այժմ էլ, նախկինի պես, Անկարան, իր բոլոր դիվանագիտական եւ քարոզչական հնարավորությունները գործի դնելով, ջանք չի խնայում Հայոց ցեղասպանությունը ժխտելու, թաքցնելու ուղղությամբ: Թուրք ազգայնամուլների, ռասիստների ձեռքով իրականացված այդ սադիստական ոճրագործությունների զոհ են դարձել առնվազն 350 հազարից մինչեւ 1,5 միլիոն անմեղ հայեր՝ նորածին մանուկներից մինչեւ զառամյալ ծերունիներ»:

Իրանցի վերլուծաբանը, խոսելով Թուրքիայում Հայոց ցեղասպանության առնչությամբ ստեղծված «գիտական» հանձնաժողովի մասին, նշել է. «Թեեւ միջազգային հանրության կարծիքի ճնշման ներքո Անկարան հարկադրված խնդիրն ուսումնասիրելու գիտական հանձ-

նաժողով է ձեւավորել, քայլ, որը կարող էր հավանության արժանանալ, սակայն, ցավոք, դրա գործունեության անկողմնակալությամբ բնավ էլ չի կարելի հույս տաձել. այդ են վկայում փաստերը»: Նա, հիմնավորելով իր տեսակետը, գրել է. «Ժամանակակից թուրք հայտնի գրող Օրհան Փամուքը (Orhan Pamuk), որ շվեյցարական մի հանդեսում տպագրված հարցազրույցում հպանցիկ ակնարկել էր Հայոց ցեղասպանության մասին, ոչ միայն դատապարտվեց ազատագրկման, այլեւ նրա հեղինակած գրքերի հազարավոր հատորներ թուրք պաշտոնյաները, անգամ հասարակ ժողովուրդը հրկիզեցին փողոցներում, ինչպես անում էին նացիստներն անցյալ դարի 30-ականներին: Ավելին, իշխանավորների հրամանով թուրքական «Պինգվին» երգիծական հանդեսը 25 հազար դոլար տուգանք է վճարել Փամուքի ծաղրանկարը տպագրելու համար:

Ռահիմփուրն այնուհետեւ հավելում է. «Եթե միջազգային հանրությունը չլռեր՝ պարզաբաներ, բացահայտեր ռասիստ երիտթուրքերի իրականացրած՝ հայերի զարհուրելի ցեղասպանությունը, անկասկած, Հիտլերը եւ գերմանացի ռասիստները չէին համարձակվի հրեաների նկատմամբ այդօրինակ անմարդկային վերաբերմունք դրսեւորել, չէին կատարի այդ ոճրագործությունները: Հիտլերը «Իմ պայքարը» գրքում նշել է՝ այսօր ո՞վ է հիշում հայերի կոտորածը»:

Հողվածի հեղինակը, դատապարտելով մարդկության անտարբերությունը, մեջբերել է բողոքական քահանա Մարտին Նյումյուլերի խոսքերը՝ հրեաների ցավին մարդկանց անտարբեր լինելու առնչությամբ.

«Նա» նախ դեպի հրեաները գնաց,  
Ես հրեա չէի, չբողոքեցի:  
Այնուհետեւ հարձակվեց լեհերի վրա,  
Ես լեհ չէի եւ չբողոքեցի:  
Ապա ճնշեց լիբերալներին,  
Ես լիբերալ չէի, չբողոքեցի:  
Հերթը հասավ համայնավարներին,  
Ես համայնավար չէի, ուստի՝ չբողոքեցի:  
Ի վերջո, երբ «նա» եկավ դեպի ինձ,

Ես բղավեցի, օգնություն կանչեցի,

Սակայն այլևս ոչ ոք չէր մնացել, որ բողոքեր:

Ռահիմփուրը վերը նշվածից կատարել է հետևյալ եզրահանգումը. «Հրեաների ողջակիզումը լուրջ փաստարկ է հռչակավոր փիլիսոփա Մանտայնայի ասածի վերաբերյալ, ինչն իբրև գիտական սկզբունք՝ փաստացի ապացուցվել է 60 տարի առաջ՝ ֆաշիստների պարտությամբ: Նա շեշտել է՝ նրանք, ովքեր մոռանում են պատմությունը, դատապարտված են կրկնելու այն»:

Հոդվածում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում խիստ կարեւորվում է լոբբիստական շրջանակների դերը. «Ցավոք, հայերը չունեն լոբբիստական այնպիսի հզոր խմբեր, ինչպիսիք հրեական կազմակերպություններն են, որոնց շնորհիվ, բարեբախտաբար, այսօր աշխարհի երկրների գերակշիռ մեծամասնությունը դատապարտել է պաշտոնապես ճանաչել է հրեաների ցեղասպանությունը, իբրև «Holocaust»<sup>33</sup> Սակայն ցավալի է, բայց փաստ, որ ցայսօր, երբ արդեն 90 տարի է անցել 1915թ. սարսափազդու ոճրագործություններից, աշխարհի խոշոր տերությունները, քաղաքական որոշակի վերապահումների պատճառով, հաշվի առնելով նաև Թուրքիայի կարեւոր դերը ՆԱՏՕ-ում, Հայոց հոլոքոստի վերաբերյալ լռում են: Մինչև այժմ ընդամենը 15 երկիր է պաշտոնապես ճանաչել պատմական այդ հրոդությունը եւ դատապարտել, այն էլ՝ քաղաքական առումով փոքր երկրներ, ինչպես, օրինակ, Բելգիան, Շվեդիան եւ այլն, ինչպես նաև Թուրքիայի հանդեպ ոչ բարեկամաբար տրամադրվածությամբ երկրները՝ Հունաստանն ու Կիպրոսը»: Ըստ երեւույթին, հեղինակը մոռացել է Ֆրանսիային, որը թեև մեծ երկիր է, բայց եւ այնպես, դարձյալ գլխավորապես քաղաքական նկատառումներով, պաշտոնապես ճանաչել է Հայոց ցեղասպանությունը:

Հոդվածի վերջում Ռահիմփուրն իր կազմակերպության տեսակետները եւ կոչերն է ներկայացնում խնդրո առարկայի առնչությամբ. «Մենք՝ սոցիալիստներս, մյուս ազատատենչ ու մարդասեր անհատները, թուրք մարդասերների օրինակով խստիվ դատապարտում ենք թուրք շովինիստների իրագործած Հայոց ցեղասպանությունը եւ համոզ-

<sup>33</sup> Ողջակիզում:

ված ենք՝ չպետք է թույլ տալ, որ այդօրինակ ոճրագործությունները մոռացության մատնվեն: Մենք մեր համերաշխությունն ենք հայտնում հայերին եւ հրեաներին, ի խորոց սրտի ցավակցում նրանց: Այս առնչությամբ անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ մենք դատապարտում ենք Իսրայելի ռասիստական կառավարության հանցագործությունները պաղեստինցիների դեմ՝ դրանք համարելով անմարդկային»:

«Իրանի սոցիալիստների կազմակերպությունը նաև պահանջում է, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը պաշտոնապես ճանաչի 1915թ. Հայոց ցեղասպանությունը եւ դատապարտի հայերի դեմ կատարված զարհուրելի ոճրագործությունները: Քանզի հավատացած ենք, որ եթե Հայոց ցեղասպանությունը ճանաչվի որպես Հոլոքոստ՝ համարժեք այլ հոլոքոստների, ինչպես հրեաներինը եւ Ռուանդայի բուբսիներինը (1994թ.), ապա ապագա սերունդների համար դաս կլինի, թերևս կկանխարգելվեն ապագայում այդօրինակ անմարդկային, գազանաբարո արարքները»:

### «Հայերն արդարություն են պահանջում»

2005թ. ապրիլի 28-ին, իրանական [www.kar-online.com](http://www.kar-online.com) կայքն իր «Հուշեր եւ հուշարձաններ» էջում Հայոց եղեռնի 90-րդ տարելիցի առնչությամբ՝ «Հայերն արդարություն են պահանջում» վերնագրով հոդված է հրատարակել, որը ներկայացնում ենք ամփոփ: Հոդվածում շեշտվում է, որ հայերը, հազարամյակներ իրենց հայրենիքում ապրելուց հետո, օսմանցի թուրքերի ձեռքով բռնագաղթի եւ ցեղասպանության են ենթարկվել:

Հոդվածի հեղինակն անդրադառնալով Առաջին աշխարհամարտի բռնկմանը Եվրոպայում, շեշտել է, որ հենց այդ ժամանակ օսմանյան Թուրքիայի ղեկավարները, պատերազմի դաշտի արեւելյան հատվածի եզերքին հայերի նկատմամբ պատմական հաշվեհարդարի մասին էին մտածում: Նշվում է, որ հայերը, թերևս, Արեւմտյան Ասիայի հնագույն բնակիչներն են: Նրանց հայրենիքը ոլորապտույտներով հարուստ լեռներն են, որոնք Կասպից ծովից ձգվում է մինչև Միջերկրական եւ

Մեծ ծովերը: Հայերի հայրենիքը համաշխարհային քաղաքակրթության առաջին կենտրոնն է: Նրանք առաջինն էին, որ քրիստոնեությունն ընդունեցին որպես պետական կրոն:

Այնուհետև հողվածի հեղինակը շարունակում է, որ հայերն առեւտրի բնագավառում օժտված ազգ էին, ինչպես հրեաները՝ Արեւելյան Եվրոպայում, եւ հաջողությամբ էին գործում արտադրության ու առեւտրի ոլորտում: Հեղինակն ընդգծում է, որ Օսմանյան կայսրությունում այդ ժամանակ մեկ միլիոն 200 հազար հայ էր ապրում, որոնց վիճակը բնավ էլ նախանձելի չէր: Ըստ երեսույթին, հայերի թիվը հեղինակը վերցրել է թուրք պատմագիր Սալեհի Սուեյից, որի տեսակետներին անդրադարձել է հողվածում: Իսկ վերջինս, իր հերթին, վկայակոչում է Օսմանյան կայսրությունում Ֆրանսիայի եւ Մեծ Բրիտանիայի դեսպանությունների տվյալները, որոնք նշել են, թե 1900-1914թթ. կայսրությունում ապրել է 1 միլիոն 300 հազար հայ: Հողվածում նշվում է, որ հայերի հետ վարվում էին իբրեւ ենթակա ազգի: Նրանք գեներ կրելու իրավունք չունեին, ինչն օրենքներից զուրկ մի երկրում խղճահարություն էր հարուցում: Այսուհանդերձ, երկրի տնտեսական կյանքը նրանց ձեռքում էր եւ երկրի հարստության զգալի մասը նրանց էր պատկանում:

Խնդրո առարկա հողվածում կարդում ենք, որ Օսմանյան կայսրությունում հայերի ջարդերն սկսվել են դեռեւս 1895-96թթ.՝ սուլթան Աբդուլ Համիդի օրոք: 1908թ.՝ նրա կործանումից հետո, «Իթթիհատ վե թերաքքի» («Միություն եւ առաջադիմություն») կոմիտեն մշակել էր երկրի Սահմանադրությունը, որով հայտարարվում էր՝ Օսմանյան պետության բոլոր բնակիչներն ունեն քաղաքացիական հավասար իրավունքներ: Դրա հետ կապված հույսերը եւս չարդարացան, քանի որ տեղի ունեցան Ադանայի ջարդերը, որը երիտթուրքերի պատմության մեջ սեւ թիծ էր, սակայն գլխավոր աղետը դեռ առջեւում էր, որովհետեւ սկսվել էր Առաջին համաշխարհային պատերազմը, որի ընթացքում տեղի ունեցավ Հայոց մեծ եղեռնը:

Խոսելով Հայոց եղեռնի մասին, հողվածագիրը նշում է. « Երիտթուրքերը, հնարավոր է, որ հայերից վտանգ են զգացել՝ հաշվի առնելով նրանց եւ թշնամու կրոնակցությունը: Հավանական է նաեւ, որ նա-

խապես ծարագովել էր մի ազգի ոչնչացումը (ինչպես հայերն են պնդում), ուստի, պատերազմի ընձեռած հնարավորությունն օգտագործելով, երիտթուրքերը հայերի դեմ լայնածավալ եղեռն սկսեցին: Դրա անհրաժեշտությունը պատճառաբանում էին հայերի դավաճանությամբ, մատնանշելով Դաշնակցության գործունեությունը, հանգամանք, որի պատճառով հարկադրված են եղել հայերին հեռացնել ռազմական գործողությունների թատերաբեմից»:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ Անկարայի դիրքորոշման մասին խոսելիս հողվածագիրը նշել է, որ 1919թ. մայիսին պանթուրանիզմի գլխավոր տեսաբաններից Ջիա Գյոքալվիը, ով նաեւ «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ էր, դատարանի առջեւ հայտարարել է. «Մեր ազգին մի գրպարտեք, Թուրքիայում հայերի ջարդեր չեն եղել: Եղել են փոխադարձ կոտորածներ հայերի ու թուրքերի միջեւ: Նրանք մեզ հարվածել են թիկունքից, մենք հարկադրված դիմել են հակահարձակման»:

Հողվածի հեղինակն այնուհետև հավելել է, որ Հայոց ցեղասպանության վերաբերյալ Ջիա Գյոքալվիի՝ նշված վերաբերմունքը հետագայում վերածվել է Թուրքիայի պաշտոնական դիրքորոշման, սակայն դա բնավ էլ չի քողարկել զարհուրելի ողբերգության իսկությունը: Ինչպես նշվել է, հողվածում խոսվում է նաեւ զոհերի քվի մասին, որտեղ ներկայացվում են տարբեր տեսակետներ:

Եղեռնի ականատեսների վկայությունները մեծ տեղ են գտել հողվածում, այդ թվում՝ գերմանացի մեծ մարդասեր Արմին Վեգների նամակը՝ ուղղված Միացյալ Նահանգների նախագահ Վիլսոնին, որտեղ նշել է, որ հայերն ավելի քան 2000 տարի բնակվել են իրենց բնօրրանում, իսկ այժմ արտաքսվում են անմարդաբնակ անապատներ, շեշտելով, որ, անկախ ամեն ինչից, թուրքերի գործելակերպը մարդկային զգացմունքները ծաղր ու ծանակի ենթարկել է նշանակում: Վեգներից զատ զգալի վկայություններ կան նաեւ ամերիկացի պատմաբան Անուդ Թուրինից եւ իրանցի արձակագիր Ջամալզադեից:

## «Որտե՞ղ են Թուրքիայի անհնազանդության արմատները»

Իրանում լույս տեսնող «Ասեր-ե նո» («Նոր դար») պարբերականը 2005թ. ապրիլի 28-ին Ջամշիդ Փեդրամի հեղինակությամբ տպագրել է «Որտե՞ղ են Թուրքիայի անհնազանդության արմատները» հոդվածը, որն ուշագրավ է գլխավորապես այն առումով, որ խստագույնս քննադատել է Անկարայի արդի քաղաքականությունը: Այն նշել է, որ Հայոց ցեղասպանության հարցում Արեւմուտքն առ այսօր, հանուն իր շահերի, անտեսել է Թուրքիայի դիրքորոշումը: Ընդհանրապես, պարսկալեզու հոդվածներում եւ աշխատություններում թեեւ ակնհայտ են ճշմարտության ձգտելու փորձերը, տեսակետները հայանպաստ են, սակայն տեղանունների եւ տերմինների օգտագործման հարցում վրիպումները քիչ չեն. հազվադեպ է նշվում, որ ցեղասպանությունը տեղի է ունեցել Արեւմտյան Հայաստանում: Բացառություն չէ նաեւ խնդրո առարկա հոդվածը, որի հեղինակը գրում է, թե Հայոց ցեղասպանությունը տեղի է ունեցել Անատոլիայում: Արեւմտյան Հայաստան պատմական անվան անտեսում երբեմն կարող է լինել ոչ թե անտեղյակության, այլ քաղաքական նկատառումներով:

Հոդվածը ներկայացնում ենք որոշ կրճատումներով:

«Ընթացիկ տարվա մարտի 8-ի՝ կանանց խաղաղ հանրահավաքի ճնշումը Թուրքիայում այդ երկրում նոր զարգացումների սկիզբ էր, որն արժանացավ եվրոպացի քաղաքական գործիչների հակազդեցությանը: Թուրքիայում ազգային ու կրոնական փոքրամասնությունների ճնշումը նոր երեւոյթ չէ եւ իպերիալիստական երկրները, տասնամյակներ շարունակ, հանուն իրենց շահերի՝ լուրջամբ խրախուսել են դրանք: Սակայն երկու նոր հանգամանքներն իրավիճակը որոշ չափով փոխել են՝ ի վնաս Անկարայի այդօրինակ քաղաքականության, որոնց անդրադառնալը տեղին կլինի:

Առաջինը Եվրամիությանն (ԵՄ) անդամակցելու՝ Թուրքիայի բուռն ջանքերն են: Արեւելյան Եվրոպայի երկրները, ենթարկվելով ԵՄ-ի պահանջներին, պարտաճանաչել են աշխատասեր աշակերտի նման կատարում են հանձնարարված առաջադրանքները: Իսկ Թուրքիայի վերջին իրադարձությունները վկայում են, որ այս «աշակերտն» անզուսպ

է, չի ցանկանում ենթարկվել: Անկարան, միաժամանակ, ուշադրություն չի դարձրել նաեւ այն կարեւոր հանգամանքին, որ եթե առ այսօր արել է՝ ինչ ցանկացել է, ապա դա պայմանավորված է եղել լոկ իմպերիալիստական երկրների թելադրած խաղի կանոնների ընդունմամբ, ոչ թե ժողովրդավարության հիման վրա՝ ընդդեմ կախվածության: Իսկ այժմ, երբ Թուրքիան կանգնել է անհնազանդության եւ ենթարկվելու երկրնորանքի առջեւ, շուվհիստական եւ վերին աստիճանի հետադիմական այդ պետության թույլ կողմերը զավեշտական ձեւով ցցուն են դարձել: Անկարան այլեւս ի գորու չէ նախկինի պես սրընթաց հարթել իր առջև ծառացած բարդություններն ու խնդիրները, քանզի նրա տներն այլ ծրագրեր ունեն:

Թուրքիայի իշխանությունները թղթի վրա կոսմետիկ բարեփոխումների ծրագիր էին ներկայացրել, սակայն իրականում այդ բարեփոխումները ոչ միայն բնավ էլ կյանքի չեն կոչվել, այլեւ երկրում ազատությունները սահմանափակելու ուղղությամբ առավել լուրջ քայլ են կատարում: Թուրքիան անտեսում է վաղուց պատասխան պահանջող հարցերը: Այդ պետությունը ոչ միայն չի ընդունում կատարված ոճրագործությունները, ոչ միայն չի հայցում պատմության եւ եղեռնված ժողովուրդների ներողամտությունը, այլեւ, հսկայական ներդրումներով ու մարդկային ներուժ գործադրելով, ջանք չի խնայում պատմական ճշմարտությունը թաքցնելու համար: Մարդու իրավունքների միջազգային կազմակերպությունների՝ տարիներ շարունակ հետետողական աշխատանքներն ապարդյուն են անցել: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Անատոլիայում օսմանյան Թուրքիայի իրագործած ավելի քան մեկ միլիոն հայերի ցեղասպանությունն Անկարան լիովին ժխտում է. անգամ չի ընդունում կատարվածը բնութագրել «ոճրագործություն», «բնաջնջում» եւ այդօրինակ այլ բառերով: Ավելին, Անկարան ոչ միայն առաջ է քաշում պատերազմական իրավիճակի, փոխադարձ ջարդերի եւ հայերի ձեռքով կատարված՝ մահմեդականների կոտորածների հարցը, այլեւ ծախս գիտնականների ու պատմաբանների օգնությամբ ձգտում է պատմական ճշմարտությունները գլխիվայր շուռ տալ, այն դեպքում, երբ եվրոպական ախիվներում այդ պատմական ճշմարտությունն ապացուցող բազում փաստեր են պահ-

պանվում: Այդ ծախսու գիտնականներից է նաև Թուրքիայի պետական պատմական արխիվների տնօրեն, պատմաբան Յուսուֆ Հալաջօղլուն, ով հայերի հանդեպ պատմական ոճրագործությունից 90 տարի անց ամենայն դաժանությամբ սպանված հայերի թիվը 6,5-8,5 հազար հայտարարելու նպատակով ջանք չի խնայում, միաժամանակ ընդգծելով, որ իբր թե հայերը 19,5 հազար մահմեդական են կոտորել:

Քենալական Թուրքիան, որը հիմնադրվել է Օսմանյան կայսրության փլատակների վրա, ազգայնական նոր պատմություն է սկզբնավորել, որպեսզի ինչ-որ կերպ փոխհատուցի կայսրության կորուստը: Նոր իշխանություններն ազգային սին հպարտություն սերմանեցին, և առ այսօր պատմական ոճրագործությունը թաքցվում է: 1931թ. Քենալ Աթաթուրքը հիմնադրել է Թուրքական պատմության ընկերությունը, որի նպատակը թուրք ազգի համար վեհապանձ անցյալ հայտնաբերելն ու ստեղծելն էր: Այդ առաջադրանքն իրականացնելու նպատակով թուրք պատմաբանները ձգտել են շուներներին, սակերին, տրոյացիներին եւ հին հույներին ներկայացնել իբրեւ առաջին թուրքեր եւ այդպես էլ դասավանդում են դպրոցներում՝ աշակերտներին սովորեցնելով, որ իրենց նախնիներն աշխարհի բոլոր խոշոր մշակույթների հիմնադիրներն են եղել: Մինչդեռ վաղուց է ապացուցվել, որ Հայոց ցեղասպանության գլխավոր մեղավորները երեք թուրք փաշաները՝ Էնվերը, Թալեաթը եւ Ջամալն են, որոնք Աթաթուրքի մտերիմներն էին: Եվ հենց նրանք են Օսմանյան կայսրության փլուզմանը նպաստել: Նրանք Թուրքիային դարձրին Գերմանիայի դաշնակիցը: Նրանցից երկուսն Աթաթուրքի կառավարության անդամներ էին:

Հայոց ցեղասպանության առնչությամբ հայտնաբերվել է մի հեռագիր, որտեղ նշվում է. « Փողոցները լեցուն են կանանց ու երեխաների դիակներով, մենք ի վիճակի չենք դրանք թաղելու»: Իսկ մեկ այլ հեռագրում հարցնում են. «Տարհանված հայերին ոչնչացնե՞նք, թե՞ տեղափոխենք»:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ բազում եւ բազմաթիվ անառարկելի փաստաթղթերի առկայությամբ հանդերձ, Թուրքիայի կառավարությունը, տարիներ շարունակ մերժելով դրանք, այսօր խոսում է հայերի կրած լոկ որոշ վնասների մասին: Սակայն ներկա փուլից մին-

չեւ ոճրագործության ընդունումը, մինչև դրա պաշտոնական դիրքորոշում դառնալը, մինչեւ այն պատմության վերաշարադրումը, որտեղ լոկ խոսվում է «թուրքերի նկատմամբ հայերի կատարած ոճրագործությունների» մասին, որն այլեւս որեւէ մեկը չի ընդունում, Անկարան երկար ու ձիգ ճանապարհի պետք է անցնի: Հայոց ցեղասպանության՝ գլխավայր շուտ տված պատմությունն այնպիսի խոր արմատներ է ձգել թուրք հասարակության մեջ, որ հնարավոր չէ հեշտությամբ վերջ դնել մի քանի սերունդների վրա դրա ներգործությանը, թողած ազդեցությանը:

Թուրքիայում լույս տեսնող «Ակոս» օրաթերթի գլխավոր խմբագիրը, գերմանացի քաղաքական գործիչ Անգելա Մերկելին (ով Գերմանիայի խորհրդարանից պահանջել էր դադապարտել Հայոց ցեղասպանությունը պատասխանել է. « Ես կարծում եմ, որ եթե նույնիսկ մեկ թուրք պատմությունը ճիշտ ընկալի, շատ ավելի լավ է, քան Գերմանիայում ցեղասպանությունը) դատապարտող օրինագիծ ընդունվի: Տիկին Մերկելի քայլը միմիայն նպատակամղված է Թուրքիայի մուտքը ԵՄ արգելակելուն եւ ոչ ավելին»:

Հոդվածի հեղինակը Թուրքիային խանգարող երկրորդ հանգամանքը համարում է քրդական հարցը, այսինքն՝ Իրաքում Միացյալ Նահանգների ներկայությունը, ինչը քրդերին հզորանալու հնարավորություն է ընձեռում: Ուստի Անկարան ջանք ու եռանդ չի խնայում վերջիններիս դեմ պայքարում կիրառել դիվանագիտական, քաղաքական եւ ուժ գործադրելու միջոցներ: Փեղրամն ընդգծում է. «Թուրքիայի իշխանություններին խիստ շփոթության է մատնել այն, որ Եվրոպան այսօր իր ուշադրությունը սեւեռել է հենց հիշյալ հարցերի վրա: ԵՄ-ի ցեղասպանության կոնվենցիայի համաձայն՝ հայոց ջարդերը ցեղասպանություն են, որը բնավ ընդունելի չէ ծայրահեղ ազգայնական թուրքերի համար, ինչպես եւ Աբդուլա Օջալանի բողոքի վերաբերյալ՝ Եվրոպայի Մարդու իրավունքների դատարանի որոշումը...»:

Փեղրամն ավելացնում է նաև, որ Թուրքիայի իշխանությունները շուրջ մեկ դար է, ինչ, կատարված որճրագործության շուրջ բացեփրաց ուսումնասիրություններ կատարելու փոխարեն, պաշտպանում են «հայրենասիրական» նախագծերը: Այսօր էլ բազմաթիվ փաստեր վկայում են այն մասին, որ Անկարան պատրաստ չէ հրաժարվելու

քրդերի ցեղասպանությունից, մտավորականներին ճնշելուց եւ պանթուրքիզմի, ազգայնականության, շովինիզմի տեսությունների «կրակին յուղ» ցնելուց: Բացի այդ, Անկարան հակաամերիկյան տրամադրությունները երկրում բորբոքելու ուղղությամբ եւս լուրջ քայլեր է կատարում: Այս առնչությամբ Փեղրամը մատնանշում է Թուրքիայում ամենամեծ պահանջարկ վայելող «Մետաղյա հարձակում» վեպի տարածումը, ըստ որի՝ Միացյալ Նահանգները հարձակվում է Ստամբուլի եւ Անկարայի վրա, դրանք հողին հավասարեցնում: Իսկ մի թուրք օդաչու, որի օդանավում միջուկային գլխիկ կա, որոշում է ոչնչացնել Վաշինգտոնը:

Նախկին քաղաքական գործիչ Գյունդուգ Ալթանը «ինքնագիտակցությունից զուրկ եւ հոգեկան հիվանդ» է անվանել այն թուրք մտավորականներին, ովքեր իրենց մեղսակից էին համարում պետության գործած ոճրագործություններին: Իսկ հայտնի գրող Օրհան Փամուկի գրքերը հրկիզվել են լոկ այն պատճառով, որովհետև այնտեղ ասել է, թե այդ մարդասպանները վտանգել են երկրի արժանապատվությունը:

Հողվածագիրն անդրադարձել է նաեւ Կիպրոսի խնդրին՝ շեշտելով, որ Թուրքիան այստեղ էլ նույն քաղաքականությունն է վարում: «Ասերեւոյի» հողվածն ավարտվում է այսպես. «Թուրքական ազգայնականությունը խարսխված է պատմության չիմացության, կույր հայրենասիրության արհեստական աճի, ռասայականության վրա: Մակայն այժմ, երբ Թուրքիայում լուրջ աճ է արձանագրում իսլամ-արմատականությունը, զգալիորեն գունազրկվել են Աքաթուրքին ազգային հերոս ներկայացնելու փորձերը: Թուրքիայում ստեղծված իրավիճակում իրենց բաժինն ունեն քաղաքական նշյալ երկու հոսանքներն էլ, որոնք ո՛չ նպատակ ունեն եւ ո՛չ էլ ի գորու են այն փոփոխելու, քանզի տունը հիմքից է ավերված:

### «Հայոց ցեղասպանության սկիզբը»

Թեհրանում տպագրվող «Չամեջամը» պահպանողական հակումներով պարբերական է, որը նշանակում է, թե իսլամը եւ դրա սկզբունքները կարելի էր վերականգնել, հարցի պարզաբան-

ման, բացատրման նպատակով, բացառություն չէ նաեւ Հայոց ցեղասպանության հարցը: Ահա թե ինչու նշյալ օրաթերթի մեկնաբան Բահրամ Էֆթեխարին, անդրադառնալով Հայոց ցեղասպանությանը, շեշտում է, որ երիտթուրքերի իշխանությունը կրոնական չէր, ազգայնական բնույթ էր կրում, հանգամանք, որը կարելի էր դեր է ունեցել ցեղասպանության հարցում: Փաստորեն, հեղինակն անտեսում է կամ անտեղյակ է հայերի տառապանքներին և զանգվածային ջարդերին Օսմանյան կայսրությունում երիտթուրքերի իշխանության գալուց առաջ, տեսակետ, որն ինչ-որ տեղ ապակողմնորոշում է ընթերցողին: Ըստ երեւույթին, Էֆթեխարին հաշվի է առել, որ թուրք սուլթանների քաղաքականության մեջ իսլամի գործոնը կարելի էր: Մակայն նրանք բոլորը, մասնավորապես սուլթան Աբդուլ Համիդը, իսլամը ծառայեցնում էին ծավալապաշտական նպատակներին: Այդ են վկայում վերջինիս ձեռքով իրականացված՝ հայերի կոտորածները:

Էֆթեխարիի «Հայոց ցեղասպանության սկիզբը» հողվածը տպագրվել է 2004թ. ապրիլի 26-ին, որը տեղադրվել է նաեւ օրաթերթի կայքի ([www.jamejamdaily.net](http://www.jamejamdaily.net)) արխիվում: Թեեւ հողվածում Հայոց ցեղասպանությունը զնահատվում է իբրեւ այդպիսին, սակայն այն յուրովի է մեկնաբանվում: Ներկայացնում ենք այն որոշ կրճատումներով:

«1915թ. ապրիլի 24-ին երիթուրքերի աշխարհիկ կառավարության հրամանով Ստամբուլում սպանվեցին 600 անվանի հայ մտավորականներ: Սա Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության սկիզբն էր, որի ընթացքում զոհվել են 1,2 միլիոն հայեր:

Օսմանյան կայսրությունում հայկական եւ հունական համայնքները խաղաղ եւ հանգիստ էին ապրում: Նրանցից շատերը կարելի էր ունենն երկրի առևտրի ոլորտում եւ պետական կառույցներում: 1909թ. հաղթեց երիտթուրքերի ազգայնական շարժումը եւ երկրի ղեկի մոտ հայտնվեցին շարժման առաջնորդները: Այդ շարժման գաղափարախոսությունը պանթուրանիզմն էր, որը քարոզում էր թուրքական ցեղերի միասնությունն Էգեյան ծովի ափերից մինչեւ Չինաստանի սահմանները:

Սուլթան Մահմեդ Ե-ի օրոք, որի իշխանությունը ձեւական էր, օս-

մանյան կայսրությունը Գերմանիայի հետ շատ սերտ կապեր հաստատեց, իսկ 1914թ., միանալով ընդդեմ Ռուսաստանի եւ եվրոպական երկրների գերմանա-ավստրիական դաշինքին, ներքաշվեց Առաջին աշխարհամարտի մեջ:

Օսմանյան ուժերը ռուսական բանակից պարտություն էին կրում: Վերջինս մտել էր կայսրության տարածք: Իսկ երիտթուրքերի ղեկավարած օսմանյան բանակը նահանջի ընթացքում անասելի ոճրագործություններ էր կատարում հայերի նկատմամբ: Միաժամանակ անգլիացիներն ու ֆրանսիացիները պատրաստվում էին մայրաքաղաք Ստամբուլը գրավելու նպատակով ռազմական ուժեր տեղակայել Դարդանեղի նեղուցում: Երիտթուրքերը տեսնում էին իրենց համար ստեղծված խիստ վտանգավոր իրավիճակը, ուստի որոշեցին հայերի նկատմամբ բռնություններ կիրառելով հասարակական կարծիքը շեղել: Ահա թե ինչու, երիտթուրքական շարժման ղեկավարներից ներքին գործերի նախարար Թալեթ փաշան նախ՝ Ստամբուլի հայերի, ապա՝ օսմանյան բանակում ծառայող հայերի ոչնչացման հրաման արձակեց: Ներքին գործերի նախարարության հեռագրերում, որոնք ուղղված էին երիտթուրքական տեղական կազմակերպություններին, ասվում է, որ կառավարությունը որոշել է ոչնչացնել օսմանյան երկրի ողջ հայերին, անհրաժեշտ է վերջ դնել նրանց գոյությանը, եթե անգամ անհրաժեշտ լինի կիրառել դաժանագույն մեթոդներ: Այս հարցում բարոյականությունն ու խիղճը տեղ չունեն: Ոչ նրանց տարիքը, ոչ էլ սեռը չպետք է վերապահումների առիթ դառնան:

Արևելյան յոթ վիլայեթներում հայերին ոչնչացրեց բանակ՝ երիտթուրքերի հրամանատարությամբ, կամ էլ քարավաններով քշվեցին երկրի հարավային շրջաններ, որտեղ նրանք գրեթե ամբողջությամբ կոտորվեցին՝ սովից ու ծարավից, ինչպես նաև երիտթուրքերի հրահրած տարբեր ցեղերի հարձակումների հետևանքով: Այնուհետև հերթը հասավ Օսմանյան կայսրության ողջ տարածքում ապրող հայերին, որոնց ոչնչացման հրաման արձակեցին ազգայնական երիտթուրքերը: Արդյունքում կայսրության տարածքում ապրող 2 միլիոն հայերից շուրջ 1,3-ը գոհիվեց:

## «Օսմանյան պետությունը 1,5 միլիոն հայ է կոտորել»

Արտերկրյա Իրանի ընդդիմության մամուլում, ինտերնետային հանդեսներում ու թերթերում նույնպես նշանակալից տեղ է հասկացվել Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին նվիրված նյութերին: «Մանի» գրական-մշակութային պարբերականի ([www.mani-poesie.de](http://www.mani-poesie.de)) ապրիլի 28-ի համարում «Դեպքեր եւ տեսակետներ» խորագրի ներքո զետեղված է դկ. Թուրաջ Փարսիի «Օսմանյան պետությունը 1,5 միլիոն հայ է կոտորել» հոդվածը: «Ոճրագործություն, որը երբեք օրենքով չի հետապնդվել» ենթավերնագրով բավական ծավալուն հոդվածը տարբերվում է ներկայացված պարսկալեզու շատ հոդվածներից՝ տերմինների ճիշտ ընտրությամբ եւ երեւոյթների օբյեկտիվ գնահատականներով: Փարսին պահանջում է միջազգային դատարանի առջեւ կանգնեցնել Թուրքիայի կառավարությանը: Նա իրավամբ Օսմանյան կայսրության գաղափարախոսությունը համարում է պանիսլամիզմին միահյուսված պանթուրքիզմ՝ դատապարտելով դրանք իբրեւ ռասիստական գաղափարախոսություններ:

«Պատմական հայացք Օսմանյան կայսրության տարածքին եւ պանթուրքիզմի ու պանիսլամիզմի հիվանդությունները» վերնագրով հրապարակման մեջ Փարսին ներկայացնում է Փոքր Ասիայի պատմությունը մինչեւ 1453թ.՝ Կ. Պոլսի (Konstantinopolis) անկումը: Ապա շարունակում է, որ եկվոր թուրքերը, որոնք թուրք-խալամական մշակույթի կրողներ էին, սկսեցին ոչնչացնել մշակույթի կենտրոնները եւ կոտորել քրիստոնյաներին: Հոդվածի հեղինակը շեշտում է, որ մինչեւ Անատոլիայում թուրքերի հայտնվելը, այստեղ կողք կողքի գոյատևում էին միտրաիզմը, հունական, հռոմեական կրոնները եւ քրիստոնեությունը՝ հաշտ ու համերաշխ ապրելով իրանական, հայկական, հունական եւ հռոմեական քաղաքակրթությունների հետ: Սակայն, ցավոք, երբ օսմանցիները կրոնի եւ ռասայի հիման վրա հաստատեցին պանթուրքական եւ պանիսլամական գաղափարախոսություններին խարսխված իրենց իշխանությունը, խիստ դանդաղեց այստեղ ապրող ժողովուրդների առաջադիմության պատմական ընթացքը:

Օսմանյան սուլթանների քաղաքականությունն սկզբից եւեթ եղել է



պանիսլամիզմի հետ միահյուսված պանթուրքիզմը: Նրանք ձգտում էին բուրքական լայնածավալ պետություն ստեղծել, որի սահմանները ձգվելու էին Անատոլիայից մինչև Չինաստանի Թուրքեստան՝ ընդգրկելով բոլոր բուրքալեզու ազգություններն ու ցեղերը՝ ուզբեկներին, բուրքմեններին, կրկրզներին, անգամ՝ Իրանի աղբբեջանցիներին, որոնք ծագումով իրանցի են, լոկ նրանց լեզուն է բուրքերեն: Թեև նրանք ահնհիմն կերպով իրենց բուրանցի են անվանում, սակայն ինքնըստինքյան պարզ է, որ բուրանցիներն իրանական ցեղ են:

Օսմանցիներին հաջողվեց պատերազմների, ջարդերի ու կողոպուտների միջոցով գրավել հսկայական տարածքներ, որոնք ներառում էին այսօրվա Թուրքիան, Սիրիան, Իրաքը, Հորդանանը, Լիբանանը, Պաղեստինը, Եգիպտոսը, Հյուսիսային Աֆրիկայում՝ Միջերկրական ծովի ափերը, Բալկանների զգալի մասը եւ տասնյակ փոքր ու մեծ այլ տարածքներ:

### **Ինչու՞ էին պանթուրքիստները կոտորում հայերին**

Հայերի բնաջնջման համար նրանք երկու պատճառ ունեին: Առաջինն աշխարհագրական էր, քանզի Հայաստանը երկաթյա պատ էր օսմանյան բուրքերի եւ ծագումնաբանական ընդհանրություն չունեցող՝ Կովկասի բուրքալեզու ցեղերի ու Կասպից ծովի մյուս ափի բուրքալեզու ժողովուրդների միջև: Երկրորդը հայերի քրիստոնյա լինելն էր, որոնք ոչ մի գնով չէին հրաժարվում իրենց կրոնից: Թուրքերի դաժան ճնշումները, հարձակումները, բռնություններն ու հետապնդումներն այդ առումով ապարդյուն էին. չէին կարողանում հայերին պարտադրել իսլամը: Ուստի բուրքական ցեղերի միացման ճանապարհին կանգնած այդ պատնեշի վերացումը՝ հայ ազգի բնաջնջումը, անհրաժեշտություն էր դառնում նրանց հիվանդագին նպատակը կյանքի կոչելու համար:

Առաջին աշխարհամարտն ի վերջո երիտթուրքերի համար պատեն առիթ ստեղծեց իրենց նպատակներն իրականացնելու համար: Եվ ահա 1915թ., նախօրոք լավ մշակված ծրագրի համաձայն, սկսեցին հայերի ցեղասպանությունը: Այն ցեղասպանությունը, որը նացիստների համար ուսանելի օրինակ էր Երկրորդ համաշխարհային պատերազ-

մում, ճշգրիտ եւ հմտորեն էր ծրագրվել: Այդ ոճրագործության գլխավոր հեղինակներն էին ներքին գործերի նախարար Մուհամեդ Թալեաթ, պատերազմի նախարար Իսմաիլ Էնվեր եւ ծովուծի նախարար Ահմեդ Ջամալ փաշաները, ովքեր տառապում էին ռասիստական հիվանդությամբ եւ «Իթթիհատ վե քարաքքի» կուսակցության անդամ էին, իրենց զարհուրելի ծրագիրն իրագործելու նպատակով կպել էին Գերմանիայի պոչից: Օսմանյան կառավարությունն այդ նպատակով ձեռավորել էր երեք հոգուց կազմված կոմիտե, որի անդամներն էին Բեհաեդդին Շաքիրը, Շուքրին եւ դկ. Նազմը: Այդ ծրագիրը 1915-23թթ. իրագործվեց Արեւմտյան Հայաստանում՝ խլելով 1,5 միլիոն անպաշտպան հայերի (կին, տղամարդ, ծեր ու երիտասարդ) կյանք, շուրջ մեկ միլիոն հայեր էլ ցրվեցին ողջ աշխարհով մեկ:

Ըստ նրանց ծրագրի՝ սկզբում բանակ կանչվեցին 15-50 տարեկան տղամարդիկ, այնուհետեւ զինաթափվեցին եւ տարբեր միջոցներով ոչնչացվեցին, ապա 1915թ. ապրիլին Ստամբուլում ձերբակալվեցին 300 հայ քաղաքական գործիչ, մտավորական, գրող ու առաջնորդ եւ սարսափելի ձեռով սպանդի ենթարկվեցին: Մա Հայոց ցեղասպանության սկիզբն էր:

Հեղինակը, նկարագրելով զարհուրելի ջարդերը, նշում է, որ 1915թ. մայիսի 27-ին, երբ բուրքերը հարբել էին արյունով եւ ջարդերով՝ հայերի բռնի տեղահանման, բռնագաղթի հրաման արձակեցին: Ապա Փարսին նկարագրում է բռնագաղթի ընթացքում կատարված ոճիրներն ու բռնությունները, որոնց հետեւանքով գոհվում էին հազարավոր անմեղ մարդիկ:

Նա շեշտում է. «Շատ զարմանալի է, որ մերօրյա Թուրքիան լկտիաբար եւ կամակորությամբ ժխտում է Հայոց ցեղասպանությունը՝ նշելով, որ ներքին բախումների, օսմանյան կառավարության դեմ հայերի ապստամբության հետեւանքով գոհվել են թե՛ հայեր եւ թե՛ բուրքեր, որոնց ընդհանուր թիվը 300 հազար է »:

Ապա կարդում ենք. «Ցավոք սրտի, հայերի ջարդերի ու նրանց կողոպտելու հարցում նշանակալից դեր են ունեցել քրդերը, որոնց անվանում են լեռնային բուրքեր, առ այսօր նրանց ազգային ինքնությունը չեն ճանաչել եւ չեն ճանաչում»:

Փարսին շարունակում է. «Տողերիս հեղինակի համար անպատասխան է մնացել այն հարցը, թե ինչու՞ ֆաշիստական Գերմանիայի ղեկավարների պատմական դատավարության օրինակով, Թուրքիայի կառավարությանը չեն կանգնեցնում միջազգային դատարանի առջև»: Այնուհետև հավելում է. «Արդյո՞ք որեւէ տարբերություն կա Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում ֆաշիստական Գերմանիայի հրեաների, կոմունիստների ու գնչուների նկատմամբ իրագործ ջարդերի եւ 1915թ. ապրիլի 24-ին հայերի՝ խաղաղասեր մի ազգի դեմ կատարված ոճրագործությունների միջև»:

Հողվածն ավարտվում է հետևյալ եզրակացությամբ. «Եթե այսօր միջազգային հանրությունն իր խղճի թելադրանքով ջանքեր չգործադրի այս կարեւոր հարցի լուծման, այն է՝ Թուրքիայի ռասիստական, ֆաշիստական գաղափարները դատապարտելու, հայերից ներողություն հայցելու նպատակով նրան միջազգային դատարանի առջև կանգնեցնելու ուղղությամբ, ապա հաջորդ ոճրագործությունների համար պարարտ հող է պատրաստ, եթե անգամ Թուրքիան զգեստավորվի եվրոպական հագուստներով»:

### «Հայաստանը Ուրարտուից մինչև ցեղասպանություն»

Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի առիթով խնդրին անդրադարձել է նաև իրանական ինտերնետային «Շարդյան» երկշաբաթյա պարբերականը, Ջալալ Աֆշարի «Հայաստանը Ուրարտուից մինչև ցեղասպանություն» բավական ծավալուն՝ 10 էջանոց հոդվածով: Այն սկսվում է Եղեռնի ականատես պարսիկ արձակագիր Մոհամեդ Ալի Ջամալզադեի հուշերի մի հատվածով:

«Օսմանյան թուրքեր» ենթավերնագրի ներքո Աֆշարը մասնավորապես նշում է, որ Առաջին աշխարհամարտի նախօրեին Օսմանյան կայսրությունն օրհասական վիճակում էր: Հսկայածավալ կայսրության ենթակայության տակ հայտնված տարածքներում. արեւելքում՝ Անատոլիայից մինչև կայսրության արեւմտյան ծայրամասերում՝ Հյուսիսային Աֆրիկա, ամենուրեք հուզումներ էին տեղի ունենում անկախության պահանջով:

Ստեղծված պայմաններում կայսրության երբեմնի հզորությունը վերականգնելու նպատակով օսմանյան իշխանություններին միայն մեկ հաղթաբուրդ էր մնացել՝ միանալ Գերմանիայի գլխավորած դաշնությանը: Անկախություն պահանջող ժողովուրդների թվում էին նաև հայերը: Հպանցիկ հայացք նետելով կայսրության ժողովրդագրական վիճակին՝ ակնհայտորեն կարելի է տեսնել, թե ինչ ահռելի տարբերություն կար ենթակա ժողովուրդների եւ եկվոր թուրք զավթիչների միջև: Քանզի կայսրության տիրապետության տակ ընկած Փոքր Ասիայում, Արեւմտյան Հայաստանում, Իրաքում, Լիբանանում, մերօրյա Պաղեստինում, Արեւելյան Եվրոպայի որոշ հատվածներում, Բալկաններում ապրում էին ժողովուրդներ, որոնք անցյալում փայլուն քաղաքակրթություն եւ մշակույթ են ունեցել: Այնուհետև հեղինակը համառոտ անդրադառնում է օսմանյան թուրքերի պատմությանը:

«Ո՞րն է Հայաստանի տեղն աշխարհում» խորագրով հատվածում հեղինակը ներկայացնում է պատմական Հայաստանը, հայ ժողովրդի ծագումը, Իրանի հետ առնչությունները՝ մինչև իսլամի տարածումը:

«Հայաստանն իսլամից հետո» հատվածում Ջալալ Աֆշարը գրում է, որ իսլամի ներթափանցումն իրանական տարածքներ հանգեցրեց Մասանյան կայսրության փլուզման, արաբների՝ մինչև ներկայիս Սիրիայի տարածքները գրավելուն եւ Բյուզանդիայի աստիճանաբար նահանջին: Մյուս կողմից՝ մահմեդական ղեկավարների մեղմ վերաբերմունքը պատճառ դարձավ, որ օտարերկրյա ճնշումները հայերի վրա, որոնք առ ժամանակ իսլամական խալիֆայության գերիշխանության տակ էին լինում, թուլանան: Սակայն, ավելի ուշ, հայերը գրեթե անկախ պետություն ստեղծեցին, որը մասնավորապես հարատևեց մինչև սելջուկների արշավանքները: Այդ ժամանակ ողջ Անդրկովկասը, Արեւմտյան եւ Արեւելյան Հայաստաններն ու Արանը (ներկայիս Ադրբեջանի Հանրապետությունը - Ջ.Ա.) անկախ տարածքներ էին, որոնք փոքրիշատե պահպանվեցին նույնիսկ մոնղոլների տիրապետության ժամանակ:

Սակայն Իրանում Սաֆավիների կայսրության ձեւավորմամբ իրավիճակի կտրուկ փոփոխություն տեղի ունեցավ: Նրանք իրենց նվաճողական գործունեություններն սկսեցին Ադրբեջան նահանգի Արդաբիլ

քաղաքից. բնականաբար առաջին հերթին հետաքրքրվում էին մոտակայքի տարածքներով: Իսմայիլ շահի պապը եւ հայր<sup>34</sup> Շիրվանի (Իրանի հյուսիս-արեւմտյան քրիստոնեաբնակ տարածքներ) դեմ մղած պատերազմում պարտության են մատնել նրան եւ ոչնչացրել: Իսկ Իսմայիլ շահը, գրավելով Հայաստանը, ողջ Հարավային Կովկասը միացրեց Իրանին: Այսուհանդերձ, Չաղդրանի ճակատամարտում նա օսմանյան թուրքերից պարտություն կրեց, ի հետեւանս որի՝ Հարավային Կովկասն առաջին անգամ հայտնվեց օսմանյան սուլթանների գերիշխանության տակ, թեեւ Արեւմտյան Հայաստանը նրանք արդեն գրավել էին:

Իրանա-թուրքական պատերազմների ընթացքում թուրքերը փաստորեն գրավել էին ողջ Հայաստանը, Իրանի Ադրբեջան նահանգը եւ անգամ Վրաստանը: Շահ Աբասն օսմանցիների դեմ 20-ամյա պատերազմների ժամանակ, ջանքեր գործադրելով, կարողացավ Արեւելյան Հայաստանի կարեւոր շրջաններից Նախիջեւանը, Երեւանը եւ Ղարաբաղը վերագրավել: Արդյունքում Հայաստանը բաժանվեց երկու մասի. Արեւելյան Հայաստանը հայտնվեց Իրանի, Արեւմտյանը՝ Օսմանյան կայսրության տիրապետության տակ: Իսկ հետագայում 1813թ. Գյուլիստանի եւ 1828թ. Թուրքմենչայի ռուս-իրանական պայմանագրերի ստորագրումից հետո Արեւելյան Հայաստանն ամբողջությամբ միացավ Ռուսաստանի կայսրությանը:

Ինչպես նշել ենք, Օսմանյան կայսրության անկումն սկսվել էր 19-րդ դարից եւ շարունակվեց մինչեւ 20-րդ դարի սկզբները: Այդ ընթացքում օսմանյան կառավարությունը ֆինանսատնտեսական գերծանր իրավիճակում էր. ի գործու չէր անգամ վճարելու պետական համակարգի աշխատողների աշխատավարձը: Բացի այդ, խիստ խտրական քաղաքականություն էր վարում թուրքերի եւ ոչ թուրքերի՝ հայերի, հույների, քրդերի, բուլղարների, սլավոնների, արաբների եւ այլ ազգերի ու ազգությունների նկատմամբ: Ազգային առավել սաստիկ խտրականություն էր դրսևորվում մահմեդականների եւ քրիստոնյաների միջեւ. վերջիններիս անհավատ էին անվանում:

Ավելի ուշ Օսմանյան կայսրության գերիշխանության տակ գտնվող

<sup>34</sup> Խնդրո ստարկա դինասարիայի հիմնադիրները:

երկրները տարբեր պատճառներով անջատվեցին կայսրությունից: Եվրոպացիների եւ ռուսների միջամտությանը անջատվեցին կայսրության եվրոպական ու Միջերկրական ծովի ավազանի երկրները՝ Մոնտենեգրոն, Բուլղարիան, Բոսնիան եւ Հերցեգովինան, Լիբանանը, Մակեդոնիան, Ալբանիան, Եգիպտոսը եւ Թունիսը: Սակայն ուշագրավն այն է, որ Օսմանյան կայսրությունում իրենց քրիստոնյաների հովանավոր համարող եվրոպացիները երբեք հայերին պաշտպանելու մասին չեն մտածել: Ըստ երեւոյթին, այդօրինակ վերաբերմունքը պետք է պատճառաբանել նրանով, որ հայերը չեն ենթարկվում Վատիկանին: Բացի այդ՝ հայերը սիրված չեն նաեւ ուղղափառների շրջանում: Հետեւաբար՝ կարելի է ասել, որ հայերը, կաթոլիկներից եւ ուղղափառներից անկախ լինելու պատճառով, չեն վայելում քրիստոնեության նշալ ուղղությունների հովանավորությունը:

Հոդվածի հաջորդ՝ «Հայերի ցեղասպանության սկիզբը» ենթավերնագրի ներքո Աֆշարը գրում է. «Հայերի ցեղասպանության առաջին հիմնաքարը դրվել է սուլթան Աբդուլ Համիդի օրոք: Վերջինիս անողորմ ճնշումներից զայրացած հայերը, ընդդեմ օսմանյան սուլթանի, միացան սահմանադրական միապետության կողմնակից թուրք ապստամբներին: Սակայն փոխհատուցումը դաժան էր: Հայերը կարծում էին, թե «մտավորականների» իշխանության գալով վերջ կդրվի օսմանյան բռնություններին, մինչդեռ իրականում դա սին հույս էր, որ փայփայել էին հայերը: Քանզի 1909թ. Արանայի 30 հազար հայերը ոչնչացվեցին Աբդուլ Համիդին պաշտպանելու պատրվակով, այն դեպքում, երբ նրանք վերջինիս դեմ պայքարի ավանգարդում էին: Հարց է ծագում՝ թուրքական ո՞ր դատարանը կարողացավ մեկ գիշերվա ընթացքում դատել 30 հազար հայերի եւ նրանց դատապարտել մահապատժի:

Առաջին աշխարհամարտի նախօրեին Օսմանյան կայսրությունում 2,5 միլիոն հայ էր ապրում, իսկ 1923թ., երբ ցեղասպանությունն իր տրամաբանական ավարտին էր հասել, ընդամենը 50 հազար հայ էր մնացել, որոնք գերծանր պայմաններում ապրում էին Մտամբուլում: Ու՞ր էին մնացածները»:

Ամեն ինչ սկսվեց 1914թ. ամռանը՝ Առաջին աշխարհամարտի

սկզբին, երբ օսմանցիները միացան Գերմանիայի գլխավորած դաշինքին՝ մտածելով, որ հարկավոր է օգտվել պատերազմական նսապատավոր իրավիճակից եւ ամենայն արագությամբ լուծել հայերի հարցը: Մանավանդ որ, վերջիններս աստիճանաբար սկսել էին անկախության երգը երգել, թեւ արտաքին որեւէ հզոր պաշտպան չունեին: Ավելին, Գերմանիան, որ Օսմանյան կայսրության դաշնակիցն էր, խիստ դեմ էր հայերի անջատողական տրամադրություններին: Նրանք հետագայում Հայոց ցեղասպանության իրականացման հարցում աջակցեցին Օսմանյան կայսրության ղեկավարներին: Ուստի, ստեղծված իրավիճակում հազիվ թե որեւէ մեկն ընդդիմանար հայերի ցեղասպանությանը:

Չալալ Աֆշարն այնուհետեւ անդրադառնում է Եղեռնի կազմակերպիչներին եւ այդ հանցագործության եղանակներին ու նկարագրություններին: Նա հավելում է նաեւ, որ Հայոց ցեղասպանությունը թուրքերը պատճառաբանում են պատերազմի ընթացքում հայերի՝ Ռուսաստանին աջակցությամբ, բայց սա բնավ էլ համոզիչ պատճառ չէ, քանզի ինչպես նշվեց, Յեղասպանությունն սկսվել էր Արդուլ Համիդի օրոք, երբ պատերազմ չկար: Աֆշարը շեշտում է. «Ինչպես նշվեց, հայերը չէին ուզում ենթարկվել Հոմի պապին, քանի որ քրիստոնյաների շրջանում նրանք միշտ էլ լքված են եղել, ուստի չեն հովանավորվել»: Ապա շարունակում է. «Հայերը միաժամանակ առաջին բարենորոգիչներից են եղել: Իրանահայերը եւս բարենորոգչական հակումներ ունեին: Նրանք էին գլխավորում Մահմանադրական հեղափոխության մասնակից շատ կուսակցությունների ու խմբերի»:

Խնդրո առարկա հողվածն ավարտվում է «Պատմական իրողություն» ենթավերնագրով հատվածով, որտեղ հեղինակը գրում է. «Հայոց եղեռնն առկա փաստերով ու վկայություններով անժխտելի է: Եթե նման բան տեղի չի ունեցել, ապա Թուրքիայի կառավարությունը հետագայում ինչո՞ւ երբեք հակառակն ապացուցող փաստեր ու վավերագրեր չի ներկայացրել: Անգամ, եթե ընդունենք, որ հայ ծայրահեղ ազգայնականները, որոնք պարզ չէ, թե մինչ այդ որտեղ էին, երես թեքելով օսմանցիներից՝ միացել էին ռուսներին, արդյո՞ք մի քանի տոկոս հայերի այդօրինակ դիրքորոշումը թուրքերին իրավունք էր ընձեռում նրանց ցեղասպանության ենթարկելու: Արդյո՞ք այդ ազգայնականները

որ չէին կարող ներագդել նաեւ իրանահայության վրա: Մակայն հայերն Իրանում երբեւէ անջատողական ձգտումներ չեն ունեցել: Հետեւաբար՝ Թուրքիայում դրա համար լուրջ պատճառներ են եղել եւ դրանք միմիայն օսմանյան թուրքերի հալածանքներն ու ճնշումներն էին»:

Աֆշարը շեշտում է, որ 1915թ. Եղեռնի զոհերի թիվը որքան էլ լինի, այն պատմության մեջ կմնա որպես Յեղասպանություն: Միաժամանակ նա, վկայակոչելով որոշ փաստեր, նշում է, որ հայերը 20-րդ դարի սկզբում Անատոլիայի բնակչության 10 տոկոսն էին կազմում՝ մոտավորապես 1,5 միլիոն, ուստի՝ ճշմարտությանն ավելի մոտ կլինի, եթե ընդունենք, որ 600-800 հազար հայ է Եղեռնի զոհ դարձել:<sup>35</sup>

Հողվածի հեղինակը նշում է նաեւ, որ գլխավոր հարցը դեռեւս մնում է անպատասխան: Այն, որ Եղեռնն անհերքելի ճշմարտություն է, կասկածից վեր է, ինչի բացահայտումից Թուրքիայի իշխանությունները սարսափում են: Կարելի՞ է արդյոք այդօրինակ գաղտնապահությունն այլ կերպ մեկնաբանել:

«Շարդյանի» հողվածն ավարտվում է հետեւյալ նախադասություններով. «Տողերիս հեղինակի համար ընդմիշտ անպատասխան է մնացել հետեւյալ հարցը՝ Իրանի թուրքալեզուները, թեւ իրենց լիովին օսմանյան թուրքերից առաձնացնում են, սակայն հասկանալի չէ, թե ինչու Թուրքիայի թուրքերին պաշտպանելու համար կուրծք են ծեծում: Դեռեւս դատարկ չէ՞ն արդյոք ճշմարտության ու իրավունքի տեղերը»:

### Պարսիկ մտավորականների հողվածները՝ նվիրված Եղեռնի 91-րդ տարելիցին

Հայոց եղեռնի 91-րդ տարելիցի առիթով արտերկրում ապրող իրանցի զրադաշտականների հասարակական, մշակութային ինտերնետային «Իրաննամե» պարբերականի 2006թ. ապրիլի 21-ի համարում լույս է տեսել Շահին Մեփանթայի բավական ընդարձակ (10 էջ) հող-

<sup>35</sup> Ի դեպ, հողվածի հեղինակը թերեւս զոհերի քանակի հարցում հակասում է ինքն իրեն, քանզի արդեն նշել էր, որ 2,5 միլիոն հայերից մնացել էին ընդամենը 50 հազար, իսկ մնացածը զոհվել էր բռնագաղթել էին:

վածը: Այն գետեղված է պարբերականի առաջին էջում՝ «1914թ. ապրիլի 24-ի 91-րդ տարելիցի հիշատակին. Հայոց ցեղասպանությունը գորշ գայլերի ձեռքով» վերնագրով: Հոդվածի՝ «Ակնարկ հայ-իրանական փոխառնչությունների պատմությունից» հրապարակման մեջ հեղինակը ժամանակագրական կարգով հպանցիկ ներկայացրել է այդ փոխհարաբերությունները:

Հաջորդ՝ «Գորշ գայլերից մինչև երիտթուրքերը» ենթավերնագրով հատվածում Մեփանթան հակիրճ անդրադարձել է թուրքերի պատմությանը՝ նշելով, որ 6-րդ դարի չինական մատենագրությունները վկայում են Կենտրոնական Ասիայում թափառաշրջիկ թուրք ցեղերի մասին, որոնք, Ռուսաստանի տափաստաններում հայտնվելուց մինչև Եվրոպա հասնելը, իբրև խորհրդանիշ ընտրել էին գորշ գայլին: Նա շեշտում է, որ միջինասիական թուրքերն այդ մասին հետեւյալ առասպելն են պատմում՝ ավազակները գերեվարում են մի իշխանուհու, որին փրկում է գորշ գայլը: Իսկ իշխանուհին, ի նշան երախտիքի, ամուսնանում է գայլի հետ. նրանց սերունդները թուրքերն են: Միաժամանակ նա ընդգծում է, որ լինելով մարդու եւ գայլի խառնուրդ, նրանք տարբերվում են մյուս ազգերից: Մեփանթան հավելում է՝ թեւ այսօր ոչ ոք առասպելներին չի հավատում, սակայն թուրքերի գայլային հատկանիշների մասին վկայում է նրանց ողջ պատմությունը:

Հոդվածի «Գորշ գայլերը թուրքացնում են զրավյալ տարածքները» բաժնում հեղինակը շեշտում է, որ թուրքական պետությունն իր գոյության ողջ ընթացքում, մինչև երիտթուրքերի շովինիստական իշխանությունը, ջանք ու եռանդ չի խնայել «զրաված տարածքները թուրքացնելու» քաղաքականությունը կյանքի կոչելու, ոչ թուրք ազգերին ու ազգություններին ոչնչացնելու համար: Նա ընդգծում է, որ ռասիզմը, պանթուրքիզմն այնպիսի խոր արմատներ ունեն երիտթուրքերի, ավելի ստույգ՝ գորշ գայլերի գաղափարախոսության մեջ, որ իրագործեցին պատմության ընթացքում ամենախոշոր ցեղասպանություններից մեկը, ինչի ընթացքում ավելի քան 2 միլիոն հայ՝ կին, երեխա, ծեր ու երիտասարդ, ամենավայրագ ձեռով ոչնչացվեցին:

Հավելենք, որ Մեփանթան հոդվածի հաջորդ էջերում, վկայակոչելով տարբեր փաստեր ու փաստարկներ, ապացուցում է նշյալ թվաքա-

նակի՝ ճշգրտությունը: Հեղինակի կարծիքով՝ պանթուրքիստների, պանթուրանիստների (գորշ գայլերի) նպատակը հայերին վերացնելն էր, քանզի Հայաստանը պանթուրքիստների երեւակայական քարտեզի կենտրոնում էր: Ուստի, հայերին վերացնելու միջոցով թուրքաբնակ տարածքների միջեւ աշխարհագրական, քաղաքական, տնտեսական, ռազմական, հասարակական եւ մշակութային միասնություն էր ստեղծվելու:

«Հայոց եղեռնի ողբերգությունը» ենթավերնագրով հատվածում հեղինակը խոսում է գորշ գայլերի՝ հայերի ոչնչացման քաղաքականության, ծրագրերի մասին՝ սկսած սուլթան Աբդուլ Համիդից, այլ կերպ ասած՝ 1860-1922թթ.: Նա անդրադառնալով Մեծ եղեռնի ծրագրերի ու հայերի ոչնչացման մեթոդներին՝ ներկայացրել է 13 ամենաանմարդկայինները, որոնք կիրառել են Եղեռնը ծրագրողները՝ Մոհամեդ Թալեաթ փաշան (ներքին գործերի նախարար), Իսմայիլ Էնվեր փաշան (ռազմական նախարար) եւ Ահմեդ Ջեմալ փաշան (ծովուծի նախարար), ովքեր իրենց չարաբաստիկ ծրագրերն իրականացնելու նպատակով սերտորեն համագործակցել են Գերմանիայի հետ՝ ապավինելով նրա աջակցությանը: Մեփանթան նաեւ փաստեր է ներկայացնում այն մասին, որ անմարդկային, գազանաբարո այդ ծրագրերի իրագործողն ու հեղինակը թուրքական պետությունն է եղել:

Օսմանյան պանթուրքիստները Հայոց եղեռնը «սուրբ նպատակ» էին համարում եւ իրենց գործունեությունն այդ ուղղությամբ կոչում էին «հայկական հարցի վերջնական լուծում», «պայքար հայկական վտանգի դեմ», «հայերի բնաջնջման հարցի օրինավոր արծարծում» եւ «հանուն ապագայի բարեկեցության»: Այդպիսով՝ պատճառաբանում, անգամ սրբացնում էին իրենց գործունեությունը: Սակայն, ցավոք, այդ գործողությունները տեղի էին ունենում Օսմանյան կայսրության ազգային այլ փոքրամասնությունների լռության, երբեմն էլ նրանց համագործակցության պայմաններում, իսկ մեծ տերությունները, հանուն սեփական շահերի, աչք էին փակում այդ դառն իրականության հանդեպ: Մեփանթան շեշտում է, որ պանթուրքիստների ոճրագործությունների նկատմամբ տարածաշրջանի փոքրամասնությունների եւ այլ երկրների անարդարացի, անպատասխանատու վերաբերմունքը հող պատ-

րաստեց հետագա ցեղասպանությունների համար: Այդ են վկայում հրեաների նկատմամբ ֆաշիստների, քրդերի ու շիաների՝ Սադամ Հուսեյնի, Աֆղանստանում շիաների ու ազգային փոքրամասնությունների՝ թալիբների՝ եւ այլ ցեղասպանությունները:

Հողվածի ավարտին հեղինակը նշում է, որ այսօր էլ Թուրքիայի ռասիստական պետությունը, հերքելով Հայոց ցեղասպանությունը, տասնամյակներ շարունակ լուրջ ջանքեր է գործադրում պատմական փաստերի խեղաթյուրման, Հայոց եղեռնի ժխտման ուղղությամբ: Միաժամանակ, քաղաքակրթության հավակնություններով, ձգտում է դառնալ ԵՄ անդամ, մինչդեռ գրավյալ տարածքներում վերացնում է հայոց պատմության հետքերը. ոչնչացնում է պատմական հուշարձան-կոթողները՝ հինավուրց եկեղեցիներն ու սեպագիր արձանագրությունները: Միեւնույն ժամանակ, Կիպրոսում ոտնահարում է հույների իրավունքները, բորբոքում է Արանի (Ադրբեջանի) եւ Ղարաբաղի միջեւ սահմանային տարաձայնությունները, Թուրքիայում ճնշում է քրդերին: Բացի այդ, Թուրքիան նաեւ հաշվարկված եւ մտածված քայլերով, իր բացահայտ եւ գաղտնի գործակալների միջոցով, գողանալով ու խեղաթյուրելով, թուրքական ծագումով ցեղերի համար պատմություն է հորինում: Հարեւան երկրների պատմական տարածքներում հայտնաբերված գտածոների կողպուտով ու ոչնչացմամբ ձգտում է կյանքի կոչել իր նենգապատիր նպատակները, տարածաշրջանի հնագույն, խոր արմատներ ունեցող մշակույթների ոչնչացմամբ հեղինակություն ձեռք բերել:

### «Հայաստանը 20-րդ դարի առաջին ողբերգության մեջ»

Հայոց ցեղասպանության 92-րդ տարելիցի առիթով իրանական մամուլում հրապարակված նյութերից թերեւս ամենաուշագրավն իրանցի հայտնի միջազգայնագետ, պրոֆեսոր Դավիդ Հերմիդաս Բավանդի հոդվածն է, որը լույս է տեսել «Փեյման» («Պայման») եռամսյա մշակութային պարբերականում, 2007թ. գարնան 39-րդ համարում: Բավական ծավալուն հոդվածը (16 էջ), որն ուշագրավ է հեղինակի յուրօրինակ մեկնաբանություններով ու տեսակետներով, ներկայացնում ենք համառոտակի:

«Հայաստանը 20-րդ դարի առաջին ողբերգության մեջ» վերնագրով հոդվածը կազմված է նախաբանից եւ 3 ենթավերնագրերից: Բավանդը նախաբանում գրում է, որ ցեղասպանությունն անմարդկային մտքի, ապականված գաղափարների արգասիք է, ինչը պատմության ընթացքում տարբեր կերպ է դրսևորվել: Երբեմն այն իրականացրել են հաղթողները՝ պարտվողների դեմ, երբեմն՝ բնիկների ոչնչացմամբ՝ նրանց հայրենիքը զավթելու նպատակով, երբեմն էլ կատարել են պատմական հաշվեհարդարների, ցեղապաշտական դրդապատճառներով, կրոնական մոլեռանդության հողի վրա եւ այլն:

Այսօր ցեղասպանությունը՝ եղեռնը, միջազգային մակարդակով ամենազագրելի ոճրագործությունն է համարվում: Այդ է պատճառը, որ ցեղասպանությունը, թեւ մարդկության դեմ իրագործվող ոճրագործություններից ամենադատապարտելին է, սակայն, հաշվի առնելով դրա ողբերգական հետեւանքների ծավալներն ու խորությունը, միջազգային ոճրագործությունների՝ պատերազմական, զինված հարձակումների, ճորտատիրական համակարգի պարտադրման, գաղութացման եւ այլնի ցանկում առաջին տեղում է:

Ցավալի է, որ Առաջին աշխարհամարտի հաղթող գերտերությունները, որոնք նոր աշխարհակարգի նախագծողներն էին, թեւ խիստ կարեւորում էին նոր արժեքներն ու սկզբունքները, ինչպիսիք են՝ ազատությունը, ժողովուրդների եւ ազգերի ճակատագիրը, սակայն 1915-16թթ. հայերի դեմ (որոնք 2700 տարի ապրել էին իրենց հայրենի երկրում՝ Արեւմտյան Հայաստանում) օսմանյան կառավարության իրականացրած ցեղասպանության ժամանակ գործնականում լռեցին կամ բավարարվեցին ցավակցելով ու անիրականանալի որոշումներ ընդունելով: Հենց այդօրինակ անուշադրության ու անտարբերության հետեւանք պետք է համարել Երկրորդ աշխարհամարտի ընթացքում տեղի ունեցած մարդկային ողբերգությունները, որոնց զոհերի թիվը շուրջ 60 միլիոն է:

Առաջին եւ Երկրորդ աշխարհամարտերից հետո նոր աշխարհակարգերի վերաբերյալ որոշում ընդունողների ու նախագծողների կարճատեսության, թերացումների հետեւանք են թերեւս հետագայում տեղի ունեցած ցեղասպանությունները՝ Ռուանդայում, Բոսնիայում եւ

Հերցեգովինայում: Ավելին, հենց այդօրինակ գործելակերպի հետևանքն է այն, որ միջազգային իրավունքի փաստաթղթերում ամրագրված սկզբունքների՝ ՄԱԿ-ի խարտիայի՝ միջազգային ռճրագործությունների արգելումը, մարդու իրավունքների եւ զանգվածային ոչնչացման արգելքի կոնվենցիաների եւ այլնի առկայությամբ, դեռես այդօրինակ ռճրագործություններ կատարվում են: Թող որ ողբերգական ռճրագործությունների հիշատակումը, ինչպիսիք ավելի քան մեկ միլիոն հայերի անողոր ոչնչացումը, շուրջ 600 հազարի տարագիր դառնալն ու դրա ողբերգական հետևանքներն են, միջազգային հանրությանը հուշի իր կարեւոր պարտականությունների մասին, որոնց կատարմամբ պետք է գոհացնի Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգորդներին, այլես այդօրինակ ռճրագործությունները չկրկնվելու համար լուրջ քայլեր կատարի»:

Հիշյալ հողվածի հաջորդ երկու ենթավերնագրերն են՝ «Բռնությունների քաղաքականությունը պատմական դարաշրջանում» եւ «Բռնությունների քաղաքականությունը միջնադարում»: Առաջինում Բավանդը, ներկայացնելով Հին աշխարհում տեղի ունեցած բարբարոսությունները եւ մարդկանց զանգվածային ոչնչացման դեպքերը, կարեւորել է հայ-իրանական փոխհարաբերությունները՝ նշելով, որ դրանք, մինչեւ Հայաստանի քրիստոնեություն ընդունելը, նույն ծագումով երկու հարեւան երկրների մշակութա-կրոնական ընդհանրությունների պատճառով ավելի սերտ եւ բարեկամական էին: Մակայն, հետագայում, գրադաշտական Մասանյանների եւ քրիստոնյա հայերի միջեւ փոխհարաբերությունների բնույթը փոխվեց, մանավանդ այն բանից հետո, երբ Հռոմեական կայսրությունը եւս ընդունեց քրիստոնեությունը: Հերմիդաս Բավանդն ուշադրություն է դարձրել հայ-իրանական դիցաբանության ընդհանրություններին, խոսել է նաեւ քրիստոնեության տարածման եւ այդ ոլորտում հայերի բարենորոգչական շարժումներին, շեշտել է, որ Պավլիկյան շարժումը, ծագելով Հայաստանում, հետագայում տարածվել է Եվրոպայում:

Միջնադարին վերաբերող հատվածը Հերմիդաս Բավանդն սկսում է արաբների արշավանքներից եւ ընդգծում, որ իսլամական կայսրության կազմավորումից հետո իրանցիներն ու հայերը գրեթե նույն ճակատ

տագրին արժանացան: Այնուհետեւ հավելում է, որ արաբ բռնապետ տիրակալները հաճախ երկրի կառավարման եղանակներից էին համարում զանգվածային ջարդերը: Հողվածի հեղինակն անդրադարձել է նաեւ արաբների տիրապետության առաջին դարում բիրտ իշխանության դեմ Իրանում տեղի ունեցած բազմաթիվ շարժումներին ու ապստամբություններին: Նա հիշատակել է նաեւ Հայաստանում սասունցիների եւ Բագրատունիների ապստամբությունները՝ նշելով, որ դրանք պատճառ դարձան, որպեսզի 9-րդ դարի երկրորդ կեսը շրջադարձային լինի հայ-արաբական փոխհարաբերությունների համար: 855թ. խալֆաթը հարկադրված Աշոտ Ա Բագրատունուն ճանաչեց իբրեւ Հայաստանի, Վրաստանի եւ Արանի (Աղվանքի) իշխանաց իշխան, այլ կերպ՝ ճանաչեց Բագրատունյաց հարստությունը՝ որպես Հայաստանի թագավորական արքայատոհմ: Իրադարձությունների այդօրինակ զարգացումները արաբներին հարկադրեցին մեղմել իրենց քաղաքականությունն իրանցիների եւ հայերի նկատմամբ:

Նա գրում է նաեւ, որ, արաբների հարձակումներից զատ, հայերն ու իրանցիները խիստ տուժել են նաեւ մոնղոլ-թաթարական ավերիչ արշավանքներից, որոնց քաղաքական մշակույթում ցեղասպանությունը կառավարման ձեւերից էր: Նրանք համոզված էին, որ իրենց անվտանգության երաշխիքը թշնամու, հակառակորդի լիակատար ոչնչացումն է: Բավանդն ընդգծում է. «Ցավալին այն է, որ կառավարման այդ ձեւը, իբրեւ չարաբաստիկ ժառանգություն, կիրառել են նաեւ մոնղոլ-թաթարներին հաջորդած տիրակալները»:

Նա գրում է, որ Իրանում Մաֆավիների իշխանության գալուց ի վեր հայ-իրանական հնամենի փոխհարաբերությունները նոր փուլ են քեւակոխում: Հեղինակը, որոշ մանրամասներ բերելով տվյալ ժամանակաշրջանի իրադարձությունների ու փոխհարաբերությունների մասին, հանգամանորեն ներկայացնում եւ կարեւորում է իրանահայերի դերն այդ երկրի քաղաքական, տնտեսական, ժամանակակից բանակի ձեւավորման եւ դիվանագիտության ոլորտներում, ինչպես նաեւ Իրանի Սահմանադրական հեղափոխության մեջ:

Իրանցի միջազգայնագետի հողվածի «20-րդ դարի առաջին ողբերգությունը» հատվածը գլխավոր եւ մեզ առավել հետաքրքրող մասն է:

Նա նախ անդրադառնում է հայերի ծագմանը, պատմական Հայաստանին, ապա՝ հայերին բնորոշ առանձնահատկություններին, մասնավորապես՝ հանուն իրենց մշակույթի եւ ազգային ինքնության պահպանման նրանց անձնուրաց պայքար մղելու հատկանիշներին:

Անցնելով բուն նյութին՝ նա նշում է. «Դեռեւս 19-րդ դարի սկզբներից Հայաստանը հայտնվել էր օսմանյան Թուրքիայի եւ Ռուսաստանի գերիշխանության տակ: Օսմանյան կայսրության հայկական վիլայեթներն էին Վանը, Էրզրումը, Տրապիզոնը եւ Բիթլիսը: Հայերն Օսմանյան պետության զարգացմանն ընդհանրապես, իսկ առետրի զարգացման հարցում, մասնավորապես, նշանակալից դեր ունեին: Բացի այդ, հանուն երկրում խոհրդարանական կարգեր հաստատելու հասարակական շարժումներում թեւեւ երկրորդական, բայց եւ այնպես խիստ դրական դեր էին խաղում: Քրիստոնյաների ներգրավումը բանակում արգելված եւ խիստ սահմանափակ էր, սակայն կրթության ոլորտում ոչ մահմեդականների մակարդակն անհամեմատ բարձր էր: 1914թ. Օսմանյան կայսրությունում 1800 հունական դպրոց կար՝ 185 հազար աշակերտով, 800 հայկական դպրոց՝ 81 հազար աշակերտով: Հայ մտավորականները մշտապես համագործակցում էին ազատությունը նախընտրող թուրքերի հետ, ովքեր, հանուն երկրում ինչ-որ չափով ժողովրդավարական վարչակարգ հաստատելու, պայքարում էին ընդդեմ միահեծան միապետության: Մյուս կողմից՝ քանի որ օսմանյան կայսրության քրիստոնյաները այդ երկրի եւ եվրոպական մի շարք երկրների (Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Ավստրիայի) միջեւ կնքված պայմանագրի համաձայն՝ վերջիններիս հովանու ներքո էին, ապա քրիստոնյաների ազատագրական որեւէ շարժում կենտրոնական իշխանությունը կասկածելի էր դիտում, ուստի ճնշում էր առանձնակի դաժանությամբ: Ահավասիկ, սուլթան Աբդուլ Համիդի օրոք՝ 1894-96թթ. հայերի դեմ գործադրված ճնշումներն այն աստիճանի դաժան ու արյունալի էին, որ եվրոպացիները նրան «Արյունարբու» կամ «Կարմիր» մականունը տվեցին:

Քրիստոնյա հպատակների նկատմամբ իրագործվող գազանաբարո խտրականության պատճառով նրանք, ստեղծված վիճակից դուրս գալու նպատակով, սատարում էին ազատագրական բոլոր շարժումներ-

րին: Ահա թե ինչու «Իթքիհատ վե քարաքքիի» ներկայացրած քաղաքական-հեղափոխական ծրագրերն արժանացան քրիստոնյա փոքրամասնությունների, մասնավորապես՝ հայերի աջակցությանը:

1889թ. ռազմաբժշկական քոլեջում, Աբդուլ Համիդի իշխանության դեմ ձեռավորվեց մի շարժում, որը մեծ արագությամբ տարածվեց նաեւ Ստամբուլի մյուս քոլեջներում: Շարժման մասնակիցներն այն անվանեցին «Իթքիհատ վե քարաքքի»: Սակայն դավադրությունը բացահայտվելուց հետո շարժման առաջնորդներից շատերը, իբրեւ վտարանդի, մեկնեցին Փարիզ, Ժնև եւ Կահիրե, որպեսզի այնտեղից սուլթան Աբդուլ Համիդի դեմ հեղափոխության համար հող նախապատրաստեն: Շարժման կարեւոր դեմքերից էին Մուրադ բեյը, Ահմեդ Ռեզան եւ Պրինց Մաբահեդդինը: Մուրադ Բեյի ազատագրական տեսակետները խարսխված էին իսլամական արժեքների վրա, ինչի պատճառով նա առանձնացվեց մյուս վտարանդիներից, իսկ 1897թ. վերադարձավ Ստամբուլ: Ահմեդ Ռեզայի (ով Փարիզում լույս տեսնող «Մեսվերեթ»<sup>36</sup> պարբերականի խմբագիրն էր), բարենորոգչական գաղափարները հիմնված էին պոզիտիվիզմի վրա: Նա կողմնակից էր հզոր կենտրոնական իշխանության հաստատմանը, որը լիովին գերծ կլիներ օտար տարրերից: 1902թ. Փարիզում «Իթքիհատ վե քարաքքիի», համագումարում հակասական տեսակետների բախման հետեւանքով, շարժումը տրոհվեց: Թագաժառանգ Մեհմեդ Սաբահեդդինը, հակադրվելով Ահմեդ Ռեզային, հայերի բազմակողմանի աջակցությամբ ու հովանավորությամբ, կողմնորոշվեց դեպի ապակենտրոնացված վարչակարգի հաստատումը, իսկ եվրոպացիների սատարմամբ՝ քաղաքական, տնտեսական եւ հասարակական բարենորոգչություն: Իր հայ համախոհների հետ հիմնադրեց քաղաքական-տնտեսական League of Private Initiative and Decentralization<sup>37</sup> կազմակերպությունը: Մինչդեռ ոմանք անհնար էին համարում Աբդուլ Համիդին գահընկեց անելը հեղափոխության ճանապարհով՝ առանց զինվորականների աջակցության: Դա էր պատճառը, որ երիտթուրքերի 1908թ. հեղափոխությունը սաղմնավորվեց Մակեդոնիայում տեղակայված օսմանյան բանակի 3-

<sup>36</sup> Mesveret

<sup>37</sup> Մասնավոր նախաչեռնության և ապակենտրոնացման ընկերություն:



րդ կորսություն: Հենց այստեղ էլ բանակի սպաներն «Իթթիհատ վե քարաքքի» կոմիտեից առանձին ու անկախ որոշում ընդունեցին:

Մակայն առ այսօր դեռ պարզ չէ, թե Մակեդոնիայում որոշումներն ընդունել էին միայն զինվորականների համագործակցությամբ եւ կոորդինացմամբ, թե՞ մասնակցել էին նաեւ անկախ եւ ընդդիմադիր այլ խմբեր, ինչպես, օրինակ, դերվիշության հետնորդները կամ մասունական օթյակները: 1909թ. Մտամբուլում զինվորականների ապստամբությունը ճնշվեց, իսկ նույն թվականի ապրիլին Մակեդոնիայից բանակի The Action Army (Գործող ուժ) անվամբ միավորումները, Մահմուդ Սիբկաթ փաշայի հրամանատարությամբ, շարժվեցին դեպի Մտամբուլ, Արդուլ Համիդին հեռացրին գահից, ապա լուրջ բարեփոխումներ կատարեցին Մահմանադրության մեջ՝ խորհրդարանին տալով ընդարձակ լիազորություններ:

Իրագործված հեղաշրջումն ու Մահմանադրության բարեփոխումները ողջունեցին մտավորականները, ազգային փոքրամասնությունները, մասնավորապես՝ հայերը: Իրադարձությունների այդօրինակ ընթացքը պատճառ դարձավ, որ հայկական ակտիվ կուսակցությունները հրաժարվեն Օսմանյան կայսրության դեմ պայքարից եւ իրենց ուշադրությունը կենտրոնացնեն Իրանում տեղի ունեցող զարգացումներին. սկսեցին ջանքեր գործադրել իրանցի հեղափոխականներին աջակցելու համար<sup>38</sup>, քանզի համոզված էին, որ Իրանում Մահմանադրական հեղափոխության հաղթանակը դրական ազդեցություն կունենա հարեւան երկրների, մասնավորապես Օսմանյան կայսրության վրա: Բացի այդ՝ նրանք հավատացած էին, որ Մահմանադրական հեղափոխության հաղթանակն Իրանում կնպաստի հայերի միավորմանը Անդրկովկասի ու Օսմանյան կայսրության մահմեդականներին հետ: Մինչդեռ

<sup>38</sup> Իրանում Մահմանադրական հեղափոխությունը հաղթանակել էր 1906թ., օրինադիր իշխանությունը գործում էր: Մակայն Մոհամմեդ Ալի շահն իրանում տեղակայված ռուսական զորամիավորումների աջակցությամբ հրեպակոծեց խորհրդարանը՝ կասեցնելով նրա գործունեությունը, երկրում բռնապետական կարգեր հաստատեց, ինչի դեմ ազատագրական, Մահմանադրական հեղափոխության կողմնակիցները լայնածավալ պայքար սկսեցին ընդդեմ միապետի, որը 1909թ. հուլիսի 16-ին պսակվեց հաջողությամբ:

նրանք խիստ սխալվում էին, քանի որ այդ կարծիքին չէին Մակեդոնիայում որոշում ընդունած քաղաքական ու զինվորական առաջնորդները: Նրանք հայերի առնչությամբ միանգամայն այլ՝ ցեղասպանության նախագիծ էին մշակել, որը պետք է իրագործվեր պատեհ առիթով»:

Հեղինակը շեշտում է, որ 1914թ. Առաջին համաշխարհային պատերազմը եւ երիտթուրքերի՝ Գերմանիա-Հունգարիա-Ավստրիա դաշինքի մեջ մտնելը հարմար առիթ ստեղծեցին իրենց անմարդկային նպատակներն իրականացնելու համար: Երիտթուրքերը սին, անհիմն պատրվակներով 1915-16 թթ. Արեւմտյան Հայաստանում ու Կիլիկիայում սկսեցին հայերի զանգվածային ջարդերը: Այդ ոճրագործությունների ընթացքում ավելի քան մեկ միլիոն հայեր կոտորվեցին, ավելի քան 600 հազարը Միջագետքի անապատներում քշվեցին մահվան հորձանուտ, 300 հազարն էլ ապաստան գտան Ռուսաստանում:

Հերմիդաս Բավանդը շարունակում է. «Չարմանալի է, որ մարդկային այդ ահավոր ողբերգության ժամանակ հզոր տերություններից մեկի՝ Գերմանիայի զինված ուժերը ներկա էին Օսմանյան կայսրությունում, սակայն ոճրագործությունները կասեցնելու նպատակով այդ երկիրը որեւէ քայլ չկատարեց: Կրկնակի զարմանք է պատճառում նաեւ այն, որ հաղթանակած տերություններն էլ Հայաստանի ճակատագրի հանդեպ լուրջ վերաբերմունք չցուցաբերեցին՝ ընդունելով անիրագործելի որոշումներ: 1918թ. հոկտեմբերի 30-ին, Մուդրուսի հաշտության պայմանագիրը, որը Լոնդոնն ստորագրեց, դաշնակիցների կողմից հայերին եւ Արեւմտյան Հայաստանին հասցված ահռելի վնասների անտեսման առաջին դրսևորումներից էր: Քանզի, ըստ նշյալ պայմանագրի, Թուրքիան պարտավորվում էր բոլոր ռազմագերիներին, այդ թվում՝ նաեւ հայ քաղաքական բանտարկյալներին՝ իբրեւ դաշնակիցների ռազմագերիների, ազատ արձակել եւ զորքերը դուրս բերել Հարավային Կովկասից: Մակայն որեւէ աննշան ակնարկ անգամ չէր արվել Արեւմտյան Հայաստանի ապագայի կարգավիճակի մասին»:

Հեղինակն այնուհետեւ բավական մանրամասնորեն ներկայացնում է Փարիզի Խաղաղության համաժողովը և դրա արդյունքները. Ման Ռեմոյի միջազգային համաժողովը եւ Մերի պայմանագիրը: Այս

առնչությամբ նա ընդգծում է. «Սակայն քաղաքական զարգացումների ընթացքն արգելակեց Սերի պայմանագրի 88-89-րդ հոդվածների կյանքի կոչումը: Եվ այդպիսով Հայաստանի Հանրապետությունը ոչ միայն զրկվեց Արեւմտյան Հայաստանի տարածքներից, այլև, 1921թ. Լենին-Աբաբուրբ բարի դրացիության եւ բարեկամության մասին ստորագրված պայմանագրի համաձայն, Հայաստանը կորցրեց նաեւ Կարսի եւ Արդահանի նահանգները, որոնք նախապես բաժանվել էին Թուրքիայից»:

Հոդվածագիրը, խոսելով Լոզանի պայմանագրի մասին, հավելում է. «1922թ. նոյեմբերին տեղի ունեցած Լոզանի համաժողովում վերանայվեցին Սերի պայմանագրի հոդվածները՝ հօգուտ Թուրքիայի: Քանզի տնտեսական ու քաղաքական ազահությունների պատճառով իրավիճակը զարմանալիորեն փոխվել էր ի նպաստ թուրքերի: Ստեղծված իրավիճակում նշանակալից դեր ունեցան հետեւյալ 3 գործոնները՝ ա) Թուրքիայի ազգային բանակի հաղթանակը, բ) Հայաստանի հարցում պտավել շահագրգիռ կողմերից մեկի՝ Ռուսաստանի բացակայությունը: Մինչդեռ վերջինիս համագործակցությունն անիրաժեշտ էր թվում՝ ըստ Սերի պայմանագրի, մինչեւ Երզնկա ձգվող սահմաններով անկախ Հայաստան ստեղծելու մասին հոդվածների իրագործման համար, գ) Թուրքիայի դիվանագիտության pley-off-ն էր, որով այդ երկիրը կարողացավ ի շահ իրեն օգտագործել հաղթանակած երկրների միջեւ առկա տարաձայնությունները, մրցակցությունն ու տնտեսական շահերի կարետրումը»:

Հոդվածի եզրափակիչ հատվածում իրանցի միջազգայնագետն ընդգծում է. «Կասկածից վեր է, որ Սերի պայմանագիրը հայերի հիշողության մեջ թարմ է, ուստի ապագա բանակցություններում դրան հենվելն անիրաժեշտ են համարում, ինչպես ավելի քան մեկ միլիոն զոհվածների եւ շուրջ 900 հազար բռնազաղթած տառապալների ողբերգությունը շարունակում է մնալ բաց վերք: Ահա թե ինչու, յուրաքանչյուր տարի տարբեր երկրներում, տարբեր միջոցառումներով հայերը նշում են Հայոց ցեղասպանության տարելիցը: Նրանք այդ հարցը բաց են համարում, որովհետեւ մարդկության դեմ կատարված ոճրագործությունը, մասնավորապես ցեղասպանությունը, վաղեմություն չի ճա-

նաչում: Այդ հարցը պետք է արժանանա միջազգային հանրության եւ հատկապես մարդկային այդ ողբերգության հեղինակների ժառանգորդ պետությունների ուշադրությանը: Անշուշտ, ողբերգական այդ իրադարձությունների առնչությամբ խոստովանությունը, ներողամտություն հայցելը եւ, ի վերջո, նյութական ու բարոյական փոխհատուցումը, կրեթեսացնեն ողբերգություն ապրածների սերունդների ուսերին ծանրացած բարոյական բեռը եւ նպաստավոր հող կստեղծեն Հայաստան-Թուրքիա հաշտության, խաղաղ գոյակցության եւ համագործակցության համար: Պատմաաշխարհագրական իրողությունների հրամայականով տարբեր ազգեր հարկադրված են ապրել միմյանց հարեանությամբ: Ուստի ցանկալի է, որ անցյալի մեղքերը, սխալները, դատը եւ ողբերգական իրադարձությունները հանձնվեն պատմությանը եւ ինտեգրացման ու համագործակցության ուղիով ընթանան առաջ:

Հոդվածը լույս է տեսել Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի «Հայացք Երեւանից» Հայոց մեծ եղեռնի 80-րդ տարելիցին նվիրված հատուկ թողարկման մեջ (տարի 1, թիվ 3, 1995թ.)

Համաթուրքականության գաղափարախոսական ուղղվածությունը եւ հայերի ցեղասպանությունն օսմանյան Թուրքիայում

Հայոց Մեծ եղեռնի իրականացման գլխավոր գործոններից մեկը համաթուրքականությունն է, որը ձեւավորվել է հիմնականում Մեծ Բրիտանիայում ու Ռուսաստանում եւ, «ներմուծվելով» օսմանյան Թուրքիա, վերածվել ազգային իդներն արտահայտող գաղափարախոսության: Ռուսաստանում համաթուրքականությունը սկզբնավորվել է XIX դարի երկրորդ կեսին, հիմնականում թաթարաբնակ Կազան եւ Ռոֆա քաղաքներում: Այստեղ հիմնադրված «Թուրք յորդու» եւ «Թուրք օջախի» (թուրքական օջախներ) համաթուրքական կազմակերպությունները XX դարի սկզբներին տեղափոխվեցին Թուրքիա, մասնավորապես՝ Կոստանդնուպոլիս, Մալոնիկ, Անկարա եւ վերածվեցին երիտ-

թուրքերի գաղափարական զինանոցի ու ամենացանկալի հանդիպավայրի, որտեղ ծրագրվում էին նրանց քաղաքական մեքենայություններն ու դավադրությունները:

Համաթուրքականության հայր է համարվում գրականագետ-հրապարակախոս Իսմայիլ Կասպիրիանսկին (1851-1914): 1879թ. Կասպիրիանսկին Բախչիսարայում հիմնադրեց «Թերջուման» պարբերականը, որտեղ նա եւ իր համախոհները հանդես էին գալիս կրոնամշակութային քարեփոխումների իրականացման եւ անգրագիտության դեմ պայքարի կոչերի քողի տակ: Նրանց գլխավոր նպատակը կրոնափոխության եւ ուժացման վտանգից Ռուսաստանի թուրքալեզու մահմեդականներին փրկելն էր: Շեշտը դնելով նրանց կրոնական, լեզվական եւ մշակութային ընդհանրությունների վրա՝ Կասպիրիանսկին առաջ է քաշել Ռուսաստանի «թուրքերի» միավորման գաղափարը, որը կարճ ժամանակում լայն ընդունելություն գտավ Ռուսաստանի մահմեդականների շրջանում եւ վերածվեց մշակութային ու քաղաքական կարեւոր ուժի: Մյուս կողմից, խոսքն ուղղելով Ռուսաստանի ղեկավար շրջանակներին՝ Կասպիրիանսկին ընդգծում էր, որ կայսրության ներսում թուրքական ազգերն ու ազգությունները Ռուսաստանի բնական դաշնակիցն են, եւ որ ցարական պետությունը, ապավինելով իր դաշնակիցներին, հնարավորություն կունենա էլ ավելի ընդարձակելու եւ հզորացնելու կայսրությունը:

Թեեւ 1900թ. համաթուրքականությունը Ռուսաստանում արդեն վերջնականապես ձեւավորված դոկտրին էր, բայց Թուրքիայում սկզբնական շրջանում ոչ միայն այդ գաղափարախոսությունն ընդունելություն չգտավ, այլեւ մերժվեցին եվրոպացի արեւելագետ-թուրքագետների տեսակետները, այդ թվում՝ նաեւ անգլիացիների՝ համաթուրքականության հիմնադիրներից Արմինիուս Վամբերիի<sup>39</sup> եւ սրբ Դենիս

<sup>39</sup> Արմինիուս Վամբերին Մեծ Բրիտանիայի ԱԳ նախարարության աշխատակից էր: 1856թ. Արեւելք կայսրած առաջին նամսիտությունների ընթացքում, Կոստանդնուպոլսում օսմանյան իշխանությունների հետ խոսել է Բուդապեշտից մինչեւ Խաղաղ օվկիանոս փարածված թուրքական ծագում ունեցող ցեղերի մասին, սակայն նրան փաստակերպներն ընդունելություն չեն գտել, իսկ որոշ իշխանավորներ անգամ վիրավորվեցին, երբ

Ռասի<sup>40</sup> հայեցակետերը:

Եթե Ռուսաստանում համաթուրքականության ձեւավորումը բացատրվում է, ինչպես նշվեց, կայսրության՝ ծագումով թուրքական ցեղերին փրկելու անհրաժեշտությամբ, Եվրոպայում այդ գաղափարախոսության առաջացումը տարբեր մեկնաբանություններ ունեցավ: Օրինակ՝ հայտնի է, որ հրեաները սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդին դիմել էին Պաղեստինը հրեաներին «հանձնելու» խնդրանքով եւ մերժվել: Հրեաները սուլթանից վրեժխնդիր լինելու եւ Օսմանյան կայսրությունը տապալելու մտադրությամբ ստեղծեցին համաթուրքականությունը, որի երեք հայտնի հիմնադիրները՝ անգլիացի Արմինիուս Վամբերին, հունգարացի Դեյվիդ Լեոն Զոհենը եւ ֆրանսիացի Արթուր Լոմենին (երեքն էլ՝ ծագումով հրեա) հաջողեցրին իրենց աշխատություններով թուրքերին համոզել, որ նրանք Արեւելքում արտոնյալ ազգ են<sup>41</sup>:

Միաժամանակ, համաթուրքականության գաղափարախոսությունն ի սկզբանե իր վրա բեւեռեց մրցակից մեծ տերությունների ուշադրությունը: Նրանք աշխատում էին համաթուրքականությունը ծառայեցնել իրենց նպատակներին: Այսպես, կարեւորելով այն՝ Մեծ Բրիտանիան ցանկանում էր արգելակել Ռուսական կայսրության առաջխաղացումը Կենտրոնական Ասիա եւ արագացնել նրա փլուզումը: Դեռեւս 1842թ. Թուրքիայի բանակի հրահանգիչ, գերմանացի գնդապետ Ֆոն Մոլտկեն Կոստանդնուպոլսին առաջարկում էր ընդունել համաթուրքականությունը եւ ուշադրությունը կենտրոնացնել Ասիայի ուղղությամբ՝ միլիոնավոր թուրքերի միավորելով մեկ դրոշի ներքո: Թեեւ այս առաջարկությունն այն ժամանակ բնավ ուշադրության չարժանացավ, սակայն Բալկանյան պատերազմներից (1912-13թթ.) հետո Մոլտկեի առաջարկը դարձավ երիտթուրքերի քաղաքականության գլխավոր՝ գիծը:

*նրանց, իրենց խոսքերով, դասեցին «քաղաքակրթությունից զուրկ քուլտր ցեղերի շարքը, ինչպես դրըզներն ու բաբարները»:*

<sup>40</sup> Սրբ Դենիս Ռասը 1918թ. Մեծ Բրիտանիայի ԱԳ նախարարության փեղեկաբանության բաժնի հրատարակչության լույս ընծայած «Ուղեգիրք թուրանցիների եւ համաթուրքականության վերաբերյալ» գրքույկի հեղինակն է: Գրքույկը գնահատվում է իբրեւ համաթուրքականության գաղափարներին ծանոթանալու եւ դրանցից օգտվելու ուղեցույց:

<sup>41</sup> Էքքելասթ, 26 ապրիլի, 1995:

Երիտթուրքական առաջին՝ «Միություն եւ առաջադիմություն» կազմակերպությունը հիմնադրել են մի խումբ ուսանողներ 1889թ., Կոստանդնուպոլսում: Նրա գործունեությանը մասնակցում էին տարբեր ազգերի ներկայացուցիչներ, որոնց նպատակը սուլթան Համիդ Երկրորդի բռնատիրական վարչակարգի տապալումն էր: Սակայն կազմակերպությունը բացահայտվեց եւ ոչնչացվեց: Իսկ 1891թ. Ժնևում ստեղծվեց համանուն մի կազմակերպություն, որը քիչ անց տեղափոխվեց Փարիզ: 1906թ. Մալոնիկում վերոհիշյալ կազմակերպության անդամները հիմնեցին «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեն՝ «Հավասարություն կայսրության բոլոր ազգերի համար» կարգախոսով: Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը, հավատալով երիտթուրքերի ժողովրդավարական կարգախոսներին, դեռևս 1903թ. Փարիզում համագործակցեց նրանց հետ: Հարկ է նշել, սակայն, որ դաշնակցականները հետագայում լիովին փոխեցին իրենց վերաբերմունքը երիտթուրքերի նկատմամբ: 1914թ. Էրզրումում Գերմանիայի փոխխուպատոս Անդերսի եւ դաշնակցական ղեկավարներից մեկի՝ Ռուբենի հանդիպման մասին գերմանացի փոխխուպատոսը նշել է, որ վերջինս հռետեսությամբ է վերաբերվել Արեւմտյան Հայաստանում եվրոպական պետությունների վերահսկողությամբ կատարվող բարեփոխումներին: Ռուբենն ընդգծել է. «Շատ հավանական է, որ ավելի մեծ ջարդեր լինեն, քան որ երբ օտար ուժերը միջամտել են՝ հօգուտ հայաբնակ վիլայեթներում բարեփոխումների իրականացման, դրան հետևել են ջարդերը»:<sup>42</sup>

Երիտթուրքերի կազմակերպության՝ 1907թ. Փարիզում տեղի ունեցած համագումարում, որի աշխատանքներին մասնակցում էին Օսմանյան կայսրության գրեթե բոլոր ազգերի ներկայացուցիչները, համաձայնություն ձեռք բերվեց սուլթանին գահընկեց անելու եւ երկրում սահմանադրական միապետական վարչակարգ հաստատելու համար: 1908թ. հունիսի 24-ի Սահմանադրական հեղափոխության հետեւանքով իշխանության եկավ երիտթուրքերի «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեն:

<sup>42</sup> Sh'u' Şanı Şarhı Şarqı, Հայաստանը 1915 թվականին (պարսկերեն հրատ.), Թեհրան, 1974, էջ 177:

Թեւ երիտթուրքերի ծրագրում պաշտոնապես խոսվում էր կայսրության ազգերի իրավահավասարության մասին, սակայն, Գերմանիայի կանցլեր Բիսմարկի խոսքերով, պաշտոնական հայտարարությունները սովորաբար օգտագործվում են հեղինակների մտադրությունները բացնելու, ոչ թե հրապարակելու նպատակով: Իրականում երիտթուրքերի իշխանությունն ազգային հարցում շարունակում էր օսմանյան սուլթանների որդեգրած քաղաքականությունը: 1909թ. Կիլիկիայի ջարդերից անմիջապես հետո երիտթուրքերի առաջնորդներից մեկը՝ դոկտոր Նազըմ Բեյը, հայտարարեց. «Մեր երկիրը պետք է զուտ թուրքաբնակ լինի, քանզի ոչ թուրք բնակչության առկայությունը արտաքին ուժերին առիթ է տալիս միջամտել մեր երկրի ներքին գործերին: Մենք պետք է ոչ թուրք բնակչությանը բռնի թուրքացնենք»:<sup>43</sup>

1908թ. երիտթուրքական հեղափոխությունը կուսակցությունների գործունեության նպաստավոր պայմաններ ստեղծեց: Ռուսաստանից Կոստանդնուպոլիս եւ այլ քաղաքներ տեղափոխված հայտնի համաթուրքականները, այդ թվում՝ Իսմայիլ Կասալիբիսկին, Ահմեդ Աղաբեյը, Ալի Հուսեյնզադեն, համաթուրքականության տեսաբան եւ դրա դոկտրինի ու ծրագրի հեղինակ Յուսուֆ Աբչուրան<sup>44</sup> եւ այլք, ներթափանցե-

<sup>43</sup> Չարեհ Վանդ, Անկախ եւ միացյալ Թուրքիա (պարսկերեն հրատ.), Թեհրան, 1990, էջ 55-56:

<sup>44</sup> Զաղաքական հայրենի գործիչ Յուսուֆ Աբչուրան ծնվել է Վոլգայի առափնյա Իդիլ շրջանում: Կրթություն է սրացել նախ՝ Կոստանդնուպոլսում, ապա՝ Փարիզում: 1904թ. ընդունվել է Ռուսաստանի կադետական կուսակցության շարքերը: Հիմնել է «Կազան մոտերի» («Կազանի լրատու») հանդեսը: 1908թ. հեղափոխությունից հետո, որպես Կազանում տպագրվող «Վարք» («Ժամանակ») օրաթերթի քղթակից, մեկնում է Կոստանդնուպոլիս, որտեղ հեղափոխությունը դառնում է համաթուրքական գաղափարախոսության տեսաբանը եւ դրա հիմնադիրներից Թուրքիայում: 1900թ. Կահիրեում լույս տեսնող «Թուրք» հանդեսում հրատարակվել է Աբչուրայի «Զաղաքական երեք ուղղություններ» վերլուծությամբ հոդվածը, որը գնահատվում է որպես համաթուրքականության «մանիֆեստ»: Հոդվածում մանրակրկիտ վերլուծելով համախալանականության, համաթուրքականության եւ օսմանականության քաղաքական ուղղությունները՝ նա վեր է հանում դրանց դրական եւ բացասական կողմերը, ապացուցում, որ համախալանականությունը եւ օսմանականությունը թույլ ու անիրականանալի են: Նա կարծում է, որ կայսրության վերականգնման եւ փրկու-

լով քաղաքականություն, կրթության, մշակույթի եւ մամուլի ոլորտներ, հսկայական քարոզչական գործունեություն ծավալեցին երիտասարդությանը, մտավորականությանը եւ առավելապես իշխող «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության ղեկավարությանն իրենց կողմը գրավելու ուղղությամբ: Նրանք առաջինը հաջողության հասան Մալոնիկում: համաթուրքականության գաղափարախոսությունն ընդունեց կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Ջիա Գյոքալփը (1876-1924)<sup>45</sup>, որը զգալիորեն նպաստեց համաթուրքականության տարածմանն ընդհանրապես եւ երիտթուրքերի «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության շրջանակներում՝ մասնավորապես: Այս առումով նշանակալի դեր խաղաց նաեւ բանաստեղծուհի Խալեդե Ադիբին:

Թեեւ իշխող «Միություն եւ առաջադիմություն» կուսակցությունը 1911թ. արդեն ընդունել էր համաթուրքականությունը եւ հրաժարվել օսմանականությունից, սակայն դեռեւս մեծ նշանակություն էր տալիս համախալամականությանը: Այդ են վկայում կուսակցության 1911թ. համագումարի որոշումներն ու փաստաթղթերը: Այսպես, օրինակ, համագումարը հաստատեց մի բանաձեւ, որտեղ նշվում էր. «Կայսրությունը

*յան միակ ճիշդ ուղին թուրքերի միավորումն է: Ըստ Աբչուրայի՝ համաթուրքականության գաղափարախոսությունը հիմնականում ուղղված է Ռուսաստանի դեմ, որը հզոր, քայցեւ խոցելի պետություն է, իսկ եվրոպական մյուս պետությունները, ելնելով իրենց շահերից, Արեւելքում կնպաստեն անգամ համաթուրքականության հաղթանակին:*

<sup>45</sup> Ըստ «Անկախ եւ միացյալ Թուրքիա» գրքի հեղինակ Ջարեհ Վանդի՝ Ջիա Գյոքալփը ծագումով քուրդ գազա է, ծնվել է Դիարբեքիրում: Նա համարվում է համաթուրքականության հիմնադիրը Թուրքիայում: Գյոքալփն իր տեսակետները շարադրել է «Թյուրքչուլություն էասալարը» («Համաթուրքական ազգայնականության հիմունքները») գրքում, որը քաղկացած է երկու՝ տեսական եւ ծրագրային մասերից: Առաջինը կոչվում է «Համաթուրքական ազգայնականության էությունը», երկրորդը՝ «Համաթուրքական ծրագիր»: Նա Թուրքիայի իշխանություններին առաջարկում է եռափուլ ծրագիր. ա) համաթուրքականություն, բ) համաօղուզականություն (օղուզական քոլոր ցեղերի միավորում, որոնք, ըստ աղբյուրների, 24-ն են), գ) համաթուրքականություն, որը թուրքական ծագում ունեցող ցեղերից զատ, ընդգրկում է նաեւ ֆիններին, հունգարներին եւ բուլղարներին:

խալամական բնույթ կունենա: Երաշխավորված կլինի իսլամական արժեքների եւ կազմակերպությունների նկատմամբ հարգանքը: Աննշան քվով տեղաբնակ ազգերին ներքին կազմակերպություններ ունենալու իրավունք չպետք է տրվի: Թուրքերենի տարածումը իսլամի իշխանության հաստատման եւ տեղաբնակ ազգերի ձուլման լավագույն միջոցն է»<sup>46</sup>: Այն, որ համագումարը կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ ընտրեց համաթուրքականության երեք հիմնադիր առաջնորդներին՝ Իսմայիլ Կասալիբինսկուն, Ալի Հուսեյնգադեին եւ Յուսուֆ Աբչուրային, վկայում է, որ այդ գաղափարախոսությունն արդեն շատ կարեւոր տեղ էր գրավում կուսակցության մեջ եւ, հետեւաբար, երկրի ղեկավար շրջանակներում: Թերեւս հենց դրանով էր պայմանավորված համագումարից հետո բազմաթիվ համաթուրքականների՝ կառավարության տարբեր օղակներում կարեւոր պաշտոններ զբաղեցնելը:

Համաթուրքականության տարածման նպատակով նրանք երկրում հսկայական քարոզչություն սկսեցին: Պատմության մոռացության գրկից հանելով թուրքերի «պանծալի հերոսներին»՝ Աբիլան,<sup>47</sup> Չինգիզ-խանին, Ալփարսլանին, Լենկ Թեմուրին, Էղուզ Խանին եւ ուրիշներին, գովերգում էին նրանց հերոսությունները եւ աշխարհակալ նվաճումները, իսկ պատմության՝ նրանց վերագրած հատկանիշները՝ բացատրում իբրեւ պարտված ժողովուրդների թշնամական դիրքերից տրված գնահատականներ: Քարոզչական նման ջանքերի շնորհիվ համաթուրքականությունը կարճ ժամանակում կլանեց թուրք հասարակայնությանը ողջ Օսմանյան կայսրությունում:

Հարկ է ընդգծել, որ Բալկանյան պատերազմները երիտթուրքերի համար բեկումնային նշանակություն ունեցան՝ եւ համաթուրքականության գաղափարախոսությանը վերջնականապես տրվելու տեսանկյունից, եւ այն առումով, որ Թուրքիան, իրեն համարելով ասիական պետություն, երեսը շրջեց Եվրոպայից: Այդ ժամանակ երիտթուրքերը հրաժարվեցին նաեւ համախալամականությունից: Շեշտը դնելով թուրքական ծագման վրա՝ նրանք արդեն ընդգծում էին, որ իսլամը

<sup>46</sup> Ջարեհ Վանդ, *նշվ. աշխ.*, էջ 63-64:

<sup>47</sup> Վ դարում հունների առաջնորդ, որին վերագրում են «Ռուրեղով անցնի իմ չին, այնրեղ այլեւս ոչ մի բույս չի անի» արտահայտությունը:

չպետք է խառնել թուրքականության հետ: Ուշադրության կենտրոնում պետք է լինի միայն թուրքական տարրը, իսկ ոչ թուրք ազգերը չպետք է ունենան ինքնավարության կամ որեւէ հատուկ կարգավիճակ: Նրանց նման իրավունք չի վերապահվում, նրանք պետք է կան թուրքացվեն, կան ոչնչացվեն. երեսույթ, որը Գյոքարլին անվանում էր «տունը մաքրել»:

Երիտթուրքերի նման դիրքորոշմամբ էր թերեւս պայմանավորված նրանց անտարբերությունը Եվրոպայում կայսրության տարածքների կորստի նկատմամբ: Ավելին, ըստ երիտթուրքերի, այդ տարածքները, որոնց բնակչության հիմնական մասը բնիկներ են եւ այդ պատճառով արտաքին սպառնալիքի տակ են, ծանր բեռ են կայսրության ուսերին, որի թոթափումը նման է հիվանդ օրգանիզմի բուժիչ վիրահատության: Նրանք ձգտում էին Թուրքիայի՝ Եվրոպայում կորցրած մի քանի նահանգի փոխարեն Ասիայում ձեռք բերել թուրք «նախնիների» իդեալական հայրենիքը:

Համաթուրքականները սերտ համագործակցում էին երկրի սահմաններից դուրս «թուրքական աշխարհի» հետ, որը, ի դեպ, տարբեր ընդգրկումներ ուներ: Օրինակ՝ չափավոր համաթուրքականների պատկերացմամբ «թուրքական աշխարհն» ընդգրկում էր Բալկանյան թերակղզին, Փոքր Ասիան, Գրինը, Կովկասը, Դաղստանը, Հաշտարխանը, Վոլգայի առափնյա շրջանները՝ Սարատովը, Մամարան, Կազանը, Ուֆան, Օրենբուրգը, ինչպես նաեւ Միբիրը, Հյուսիսային Մառուցյալ օվկիանոսի ափերը, Մոնղոլիան, Կենտրոնական Ասիան, Հյուսիսային Չինաստանը, Իրանի Խորասան նահանգը եւ Կասպից ծովի հարավային ու արեւմտյան ափերը՝ ներառյալ Իրանի Աղբբեջան նահանգը: Համաթուրքականները «թուրքական աշխարհին» տեղյակ էին պահում իրենց ծրագրերի մասին:

1913թ. Բայազետում կայացած համաթուրքականների համագումարում որոշվեց «միավորել թուրք ազգի երկու՝ արեւելյան ու արեւմտյան հատվածները» (Փոքր Ասիան ու Անդրկովկասը): Այս հարցի շուրջ նախօրոք որոշ պայմանավորվածություն էր ձեռք բերվել Էնվեր փաշայի եւ Ռուսաստանից ժամանած պատվիրակության միջեւ: Արեւմտյան եւ Արեւելյան Հայաստանը շրջանցելով «թուրք ազգի երկու հատվածները» միավորելու համաթուրքականների ծրագրի մշակումը եւ

այն իրագործելու որոշում կայացնելը ժամանակի առումով համընկնում էին դեռեւս Բեռլինի դաշնագրով ամրագրված՝ Արեւմտյան Հայաստանում բարեփոխումներ իրականացնելու խոստման առնչությամբ Թուրքիայի եւ մեծ տերությունների միջեւ դիվանագիտական ակտիվության հետ. 1913թ. փետրվարից Կոստանդնուպոլսում մի շարք բանակցություններ էին ընթանում Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրիայի դեսպանների եւ Բարձր դռան պաշտոնատարների միջեւ: Արդյունքում՝ 1914թ. փետրվարին երիտթուրքերի կառավարության եւ եվրոպական պետությունների միջեւ պաշտոնական համաձայնագիր ստորագրվեց, ըստ որի՝ Արեւմտյան Հայաստանում իրագործվելու էր եվրոպական պետությունների մշակած բարեփոխումների ծրագիրը՝ արտասահմանյան երկու տեսուչի՝ հոլանդացի Ուեսթենենքի եւ նորվեգացի Հոֆֆի վերահսկողությամբ: Բարեփոխումները, որոնք թեւ կյանքն այստեղ ինչ-որ չափով տանելի էին դարձնում, սակայն մյուս կողմից՝ համաթուրքականներին ավելի էին գրգռում հայերի դեմ:

Անդրադառնանք պատմական այդ ժամանակաշրջանում Ռուսաստանի դերին: 1877թ. Ռուսաստանը Բուլղարիայի ազատագրական մարտերին աջակցելու նպատակով պատերազմի մեջ մտավ Օսմանյան կայսրության դեմ եւ Անդրկովկասում երկրորդ ճակատ բացեց: Ընդամենը մի քանի ամիս անց՝ 1878թ. մարտին, Ռուսաստանը Թուրքիային հարկադրեց ստորագրել Ման Ստեֆանոյի պայմանագիրը, որի 16-րդ հոդվածի համաձայն՝ Բաթումը, Գարսը, Բայազետը եւ Արդահանը անցնում էին Ռուսաստանին:

Սակայն Ռուսաստանի մրցակից Մեծ Բրիտանիայի գործադրած ջանքերի շնորհիվ եվրոպական պետությունները Ման Ստեֆանոյի պայմանագիրը դիտեցին իբրեւ Ռուսական կայսրության սահմանների ընդլայնումը հաստատող փաստաթուղթ եւ ոչ Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության վիճակի բարելավման օգտին կատարված քայլ: Այդ պատճառով Ռուսաստանին ստիպեցին վերադառնալ բանակցությունների սեղանի շուրջ, որպեսզի հօգուտ Թուրքիայի որոշ շտկումներ կատարվեն նշված դաշնագրի դրույթներում, որոնք պետք է ամրագրվեին Բեռլինի համաժողովում: Այն տեղի ունեցավ շուրջ 4 ա-

միս անց՝ հունիսի 13-ից մինչև հուլիսի 13-ը: Մինչ Բեռլինը պատ-  
րաստվում էր համաժողովի, Մեծ Բրիտանիան գաղտնի բանակցու-  
թյուններ սկսեց Բարձր դռան հետ, որոնց արդյունքում երկու երկրների  
միջև ստորագրվեց «պաշտպանության պայմանագիր», որը հայտնի  
դարձավ «Կիպրոսի կոնվենցիա» անունով: Այդ պայմանագրով Կիպ-  
րոսը հանձնվում էր Բրիտանիային, որն իր հերթին պարտավորվում էր.  
«Եթե Ռուսաստանը դուրս չգա Բաթումից, Ղարսից և Արդահանից  
կամ փորձի գրավել Օսմանյան կայսրության այլ տարածքներ, Մեծ  
Բրիտանիան պատերազմի մեջ կմտնի հոգուտ Թուրքիայի»<sup>48</sup>:

Անկասկած, Սան Ստեֆանոյի դաշնագիրը քննարկման առարկա  
դարձավ զուտ եվրոպական տերությունների շահերից ելնելով: Թուր-  
քիան պարզապես օգտագործվում էր իբրև Ռուսաստանի դեմ գործիք,  
իսկ հայերի ճակատագիրն առանձնապես որեւէ մեկին չէր հետաքրք-  
րում: Թեև հայկական պատվիրակությունը, դեռ մարտից ժամանելով  
եվրոպական մայրաքաղաքներ, ջանք չէր խնայում Բեռլինի համաժո-  
ղովում նրանց ուշադրությունը Հայկական հարցի վրա բերելու, սա-  
կայն Հայկական հարցի ճակատագիրը լուծվեց Բեռլինի դաշնագրի  
61-րդ կետով: Այն առաջարկել էին Մեծ Բրիտանիան և Օսմանյան  
կայսրությունը: Ըստ այդ կետի՝ «Բարձր դուռը պարտավորվում էր ան-  
հապաղ միջոցներ ձեռնարկել հայկական վիլայեթներում անհրաժեշտ  
բարեփոխումներ կատարելու ուղղությամբ և ապահովել հայերի անվ-  
տանգությունը չերքեզներից և քրդերից»<sup>49</sup>: Այլ կերպ ասած՝ ռուսները  
լիովին կորցրին Սան Ստեֆանոյում ձեռք բերած կարեւոր հաջողու-  
թյունները: Այս հարցում Մեծ Բրիտանիայի որոշիչ դերը բերես բա-  
ցատրության կարիք չի գգում, և սխալված չենք լինի՝ ասելով, որ Մեծ  
Բրիտանիան իր շահերի և հայերի ճակատագրի ընտրության հար-  
ցում գերադասեց առաջինը:

Այսուհանդերձ, հայերը դեռևս որոշ հույսեր էին կապում Բեռլինի  
պայմանագրի հետ, թեև դրա իրականացման ոչ մի երաշխիք չկար:  
Թերևս դա էր պատճառը, որ հայերն իրենց ծանր վիճակը փոքր-ինչ  
տանելի դարձնելու նպատակով դիմում էին եվրոպական պետություն-

<sup>48</sup> *Shu' Fuhi Sharh-Ruqqn, uzv. uzhu., էջ 75-76:*

<sup>49</sup> Նույն տեղում:

ներին, որպեսզի վերջիններս Բարձր դռանը ստիպեն անվտանգության  
խոստումները կատարել: Մեծ տերություններն իրենց հերթին կամ աշ-  
խատում էին դրանք ծառայեցնել իրենց շահերին կամ, լավագույն  
դեպքում, նոտա էին ներկայացնում Օսմանյան պետությանը:

Մյուս կողմից՝ Օսմանյան կայսրությունը մեկը մյուսի ետեից տա-  
րածքներ էր կորցնում, և Հայկական հարցի առկայությամբ չէր բա-  
ցառվում նաև Անատոլիայի կորուստը: Իսկ Օսմանյան կայսրության  
կենտրոնում գտնվող այդ տարածքը թուրքերը համարում էին իրենց  
բնօրրանը և միանգամայն այլ վերաբերմունք ունեին դրա նկատմամբ:  
Ուստի, նման մտավախությունից ելնելով և հաշվի առնելով, որ 80-ա-  
կան թվականներից հայրենիքից դուրս ստեղծվել էին հայկական բա-  
ղաքական կուսակցություններ, և ինքնապաշտպանության հարցը  
հանձինս ֆիդայական շարժման լուրջ բնույթ էր կրում, Բարձր դուռը ո-  
րոշեց յուրովի լուծել Հայկական հարցը՝ «Հայաստանն առանց հայե-  
րի»: Եվ սուլթան Աբդուլ Համիդը, եվրոպական պետությունների դես-  
պանների և հյուպատոսների աչքի առջև, սկսեց կազմակերպել հայե-  
րի զարհուրելի ջարդեր ոչ միայն բուն Արեւմտյան Հայաստանում, այ-  
լև ողջ Օսմանյան կայսրության տարածքում: Բողոքի ցանկացած ե-  
լույթ ավելի էր զազագեցնում դահիճներին: Ջարդերի դեմ մեծ տերու-  
թյունների գործողությունները սահմանափակվում էին Բարձր դռանը  
պաշտոնական կամ ոչ պաշտոնական նոտաներ ներկայացնելով:

Ինչպես նշվեց, հայերն իրենց վիճակի բարելավումը կապում էին ե-  
րիտթուրքերի իշխանության հետ և, կարելի է ասել, 6 տարի շարու-  
նակ, հավատալով պաշտոնական հայտարարություններին, աջակցում  
էին նրանց: Դրա վկայությունն է այն փաստը, որ հայ պատգամավոր-  
ները մինչև 1915թ. սկիզբը դեռ շարունակում էին իրենց գործունեու-  
թյունը խորհրդարանում: Իսկ ռազմաճակատում հայերը քաջաբար  
կովում էին թուրք զինվորների հետ կողք կողքի: Հայերի նկատմամբ ե-  
րիտթուրքերի վարած քաղաքականությունը ոչնչով չէր տարբերվում  
նախորդից: Ավելին, խտացնելով գույները և իրենց համաթուրքական  
նկրտումները բարձրացնելով ազգային իդեալի մակարդակի՝ նրանք ո-  
րոշեցին միանգամից վնասագերծել սեպի պես «թուրքական աշխար-  
հի» մեջ խրված և նրան երկու մասի բաժանող Հայաստանը՝ բնաջն-

ջելով հայերին:

1914թ. հունիսին Եվրոպայում բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Երիտթուրքերն շտապեցին օգտագործել իրենց նպատակներն իրականացնելու հարմար առիթը: Նրանք անմիջապես ընդհատեցին դեռ նոր սկսած բարեփոխումների ընթացքը, պատմությանը հանձնեցին փետրվարյան համաձայնագիրը, երկրից հեռացրին նորվեգացի և հոլանդացի տեսուչներին: Հոկտեմբերին Թուրքիան պատերազմի մեջ մտավ Գերմանիայի կողքին: Նոյեմբերին Բարձր դուռը «ջիհադ» (սրբազան պատերազմ) հայտարարեց Անտանտի երկրներին, ինչին թեև տարածաշրջանի մահմեդական երկրները հավանություն չտվեցին, սակայն այն նպաստեց երիտթուրքերի ծրագրած՝ հայերի ցեղասպանության իրականացմանը:

Եվ հենց այդ ժամանակ, երբ թուրք հասարակությունը հոգեպես լինվին պատրաստ էր կյանքի կոչել համաթուրքական ծրագրերը, երբ նպաստավոր էր նաև միջազգային իրավիճակը, կար Գերմանիայի աջակցությունը, Թուրքիայի քաղաքական և ռազմական ղեկավարները՝ Թալեաթը, Ջեմալը և Էնվերը, իրագործեցին մեծ հմտությամբ մշակված ծրագիրը՝ XX դարի առաջին ցեղասպանությունը, որին գոհ դարձավ ավելի քան մեկուկես միլիոն հայ:

Արժանահիշատակ է Հայոց ցեղասպանության իրագործման մեղավորների և մեղսակիցների վերաբերյալ Էսմայիլ Ռայիսի «Հայերի ցեղասպանությունը» գիրքը<sup>50</sup>: Ջարհուրեյի ոճի պատասխանատու համարելով համաթուրքական գաղափարներով տոգորված երիտթուրքերին՝ Ռայիսն անդրադառնում է նաև այդ հրեշավոր ծրագրի իրականացմանն աջակցողներին: Նա նշում է, որ ցեղասպանության ծրագրի իրագործմանն անմիջականորեն մասնակցել են առաջին հերթին Գերմանիան, ապա Օսմանյան կայսրության հրեաները և միջազգային սիոնիզմը: Որպես հրեաների գործուն մասնակցության ապացույց՝ հեղինակը ներկայացնում է «de Renier Le bal du grand soir» գրքի

<sup>50</sup> 12. Էսմայիլ Ռայիսը իրանցի հայրնի լրագրող, հրապարակախոս, գրականագետ և հրապարակիչ է: «Հայերի ցեղասպանությունը» գիրքը պարսկերեն լեզվով լույս է տեսել Թեհրանում, 1972թ.: Գրքում գեղեցիկաձև են նաև իրանցի ակնապատկերների կարծիքներն ու տպավորությունները:

փաստերը և ականատեսների վկայությունները, ինչպես նաև 1885-1917թթ. ցարական Ռուսաստանի հետախուզական կազմակերպության՝ Օխրանկայի գաղտնի փաստաթղթերը, որոնք Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո հրապարակել է Ռուսաստանի դեսպանը՝ Փարիզում. պահպանվում են Կալիֆորնիայի Ստանֆորդ համալսարանի «Հուվեր» կենտրոնում:

Առավել հանգամանորեն անդրադառնալով Գերմանիայի ակտիվ մասնակցությանը և վկայակոչելով բազմաթիվ փաստեր՝ Ռայիսը կարծիք է հայտնում, որ Գերմանիան միակ երկիրն էր, որը կարող էր կանխել Ցեղասպանությունը, սակայն այդ ուղղությամբ որեւէ քայլ չկատարեց, ընդհակառակը, նպաստեց դրան: Ռայիսը նշում է, որ 1895թ. ի վեր Գերմանիան ընդլայնեց իր հյուպատոսական ցանցը Օսմանյան կայսրության ասիական շրջաններում՝ Կիլիկիայում, Արեւելյան Անատոլիայում և բուն Արեւմտյան Հայաստանում: Գերմանացի հյուպատոսներն այդ տարածքներում իրագործված ջարդերի ականատեսն են եղել և կատարվածի մասին ամենայն մանրամասնությամբ ու ճշգրտությամբ զեկուցել են կենտրոնին, իսկ ջարդերը կասեցնելու համար բացարձակապես ոչինչ չեն ձեռնարկել: Ռայիսն ընդգծում է, որ Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը և Գերմանիայի որոշ հյուպատոսներ բազմիցս կրկնել են, թե «դա Օսմանյան կայսրության ներքին խնդիրն է, և նրանք մտադիր չեն միջամտել իրենց դաշնակից երկրի ներքին գործերին»:

Չուզահեռներ անցկացնելով Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում օսմանյան Թուրքիայի իրականացրած Հայոց ցեղասպանության և Երկրորդ աշխարհամարտի ժամանակ ֆաշիստական Գերմանիայի՝ հրեաների ցեղասպանության միջեւ, հեղինակը նշում է, որ Օսմանյան կայսրության հայերը Գերմանիայի ապագա ծրագրերի համար «փորձաճազարների և սպիտակ մկների» դեր կատարեցին: Ռայիսը նաև այն միտքն է հայտնում, որ, լինելով կայսրության բնիկ ազգերի շրջանում ամենաընդունակը և տնտեսական բնագավառում խիստ նախաձեռնող, հայերը զգալի դեր ունեին կայսրության տնտեսական զարգացման ոլորտում, և չէր բացառվում, որ հենց նրանք, նպաստելով Օսմանյան կայսրության տնտեսական զար-



գացմանը, այդ երկիրը դուրս բերեին հետամնաց երկրների շարքից: Այնինչ հայերի ոչնչացումն ամրապնդեց կայսրության «դիրքերը» հետամնաց երկրների շարքում:

Ռայինը կարծում է, որ Հայոց ցեղասպանության կազմակերպիչների անպատիժ մնալը հրեաների ցեղասպանությունը կազմակերպելու նպատակով նախապայման էր ֆաշիստների հանար: Հեղինակը նշված հարցերին նվիրված բաժինների վերջում եզրակացնում է, որ ճակատագիրը Հայոց ցեղասպանությանը գործուն մասնակցություն ունեցող երկու ազգերին՝ «նացիստներին» և «հրեաներին» կերպարով դեմ հանդիման դուրս բերեց Երկրորդ աշխարհամարտում, և նրանք խստորեն պատժվեցին ու ստացան իրենց արարքների փոխհատուցումը՝ մեկը ցեղասպանության ենթարկվելով, մյուսը՝ մարդկային և նյութական ահռելի կորուստներով ու պարտությամբ: Ռայինը գրքի այս բաժինն ավարտում է իրանցի բանաստեղծ Նասեր Խոսրովի<sup>51</sup> հայտնի խորհմաստ «դրբեյթով».

Հիսուսն իր ճանապարհին սպանված մի մարդ տեսավ,

Ի նշան զարմանքի՝ մատը կծեց և սասց.

«Ո՛վ մարդ, ո՞ւմ սպանեցիր, որ այսպես դաժան սպանվեցիր,

Քանզի, անշուշտ, կսպանվի նաև նա, ով քեզ սպանեց»:

Միաժամանակ, Ռայինի կարծիքով, օսմանյան Թուրքիան հայերի ցեղասպանությունը կազմակերպելու համար պատժվել է կայսրության փլուզմամբ: Դրական գնահատելով Աթաթուրքի հիմնադրած ազգային ժողովրդավարական Թուրքիայի Հանրապետությունը՝ նա որեւէ ընդհանուր բան չի տեսնում նրա և Օսմանյան կայսրության միջե:

Նման տեսակետը կարելի է գնահատել առնվազն ոչ իրատեսական, քանի որ Թուրքիայի Հանրապետությունը հենց օսմանյան Թուրքիայի երիտթուրքական քաղաքականության շարունակողն է՝ մասնա-

<sup>51</sup> Նասեր Խոսրովն Իրանի վաղ միջնադարյան ամենահայտնի բանաստեղծներից է, ոչ պալապական հազվագյուտ բանաստեղծներից: Նրա ամենահայտնի սրեղծագործությունը «Մաֆարնամեն» («Ճամփորդագիրք») է, որտեղ պարմում է բազմաթիվ երկրներ, այդ թվում՝ նաև Հայաստանում իր ճանապարհորդություններից տպավորությունների և շնորք բերած փորձառությունների մասին:

վորապես Հայկական հարցում: Հիմնավորման համար բերես դիմենք պատմական որոշ փաստերի: 1918թ. կնքելով Մուղոտսի զինադադարի պայմանագիրը՝ Օսմանյան կայսրությունը հարկադրված էր զորքերը դուրս բերել Անդրկովկասից և Իրանից: Եվ ստեղծված նոր իրավիճակում Էնվեր-Թալեաթ-Ջեմալ երիտթուրքական եռյակը փաստորեն սպառեց իրեն: Նոր պայմաններում Թուրքիայի նոր ռազմավարության գլխավոր առաջադրանքը դարձան Անատոլիայի անկախության, տարածքային ամբողջականության պահպանումը՝ ներառյալ արեւելյան ու արեւմտյան հատվածները, և ազգային միասնականության երաշխիքների ստեղծումը: Իսկ այս նպատակների իրագործման առաքելությունն իր վրա վերցրեց ազգայնականների նոր սերունդը՝ Ազգային շարժումը, որի քաղաքական ուղղվածությունը ոչ այլ ինչ է, քան «Միություն և առաջադիմություն» կուսակցության համաթուրքական քաղաքականության նոր դրսեւորում՝ միջազգային նոր պայմաններին համապատասխան:

Մուստաֆա Քեմալի ղեկավարած Ազգային շարժումը սկզբնավորվել է Արեւելյան Անատոլիայում, 1919թ. զարմանը: Նրա առաջնորդները երդվեցին, որ Անատոլիայում ազգային իշխանության հաստատման համար կապաքարեն մինչև վերջ: Իսկ 1919թ. աշնանը Մըվազում գումարված համագումարում Ազգային շարժումը միաձայն հաստատեց Ազգային ուխտը (ծրագիրը): Դրա առանցքային հարցերն էին Անատոլիայի ազատագրումը և «թուրքական աշխարհի» միասնականության ուղու ապահովումը, ինչը նշանակում էր նախ՝ Միացյալ Հայաստանի ստեղծման լուրջ խոչընդոտ, երկրորդ՝ «թուրքական աշխարհի միասնականության» իրագործման հարթ ճանապարհի ապահովում՝ նորաստեղծ Հայաստանի Հանրապետության ոչնչացմամբ:

Մըվազի հաջողությամբ Մուստաֆա Քեմալն ընտրվեց Ազգային շարժման գործադիր կոմիտեի նախագահ: Եվ կոմիտեն իրեն անմիջապես հայտարարելով Արեւելյան Անատոլիայի կառավարություն՝ կապեքը խզեց Կոստանդնուպոլսի հետ. քայլ, որն ի վերջո հանգեցրեց Օսմանյան կայսրության տապալմանը և քեմալականների իշխանության հաստատմանը: Համաթուրքականության ամենանշանավոր գործիչներն ու այդ գաղափարախոսության հիմնադիրները, օրինակ՝ Յուսուֆ Աքչուրան, Ահմեդ Աղանը, Ջիա Գյոքալփը, Ֆուադ Զոյլփոյուն, Հալիդ Էդիբը, Հուսեյնգաղեն, Համդուլլահ Մուփհին և բազմաթիվ այլ

հայտնի համաթուրքականներ, Քեմալ Աթաթուրքի իշխանության օրոք պետական ամենաբարձր պաշտոններն էին զբաղեցնում Ազգային մեծ ժողովում եւ կառավարության կազմում: Հատկապես լուսավորության նախարարությունում, մամուլում եւ այլուր նրանք ոչ միայն Աթաթուրքի աշխատակիցները, այլեւ զինակիցներն ու Ազգային շարժման հիմնադիրներն էին: Հետեւաբար, այլեւս կասկածների տեղիք չի տալիս, որ նույնն էին Ազգային շարժման եւ «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության ծրագրերն ու գաղափարները:

Ինչպես ասել է ԱՄՆ նախագահ Թեոդոր Ռուզվելտը. «Քաղաքականության մեջ ոչ մի դեպք պատահական չի լինում. դեպքը պատահում է, որովհետեւ դա ծրագրով է նախատեսվել»:

Մեծ Բրիտանիայի եւ Օսմանյան կայսրության կնքած Մուդրոսի զինադադարի պայմանագրում ոչինչ չի ասվել Թուրքիայի զինաթափման մասին, ինչը մեկնաբանվել է իբրեւ «չտասպողականության հետեւանք»: Դա Աթաթուրքի իշխանությանը հնարավորություն ընձեռեց տարբեր ճանապարհներով ու եղանակներով գեներ ու զինամթերք ստանալ դաշնակիցներից: Բայց ամենամեծ օգնությունը Աթաթուրքն, անշուշտ, ստացավ բուլղեիկներից: Օգտվելով Անդրկովկասում ռուսների ժամանակավոր բացակայությամբ ստեղծված հնարավորությունից, որոշ աղբյուրների համաձայն՝ նաեւ բուլղեիկների համագործակցությամբ, քեմալականները շարժվեցին այդ ուղղությամբ՝ նպատակ ունենալով ոչնչացնել նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը եւ այսպիսով իրագործել համաթուրքականների վաղեմի երազանքը: Այդ գործողությունների արդյունքում 1920թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ կնքվեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որով Թուրքիային հանձնվեցին Կարսի մարզը եւ Մուրմալուի գավառը: Ի դեպ, Ալեքսանդրապոլի պայմանագիրն ապօրինի էր, քանի որ այն ստորագրած Հայաստանի Հանրապետության վարչապետ Ալեքսանդր Խատիսյանն այլեւս լիազորություններ չուներ:

Հարկ է նշել, որ դաշնակիցները, ինչպես պատերազմից առաջ, այնպես էլ դրանից հետո մտահոգ էին լոկ իրենց շահերով, եւ յուրաքանչյուրն աշխատում էր, պատերազմից ձեռք բերված «ավարից» ավելի մեծ բաժին ստանալով, մասնատված Օսմանյան կայսրության տարածքների հաշվին ընդարձակել իր ազդեցության գոտին: Հետեւաբար, «ժամանակ չունեին» փոքր երկրների հարցով զբաղվել՝ «մոռա-

նալով» անգամ հայերի զարհուրելի ջարդերը:

Անդրադառնանք նաեւ ի պատասխան հայերի օգնություն հայցելու բազում դիմումների եւ հանուն արդարության դաշնակիցների կատարած «հայանպաստ» քայլերին:

1919թ. Վերսալի խաղաղության համաժողովն օսմանյան Թուրքիայի հետ խաղաղության պայմանագիր կնքելու խնդիրը հետաձգեց մինչեւ Հայաստանի խնամակալության վերաբերյալ որոշում կայացնելը եւ ԱՄՆ նախագահի՝ նորաստեղծ պետության սահմանների հարցում համաձայնություն տալն ու իրավարարի պարտականություն ստանձնելը: Այս առիթով, նախագահ Վիլսոնի նախաձեռնությամբ, Ամատոլիայում եւ Հայաստանում տիրող կացության վերաբերյալ ճշմարիտ տեղեկություններ ձեռք բերելու հանձնարարությամբ օսմանյան Թուրքիա գործուղվեց գեներալ Հաբբորտը: Թուրքիայում նրա ուղեկիցը թուրք էր, որը կարողացավ մեծ ազդեցություն ունենալ իրավիճակի վերաբերյալ կազմված զեկուցագրի վրա:

1919թ. վերջին Հաբբորտը շրջանի վերաբերյալ զեկուցագիր ներկայացրեց Մենասին, որը պետք է ԱՄՆ-ի՝ Հայաստանի խնամակալությունն ընդունելու մասին որոշում կայացնելը:

Ավելի քան մեկ տարի անցավ, մինչեւ դաշնակիցների Գերագույն խորհուրդը որոշեց Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի նախագիծը քննարկման առարկա դարձնել Ման Ռեմոյի համաժողովում (1920թ. ապրիլի 18-26): Համաժողովը որոշում ընդունեց՝ Վանի վիլայեթի մի մասը, Բիթլիսը, Էրզրումը եւ Տրապիզոնը հայերին հանձնելու վերաբերյալ: Իսկ ապրիլի 25-ին համաժողովը նախագահ Վիլսոնին պատգամ հղեց՝ Հայաստանի խնամակալությունն ընդունելու առաջարկությամբ: Թեեւ նախագահ Վիլսոնը համաձայն էր Հայաստանի խնամակալությունն ստանձնելուն, սակայն հունիսի 1-ին Մենատոն այդ առաջարկությունը մերժեց՝ ձայների 52 դեմ եւ 23 կողմ հարաբերությամբ<sup>52</sup>: Այսուհանդերձ, դեռեւս ապրիլի 27-ին ԱՄՆ կառավարությունը de jure ճանաչել էր Հայաստանի Հանրապետությունը, եւ Վիլսոնը համաձայնություն էր տվել սահմանների խնդրում իրավարարի պարտա-

<sup>52</sup> Տե՛ս՝ Մերժ Աֆանեսյան, Հայաստան, Աղբրեջան, Վրաստան անկախությունից մինչեւ խորհրդային կարգերի հաստատումը, 1917-23 թթ. (պարսկերեն հրատ.), Թեհրան, 1991, էջ 114:

կանությունները ստանձնելու համար:

Այնուհետև, Սան Ռեմոյի համաժողովում կազմված հաշտության պայմանագիրը ներկայացվեց Թուրքիայի կառավարության հաստատմանը: Հուլիսին այն հաստատվեց, սակայն չիրագործվեց, քանի որ հենց այդ ընթացքում Խորհրդային Ռուսաստանի ուժերը Կովկասում պարտության մատնեցին Դենիկինին, իսկ Թուրքիայում արդեն զգալի հաջողությունների հասած Աթաթուրքը, թուրք ազգայնականների նկատմամբ Խորհրդային Ռուսաստանի բարյացակամ վերաբերմունքի ստույգ երաշխիքներ ունենալով, քայլեր կատարեց Մոսկվային մերձենալու ուղղությամբ: Դեռևս ապրիլի 26-ին Լենինին հղած իր նամակում, Ռուսաստանից օգնություն խնդրելով, Աթաթուրքն անգամ նշում էր, որ Թուրքիայի կառավարությունն իր վրա կվերցնի «իմպերիալիստական Հայաստանի» դեմ գործողությունների պարտականությունը:

Իրադարձությունների նման զարգացումը դաշնակցականներին ստիպեց հեռանալ Կովկասից, եւ Սան Ռեմոյի հաշտության պայմանագիրը մնաց թղթի վրա, թեև դրա դրույթները հաստատվեցին 1920թ. օգոստոսի 10-ին կնքված Մերի պայմանագրով: Այնուհետև Անդրկովկասի նորաստեղծ հանրապետությունները մեկը մյուսի հետեւից խորհրդայնացվեցին: Իսկ 1921թ. մարտի 16-ին բոլշեիկներն եւ քեմալականներն ստորագրեցին Մոսկվայի պայմանագիրը, որով չեղյալ հայտարարվեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը, իսկ Կարսն ու Արդահանը, այնուամենայնիվ, հանձնվեցին Թուրքիային, եւ Խորհրդային Ռուսաստանը, փաստորեն, ճանաչեց ժամանակակից Թուրքիայի Ազգային ուխտով նախատեսվող սահմանները:

Խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում նշանակում էր, որ վերջինս զրկվում է Հայկական հարցը պաշտոնապես ներկայացնելու հնարավորությունից: Իսկ Մեծ եղեռնը վերապրողները, որոնք սփռվեցին աշխարհով մեկ, ուրքի կանգնելուց հետո ողջ ուժով լծվեցին արդարության վերականգնմանը: Երբ նրանց միացան նաեւ վերապրողների երկրորդ եւ երրորդ սերունդները, այդ աշխատանքները սփյուռքում ավելի մեծ թափ ստացան: Եվ առայսօր ամեն ինչ արվում է, որպեսզի մեծ տերությունները եւ միջազգային կազմակերպություն-

ները ճանաչեն Մեծ եղեռնի փաստը: Սակայն վերջիններս, ինչպես անցյալում, աշխատում են այդ հարցը ծառայեցնել իրենց շահերին եւ շահարկելով այն՝ զիջումներ են կորզում Անկարայից:

Մեծ եղեռնից հետո, 80 տարվա ընթացքում միայն Եվրախորհրդարանն է 1987թ. հաստատել Յեղասպանության փաստը, ինչը նաեւ այդ ուղղությամբ սփյուռքահայության կատարած քրտնաջան աշխատանքի արդյունքն էր: Այդ որոշման մասին լուրը մեծ ոգետրությամբ ու ցնծությամբ ընդունվեց թե՛ Հայաստանում եւ թե՛ սփյուռքում: Այնինչ այդ փաստն ավելի շուտ կարելի է գնահատել որպես «վետո»՝ ԵՄ անդամ դառնալու Թուրքիայի բռուն ցանկությանը: Մինչդեռ եվրոպական ոչ մի պետություն առանձին չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը եւ հազիվ թե նման մտադրություն ունենա նրանցից որեւէ մեկը, քանզի այդ դեպքում կկորցնի Թուրքիայի դեմ շահող այդ խաղաքարտը: Միայն Ռուսաստանի Պետդուման Մեծ եղեռնի 80-րդ տարելիցին հանդես եկավ Յեղասպանությունը դատապարտող հայտարարությամբ<sup>53</sup>:

Հայկական ամենախոշոր՝ ԱՄՆ-ի համայնքը, որտեղ մեծ թիվ են կազմում Եղեռնը վերապրողները, հսկայական ջանքեր է գործադրվել, որպեսզի այդ երկիրը պաշտոնապես ճանաչի Հայոց ցեղասպանությունը: Բայց այստեղ եւս Հայոց ցեղասպանության խնդիրը տարբեր առիթներով շահարկումների պատճառ է դարձել՝ թե՛ նախագահական ընտրությունների ժամանակ, թե՛ Անկարայի վրա ճնշում գործադրելու անհրաժեշտության դեպքում: Մեծ ջանքերի գնով խնդիրը բազմիցս

<sup>53</sup> 1975թ. ապրիլի 8-ին ԱՄՆ Կոնգրեսն ընդունեց թիվ 148 բանաչելը՝ 1915թ. ապրիլի 24-ը Մարդկության դեմ կատարված ռեհիմների զոհերի հիշարարկի օր հայտարարելու վերաբերյալ: Հայերի ցեղասպանությունը պաշտոնապես ընդունել են նաեւ 1968թ. Խաղաղասեր ուժերի Համաշխարհային կոնգրեսը՝ 64 պետությունների եւ 16 միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ, 1983թ.՝ եկեղեցիների տիեզերածողովը, 1984թ. հունվարի 7-ին Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանը դատապարտել է Հայոց ցեղասպանությունը, 1984թ. ապրիլի 16-ին Ժողովուրդների մշտական դատարանը այդ հարցի վերաբերյալ որոշում է ընդունել, 1985թ. ապրիլի 23-ին բանաչել է ընդունել Արգենտինայի խորհրդարանը, 1985թ. ապրիլի 23-ին՝ Ուրուգվայի Ազգային սասանքեան, 1985թ. հուլիսի 2-ին՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը, 1990թ. ապրիլի 19-ին՝ Կիպրոսի խորհրդարանը:

ԱՄՆ Սենատի քննարկման առարկա է դարձել եւ միշտ՝ ապարդյուն: Թեեւ այսօր եւս շատ է խոսվում այդ մասին, սակայն առայժմ անհավանական է դրական արդյունք ակնկալելը, հատկապես այն պատճառաբանությամբ, թե առկա է Թուրքիան իսլամ արմատականների «ձեռքն ընկնելու վտանգը»: Այդ մտավախությամբ, ինչպես ենթադրվում է նրանց պաշտոնական հայտարարություններից, ԱՄՆ-ը եւ Արեւմտյան Եվրոպայի երկրները չեն «համարձակվում» միջոցներ ձեռնարկել կամ սուր քննադատության ենթարկել Անկարային՝ Իրաքի հյուսիս գորք մտցնելու առնչությամբ:

Թուրքիան, իր հերթին, հսկայական ծախսերի գնով, ջանք չի խնայում պատմական փաստերը խեղաթյուրելու համար: Բացի այդ, որեւէ երկրի, մասնավորապես մեծ տերությունների՝ Մեծ եղեռնի պաշտոնական ճանաչման հավանականությունից բխող մտավախությամբ եւ այն կանխարգելելու նպատակով Անկարան, թվում է, պատրաստ է գնալ ավելի մեծ զիջումների: Այնպես որ, կարելի է ասել՝ եթե դրանք լինեին հոգուտ հայ ժողովրդի, Թուրքիայի Հանրապետությունը որոշ չափով թոթափած կլիներ այն ծանր բեռը, որը գիտակցաբար եւ կամովին ժառանգել է երիտթուրքերից: Սակայն, դատելով նորագույն շրջանում Հայաստանի նկատմամբ Թուրքիայի վարած քաղաքականությունից, նկատում ենք, որ Թուրքիան առավելապես հակված է իրագործել երիտթուրքերի եւ քեմալականների համաթուրքական նկրտումները, քան որեւէ հարցում ընդառաջել Հայաստանին, առավել եւս, թվում է՝ համաթուրքականությունը կրկին օրակարգի հարց է դարձել: Թերեւս հենց դրանով է պայմանավորված, որ Անկարան իր բոլոր լծակները գործի է դնում Հայաստանին զիջումների մղելու համար: Նման պայմաններում Հայաստանի կողմից Թուրքիային որեւէ զիջում քաղաքականապես արդարացված չի լինի:

Մեծ Բրիտանիայի «Միդլանդ» բանկի տնօրեն Ռեզինա Մաք Բեննան ասում է. «Նրանք, ովքեր դրան են արտադրում ու չարտահանում եւ բանկային վարկեր տրամադրում, դեկավարում են պետության քաղաքականությունը եւ տնօրինում մարդկանց ճակատագիրը: Իսկ մի պետություն, որը միջազգային բանկերից է վարկ վերցնում, նրանց ճի-

րաններում գերի է դառնում»<sup>54</sup>: Եթե ընդունենք այս խոսքերի ճշմարտացիությունը եւ հաշվի առնենք Թուրքիայի հսկայական արտաքին պարտքը՝ օտարերկրյա ու միջազգային բանկերին եւ ֆինանսական կազմակերպություններից վերցրած վարկերը, կարելի է ասել, որ ցանկության դեպքում մեծ տերությունները կարող են Թուրքիային հարկադրել արդարության վերականգնման քայլեր կատարել: Բայց նման քայլը որեւէ կերպ կնպաստի՞ արդյոք նրանց շահերին. սա է հարցը

### Հայոց եղեռնի ճանաչման հարցն իբրև լծակ Թուրքիայի դեմ գործադրում են նրա բարեկամ երկրները<sup>55</sup>

Անցյալ դարի 20-ականներից մինչև 1991թ.՝ Հայաստանի Հանրապետության անկախությունը, Հայոց ցեղասպանությունը միջազգային ատյանների և մեծ տերությունների կողմից ճանաչելու ուղղությամբ ջանք չէին խնայում Եղեռն ապրածներն ու նրանց սերունդները: Հայաստանի Հանրապետությունը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը բարձրացնելու հնարավորություն է ձեռք բերել միայն անկախանալուց հետո: Իսկ մեծ տերություններն ու միջազգային կազմակերպությունները, ինչպես և անցյալում, շահարկելով Յեղասպանության հարցը, թերեւս զիջումներ են պահանջում Անկարայից կամ թելադրում իրենց կամքը:

1987թ. Եվրախորհրդարանը (ԵԽ) Հայոց ցեղասպանության փաստը ճանաչելու որոշում ընդունեց: Սա նաև այդ ուղղությամբ սիյուրա-հայության կատարած քրտնաջան աշխատանքի արդյունքն էր: Որոշման մասին լուրը մեծ ոգևորությամբ ընդունվեց թե՛ Հայաստանում և թե՛ սիյուրքում: Մինչդեռ, ինչպես տողերիս հեղինակը տարբեր առիթներով նշել է, ԵԽ-ի այդ որոշումն ավելի շուտ պետք է գնահատվեր իբրև Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցելու բուռն ցանկությունները զսպելու միջոցառում:

<sup>54</sup> Տե՛ս՝ Փարվիզ Նաջաֆյան, Նոր աշխարհակարգը եւ իսաչակրաց արշավանքների վերսկսումը, Քեյհան, Լոնդոն, 13 մայիսի, 1993:

<sup>55</sup> Հողվածը լույս է տեսել «Վասն Հայության» շաբաթաթերթի 30-31 համարներում, 2002թ. ապրիլին:

Եվ ահա, 2002թ. փետրվարի 28-ին ԵԽ-ն Հարավային Կովկասում իր քաղաքականության վերաբերյալ ընդունեց որոշում, որը թեև հաշվի էր առնում ԵՄ-ի շահերը, սակայն այն համընկնում էր նաև հայոց շահերին, և հենց դրանով էր պայմանավորված հայկական խմբերի շահագրգռությունը փաստաթղթի առնչությամբ: Ուստի, վերջիններս այդ ուղղությամբ ձեռնամուխ եղան բացատրական և տեղեկատվական լուրջ աշխատանքների: ԵԽ-ի նոր փաստաթղթում, որտեղ կարևորվում է վերջինիս 1987թ. ընդունած որոշումը, միաժամանակ ավելի հստակ է նշվում դրա բուն նպատակը, քանզի այնտեղ Թուրքիայի՝ ԵՄ-ին լիարժեք անդամությունը պարզորոշ պայմանավորվում է Հայոց եղեռնի ճանաչմամբ:

ԵԽ-ի նոր փաստաթուղթը, բնականաբար, արժանացավ պաշտոնական Անկարայի բուռն հակազդեցությանը, այդ հարցը մարտի 3-ին մտավ Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի օրակարգը: Այն խստիվ քննադատեց նաև Թուրքիայի խորհրդարանը. իսկ այստեղ ներկա կուսակցությունների հրապարակած համատեղ հայտարարության մեջ ընդգծվում է, որ խնդրո առարկա փաստաթուղթը որևէ հիմք չունի, այն պարզապես խարան է կազմակերպիչների ճակատին, քանզի նման որոշումներով հնարավոր չէ պատմությունն արատավորել, ուստի այն լոկ վիրավորեց թուրք ազգին: Նախագահ Ահմեդ Սեզերը, ԵՄ-ի այդ քայլը գնահատելով ցավալի, նշել է, որ պատմական հարցի շուրջ անհիմն որոշում կայացնելով, փոխանակ հանձնելու պատմաբաններին, ԵԽ-ն ապացուցեց իր ոչ խորաթափանց և անիրազեկ լինելը: Սեզերն ընդգծել է նաև, որ մի ժամանակահատվածում, երբ Թուրքիա-Եվրամիություն կապերի առավել սերտացման և Թուրքիայի՝ վերջինիս լիարժեք անդամության ուղղությամբ հսկայական ջանքեր են գործադրվում, նման որոշումը, եթե միտումնավոր էլ չլինի, ապա պետք է այն համարել որպես վատ նախանշան:<sup>56</sup>

Թուրքիայի ԱԳ նախարարության հրապարակած հայտարարության մեջ ընդգծվում է, որ ԵԽ-ի՝ այդ երկրին վերագրած մեղադրանքներն անընդունելի են: Փոխվարչապետ Մասուդ Յըլմազը Բրյուսելում Եվրոպայի կոնվենցիայի համաժողովին հայտարարել է, որ «հայերի

ցեղասպանության» վերաբերյալ ԵԽ-ի որոշումն անընդունելի է, ապա, այն համեմատելով 1987թ. որոշման հետ, ընդգծել է, որ նշյալ որոշման նպատակը հայ-թուրքական փոխըմբռնման հանձնաժողովին հարվածելն է: Քանզի եթե ԵԽ-ն ցանկանում է նպաստել Երևան-Անկարա փոխհարաբերությունների բարելավմանը, ապա պետք է Հայաստանից պահանջի, որ վերջինս, իր արխիվները բացելով, դրանք տրամադրի հետազոտողներին: Միաժամանակ Յըլմազը պահանջել է, որ Թուրքիայի ժողովրդի փրկություն հեղափոխական կուսակցությունը և ԲԿԿ-ն ընդգրկվեն ԵՄ-ի կազմած ահաբեկչական կազմակերպությունների ցանկում: Յըլմազը, սպառնալով, հայտարարել է, որ Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցելու շուրջ բանակցությունները պետք է տեղի ունենան 2002թ., այլապես Թուրքիա-Եվրամիություն հարաբերությունները կվնասվեն: Նա Ստամբուլում՝ տեղի ունեցած «Էքսպո 2002» սեմինարի ժամանակ շեշտել է, որ Թուրքիայի կառավարությանն ու ժողովրդին ի վերջո կհաջողվի հաղթահարել ԵՄ-ին անդամակցելու ճանապարհին առկա բոլոր խոչընդոտները:<sup>57</sup>

Թուրքիայի երկրորդ փոխվարչապետ Դեկթ Բահչելին այս առիթով շեշտել է, որ հայերի հավանությանն արժանացած «Հայոց ցեղասպանության» վերաբերյալ ԵԽ-ի փաստաթուղթը հստակորեն վկայում է, որ Եվրոպան գուրկ է միջին մակարդակի առողջ բանականությունից և հեռատեսությունից: Նա ընդգծել է, որ ԵՄ-ին անդամակցումը վերածվել է Թուրքիայի կառավարության քաղաքականության, հետևաբար պահանջվում է, որ ԵՄ-ն հստակեցնի իր դիրքորոշումը: Թուրքիայի Ազգային անվտանգության գեներալներից մեկը, ավելի հեռուն գնալով, ԵՄ-ին սպառնացել է, թե Թուրքիան կհրաժարվի նրան անդամակցելուց և, իբրև այլընտրանքային տարբերակ՝ կղաշնակցի արևելյան երկրների հետ: Այս հայտարարությունը թուրք պաշտոնատարները բոլոր մակարդակներով սկսեցին հերքել՝ այն համարելով գեներալի անձնական կարծիքը:<sup>58</sup>

Թուրքիայի ՉԼՄ-ները ԵԽ-ի այդ որոշման, ինչպես նաև Հայաս-

<sup>57</sup> «Թուրքիայի շայն» ռադիոկայան, 5 մարտի, 2002թ.:

<sup>58</sup> «Հուրիեթ» օրաթերթ, 7 մարտի, 2002թ. և «Չաման» օրաթերթ, 12 մարտի, 2002թ.:

<sup>56</sup> «Թուրքիայի շայն» ռադիոկայան, 4 մարտի, 2002թ.:

տանի ու հայերի դեմ քարոզչական լուրջ գործունեություն սկսեցին, որը շարունակվում է ցայսօր: Մարտի 12-ին «Թուրքիայի ձայն» ռադիոկայանը հայտարարեց, թե ամերիկացի գիտնականները նույնպես միացել են հայերի հավակնությունների դեմ Անկարայի հակազդեցությանը՝ նրանց տխրահռչակ ցեղասպանության հարցում, որ ամերիկացի գրող Սամուել Վենսը հետազոտություններ է կատարել հիշյալ հարցի շուրջ և հայտարարել, թե ցեղասպանությունը սուտ է: Ըստ հիշյալ աղբյուրի՝ նա շեշտել է, որ հայերն իրենց հավակնություններն ապացուցելու համար որևէ փաստաթուղթ չեն ներկայացրել: Վենսը հայտնել է նաև, որ հայերը ձգտում են օգտվել իրենց քրիստոնյա լինելու հանգամանքից՝ Եվրոպային ու ԱՄՆ-ին իրենց կողմը գրավելու համար: Մա այն դեպքում, երբ ճշմարտությանը մոտ է հակառակ տարբերակը, այն, որ իսլամական երկրները, որտեղ կրոնական գործոնը նշանակալից դեր ունի, Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման առնչությամբ լուրջ քայլեր չեն կատարում: Մինչդեռ առ այսօր Հայոց ցեղասպանության հաղթաբարտն Արևմուտքը մեծ հաջողությամբ խաղարկել և խաղարկում է՝ հօգուտ սեփական շահերի: Այս տեսանկյունից թեև նշանակալի փաստ է Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչումը Ֆրանսիայի կողմից, սակայն մտահոգություն կա, որ սա ևս բացառություն չէ և Թուրքիայի մուտքը ԵՄ արգելակելու նպատակով կատարված քայլ է:

Այսօր ավելի քան 60 միլիոն բնակչությամբ և աճի բարձր տոկոսով աչքի ընկնող Թուրքիան ԵՄ-ի անդամության թեկնածու է, իսկ Եվրոպայում բնակչության աճի միջին ցուցանիշը հազիվ 0,5 տոկոս է, մինչդեռ ԵՄ-ի կառավարման համակարգում անդամ-երկրներին հատկացվող տեղն ու դերը հաճախ պայմանավորված են դրանց բնակչության թվով: Թուրքիան, ամենայն հավանականությամբ, կձգտի դառնալ Շենգենի պայմանագրի անդամ, ասել է թե՛ ոչ միայն ԵՄ-ի անդամ-երկրների դռները կբացվեն Թուրքիայի քաղաքացիների առջև, այլև անհամեմատ դյուրին կդառնա ասիացիների, իսլամական երկրների քաղաքացիների մուտքը Եվրոպա, մի հարց, որն այսօր խիստ մտահոգում է ԵՄ-ի գլխավոր անդամներին՝ Մեծ Բրիտանիային, Ֆրանսիային, Գերմանիային: Ի վերջո, ավելի քան 100 միլիարդ դոլար արտաքին

պարտքով, տնտեսական անբուժելի ճգնաժամ ապրող Թուրքիայի շուտափույթ անդամակցությունը ԵՄ-ին հազիվ թե ցանկալի լինի վերջինիս անդամ-երկրներին, իսկ Հայոց ցեղասպանության ճանաչումը եթե լիովին չի արգելակի, ապա առնվազն կհետաձգի այդ գործընթացը:

ԵՆ-ն նոր օրինագիծը փաստորեն հաստատեց մի ժամանակահատվածում, երբ Անկարան ջանքեր էր գործադրում՝ կանխարգելելու Ֆրանսիայի՝ Հայոց ցեղասպանության ճանաչման հնարավոր հետևանքները: Հունվարի 27-ին թուրքական «Ռադիքալ» օրաթերթը գրեց, որ Անկարայում Ֆրանսիայի պաշտպանության նախարար Ալեն Ռիշարի, Թուրքիայի վարչապետ Բյուլենթ Էջևիթի և պաշտպանության նախարար Մարահիթթին Չաքմաքոզլուի հետ հանդիպումներում քննարկվել է այդ հարցը, որից պարզ է դարձել, թե Ֆրանսիայի կառավարությունը, կշարունակի ջանքեր գործադրել՝ ի հատուցում Հայոց եղեռնի ճանաչման:

Ինչ վերաբերում է քրիստոնյա ԱՄՆ-ին, որտեղ հայկական ամենախառնուր համայնքն է, և մեծ թիվ են կազմում Եղեռնից վերապրողները, այդ ուղղությամբ շոշափելի արդյունք չի արձանագրվել: Այստեղ ևս Հայոց ցեղասպանության խնդիրը տարբեր առիթներով շահարկումների պատճառ է դարձել թե՛ նախագահական ընտրությունների ժամանակ և թե՛ Անկարայի վրա ճնշում գործադրելու անհրաժեշտության դեպքում: Մեծ ջանքերի գնով խնդիրը բազմիցս ԱՄՆ Սենատում քննարկվել է և միշտ էլ ապարդյուն: Այսօր Միացյալ Նահանգներում, որտեղ տնտեսական, հասարակական և քաղաքական շրջանակներում որոշիչ դեր խաղացող հրեա լոբբիստական շրջանակները, տնօրինելով երկրի կապիտալի 70 և ՉԼՄ-ների 80 տոկոսը, պաշտպանում են ոչ միայն Իսրայելի, այլև տարածաշրջանում նրա եզակի դաշնակից Թուրքիայի և վերջինիս ջանքերի ծնունդ Ադրբեջանի շահերը, հազիվ թե հօգուտ հայերի որևէ դրական քայլ կատարվի: Ավելին, Թուրքիայի պաշտոնատարները ԱՄՆ այցելելիս արժանանում են հրեա լոբբիստական շրջանակների ընդգծված ջերմ ընդունելությանը: Ահավասիկ, 2002թ. հունվարին, երբ պաշտոնական այցով Միացյալ Նահանգներում էր Թուրքիայի վարչապետ Բյուլենթ Էջևիթը, հանդիպումներ տեղի ունեցան ոչ միայն թուրքական և հրեական համայնքների

ներկայացուցիչների հետ, յլև Ամերիկյան հրեաների համագումար կազմակերպությունում. վերջինս երկրի լոբբիստական խոշորագույն կազմակերպությունն է: Հանդիպման առիթով կազմակերպված ճոխ հանդիսության ժամանակ պարզև շնորհվեց Էջևիթին: Գաղտնիք չէ, որ Անկարայի շահերը մշտապես ԱՄՆ-ի հրեա լոբբիստական խմբերին հետաքրքրող ոլորտ են, իրողություն, որն ապացուցելու կարիք չկա: Դա են վկայում վերջիններիս գործադրած հետևողական ջանքերը՝ ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության ճանաչումը կանխելու համար: Դա համահունչ է նաև պաշտոնական Թեյ Ավիվի դիրքորոշմանը: Մինչդեռ տրամաբանությունը թելադրում է, որ եղեռնի ցավ ապրած հրեաները առաջինը պետք է ճանաչեին Հայոց ցեղասպանությունը:

Հիշենք՝ 1999թ. մայիսին Իսրայելի ԱԳ. նախարարության՝ ԱՊՀ երկրների վարչության փոխնախագահ Շիմոն Շտեյնի երևանյան այցի ընթացքում «Մնարքի» թղթակցին տված հարցազրույցը, նրա՝ եղեռնին վերաբերող հարցերին ոչինչ չասող պատասխանները, որոնք եթե չասենք համընկնում էին Թուրքիայի, ապա ԱՄՆ ներկայացուցիչ, հայտնի արևելագետ, իսլամագետ Բեռնար Լյուիսի տեսակետներին. «Այո, տեղի են ունեցել բախումներ, ջարդեր և զոհեր երկու՝ բուրքերի և հայերի կողմից»: Չոհեր, որոնց համար «մեծահոգաբար» ցավում էր Շտեյնը՝ չկարևորելով, թե դրանք ինչպես են բնորոշվում՝ ցեղասպանություն, թե այլ բառով, բնավ էլ էական չէր վերջինիս համար, թեև ծաղիկներ էր դրել Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանին: Եվ, ամենայն հավանականությամբ, Շտեյնը, եթե Թուրքիա այցելեր, ծաղկեպսակ կղներ նաև Իզդիրում կառուցված 1915թ. զոհերի հուշարձանին: Իսկ 2002թ. մարտի սկզբներին Հայաստանում Իսրայելի դեսպան Ռ. Կոհենը, կրկնելով Շտեյնի մտքերը, հայտարարեց, թե հայերի ջարդերը, ողբերգություն լինելով հանդերձ, որևէ կապ չունեն Հոլոքոստի հետ: Հիրավի գարմանք է պատճառում հրեաների՝ սեփական ցավի նկատմամբ խիստ բժախնդրությունը և ուրիշների նկատմամբ՝ ընդգծված անտարբերությունը, որի համար մեկ բացատրություն կա միայն՝ Հայոց ցեղասպանության ճանաչումը հակասում է Իսրայելի ազգային շահերին: Սա նշանակում է, որ ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը դեռևս երկար ժամանակ արժանանալու է

հրեա լոբբիստական շրջանակների «վետոյին», որտեղ հայերի քրիստոնյա լինել-չլինելու հարցը բնավ էլ որոշիչ չէ: Ավելին, անհրաժեշտության դեպքում Թեյ Ավիվը նույնպես Հայոց ցեղասպանության փաստը շահարկելով, Անկարայից զիջումներ կկորզի կամ իր տեսակետները կպարտադրի նրան:

## Ամփոփիչ

Ակնհայտ է, որ Թուրքիան ոչ միայն հերքում է անհերքելին՝ Հայոց ցեղասպանության փաստը, այլև քարոզական լուրջ պայքար է մղում արեւմտյան մտավորականների, պատմաբանների ու քաղաքական գործիչների տեսակետների, ականատեսների վկայությունների դեմ: Անկարան, կասկածի տակ դնելով վերջիններիս ուսումնասիրություններն ու վկայությունները, դրանց մեջ կարելու դեր է վերագրում կրոնական գործոնին՝ նրանց հայերի հետ դավանակից լինելուն: Ուստի, այս տեսանկյունից, թերեւս, առավել կարելու են Հայոց ցեղասպանության վերաբերյալ արձագանքները մահմեդական եւ Թուրքիային սահմանակից Իրանում:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ հեղինակը ջանացել է հնարավորինս համապարփակ ներկայացնել, 1904-2007թթ. Իրանի ՁԼՄ-ներում հրապարակված նյութերը, որտեղ արժարժված են Իրանի պաշտոնական, կիսապաշտոնական եւ առանձին գիտնականների եւ մտավորականների տեսակետներն ու վերաբերմունքը: Արժեւորվել են նաև մտավորական-ականատեսների վկայությունները նրանց հուշերում, մանավանդ որ, նրանցից ոմանք սերտ կապեր են ունեցել երիտթուրքերի հետ: Թեև իրանցի մտավորականներն ու հետազոտողները Հայոց ցեղասպանությունն ընդունելով՝ խիստ դատապարտում են այն, սակայն Աթաթուրքի իշխանության գալը եւ Թուրքիայի Հանրապետության ձեւավորումը, որոշ բացառություններով, գնահատվում են իբրեւ դրական երեւոյթ՝ այն հստակ տարանջատելով Օսմանյան կայսրությունից, մինչդեռ Անկարան հիմնականում հայերի նկատմամբ շարունակել է իր նախորդների քաղաքականությունը: Գրքում ներկայացվել են Հայոց ցեղասպանության տարելիցների առնչությամբ իրանահայության

կազմակերպած միջոցառումներին իշխանությունների վերաբերմունքը, ՋԼՄ-ների անդրադարձները, ինչը գլխավորապես պայմանավորված է Իրան-Թուրքիա փոխհարաբերություններով: Ուսումնասիրության մեջ տեղ են գտել նաև արտերկրում ապրող իրանցի գիտնականների եւ մտավորականների հողվածներն ու հրապարակված տեսակետները: Առանձնակի ուշադրության են արժանացել Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի առիթով հրապարկումները:

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր որոշակի դեպքում հեղինակը մեկնաբանել, վերլուծել է, տվյալ պարբերականի կամ հեղինակի քաղաքական դիրքորոշումը եւ ժամանակի գործոնը:

Գիրքն ունի նաև հավելված, որտեղ ներառվում է հեղինակի երկու հոդված՝ մեկը նվիրված Եղեռնի 80- րդ տարելիցին՝ «Համաթուրքականության գաղափարախոսական ուղղվածությունը եւ Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում», մյուսը՝ «Հայոց եղեռնի ճանաչման հարցն իբրեւ լծակ Թուրքիայի դեմ գործադրում են նրա բարեկամ երկրները», որը լույս է տեսել Եղեռնի 87-րդ տարելիցին:

Գրքի նյութերը, որ գլխավորապես անձանոթ են հայ մտավորականությանը, կարող են աղբյուր հանդիսանալ Հայոց ցեղասպանության պատմությունն ուսումնասիրողների համար:

### Резюме

Очевидно, что Турция не только опровергает неопровержимое - факт Геноцида армян, но и ведет активную пропагандисткую борьбу против мнения западных ученых, историков, политических деятелей, а также свидетельств очевидцев. Анкара ставит под сомнение исследования и свидетельства последних, объясняя это большой ролью религиозного фактора, а именно тем, что последние являются единоверцами с армянами. И с этой точки зрения приобретают важное значение отклики на Геноцид иранцев — мусульман и соседей Турции.

Принимая во внимание вышесказанное, автор представил статьи, которые были опубликованы в иранской прессе и средствах массовой информации в 1904-2007 годах. Они содержат официальную точку зрения Ирана, полуофициальные и личные точки зрения иранцев и их отношение к происшедшему. В этом свете особую ценность приобретают свидетельства интеллигенции, которая была очевидцем событий тех лет, и особенно тех людей, кто имел тесные связи с младотурками. Несмотря на то, что иранская интеллигенция и исследователи Геноцида армян подтверждают, факт геноцида и резко осуждают происшедшее, в то же самое время они, за малым исключением, расценивают приход Ататюрка к власти и установление республики в Турции как положительное событие, в то время как современная Анкара продолжает политику предшествующих режимов по отношению к армянам. В книге представлено отношение властей, отклики иранских СМИ на мероприятия и акции, организованные иранскими армянами в связи с разными годовщинами Геноцида армян, что в основном зависит от состояния ирано-турецких отношений в данный момент. Автор приводит также мнения точки зрения зарубежных иранцев. Публикации в связи с 90-летием Геноцида армян удостоены особого внимания.

Нужно отметить, что в каждом конкретном случае автор книги комментировал и анализировал публикацию, учитывая позицию и политические взгляды данного издания и автора, а также фактор времени.

Книга содержит также приложение, в котором представлены две статьи Э. Бегиджаниян, созвучные теме: «Общeturецкая пропагандистская направленность и Геноцид армян в Османской Турции» (посвящена 80 летию Геноцида армян) и «Вопрос признания Геноцида армян друзья Турции исполь-



зуют как средство воздействия на нее”, которая приурочена к 87-й годовщине трагических событий начала прошлого века.

Материалы книги в основном неизвестны армянской общественности и могут служить источником для исследователей Геноцида армян в Османской империи.

### Resume

It is obvious that Turkey not only denies the undeniable – the fact of the Armenian Genocide, but also is waging active campaigns against points of view of Western intellectuals, historians, policy makers, and evidences of eyewitnesses. Ankara, by casting doubt on the latter’s evidences and works, attempts to present this as driven mostly by the religious factor, that all these people share the same religion with Armenians. In this regard, comments, responses and echoes of Iranians are of particular importance: they are Muslims and Turkey’s neighbour.

Therefore the Author did her best to present articles and other materials that have been published in Iranian press and mass media from 1904 up to 2007 as comprehensively as possible. They reflect official, semi-official and personal points of view and attitudes. Evidences that have been extracted from memories of eyewitness intellectuals are of special value, especially, as some of them had extensive relations with Young Turks. Notwithstanding the fact that the Iranian intellectuals and scientists prove the fact of the Genocide and condemn those perpetrators severely, most of them, with a small exception, consider establishing of Turkish Republic by Ataturk as a positive occurrence, and separate it from Ottoman Turkey, while the modern Ankara continues its predecessors’ policy towards the Armenian issue. The book also presents Iranian governments’ views as well as Iranian press and mass media feedbacks on different actions organized by Iranian Armenians on occasion of anniversaries of the Armenian Genocide, the tonality of which mainly depend on status of the Iranian-Turkish relations at the given periods. Author also included articles and

points of view of Iranians living abroad. The publications on the 90th anniversary of the Armenian Genocide have been focused with particular interest of the author.

It is worth mentioning also that in each single case we have made our comments, analyses in the context of the given periodical and mass media, author’s political stance and the factor of epoch.

The book also contains an appendix with author’s two articles: the first “Pan-Turkish propaganda line and the Armenian Genocide in the Ottoman Turkey” is related to the 80th anniversary of the Armenian Genocide, and the second “Friends of Turkey use the recognition of the Armenian Genocide as a lever against Turkey” written on occasion of the 87th anniversary of the Armenian Genocide.

The materials of this edition mainly are unknown to the Armenian public and may serve as a source for the researchers of the Armenian Genocide in the Ottoman Empire.

- 1- ...
- 2- ...
- 3- ...
- 4- ...
- 5- ...
- 6- ...
- 7- ...
- 8- ...
- 9- ...
- 10- ...
- 11- ...
- 12- ...
- 13- ...
- 14- ...
- 15- ...
- 16- ...
- 17- ...
- 18- ...
- 19- ...
- 20- ...
- 21- ...
- 22- ...
- 23- ...
- 24- ...
- 25- ...
- 26- ...
- 27- ...
- 28- ...
- 29- ...
- 30- ...
- 31- ...
- 32- ...
- 33- ...
- 34- ...
- 35- ...
- 36- ...
- 37- ...
- 38- ...
- 39- ...
- 40- ...
- 41- ...
- 42- ...
- 43- ...
- 44- ...
- 45- ...
- 46- ...
- 47- ...
- 48- ...
- 49- ...
- 50- ...
- 51- ...
- 52- ...
- 53- ...
- 54- ...
- 55- ...
- 56- ...
- 57- ...
- 58- ...
- 59- ...
- 60- ...
- 61- ...
- 62- ...
- 63- ...
- 64- ...
- 65- ...
- 66- ...
- 67- ...
- 68- ...
- 69- ...
- 70- ...
- 71- ...
- 72- ...
- 73- ...
- 74- ...
- 75- ...
- 76- ...
- 77- ...
- 78- ...
- 79- ...
- 80- ...
- 81- ...
- 82- ...
- 83- ...
- 84- ...
- 85- ...
- 86- ...
- 87- ...
- 88- ...
- 89- ...
- 90- ...
- 91- ...
- 92- ...
- 93- ...
- 94- ...
- 95- ...
- 96- ...
- 97- ...
- 98- ...
- 99- ...
- 100- ...

- 1- محمد حسن كاووسی عراقی، شرح احوال سلطان عبدالحمید و اوضاع مملکت عثمانی، اداره انتشار اسناد، دفتر مطالعات سیاسی و بین المللی، تهران، 1377
- 2- نشریه تربیت، 26 ژوئن سال 1904
- 3- نشریه تربیت، 26 ژوئیه سال 1904
- 4- ندای وطن، 15 ژانویه سال 1908
- 5- نشریه شمس، 13 جمادی الاخر سال 1327
- 6- نشریه شمس، 20 جمادی الاخر سال 1327
- 7- نشریه عصر جدید، 18 سپتامبر سال 1915
- 8- روزنامه رعد، 31 سپتامبر سال 1915
- 9- روزنامه رعد، 15 اکتبر سال 1915
- 10- روزنامه رعد، 17 اکتبر سال 1915
- 11- نشریه عصر جدید، 18 اکتبر سال 1915
- 12- روزنامه رعد، 22 نوامبر سال 1915
- 13- روزنامه رعد، 23 نوامبر سال 1915
- 14- روزنامه رعد، 24 فوریه سال 1916
- 15- روزنامه رعد، 5 مارس سال 1916
- 16- روزنامه رعد، 18 آوریل سال 1916
- 17- روزنامه رعد، 4 مه سال 1996
- 18- روزنامه رعد، 22 مه سال 1916
- 19- نشریه تبریز، 20 شعبان سال 1337
- 20- نشریه تبریز، 27 رمضان سال 1337
- 21- روزنامه ایران، 9 ژوئیه سال 1919
- 22- روزنامه ایران، 18 ژوئیه سال 1919
- 23- روزنامه ایران، 18 ژوئیه سال 1919
- 24- روزنامه ایران، 20 ژوئیه سال 1919
- 25- روزنامه ایران، 28 اوت سال 1919
- 26- روزنامه رعد، 30 اوت سال 1919
- 27- نشریه تبریز، اول اکتبر سال 1919
- 28- روزنامه ایران، 7 اکتبر سال 1919

- 29- روزنامه ایران، 2 ژانویه سال 1920
- 30- روزنامه ایران، 20 ژانویه سال 1920
- 31- روزنامه رعد، 25 فوریه سال 1920
- 32- روزنامه ایران، 8 مارس سال 1920
- 33- روزنامه ایران، 20 مارس سال 1920
- 34- روزنامه رعد، 22 مارس سال 1920
- 35- روزنامه ایران، 22 مارس سال 1920
- 36- روزنامه ایران، 27 مارس سال 1920
- 37- روزنامه رعد، 11 آوریل سال 1920
- 38- روزنامه رعد، 28 آوریل سال 1920
- 39- روزنامه رعد، 10 مه سال 1920
- 40- روزنامه رعد، 14 ژوئیه سال 1920
- 41- نشریه شفق سرخ، 19 اکتبر سال 1923
- 42- یحیی دولت آبادی، خاطرات سید محمد علی جمال زاده، 4 جلد، تهران سال 1371، چاپ 6
- 43- ایرج افشار و علی دهباشی، خاطرات محمد علی جمال زاده در یک جلد، تهران، 1380
- 44- اسماعیل رایبی، قتل عام ارمنیان، تهران، 1351
- 45- روزنامه ایران، 9 ژوئن سال 1998
- 46- فصلنامه پیمان، شماره 27، بهار سال 2004
- 47- ماهنامه اقتصاد ایران، ژوئن سال 2004
- 48- نشریه دو هفته یکبار شرقیان، 2 آوریل سال 2005
- 49- فصلنامه پیمان، شماره 39، بهار سال 2007
- 50- هفته نامه کیهان لندن، 21 مه سال 1993
- 51- روزنامه اطلاعات، 26 آوریل سال 1995

Օգտակար աշխատանք .....	3
Հեղինակի կողմից .....	4
Կիսապաշտոնական տեսակետները հայերի ջարդերի վերաբերյալ .....	5
Ի՞նչ է գրել Հայոց եղեռնի մասին իրանական մամուլը 1904-1922թթ. ....	17
Հայոց մեծ եղեռնը՝ իրանցի ականատեսների հուշերում .....	34
«Ջամալզադեի հուշերը» .....	41
Եղեռնի մասին իրանցի մեկ այլ ականատեսի հուշերը .....	45
«Հայոց ցեղասպանությունը» .....	48
«Օսմանցիները հայերի բնաջնջմամբ ձգտել են անվտանգության գոտի ստեղծել» .....	70
Հայոց եղեռնի հարցը թուրք-իրանական փոխհարաբերությունների համատեքստում .....	76
Ասորիները դեմ են Իրանի խորհրդարանում Հայոց ցեղասպանության հարցի քննարկմանը .....	79
Եվս մեկ իրանցու տեսակետ Հայոց ցեղասպանության մասին .....	81
«Շատ չի մնացել մինչև Թուրքիայի կողմից Եղեռնի պաշտոնական ճանաչումը» .....	83
«Իրանի տնտեսությունը» ամսագիրը Հայոց ցեղասպանության մասին .....	86
Պարսկալեզու ՁԼՄ-ների արձագանքները Եղեռնի 90-րդ տարելիցին .....	89
«Նրանք, ովքեր մոռանում են պատմությունը, դատապարտված են կրկնելու այն» .....	95
«Հայերն արդարություն են պահանջում» .....	99
«Որտե՞ղ են Թուրքիայի անհնազանդության արմատները» .....	102

«Հայոց ցեղասպանության սկիզբը» .....	106
«Օսմանյան պետությունը 1,5 միլիոն հայ է կոտորել» .....	109
«Հայաստանը Ուրարտուից մինչև ցեղասպանություն» .....	111
Պարսիկ մտավորականների հողվածները՝ նվիրված Եղեռնի 91-րդ տարելիցին .....	117
«Հայաստանը 20-րդ դարի առաջին ողբերգության մեջ» .....	120
Հայոց եղեռնի ճանաչման հարցն իբրև լծակ Թուրքիայի դեմ գործադրում են նրա բարեկամ երկրները ....	149
Ամփոփիչ .....	155
Резюме .....	156
Resume .....	158
Գրականության ցանկ .....	160

Մարտինյանի Կարա Գրքարան

EDIT PRINT  
www.martinyan.com  
info@martinyan.com



ՀԱՅԿԳՐԱԿԱՆ  
ԿԱՐԱ ԳՐԱՐԱՆ  
www.martinyan.com  
info@martinyan.com

# ԷՄՍԱ ԲԵԳԻՉԱՆՅԱՆ

## ԻՐԱՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

### Սրբազիր Գալյա Հովհաննիսյան

101	«Երբ որ քեզ հարցնեցին, թե ինչու եմ գրում, ասեցի՝ որովհետև եմ սիրում»	70
102	«Երբ որ քեզ հարցնեցին, թե ինչու եմ գրում, ասեցի՝ որովհետև եմ սիրում»	76
103	«Երբ որ քեզ հարցնեցին, թե ինչու եմ գրում, ասեցի՝ որովհետև եմ սիրում»	79
104	«Երբ որ քեզ հարցնեցին, թե ինչու եմ գրում, ասեցի՝ որովհետև եմ սիրում»	81
105	«Երբ որ քեզ հարցնեցին, թե ինչու եմ գրում, ասեցի՝ որովհետև եմ սիրում»	83
106	«Երբ որ քեզ հարցնեցին, թե ինչու եմ գրում, ասեցի՝ որովհետև եմ սիրում»	86
107	«Երբ որ քեզ հարցնեցին, թե ինչու եմ գրում, ասեցի՝ որովհետև եմ սիրում»	89
108	«Երբ որ քեզ հարցնեցին, թե ինչու եմ գրում, ասեցի՝ որովհետև եմ սիրում»	95
109	«Երբ որ քեզ հարցնեցին, թե ինչու եմ գրում, ասեցի՝ որովհետև եմ սիրում»	99

**ԷԴԻՑ ԴՐԻՆՏ**  
Երևան, Թումանյան 12  
հեռ.՝ (374 10) 520 848  
[www.editprint.am](http://www.editprint.am)  
[info@editprint.am](mailto:info@editprint.am)



**EDIT PRINT**  
12 Tumanyan str, Yerevan  
Tel.: (374 10) 520 848  
[www.editprint.am](http://www.editprint.am)  
[info@editprint.am](mailto:info@editprint.am)